ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ

ՈՒ Ղ Ե Ր Ձ

ԵՐԵՎԱՆ 2018թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ՄԱՍ Ի–Ա. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 7

2019 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները 7

Տնտեսական զարգացման և ներդրումների ոլորտ 7

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարան ոլորտ 8

Գյուղատնտեսություն 12

Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների կառավարման բնագավառ 15

Միջուկային անվտանգություն 18

Ջրային տնտեսություն 22

Տրանսպորտ, կապ և տեղեկատվական տեխնոլոգիաներ 24

Քաղաքաշինություն 27

Արտակարգ իրավիճակների ոլորտ 27

Արտաքին քաղաքականություն 29

Արդարադատություն 31

Սփյուռք 37

Կրթություն 37

Գիտության ոլորտ 40

ՀՀ առողջապահության նախարարություն 41

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 43

Մշակույթի ոլորտ 47

Ֆիզիկական կուլտուրա, սպորտ և երիտասարդության բնագավառ 50

Բնապահպանության ոլորտ 53

Բյուջեների կազմման բնագավառ 56

Հարկային և մաքսային վարչարարության ոլորտ 57

Պետական գույքի կառավարման ոլորտ 60

Անշարժ գույքի կադաստր 62

Հասարակական կարգի պահպանություն 62

Մ Ա Ս I – Բ. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ 67
ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 67
Ներածություն 67
Համախառն առաջարկ 69
Համախառն պահանջարկ 78
Գնային փոփոխականներ 81
Ֆինանսական շուկա 83
Վճարային հաշվեկշիռ 86
Հարկաբյուջետային հատված 95
ԲՅՈՒՋԵԻ ԾՐԱԳՐԻ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 101
Տնտեսական աճի ռիսկերը և դրանց ազդեցության ուղղությունները 101
Պետական բյուջեի վրա մակրոտնտեսական կանխատեսված ցուցանիշներից շեղման ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը 106
ՄԱՍ II-Ա ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ 113
Միջնաժամկետ հարկաբյուջետային սկզբունքները և ցուցանիշները 113
ՄԱՍ II – Բ.ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ 114
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ 114
2019 ԹՎԱԿԱՆԻ ԾԱԽՍԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 115
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ 115
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ԵՎ ՊԱՐՏՔԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ 116
ՄԱՍ III. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ 119
ՄԱՍ III-Ա. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ 120
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր 121
Պաշտոնական դրամաշնորհներ 136
Այլ եկամուտներ 137
Մ Ա Ս III – Բ. Ծ Ա Խ Ս Ե Ր Ի Կ Ա Ն Խ Ա Տ Ե Ս Ո Ւ Մ 141
Պետական իշխանության մարմինների պահպանման ծախսեր 142
ՀՀ առողջապահության նախարարություն 155

ՀՀ կրթության և գիտության նախարարություն 172
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 180
ՀՀ մշակույթի նախարարություն 197
ՀՀ սփյուռքի նախարարություն 201
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն 204
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն 206
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն 217
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն. 229
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն 239
ՀՀ Բնապահպանության նախարարություն 246
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն 251
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն 256
ՀՀ արդարադատության նախարարություն 258
ՀՀ պաշտպանության նախարարություն 259
ՀՀ Ոստիկանություն 261
ՀՀ ազգային անվտանգության ծառայություն 264
ՀՀ վարչապետի աշխատակազմ 266
Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ 270
ՀՀ քաղաքաշինության կոմիտե 271
ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե 271
Պետական բյուջեի նախագծի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները 272
Պետական պարտքը 275
ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ 308
ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ 310

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2019 թվականին տնտեսական զարգացման քաղաքականության շրջանակը կառուցվում է ՀՀ կառավարության՝ 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշմամբ հաստատված ծրագրի առաջնահերթությունների շուրջ:

Կառավարության գործունեության առանցքային նպատակը 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցած ժողովրդական հեղափոխության արժեքների ամրագրումն է՝ որպես հանրային և ազգային հարաբերությունների հիմք և հեղափոխության գաղափարների իրագործում, որպես մշտական քաղաքական իրողություն:

Ակնհայտ է, որ այսպիսի քաղաքական նպատակի իրագործումը հնարավոր է միայն ամուր տնտեսական հենքի առկայության դեպքում՝ որպես նպատակ ունենալով նաև մրցակցային տնտեսության զարգացումը և հանրային միջոցների արդար բաշխումը: Այս տեսակետից Կառավարության տնտեսական զարգացման քաղաքականությունն էական նշանակություն ունի: Հետևաբար, տնտեսական զարգացման քաղաքականությունը կմշակվի բոլոր շահագրգիռ և կարող ուժերի ներգրավմամբ, ինչպես նաև լավագույնս կօգտագործվեն ժամանակակից աշխարհում կուտակված հսկայածավալ գիտելիքն ու փորձը՝ նպատակ ունենալով լայն հանրային քննարկումների արդյունքում ձևավորել տնտեսական քաղաքակա-նության նոր մոդել:

Ակներև է նաև այն, որ որևէ տնտեսական քաղաքականության հաջողության գրավականը հանրային միջոցների այնպիսի բաշխման համակարգի առկայությունն է, որը կերաշխավորի մի կողմից տնտեսության զարգացման և մյուս կողմից՝ պետության անվտանգության ու հասարակության սոցիալական կարիքների հավասարակշռված իրականացման նախադրյալ-ների ստեղծումը: Այդ կապակցությամբ Կառավարությունը նախատեսում է լայն հանրային քննարկումների ճանապարհով ախտորոշել պետության հանրային միջոցների բաշխմանը կոչված հարկային համակարգը, ինչպես նաև բյուջետային ծախսերի միջոցառումները և նախաձեռնել դրանից բխող անհրաժեշտ գործողությունների իրականացումը:

Վերոթվարկյալը ժամանակի ընթացքում, հասարակության բոլոր շերտերի պատշաճ ներգրավմամբ, անշուշտ, կտա իր արդյունքները: Սակայն մինչ այդ պետք է նկատի ունենալ, որ հնարավոր չէ հասարակական կյանքի ընթացքը կանգնեցնել, նոր ծրագրերի քննարկում

նախաձեռնել և դրանց ընդունումից հետո միայն շարունակել այդ ընթացքը: Պետության արդեն իսկ ստանձնած պարտավորությունների կատարումը և նոր ծրագրերով տնտեսական զարգացման ապահովումը պետք է դիտարկվեն որպես միմյանց լրացնող գործընթացներ:

Հաշվի առնելով, որ պետական մարմիններն առաջիկայում ձեռնամուխ են լինելու ծախսերի արդյունավետության մանրազնին ուսումնասիրմանը և ոլորտային առաջնահերթությունների վերանայմանը՝ հիմնվելով տարբեր ոլորտներում իրականացվող քաղաքականությունների ախտորոշման արդյունքների վրա, ինչն անպայմանորեն իր արտացոլումն է ստանալու ինչպես ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարման ընթացքում, այնպես էլ առաջիկա տարիների պետական բյուջեների նախագծերում:

ՄԱՍ Ի–Ա. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2019 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները

Տնտեսական զարգացման և ներդրումների ոլորտ

Տնտեսական զարգացման և ներդրումների ոլորտում քաղաքականության առանցքային շեշտադրումների ներքո բյուջետային տարվա հիմնական ծրագրային միջամտություններով նպատակ է դրվում նպաստել տնտեսական աճի միջնաժամկետ սցենարի ապահովմանը: Այս իմաստով քաղաքականության գործողությունները ծավալվելու են երեք հիմնական ուղղություններով՝ արդյունաբերական զարգացում, ապրանքների ու ծառայությունների արտահանման ծավալ ների աճ ու ներդրումային միջավայրի բարելավում, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խթանում, զբոսաշրջության զարգացում: Ոլորտում պետական քաղաքականության մշակ ման, ծրագրերի համակարգման ու մոնիտորինգի աշխատանքները կհիմնվեն հենքային ոլորտային ու թեմատիկ վերլուծությունների, հետազոտությունների ու գնահատումների վրա:

Արդյունաբերության ու արտահանման զարգացման, ներդրումային գրավչության բարձ րացման ու արտաքին տնտեսական քաղաքականության բնագավառում աշխատանքներ են ծրագրավորվում արտաքին շուկաների հասանելիության բարձրացման և թիրախային երկրներում Հայաստանի տնտեսական ու ներդրումային հետաքրքրությունների ներկայացման ու առաջմղման ուղղությամբ: Մասնավորապես.

ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների շրջանակներում պլանավորվում է գործարար համաժողովների ու շնորհանդեսների, ֆինանսական գործիքների կիրառմամբ արդյունաբերության ոլորտի ընկե րություններին օժանդակության, նպատակային շուկաներում հայկական ապրանքների առաջմղման, շուկայական տեղեկատվության ապահովման, մշակող արդյունաբերության ոլորտների ընկերությունների կարողությունների զարգացման, արտահանման բնագավառում ծագող խնդիրների և դրանց լուծմանն ուղղված հետազոտության միջոցով նպաստել տեղական ընկերությունների մրցունակության բարձրացմանը և արտահանման ծավալների ընդլայնմանը:

Արտաքին առևտրատնտեսական քաղաքականության արդյունավետ իրականացման

գործում կարևոր դերակատարում է հատկացվում նաև ԱՀԿ-ում և օտարերկրյա պետություններում ՀՀ առևտրային ներկայացուցիչների ինստիտուտին:

Փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) զարգացման քաղաքականությամբ նպատակ կադրվում է պետական ուղղակի աջակցության մեխանիզմների և գործիքների միջոցով նպաստել տնտեսական արդյունքի ստեղծման գործում ՓՄՁ-ների դերի մեծացմանը: Այս իմաստով նախատեսվում է ՓՄՁ սուբյեկտներին ցուցաբերվող պետական աջակցության նպատակայնության ու հասցեականության բարձրացում: ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգման և կառավարման շրջանակներում կապահովվի պետական աջակցության առկա մեխանիզմների շարունակականություն և արդիականացում, մասնավորապես՝ գործարար ուսուցողական, տեղեկատվական ու խորհրդատվական, ֆինանսական և ներդրումային, կանանց ձեռներեցությանը, տեղական տնտեսական ու ոլորտային, ինչպես նաև արտահանմանն աջակցության հիմնական ուղղություններով:

Զբոսաշրջության զարգացման քաղաքականության առանցքային շեշտադրումը զբոսաշրջային հոսքի ակտիվացումն է և համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի դիրքավորումը: Այս տեսակետից առաջիկա բյուջետային տարում նախատեսված հիմնական աշխատանքները ներառում են ոլորտում ինստիտուցիոնալ բարեփոխումների, ենթակառուցվածքների ու զբոսաշրջային կենտրոնների զարգացման, արհեստագործական, ձեռքի աշխատանքների, ավանդական փառատոնների ու մշակութային միջոցառումների խրախուսման, նպատակային մարքեթինգային քաղաքականության, զբոսաշրջության բնագավառում ներդրումային ծրագրերի ներգրավման և միջազգային համագործակցության ակտիվացման ուղղությունները:

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարան ոլորտ

1) **Տարածքային զարգացման ոլորտում նախատեսվում է՝**
   - մարզերի տնտեսական զարգացման անհամամասնությունների մեղմում,
   - Հանրապետական գործադիր մարմինների կողմից ՀՀ մարզերում իրականացվող ծրագրերի ազդեցության և արդյունավետության գնահատման համակարգի ներդնում,
   - մարզերում հանրային ծառայությունների տեղայնացման աստիճանի և ֆինանսների, ապրանքների ու ծառայությունների հասանելիության աճ, համայնքային ենթակառուցվածքների (ճանապարհներ, ջրամատակարարում) գնահատում, դրանց կարգաբերում ու զարգացում,

- ՀՀ պետական բյուջեով տարածքային զարգացման բաղադրիչով նախատեսված միջոցների շրջանակներում ծրագրերի ընտրության մեխանիզմների ներդնում,
- այնպիսի համակարգի մշակում և ներդրում, որը կապահովի տարածքային համաչափ զարգացումը, այսինքն՝ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին ցանկացած ներդրում իրականացնելիս հստակ հնարավոր կլինի տեսնել դրա արդյունավետությունը տվյալ համայնքի, համայնքների խմբերի, մարզի համար,
- Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող մարզերի զարգացման անհամաչափությունների մեղմանն ուղղված ծրագրերի շրջանակի ընդլայնում,
- մարզպետարաններում և խոշորացված ու խոշոր համայնքներում ներդրված տնտեսական ծրագրերի պատասխանատուների համակարգի զարգացում, մարզերի (տարածաշրջանների, համայնքների) սոցիալ-տնտեսական զարգացման կոնկրետ հնարավորությունների վերհանում և դրանց իրագործմանն ուղղված համապատասխան ծրագրերի մշակում և իրականացում:

2) **Տեղական ինքնակառավարման համակարգի, տարածքային, տնտեսական, ֆինասական և քաղաքական դերի բարձրացման նպատակով նախատեսվում է** տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման և իշխանության ապակենտրոնացման քաղաքականության գերակա խնդիրների համաչափ լուծում՝ վարչական (համայնքների խոշորացման գործընթացի ավարտից հետո՝ համայքների ղեկավարներին նոր լիազորությունների փո խանցում) և ֆիսկալ ապակենտրոնացում, տեղական ինքնակառավարման մարմինների հզորացում ու տեղական ժողովրդա-վարության զարգացում՝ օրենսդրության կատարելագործման և ինստիտուցիոնալ բարեփոխումների ու իրավական նորմերի հետևողական կիրարկման միջոցով,

- ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության, համայնքում ներքին և արտաքին վերահսկողության ընթացակարգերի հստակեցման զգալի բարձրա ցում, համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կատարման վերաբերյալ համայնքի ղեկավարի հաշվետվությունը կազմելու, ավագանու քննարկմանն ու հաստատմանը ներկայաց նելու և հրապարակելու օրենսդրական պարտադիր պահանջի կատարում,
- տեղական մակարդակում որոշումների կայացմանը և հանրային կառավարմանը քաղաքացիների մասնակցության խթանում, ՏԻՄ-երի գործունեության հրապարա-կայնության բարձրացման նպատակով համայնքի անդամների և համայնքային քաղաքացիական հասարակության ինստիտուտների իրազեկման, նրանց հետ

խորհրդակցությունների և հետադարձ կապի մեխանիզմների ներդրում, ինչպես նաև հանրային վերահսկողության ինստիտուտի ամբողջական կայացում,

- համայնքների խոշորացման ծրագրերի իրականացում,
- համայնքների ֆինանսական հնարավորությունների բարձրացում՝ ապահովելով նրանց բյուջեների մուտքերի կայունությունը, այդ թվում՝ տեղական տուրքերի և վճարների հայեցակարգի ընդունում, հայեցակարգի կիրարկմանն անհրաժեշտ իրավական ակտերի մշակում և ընդունում, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի շեմի հետևողական բարձրացմամբ պայմանավորված՝ համայնքներին համապատասխան ֆինանսական օժանդակության տրամադրում,
- ՏԻՄ-երի սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունների և դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների համապատասխանության ապահովում,
- համայնքների ֆինանսական կառավարման օրինականության, արդյունավետության, թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության բարձրացում,
- ֆինանսական համահարթեցման բազմագործոն համակարգի կիրարկման նախապատրաստում,
- համայնքների խոշորացմանը զուգընթաց՝ համամասնական ընտրական համակարգի աս տիճանական ներմուծում,
- տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման նպատակով ՏԻՄ-երի կարողությունների զարգացում, համայնքներում տեղեկատվական հասարակության ձևավորում և էլեկտրոնային մասնակցության խթանում, համայնքներում ՏՀՏ ներդրման գործում պետական, մասնավոր և միջազգային ռեսուրսների ներգրավում, համայնքներում ՏՀՏ ներդրման օրենսդրական, նորմատիվ և մեթոդական կարգավորում, տեխնիկական ենթակառուցվածքների ապահովում, ՏԻՄ-երում կառավարման տեղեկատվական համակարգերի ներդրում, 3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքների համար պարտադիր ինտերնետային պաշտոնական կայքերի ներդրում՝ օրենքով, 10000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներում, ավագանու դռնբաց նիստերը պաշտոնական ինտերնետային կայքում առցանց հեռարձակման ապա հովում,
- Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության արդյունավետության բարձրացում,
- համայնքային ծառայողների կարողությունների կատարելագործում,

- համայնքների միավորման արդյունքում համայնքային ծառայության ոլորտում առաջացած նոր հմտությունների գույքագրում և մասնագիտական ունակությունների զարգացում,
- համայնքային ծառայողների վերապատրաստման նկատմամբ վերահսկողության, զբաղեցված պաշտոնին համապատասխանության ստուգման մեխանիզմի ներդրում:

3) Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավում ծրագրի իրականացման նպատակով նախատեսվում է՝

- 46 դպրոցների ուժեղացում կամ նորերի կառուցում: 1-ին փուլով առաջնահերթ կարգով ուժեղացման և/կամ նորի կառուցման ենթակա թվով 20 գերակա դպրոցներից՝ 8 նոր դպրոցի կառուցման աշխատանքները (6-ը մարզերում, 2-ը Երևանում) և ևս 12 դպրոցի կառուցման շինարարական աշխատանքներ: Ընտրել մյուս 26 դպրոցները և պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթերը և սկսել կառուցպատման գործընթացները:

5) Կոշտ կենցաղային թափոնների կառավարման (ԿԿԹԿ) ծրագրի կատարման նպատակով նախատեսվում է՝

- մեկնարկել ՀՀ Կոտայք և Գեղարքունիք մարզերում ԿԿԹԿ ծրագրով կառուցապատման աշխատանքները,
- միջոցներ ձեռնարկել հանրապետությունում աղբահանության համակարգի բարելավման և աղբի վերամշկման համակարգի ներդրման ուղղությամբ:

6) Արխիվային պահպանության կատարելագործման նպատակով նախատեսվում է՝

- ՀՀ արխիվային հավաքածուի երաշխավորված պահպանության ապահովումը, պետական հաշվառման ավտոմատացված միասնական համակարգի ներդրման շարունակության ապահովումը, որոնողական և օգտագործման էլեկտրոնային շտեմարանների ստեղծումը, մշակութային միջոցառումների միջոցով հավաքածուի ներկայացումը հանրությանը, ինչպես նաև Հայաստանի ազգային արխիվային հավաքածուի օգտագործման արդյունքում ՀՀ քաղաքացիներին և իրավաբանական անձանց արխիվային ծառայությունների տրա- մադրումը:

7) Հայաստանի միգրացիոն ոլորտի զարգացման ուղղությամբ նախատեսվում է՝

- Միգրացիոն ոլորտում ՀՀ-ի՝ Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին պայմանագրի կիրարկմանն ուղղված աշխատանքների իրականացում,
- ԵՄ-ի հետ համագործակցության զարգացում՝ 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ուժի մեջ մտած «Աջակցություն միգրացիային և սահմանների կառավարմանը» ԵՄ տեխնի-

կական աջակցության ֆինանսավորման համաձայնագրի իրականացման շրջանակներում,

- ՀՀ միգրացիայի քաղաքականության ռազմավարության 2017-2021թթ. Գործողությունների ծրագրով 2019 թվականի համար նախատեսված միջոցառումների իրականացում,
- ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգի կիրարկմանն ուղղված գործողութունների իրականացում,
- ՌԴ ՆԳՆ միգրացիայի հարցերով գլխավոր վարչության հետ՝ ՌԴ մուտքի արգելք ունեցող ՀՀ քաղաքացիների մուտքի արգելքի բացման նպատակով աշխատանքների իրականացում,
- օտարերկրյա պետություններից վերադառնալու ցանկություն ունեցող ՀՀ քաղաքացիներին Tundarc.am կայքի միջոցով խորհրդատվության տրամադրման ուղղությամբ աշխատանք ների իրականացում,
- Միգրացիոն ծառայությանը դիմող ինչպես ՀՀ, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներին միգրացիոն տարբեր հիմնախնդիրների շուրջ խորհրդատվության տրամադրման ուղղությամբ աշխատանքների իրականացում,
- միջազգային պաշտպանության կարիք ունեցող օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ-ում ապաստանի տրամադրման ուղղությամբ աշխատանքների իրականացում:

8) 2019 թվականին ոլորտում մատուցվելիք ծառայություններում կատարվող խոշոր փոփոխությունները ներառյալ այն ծառայությունները, որոնք աջակցում են հիմնական գերակա վերջնական արդյունքների նվաճմանը կլինեն՝

- մարզային զարգացման ծրագրերի համապատասխանեցումը ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած ՀՀ 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարության հետ,
- 2019 թվականին ոլորտում խոշոր ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերում չի նախատեսում:

Գյուղատնտեսություն

ՀՀ ագրարային հատվածում կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունը 2019 թվականին կնպատակաուղղվի գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը, գյուղատնտեսական ամբողջ արժեշղթայում ընդգրկված սուբյեկտների՝ գյուղացիական տնտեսությունների (ներառյալ փոքր և միջին գյուղացիական տնտեսություններ), կոոպերատիվների, գյուղատնտեսական մթերքներ վերամշակողների, սպասարկող

ենթակառուցվածքների եկամուտների ավելացմանը և երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը: Կիրառվող քաղաքականության արդյունքում պետական աջակցության մի շարք ծրագրերի իրականացումով պայմաններ կստեղծվեն ագրոպարենային ոլորտի կայունացման, հետագա զարգացման ու աշխատանքի արտադրողականության բարձրացման, գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար բարենպաստ պայմանների ստեղծման, իրական եկամուտների ավելացման, հիմնական պարենամթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացման համար: ՀՀ կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունը կուղղվի ռեսուրսային ներուժի օգտագործման մակարդակի բարձրացմանը, սերմնաբուծության և տոհմային գործի համակարգի ամրապնդմանը, բույսերի առավել վտանգավոր հիվանդությունների դեմ պայքարին, հողային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը և անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների իրականացմանը, վարկերի, ինչպես նաև գյուղատնտեսության մեջ օգտագործվող կարևորագույն նյութական ռեսուրսների մատչելիությանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը, մասնավորապես գյուղատնտեսական և ագրոպարենային ոլորտում այլ տեխնիկայի լիզինգային մեխանիզմներով մատակարարմանը, ինտենսիվ այգեգործության խթանմանը, ոռոգման արդիական տեխնոլոգիաների ու կարկտապաշտպան ցանցերի ներդրմանը, գյուղատնտեսական կոոպերացիայի խթանմանը, ոլորտի խորհրդատվական համակարգի զարգացմանը և այլն:

ՀՀ կառավարության ծրագրով նպատակ է դրվել գյուղատնտեսության արդյունավետության բարձրացումը, գյուղատնտեսական արժեշղթայի զարգացումը, պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը, բարձրարժեք գյուղատնտեսության զարգացումը, արդիական տեխնոլոգիաների ներդրումը, ներմուծման փոխարինումը, արտահանման ծավալների ավելացումը և գյուղատնտեսությունում տնտեսվարողների գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծումը:

2019 թվականին ագրոպարենային ոլորտի բարեփոխումները կուղղվեն հետևյալ խնդիրների լուծմանը.

- պետության և մասնավոր հատվածի միջև համագործակցության արդյունքում մի շարք պետական աջակցության ծրագրերի համատեղ իրականացում,
- գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների, հատկապես հողային ռեսուրսների օգտագործման վիճակի բարելավում և հողատեսքերի խոշորացում,
- գյուղատնտեսությունում տնտեսավարող սուբյեկտների համար գործունեության նպաստավոր պայմանների ստեղծում և մրցունակության բարձրացում,

- գյուղատնտեսության տնտեսավարման ձևերի զարգացում, հատկապես կոոպերացիայի խթանում,
- մատչելի մեխանիզմների կիրառմամբ ագրոպարենային ոլորտի տեխնիկական հագեցվածության վիճակի բարելավում,
- խորհրդատվական համակարգի կատարելագործում,
- գյուղատնտեսական մթերքների իրացման պայմանների բարելավում, գյուղատնտեսական մթերքների արտադրողների և վերամշակողների փոխհարաբերությունների կատարելագործում,
- ագրարային արտադրական և սպասարկման գործընթացներում արդիական մեթոդների և տեխնոլոգիաների ներդրման աջակցություն,
- գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրման համար նախադրյալների ստեղծում:

Նշված քաղաքականության իրականացման նպատակով ՀՀ-ում 2019 թվականի պետական բյուջեով նախատեսվող ծախսերը առաջնահերթ կնպատակաուղղվեն հետևյալ ծրագրերի իրականացմանը.

- ոռոգման արդիական տեխնոլոգիաների ներդրում,
- կարկտապաշտպան ցանցերի ներդրման աջակցություն,
- մատչելի մեխանիզմներ՝ ֆինանսական վարձակալությամբ, լիզինգով գյուղատնտեսական և ագրոպարենային ոլորտի տեխնիկական միջոցների մատակարարում,
- գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարողներին և գյուղատնտեսական մթերքների վերամշակող սուբյեկտներին վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման մեխանիզմների կիրառում,
- գյուղացիական տնտեսություններին ուղղակի աջակցություն,
- փոքր գյուղացիական տնտեսությունների վարկերի մատչելիության բարձրացում,
- ժամանակակից տեխնոլոգիայով մշակվող ինտենսիվ այգեգործության խթանման միջոցառումներ,
- խաղողագործության և գինեգործության պետական աջակցություն,
- հողերի ագրոքիմիական հետազոտություններ և բերրիության բարձրացում,
- անասնաբուծության զարգացում,
- գյուղատնտեսությունում ապահովագրական փորձնական ծրագրի իրականացում,
- տեղեկատվական և խորհրդատվական ոլորտի ամրապնդում և զարգացում,
- սերմնաբուծության և սերմապահովության միջոցառումների կազմակերպում,
- սերմերի որակի ստուգում և պետական սորտափորձարկում,

- բույսերի պաշտպանության միջոցառումներ,
- գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ հակահամաճարակային միջոցառումներ,
- բնական կերհանդակների նպատակային և համակարգված օգտագործում:

Ագրոպարենային համակարգի զարգացման 2019 թվականի քաղաքականության մեջ որպես գլխավոր նպատակ կշարունակվի մնալ երկրի ռեսուրսային ներուժի օգտագործման արդյունավետության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը: Դրա հետ մեկտեղ հետևողական աշխատանքներ կիրականացվեն գյուղատնտեսությունում արդիական տեխնոլոգիաների ներդրման, փոքր և միջին գյուղացիական տնտեսությունների, ագրովերամշակման ոլորտի վարկավորման բարելավման, ոլորտը սպասարկող ենթակառուցվածքների զարգացման օրենսդ ական հիմքերի բարելավման և ագրարային ոլորտում տնտեսավարման ձևերի զարգացման ուղղությամբ, ինչը նպաստավոր պայմաններ կստեղծի ագրարային ոլորտի մասնավոր հատվածի կարողությունների ընդլայնման և տնտեսավարողների գործունեության արդյունավետության բարձրացման համար:

Ագրարային ոլորտում պետական քաղաքականության նպատակներն ու գերակայությունները համահունչ են ՀՀ կառավարության ծրագրի, «ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ծրագրի» և «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության» դրույթներին: Նախանշված քաղաքականությունը նախադրյալներ կստեղծի ճյուղում տնտեսական աճի ապահովման, գյուղատնտեսությունում առկա հողային, նյութատեխնիկական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների օգտագործման և գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման համար:

Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների կառավարման բնագավառ

Էներգետիկայի բնագավառում իրականացվող պետական քաղաքականությունը հետևողականորեն շարունակվելու է նպատակաուղղվել երկրի էներգետիկ անկախության ապահովմանն ու անվտանգության բարձրացմանը, տարածաշրջանային ինտեգրման գործընթացի ապահովմանը, էներգետիկ ոլորտի կայուն զարգացմանը՝ հենվելով տեղական առաջնային (վերականգնվող) էներգապաշարների լիիրավ և արդյունավետ օգտագործման, ատոմային էներգետիկայի հետագա զարգացման, էներգակիրների մատակարարման տարատեսականացման և էներգաարդյունավետ ու նոր տեխնոլոգիաների ներդրման վրա:

Էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնարար ուղղություններն են լինելու՝ սեփական վերականգնվող էներգապաշարների տնտեսապես հիմնավորված պոտենցիալի իրացումը, արտահանման կողմնորոշում ունեցող կայուն ու հուսալի էներգահամակարգի

կառուցումը, ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած նոր արտադրող հզորությունների կառուցումը, ատոմային էներգետիկայի պահպանումը և զարգացումը՝ այդ թվում գործող ատոմային էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման հետ կապված աշխատանքների իրականացումը, էներգաբլոկի անվտանգության և հուսալիության աստիճանի բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացումը, նոր ատոմային էներգաբլոկի կառուցման նախապատրաստական աշխատանք ների իրականացումը, և տարածաշրջանային էներգահամակարգերի հետ ինտեգրումը:

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի հատկացումների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոց- ների հաշվին կշարունակվեն՝ «Լալվար» և «Նոյեմբերյան» 110 կՎ օդային գծերի, «Հաղթանակ», «Աշնակ», «Ագարակ-2», «Շինուհայր» և Երևանի ՋԷԿ-ի 220 կՎ, «Չարենցավան-3» և «Վանաձոր-1» 110 կՎ ենթակայանների վերակառուցման, կարգավարման կառավարման ավտոմատացված համակարգի (SCADA) ընդլայնման, ինչպես նաև Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի և 400 կՎ «Նորավան» ենթակայանի կառուցման աշխատանք ները և կմեկնարկեն Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծերի և համապատասխան ենթակայանների կառուցման մրցութային գործընթաց- ների, «Արարատ-2» և «Զովունի» 220 կՎ ենթակայանների վերակառուցման աշխատանքները:

ՌԴ աջակցությամբ կշարունակվի Հայկական ԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման աշխատանքների իրականացումը, իսկ սեփական միջոցների և դոնոր երկրների կողմից հատկացվող միջոցների հաշվին կիրականացվեն Հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի անվտանգության մակարդակի բարձրացման աշխատանքները:

Ատոմային էներգիայի խաղաղ նպատակներով անվտանգ օգտագործման բնագավառում մշակվել և ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել ՀՀ-ում առաջացած ռադիոակտիվ թափոնների և աշխատած միջուկային վառելիքի անվտանգ կառավարման ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն): Ռազմավարության դրույթների կատարումն ապահովելու նպատակով մշակվել նաև միջոցառումների ծրագիրը և պլան-ժամանակացույցը:

Նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագրի իրականացման համար ֆինանսական միջոցների ներգրավման նպատակով կշարունակվեն բանակցությունները հնարավոր ներդրողների հետ:

Նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագիրն ընդգրկված է ՀՀ Նախագահի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի 182-ՆԿ կարգադրությամբ հաստատված «Հայաստանի Հանրա-

պետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգ»-ում և ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի № 836-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումների ծրագիր-ժամանակացույց»-ում /կետ 2/:

Ոլորտի լիազոր մարմնի կողմից արդեն իսկ մեկնարկել են ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման պլան-ժամանակացույցի մշակման աշխատանքները: Պլան-ժամանակացույցը ներառելու է նոր միջուկային էներգաբլոկի կառուցման համար անհրաժեշտ բոլոր խոշոր փուլերը՝ սկսած ներդրողների ներգրավումից մինչև կառուցում և շահագործում: Նախատեսվում է պլան-ժամանակացույցը ՀՀ կառավարության քննարկման ներկայացնել 2019 թվականի դեկտեմբերին:

Ներկայումս էներգահամակարգն ամբողջովին բավարարում է էլեկտրաէներգետիկայի ներքին շուկայի պահանջարկը և պահպանում է էլեկտրաէներգիայի արտահանման որոշակի ներուժ: Ներքին շուկայի կարիքներից ելնելով և Վրաստանի ու Իրանի հետ առևտրի հնարավորություններն օգտագործելու նպատակով ՀՀ կառավարությունը ձեռնամուխ է եղել ՀՀ էլեկտրաէներգետիկ շուկայի փուլային ազատականացման գործընթացին:

ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 27-ի 32-10 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման և միջպետական առևտրի զարգացման միջոցառումների ծրագիրը, որի հիմնական նպատակն է էլեկտրաէներգետիկական շուկայի ամբողջությամբ կարգավորվող մոդելից նոր՝ ազատական մոդելին անցումը, առևտրի ժամանակակից կանոնների ներդրումը, սակագնային համակարգի հետագա կատարելագործումը և միջպետական առևտրի խթանումը: Ծրագիր-ժամանակացույցով նախատեսված են միջոցառումներ մինչև 2021 թվականը:

Կշարունակվեն էներգետիկայի բնագավառի տեխնիկական կանոնակարգերի վերամշակման և ազգային ստանդարտների մշակման աշխատանքները՝ միջազգային համապատասխան ստանդարտներին ու նորմերին դրանց աստիճանական մոտարկման մեթոդների կիրառմամբ:

Հայաստանի չգազիֆիկացված համայնքներում մաքուր էներգիայի զարգացմանն աջակցելու և արևի, կենսազանգվածի, քամու և այլ վերականգնվող աղբյուրներից էներգիայի և կենսավառելիքի ստացման ծրագրերն իրականացնելու նպատակով 2017 թվականի օգոստոսից մեկնարկել է «Էներգաարդյունավետ» վարկային ծրագիրը:

Հանրապետության գազամատակարարման համակարգի վերականգնման ու զարգացման ուղղությամբ շարունակվելու են հանրապետության գազափոխադրման ու գազաբաշխման

համակարգերի, ստորգետնյա գազապահեստարանի օպտիմալ ծավալի որոշման և դրա արդիականացման աշխատանքները: Կշարունակվեն գազամատակարարման համակարգի անվտանգության ապահովմանն և շարունակական բարձրացմանն ուղղված աշխատանքները:

«Ընդերքի բնական պաշարների բնագավառում 2019 թվականին իրականացվող պետական քաղաքականության հիմնախնդիրն է.

Բնական պաշարների արդյունավետ և թափանցիկ կառավարման, հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացմանը նպաստելու, ինչպես նաև ոլորտի քաղաքականության օրենսդրական նոր հենքի ստեղծման նպատակով ինստիտուցիոնալ համակարգի ուսումնասիրության իրականացումը և նախկինում իրականացված ախտորոշիչ ուսումնասիրությունների հիման վրա հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության մշակումը:

2019 թվականին իրականացվող պետական քաղաքականությունը շարունակելու է լինել.

- միջազգային չափորոշիչներին համահունչ, հետախուզված և գնահատված ընդերքի պաշարների սահմանված կարգով փորձաքննության ապահովումը,
- ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի պահանջներին համապատասխան, օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի վարումը, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքի տեղամասերի պետական հաշվառման իրականա ցումը, հանքավայրերի և օգտակար հանածոների երևակումների պետական կադաստրի վարումը,
- երկրաբանական տեղեկության թափանցիկության և պոտենցիալ ներդրողների համար վերջինիս հասանելիության ապահովումը,
- «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում նոր հաշվառվող տվյալների թայնացումը և հրապարակումը,
- ՀՀ-ի կողմից ԱՃԹՆ/EITI-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) շրջանակներում՝ հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տարեկան ազգային զեկույցի կազմումը և հրապարակումը,
- ընդերքօգտագործող կազմակերպությունների իրական սեփականատերերի ռեգիստրի ստեղծման և վարման համար օրենսդրական հենքի ապահովումը:

Միջուկային անվտանգություն

1 Միջուկային ու ռադիացիոն անվտանգության կարգավորման համակարգի զարգացումն ու կատարելագործման առաջնահերթ ուղղություններն են՝

- ՀՀ միջուկային օրենսրդրության համապատասխանեցումը Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) անվտանգության ստանդարտներին, Եվրոպա-

կան միության անվտանգության դիրեկտիվների, այդ թվում՝ Արևմտաեվրոպական երկրների կարգավորող մարմինների ասոցիացիայի (WENRA) անվտանգության պահանջներին, ինչպես նաև, հաշվի առնելով Ֆուկուշիմայի ԱԷԿ-ի վթարի և «սթրես-թեստի» ուսումնասիրության արդյունքները, զարգացած երկրների փորձը, Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման լիցենզավորումը, «Ատոմային էներգիայի մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի մշակումը, միջուկային և ճառագայթային անվտանգության նոր նորմերի, կանոնների, պահանջների, ուղեցույցների, մեթոդների մշակումը, գործող նորմերի ու կանոնների վերանայումը, լրամշակումը, անվտանգությանը վերաբերող փաստաթղթերի քննարկումը, վերլուծությունը և գնահատումը, Հայկական ԱԷԿ-ի «սթրես թեստի» ազգային հաշվետվության վերաբերյալ ԵՀ փորձագետների առաջարկություններն ամփոփող հաշվետվության հիման վրա մշակված գործողությունների ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների լիցենզավորումը / թույլտվություն տալը,

- ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի՝ ՀՀ կողմից վավերացրած միջազգային 10 պայմանագրերից բխող պարտավորությունների կատարումը (օրենսդրության համապատասխանեցում պայմանագրերի պահանջներին, տեղեկատվական բազայի ստեղծում և փոխանակում պայմանագրերի անդամ-պետությունների միջև, ազգային հաշվետվությունների մշակումը և ներկայացումը), ՀՀ վարչապետին կից Ատոմային էներգիայի անվտանգության խորհրդին կոմիտեի գործունեության վերաբերյալ և Հայկական ԱԷԿ-ի անվտանգության վերաբերյալ հաշվետվության մշակումը,
- կոմիտեի տեխնիկական աջակցության կազմակերպության՝ «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի զարգացումը,
- իրավաբանական և ֆիզիկական անձանց լիցենզավորում՝ ժամանակակից մոտեցում ներին համապատասխան,
- ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների կարգավորող վերահսկողության և տեսչական ստուգումների անցկացումը, շրջակա միջավայրի ճառագայթային մոնիթորինգի ժամանակակից համակարգի ներդրումը՝ շրջակա միջավայրի հնարավոր ռադիոակտիվ աղտոտմամբ պայմանավորված բնակչության ճառագայթահարումը վերահսկելու համար,
- մասնագիտական և տեսչական անձնակազմի որակավորման բարձրացումը (փորձի փոխանակում, վերապատրաստում, դասընթացներ),

- միջուկային և ճառագայթային անվտանգության վերաբերյալ տեղեկատվական համակարգի (ներքին և արտաքին) կատարելագործումը,
- միջուկային զենքի չտարածման ռեժիմի ուժեղացում, միջուկային նյութի հաշվառման և վերահսկման պետական համակարգի կատարելագործումը,
- կոմիտեի գործունեության որակի ապահովման ծրագրի կատարելագործումը,
- վթարային հակազդման կենտրոնի համապատասխանեցում ժամանակակից պահանջ ներին,
- միջազգային համագործակցության զարգացումը:

2. Տեսչական գործունեությունը: Կարգավորող մարմնի տեսչական գործունեության կատարե լագործման համար նախատեսվում է.

- համապատասխանեցնել տեսչական գործունեության վերաբերյալ գործող կարգավորող և ղեկավարող փաստաթղթերը ժամանակակից պահանջներին,
- կատարելագործել միջուկային տեղակայանքների և ռադիոակտիվ թափոնների տեղակայանքների, ատոմային էներգիայի օգտագործման այլ օբյեկտների տեսչական ստուգումների անցկացման աշխատակարգերը (համապատասխանեցնել ժամանակակից մոտեցումներին),
- բարձրացնել տեսուչների աշխատանքի որակը,
- կատարելագործել ռիսկի գնահատման հիման վրա իրականացվող տեսչական գործու- նեությունը:

3.Վթարային հակազդման համակարգի զարգացումը: Վթարային հակազդման համակարգը ՀՀ միջազգային պայմանագրերի և ԱԷՄԳ պահանջներին համապատասխանեցնելու համար նախատեսվում է

- զարգացնել և կատարելագործել գործող ճառագայթային մոնիթորինգի և տեղեկատվության համակարգը,
- համապատասխանեցնել վթարային հակազդման կենտրոնը, ներառյալ կենտրոնի գոր- ծունեության հրահանգները, ժամանակակից պահանջներին՝ հաշվի առնելով Ֆուկուշի- մայի ԱԷԿ-ի վթարի ուսումնասիրության արդյունքները,
- ԱԷՄԳ պահանջներին համապատասխան իրականացնել վթարային վարժանքներ,
- վերանայել վթարային հակազդման ազգային համակարգի մեջ մտնող նախարարութ յունների և գերատեսչությունների հետ համագործակցության մասին համաձայնագրերը,
- կատարելագործել ներքին և արտաքին տեղեկատվական համակարգերը:

4. Միջուկային զենքի չտարածման ռեժիմի ամրապնդումը՝

4.1. Միջուկային նյութերի չտարածման երաշխիքների, հաշվառման և հսկման պետական համակարգի զարգացման շրջանակներում նախատեսվում է.

- վերամշակել նորմերը և կանոնները՝ համաձայն ԱԷՄԳ առաջարկությունների և ստանդարտների,
- կատարելագործել միջուկային և ռադիոակտիվ նյութերի հաշվառման և վերահսկման պետական համակարգը,
- մշակել և ներդնել միջուկային և ռադիոակտիվ նյութերի պետական հաշվառման արդիա կան համակարգեր, ներառյալ ծրագրային միջոցներ:

4.2. Միջուկային և ռադիոակտիվ նյութերի ու տեղակայանքների ֆիզիկական պաշտպանության կարգավոման շրջանակներում նախատեսվում է

- լրամշակել նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերը,
- միջուկային տեղակայանքների ֆիզիկական պաշտպանության վիճակը գնահատելու համար ՀՀ այլ պատասխանատու գերատեսչությունների և միջազգային կազմակերպու- թյունների հետ համատեղ անցկացնել միջուկային տեղակայանքների և միջուկային նյու- թերի տեսչական ստուգումներ, անհրաժեշտության դեպքում, հաշվի առնելով նոր մար- տահրավերները, վերանայել նախագծային սպառնալիքը,
- ստեղծել պաշտպանված կապուղիներ:

5. Կոմիտեի ամրապնդումը՝

5.1. Կադրային, ֆինանսական և նյութական ապահովման կատարելագործումը:

Ի կատարումն «Միջուկային անվտանգության մասին» կոնվենցիայի և անվտա- գության ստանդարտների պահանջների, ԱԷՄԳ-ի փորձագիտական առաքելություն- ների և ՀՀ վարչապետին կից Ատոմային էներգետիկայի անվտանգության խորհրդի առաջարկությունների նախանշվում են հետևյալ երեք հիմնական ուղղությունները.

- տեսչական և մասնագիտական անձնակազմի արտահոսքը կանխելու նպատակով փուլ առ փուլ բարձրացնել տեսչական և մասնագիտական անձնակազմի աշխատա- վարձը՝ հասցնելով այն վերահսկվող օբյեկտների համապատասխան որակավորում ունեցող և պատասխանատվություն կրող աշխատողների աշխատավարձի չափին,
- բարելավել աշխատողների աշխատանքնային պայմանները (ծառայողական անհրա- ժեշտ տարածքներ, գրասենյակային և համակարգչային ժամանակակից տեխնիկա և այլն),
- ապահովել անհրաժեշտ ֆինանսկան միջոցների առկայություն գործունեության անկախության և միջուկային ու ճառագայթային անվտանգության հետազոտու- թյունների իրականացման համար:

5.2. «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի զարգացումը:

«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի զարգացումը պայմանավորված է ատոմային էներգիայի օգտագործման ոլորտին առնչվող գիտատեխնիկական բնույթի բազմապիսի խնդիրների առկայությամբ (գործող և նոր ատոմակայանին, միջուկային աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների անվտանգությանը վերաբերող և այլն), որոնց լուծումը պահանջում է վերլուծական, տեխնիկական, հաշվողական, մեթոդական և փորձագիտական աշխատանքների կատարում:

«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի զարգացման առաջնահերթ ուղղություններն են

- միջուկային անվտանգության գնահատման ժամանակակից մեթոդների յուրացումը և կիրառումը,
- մասնագետների արտահոսքի կանխումը,
- մասնագիտական որակավորման բարձրացումը և նոր կադրերի պատրաստումը, ռադիոլոգիական ազդեցության գնահատման և չափումների նորագույն միջոցների և մեթոդների ներդնումը:

6. **Միջազգային համագործակցությունը:** Տեխնիկական աջակցության ծրագրերի շրջանակներում կշարունակվի համագործակցությունն ԱԷՄԳ-ի, Եվրոպական հանձնաժողովի, ԱՄՆ-ի, Չեխիայի, ՌԴ և այլ երկրների միջուկային կարգավորող մարմինների և տեխնիկական աջակցության կազմակերպությունների հետ:

Ջրային տնտեսություն

Ջրային տնտեսության ոլորտում մշտապես կարևորվում է անցած տարիների ընթացքում կատարված բարեփոխումների շարունակական գործընթացի ապահովումը, նոր գաղափարների իրացումն ու ոլորտի զարգացման քաղաքականությունից բխող հիմնախնդիրների լուծումը:

2019 թվականին խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման աշխատանքների բարելավման գերակա ուղղություններ կլինեն համակարգերում ջրամատակարարման շարունակականության և ջրի որակի բարելավման ապահովումը, համակարգերում կառավարման բարեփոխումների խորացումն ու ամրապնդումը, կատարելագործումը, ներդրումների անհրաժեշտ ծավալների ներգրավումը և իրականացումը, ջրային համակարգերի վերականգնմանը և զարգացմանն ուղղված համալիր

միջոցառումների իրականացումը, համակարգերի օգտագործման տնտեսական արդյունավետության և հուսալիության բարձրացումը, համակարգում առկա և նոր գործարկվող հզորությունների պատշաճ շահագործումը և պահպանումը, մատուցված ծառայությունների դիմաց վարձավճարների հավաքագրման մակարդակի բարձրացման և ջրի կորուստների նվազեցման նպատակով հաշվառման համակարգի կատարելագործման համալիր ծրագրերի ներդրումը, ինչպես նաև ընկերությունների ինքնածախսածածկման ապահովման շարունակումը:

Աշխատանքները կիրականացվեն կառուցվածքային բարեփոխումների, ջրամատակարարման տևողության ավելացման, ջրի որակի բարելավման, ինստիտուցիոնալ բարեփոխումների խորացման, վարձակալության պայմանագրերի վերահսկման, մատակարարված ոռոգման ջրի դիմաց վճարների հավաքագրման մակարդակի բարձրացման, համակարգի ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, բյուջետային, վարկային և դրամաշնորհային միջոցների արդյունավետ օգտագործման և այլ ուղղություններով:

Հասանելի և որակյալ ծառայությունների մատուցման ապահովման նպատակով 2019 թվականի ընթացքում անհրաժեշտ է շարունակել համապատասխան ներդրումների կատարումը ջրային ոլորտում: Ներդրումային քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի համակարգերի պահպանմանը և վերականգնմանը, առկա ենթակառուցվածքների արդիականացումը և նորերի կառուցմամբ ծառայությունների մատուցման էներգատար կառուցվածքների փոփոխմանը, համակարգերում հաշվառելիության համակարգի բարելավմանը և արդիականացմանը:

Ընդհանուր առմամբ նախատեսվում է ապահովել խմելու և ոռոգման ջրի համակարգերի բարեփոխումների երկարաժամկետ ծրագրերի իրականացումը՝ հիմնականում նպատակ դնելով բարձրացնել դրանց շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը, բարձրացնել համակարգի կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը (այդ թվում՝ մասնավոր կառավարման միջոցով), ինչպես նաև կրճատել ջրի կորուստները և բարելավել ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակը: Միաժամանակ անհրաժեշտ է շարունակել կարևորագույն հիդրոտեխնիկական կառուցվածքների, այդ թվում՝ ջրամբարների պատվարների ամրապնդման ու նորոգման աշխատանքները, որը կապահովի դրանց անվտանգ ու անխափան շահագործումը:

ՀՀ ջրային տնտեսության ոլորտում նախատեսվում է իրականացնել հետևյալ հիմնական աշխատանքները.

1. Խմելու և ոռոգման ոլորտի կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ աշխատանքների իրականացում,
2. Ջրամատակարար կազմակերպությունների սպասարկման տարածքներից դուրս գտնվող բնակավայրերում ջրամատակարարման ներդրումային աշխատանքների իրականացում,
3. Կոյուղու մաքրման կայանների կառուցման աշխատանքների նախապատրաստում և իրականացում,
4. Ոռոգման ջրանցքների, ջրատարների և պոմպակայանների վերականգնում և նորոգում, ինչպես նաև ինքնահոս համակարգերի կառուցում,
5. Ջրամբարաշինության ծրագրերի նախապատրաստման և ջրամբարաշինական ծրագրերի իրականացման ապահովում,
6. Ոռոգման ոլորտում կառուցվածքային բարեփոխումների շարունակականության ապահովում, ջրօգտագործողների հետ առավելագույնս թափանցիկ և նոր որակի հարաբերությունների ներդրում,
7. Համաշխարհային բանկի, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական զարգացման բանկի կողմից ֆինանսավորվող վարկային ծրագրերի իրականացման ապահովում,
8. Խրախուսել ջրի և էլեկտրաէներգիայի խնայողությունը, ապահովել ջրամատակարարման տևողության ավելացումը և ջրի որակի բարելավումը, ինչպես նաև շարունակել կատարելագործել հաշվառման համակարգը: Սակավաջուր տարածքներում ջրամատակարարման կազմակերպում, խորքային հորերի վերագործարկում,
9. Իրականացնել վերահսկողություն ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում ապօրինությունների կանխարգելման ուղղությամբ,
10. Ապահովել Արփա-Սևան թունելի անխափան և անվտանգ շահագործումն ու նրա տեխնիկական վիճակի բարելավման աշխատանքների իրականացումը:

Տրանսպորտ, կապ և տեղեկատվական տեխնոլոգիաներ

Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների պետական կարգավորման, համակարգի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների գործունեության կառավարման և կոորդինացման միջոցով 2019 թվականին կշարունակվի ապահովվել տնտեսության մյուս ճյուղերի կազմակերպությունների և ազգաբնակչության պահանջարկը: Մասնավորապես իրականացվելու են ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված միջոցառումները՝ ներառելով ինտերնետի որակի և տարածվածության հարցերը, երկաթուղու

սակագնային բարելավումը, ճանապարհների որակի հետևողական բարձրացումը, երկրի ողջ տարածքով պատշաճ տրանսպորտային ենթակառուցվածքների և որակյալ ու անվտանգ ծառայությունների ապահովումը, տրանսպորտային միջոցների հարմարավետությունը, հասանելիությունը և հարմարեցված լինելը:

Ճանապարհային տնտեսության բնագավառ. Հաշվի առնելով տրանսպորտային ենթակառուցվածքների կարևորությունը ՀՀ տնտեսության զարգացման համար, ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների, ինչպես նաև դրանց վրա գտնվող տրանս-պորտային օբյեկտների (կամուրջներ, թունելներ և այլ արհեստական կառուցվածքներ) վերակառուցումը, հիմնանորոգումը, պարբերական (միջին նորոգում) և ընթացիկ պահպանումը մշտապես գտնվում է ՀՀ կառավարության ուշադրության ներքո: Երթևեկության ինտենսիվության աճի, ուղևորափոխադրումների ու բեռնափոխադրումների անվտանգության և արդյունավետության ապահովման նպատակով 2019 թվականին նախատեսվում է իրականացնել միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ու տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում, միջին նորոգում, ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում՝ ինչը մշտապես կապահովի ճանապարհների և կառույցների պահպանվածությունն այնպիսի վիճակում, որը համապատասխանում է անվտանգ և անխափան երթևեկության ապահովման պահանջներին:

2019 թվականին վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին կշարունակվի Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի վերակառուցման, Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման, ինչպես նաև կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագրերը:

Տրանսպորտի բնագավառ. 2019 թվականին կշարունակվեն «Միջազգային ավտոճանա-պարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» համաձայնագրի պահանջների ապահովման նպատակով ՀՀ-ում հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆների) կիրառման աշխատանքները:

Երկաթուղու բնագավառ. Կշարունակվի 2018 թվականի արդյունքներով համաձայնեցված ծավալներով և ուղղություններով երկաթուղով ուղևորափոխադրումներից առաջացած «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին վնասի փոխհատուցումը (Կոնցեսիոների կողմից 2019 թվականին վճարվելիք կանխատեսվող կոնցենսիոն վճարի չափով):

Կապի և հեռահաղորդակցության բնագավառ. Նախատեսվում է կազմել ՀՀ հաճախու-թյունների բաշխումների աղյուսակը, իրականացնել ռադիոեթերի մոնիտորինգի, ՌԷՄ-ի և ԲՀՍ-ի տեղադրման, փորձաքննության և չափումների անցկացման, կապի շինարարական

աշխատանքների տեխնիկական նորմերին համապատասխանության ընդունման, եթերի խանգարման աղբյուրների հայտնաբերման և վերացման աշխատանքներ:

ՀՀ-ում թվային հեռուստահեռարձակման ապահովման շրջանակներում կշարունակվի հանրապետական սփռման մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալումը: Արդյունքում ակնկալվում է՝ անխափան և որակյալ ռադիոկապի, հեռախոսային կապի և հեռուստառադիոհեռարձակման ապահովում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառ. ՀՀ կառավարության գործունեության առաջնահերթություններից մեկը եղել և մնում է տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտի զարգացումը: ՏՏ ոլորտը Հայաստանի տնտեսության ամենաարագ զարգացող ճյուղերից է, որը մեծապես նպաստում է երկրի տնտեսության աճին, մրցունակության և արտադրողականության բարձրացմանը, հավելյալ արժեք ապահովող աշխատատեղերի ստեղծմանը և երկրի վարկանիշի բարձրացմանը:

2019 թվականին ոլորտում կիրականացվեն Հայաստանի ՏՏ ոլորտի մրցունակության բարձրացման և տեխնոլոգիական կենտրոնների գործունեության աջակցության միջոցառումները, ինչպես նաև 2019 թվականին Երևանում կկազմակերպվի Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովը:

Քաղաքացիական ավիացիայի բնագավառի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով կիրականացվի թռիչքային և ավիացիոն անվտանգության մակարդակների համապատասխանեցում եվրոպական և միջազգային ստանդարտներին: Կշարունակվեն արդիականացվել Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանը և նրա ենթակառուցվածքները՝ ուղևորների օդանավակայանային սպասարկման ներկայիս մակարդակը պահպանելու և բարձրացնելու նպատակով: Հավասար մրցակցային պայմաններ կապահովվեն ՀՀ-ից և դեպի ՀՀ օդային փոխադրումներ իրականացնող ավիափոխադրողների համար:

Հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները: 2019 թվականի ընթացքում շարունակվելու է ՀՀ օրենսդրությամբ վերապահված իրավասության շրջանակներում հետևյալ ոչ հարկային եկամուտների գանձումը ՀՀ պետական բյուջե.

1. համակարգի 100 տոկոս պետական մասնակցությամբ ընկերությունների 2018 թվականի գործունեության արդյունքներով ստացվելիք զուտ շահույթից շահութաբաժինների վճարումը,
2. Պետական տուրքերը՝

   ա) օդային փոխադրամիջոցների վարման իրավունքի վկայական տալու համար՝ 12,0 հազ. դրամ,

բ) օդային փոխադրամիջոցների վարման իրավունքի վկայականի կրկնօրինակ տալու համար՝ 24,0 հազ. դրամ,

գ) «Զվարթնոց» օդանավակայանից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար՝ 10,0 հազ. դրամ:

Քաղաքաշինություն

Միջազգայնորեն ընդունված սկզբունքներին համահունչ նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի բարեփոխման և արդիականացման նպատակով ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի նիստի N 8 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում (տեղայնացում) ծրագրով» նախատեսված է թվով 4 նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում, ինչը հնարավորություն կտա ապահովել նախագծային և շինարարական աշխատանքների որակական երաշխիքները, ՀՀ շինարարական արտադրանքի և ծառայությունների համատեղելիությունը միասնական շուկայում շրջանառվող շինարարական արտադրանքի և ծառայությունների հետ:

2019 թվականին նախատեսվում է իրականացնել «Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակում» ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է մշակել ՀՀ Վայոց ձորի և ՀՀ Արմավիրի մարզերի, Դիլիջան համայնքի համակացված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերը:

Արտակարգ իրավիճակների ոլորտ

Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում ՀՀ կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունը նպատակաուղղված է լինելու բնական և մարդածին աղետների ռիսկի նվազեցմանը, հնարավոր հետևանքների կանխարգելմանը և վերացմանը՝ հանդիսանալով պետության անվտանգության ապահովման բաղկացուցիչ տարր, նպաստելու է երկրի կայուն զարգացմանը:

2019 թվականին ոլորտի հիմնական խնդիրներն են.

- Փրկարար ծառայությունում փրկարարական համակարգի կատարելագործում և զարգացում՝ այն աստիճանաբար համապատասխանեցնելով ընդունված ժամանակակից պահանջներին, զուգահեռաբար պետական փրկարարական կառույցի շուրջ ձևավորելով կամավորական փրկարարական ուժեր, փրկարար ծառայողների մասնագիտական, արագ արձագանքման փրկարար ուժերի պատրաստականության բարձրացում և տեխնիկական հագեցվածության ապահովում, քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի քաղաքացիական պաշտպանության ուժերի ու

ստորաբաժանումների խնդիրների առավել արդյունավետ դերաբաշխման և կառավարելիության բարձրացում, սահմանամերձ բնակավայրերում փրկարարական և արագ արձագանքման այլ ուժերի ստեղծում և զարգացում:

- Սեյսմիկ պաշտպանության ոլորտում սեյսմիկ վտանգի գնահատման հուսալիությունը բարձրացնելու նպատակով սեյսմիկ պաշտպանության ազգային դիտացանցի արդիականացում և թվայնացում: Շենքերի, շինությունների նախագծման, բնակավայրերի տարաբնակեցման և զարգացման ծրագրերում անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես դրանց հնարավոր անվտանգ վայրի ընտրությունը, այնպես էլ սեյսմիկ անվտանգությունը:
- Հիդրոօդերևութաբանության մոնիտորինգի ոլորտի հիմնական խնդիրները նպատակաուղղված են լինելու հիդրոօդերևութաբանական ստորաբաժանումների, կայանների և դիտակետերի աշխատանքների ավտոմատացմանը, թվայնացմանը, դիտարկումների ծրագրային համակարգերը միջազգային չափանիշների մակարդակին և ՀՕԿ-ի (Համաշխարհային օդերևութաբանության կոմիտե) կողմից ընդունված ստանդարտներին մոտեցնելուն, գործող սարքավորումների անխափան շահագործմանը, որն իր հերթին հնարավորություն կտա բարելավել հիդրոօդերևութաբանական սպասարկման որակը:
- Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության ոլորտի հիմնական խնդիրներն են ռադիոլոկացիոն ցանցի արդիականացումը, հակակարկտային հրթիռային համակարգի ներդրումը, կարկտահարություններից գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների, այգիների պաշտպանության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:
- Ճգնաժամային կառավարման պետական ոլորտի հիմնական խնդիրն է զարգացնել ակադեմիայի հնարավորությունները՝ դարձնելով այն արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության մասնագետների պատրաստման ու վերապատրաստման կենտրոն:
- Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնում մարդուն հրատապ օգնության համապետական համակարգի «911» դիսպետչերական ծառայության զարգացում՝ ծառայության մատուցումը հնարավորինս մոտեցնելով միջազգային չափանիշներին: Իրավիճակների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության հավաքման, մշակման, վերլուծության և առաջարկությունների նախապատրաստման համակարգի կատարելագործում:
- ՀՀ կառավարության կողմից հաստատված պետական պահուստի համակարգի զարգացման և բարեփոխումների հայեցակարգի դրույթների իրականացում, նյութական արժեքների կուտակում, թարմացում, փոխարինում և պահպանում, այս ոլորտում նոր

քաղաքականության մշակում՝ ընդգրկելով մասնավոր սեկտորի հնարավորություններն ու կարողությունները:

- Աղետների ռիսկի վերաբերյալ տվյալների հավաքագրման, վերլուծության, համայնքներում աղետների ռիսկի բացահայտման և գնահատման համակարգի փուլային ներդրում, սողանքային աղետի կառավարման միասնական համակարգի փորձնական ներդրում:

Արտաքին քաղաքականություն

ՀՀ արտաքին քաղաքականությունը նպատակաուղղված է լինելու բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանը, պետության արտաքին անվտանգության բաղադրիչի ամրապնդմանը, երկրի զարգացման համար արտաքին բարենպաստ պայմանների և երաշխիքների ապահովմանը, միջազգային կազմակերպություններում և գործընթացներում ներգրավվածության խորացմանը, Հայաստանի բարեկամների թվի ավելացմանը, միջազգային ասպարեզում Հայաստանի հեղինակության և դիրքերի ամրապնդմանը, միջազգային և տարածաշրջանային տնտեսական ու ֆինանսական կառույցների հետ ակտիվ համագործակցության զարգացմանը, այլ պետություններում ՀՀ և նրա քաղաքացիների շահերի պատշաճ ներկայացմանն ու պաշտպանությանը, հայկական մշակութային ժառանգության պահպանմանը, միջազգային հարաբերություններում դրական օրակարգ ձևավորող Հայաստանի և հայ ժողովրդի շահերից բխող նախաձեռնությունների իրականացմանը:

Նշված նպատակներին հասնելու համար ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական խնդիրներն են հանդիսանում՝

- ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորումը՝ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների և նորմերի, մասնավորապես՝ ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի հիման վրա: Հանգուցալուծման գործընթացում Հայաստանի առաջնահերթություններն են Արցախի կարգավիճակն ու անվտանգությունը, ինչպես նաև նրա որոշիչ ձայնի և ներգրավվածության ապահովումը,
- արտաքին անվտանգության ռազմաքաղաքական բաղադրիչի ամրապնդումը,
- Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումը, ցեղասպանությունների և մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելման միջազգային ջանքերում առաջամարտիկի և նախաձեռնողի դերակատարության ամրամպնդումը,
- Երկկողմ հարաբերություններում՝

- Ռուսաստանի հետ դաշնակցային փոխգործակցության և ռազմավարական հարաբերությունների առավել խորացումն ու ընդլայնումը,
- Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ բարեկամական գործընկերության ամրապնդումը,
- Եվրոպական միության հետ համապարփակ գործընկերության ընդլայնումը, Եվրամիության հետ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկումը և ՀՀ քաղաքացիների համար ԵՄ մուտքի արտոնագրային ռեժիմի ազատականացման շուրջ երկխոսություն մեկնարկը: Եվրոպական երկրների հետ համակողմանի փոխգոր- ծակցության խորացումը,
- անմիջական հարևանների՝ Վրաստանի և Իրանի հետ բարիդրացիական և փոխշահավետ հարաբերությունների հետագա խորացումը,
- փոխշահավետ համագործակցության ուղղությամբ իրական քայլերով՝ ԱՊՀ մասնակից պետությունների հետ հարաբերությունների խորացումը,
- Չինաստանի հետ բազմաբովանդակ հարաբերությունների հետագա ամրապնդումը, Ճապոնիայի և Հնդկաստանի հետ համագործակցության ընդլայնումը,
- Մերձավոր Արևելքի ավանդական գործընկեր երկրների հետ փոխգործակցության շարունակումը,
- Ամերիկյան մայրցամաքի երկրների հետ փոխշահավետ համագործակցության զարգացումը,
- Ասիայի, Աֆրիկայի և Օվկիանիայի պետությունների հետ փոխգործակցության ընդլայնումը,
- հայ-թուրքական հարաբերությունների՝ առանց նախապայմանների կարգավորումը,

▪ Բազմակողմ ձևաչափերում՝
- Եվրասիական տնտեսական միության շրջանակներում համագործակցությանն ակտիվ մասնակցությունը,
- ՀԱՊԿ-ի շրջանակում փոխգործակցության շարունակական խորացումը,
- ԱՊՀ շրջանակներում համագործակցությանն ակտիվ մասնակցությունը,
- ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում, ԵԽ-ում և այլ միջազգային կազմակերպություններում առավել ակտիվ ներգրավվածությունը և ՀՀ շահերի պաշտպանությունը,
- Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությանը ՀՀ ներգրավվածության խորացումը, 2018 թվականին Հայաստանում կայանալիք Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի պատշաճ կազմակերպումը, 2018-2020թթ. ՖՄԿ-ում Հայաստանի նախագահության հավուր պատշաճի կազմակերպումը,

- ՆԱՏՕ–ի հետ փոխգործակցության շարունակումը, Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի հետևողական իրականացումը,

- Միջազգային և տարածաշրջանային տնտեսական և ֆինանսական կառույցների հետ ակտիվ համագործակցության զարգացումը,
- Հայաստանի տնտեսական կայուն զարգացման նպաստմանը, մասնավորապես՝
  - երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացումը, հաղորդակցության ուղիների ապաշրջափակումը,
  - հայրենական արտադրանքի արտահանման խթանումը, նոր շուկաների բացահայտումը, օտարերկրյա ներդրումների և դեպի Հայաստան զբոսաշրջիկների թվի ավելացումը՝ դիվանագիտական ներկայացուցչությունների ակտիվ աջակցությամբ,
  - միջկառավարական հանձնաժողովների շրջանակներում աշխատանքներին աջակցությունը,
  - տնտեսական բնագավառի միջոցառումներին հայկական կողմի մասնակցության ապահովումը,
  - ՀՀ տնտեսության զարգացման տարբեր ոլորտներում սփյուռքի ներուժի առավել արդյունավետ ներգրավումը,
- Օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու շահերի պաշտպանությունը,
- Արտակարգ իրավիճակում հայտնված մեր հայրենակիցներին, այդ թվում՝ սիրիահայերին աջակցություն ցուցաբերումը,
- Օտարերկրյա պետություններում հայկական պատմամշակութային ժառանգության պահպանումը,
- Միջազգային ասպարեզում ՀՀ արտաքին քաղաքականության դիրքորոշումներն առավել ընկալելի դարձնելուն, բարենպաստ միջազգային հանրային կարծիքի ձևավորմանն ուղղված գործողությունների իրականացումը,
- երկկողմ և բազմակողմ ձևաչափերով խորհրդարանական դիվանագիտության զարգացման և կապերի ամրապնդման աջակցումը:

Արդարադատություն

2019 թվականին ոլորտի առաջնային ռազմավարական նպատակներն են լինելու՝

ՀՀ օրենսդրական ոլորտ. Ոլորտում իրականացվող գործունեությունը պետք է ուղղված լինի Հանրապետության օրենսդրության որակի բարձրացմանը և օրենսդրության ներքին հակասությունների բացառմանը: ՀՀ Սահմանադրությունից բխող օրենքների մշակման հիման

վրա պետք է իրականացվի ենթաօրենսդրական ակտերի մոնիթորինգ՝ դրանք Սահմանդրությանը համապատասխանեցնելու համար: Միաժամանակ կապահովվի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա գործող օրենսդրությունում փոփոխությունների և լրացումների իրականացումը:

Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում նախատեսվում է հետևողականորեն իրա- գործել Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողութ- յունների ծրագիրը, ինչպես նաև մշակել նորը:

Դատաիրավական ոլորտ. Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի ուժի մեջ մտնելուց հետո մշակվում են դրա կիրակումն ապահովող ենթաօրենսդրական ակտերը:

Անձի դատական պաշտպանության իրավունքը սերտորեն կապված է իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի հետ: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված անվճար իրավաբանական օգնության տրամադրման համար կբարձրացվի դրա հասանելիությունը, և կսահմանվեն նոր գործուն մեխանիզմներ, մասնավորապես կընդլայնվեն անվճար իրավաբանական օգնության տրամադրման հիմքերը, կավելացվեն հանրային պաշտպանների թիվը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատաիրավական ոլորտում իրականացվող բարեփո խումների արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է դրանց փուլային, շարունա- կական իրականացում՝ մշակվելու է դատաիրավական բարեփոխումների նոր ռազմավարություն:

Դատական ակտերի հարկադիր կատարման ոլորտ. Վերանայվում է ոլորտի օրենսդրությունը՝ առկա կառուցակարգերը կատարելագործելու և կատարողական վարույթի արդյունավետությունը բարձացնելու նպատակով:

Քրեակատարողական ոլորտ. ՀՀ քրեակատարողական համակարգում իրավիճակը բարելա- վելու, ինչպես նաև ոլորտի շարունակական զարգացումն ապահովելու համար հիմնական նպատակը լինելու է միջազգային չափանիշներին համապատասխան քրեակատարողական համակարգի կայացումը, քրեական պատիժների ոլորտում վերականգնողական արդարադատության սկզբունքների ներդնումը, պատժի նպատակների արդյունավետ իրագործումը, վերասոցիալականացման արդյունավետ համակարգի կայացումը, քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց պահման պայմանների բարելավումը, նրանց իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանության երաշխիքների ստեղծումը, քրեակատարողական ծառայողների սոցիալական պայմանների բարելավումը, կառավարման արդյունավետ մոդելի հիմնումը, կոռուպցիայից զերծ մշակույթի ձևավորումը, քրեակատարողական ծառայողների մասնագիտական պատրաստվածության բարձրացումը:

Պրոբացիայի ոլորտ. Այս ինստիտուտի կենսագործման նպատակով 2019 թվականի ընթաց- քում կշարունակվեն իրագործվել մի շարք միջոցառումներ: Մասնավորապես՝ նախատեսվում է զարգացնել պրոբացիայի պետական ծառայության կարողությունները, գործարկել էլեկտրոնային հսկողության համակարգը՝ ըստ փուլերի, մշակել և փորձարկել պրոբացիայի շահառուների վերասոցիալականացմանն ուղղված միջոցառումներ և ծրագրեր:

Նոտարական ոլորտ. Նախատեսվում է զարգացնել նոտարի՝ որպես «կանխարգելիչ արդարա- դատություն» իրականացնող մարմնի կարողությունները, որի արդյունքում կթեթևանա դատարան ների ծանրաբեռնվածությունը, իսկ դատավորների վարույթում գործերի կուտակումներ չեն լինի:

Սնանկության ոլորտ. Մշակվել է «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերը, որոնցով նախա- տեսված կարգավորումներն ուղղված են սնանկության գործերով կառավարիչների գործունեու- թյան արդյունավետության, պրոֆեսիոնալիզմի և հաշվետվողականության, սնանկության վարույթի արդյունավետության բարձրացմանը, օպտիմալացմանը, վարույթի ժամկետների, ծախսատարության կրճատմանը, օրենքում առկա հակասությունների ու թերությունների վերացմանը: Մասնավորապես՝ հստակեցվել են սնանկության վարույթի ընթացքում որոշումների կայացման և բողոքարկման կարգը և ժամկետները, սահմանվել են կարգա- պահական վարույթի հարուցման և իրականացման կարգը և այլ մանրամասները՝ ժամկետ- ները, առիթներն ու հիմքերը, նվազեցվել են սնանկության կառավարիչների վարձատրության տոկոսադրույքները, սահմանվել են հավելավճարներ սնանկության վարույթը սեղմ ժամկետներում ավարտելու դեպքում և ավելացվել է ֆինանսական առողջացմամբ սնանկու- թյան վարույթն ավարտելու դեպքում վճարվող տոկոսադրույքի չափը, սնանկության կառավարիչների կողմից իրականացվող գործողությունների համար (օրինակ՝ գույքի գնահատում, աճուրդի կազմակերպում, կրկնակի աճուրդի կազմակերպում և այլն) սահմանվել են հստակ ժամկետներ, ինչպես նաև նախատեսվել են այնպիսի այլ կարգավորումներ, որոնք ուղղված են Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցում ՀՀ դիրքի բարելավմանը:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտ. Նախատեսվում է արդիակա- նացնել քաղաքացիական կացության ակտերի ոլորտի օրենսդրությունը, այդ թվում՝ նախատեսել գործառնություններն առավելապես էլեկտրոնային եղանակով իրականացնելու գործիքակազմ և ներդնել «մեկ պատուհան» ծառայությունը՝ ապահովելով ՔԿԱԳ-ի տարած- քային մարմինների վերակազմակերպումը տարածքային սպասարկման գրասենյակներին:

Նախատեսվում է նաև պահովել ՀՀ տարածքում յուրաքանչյուր ծննդյան և մահվան ակտային գրանցումը՝ անկախ պետական գրանցման համար նախատեսված դիմում ներկայացնելու հանգա- մանքից: Մասնավորապես Քաղաքացիական կացության ակտային գրանցումների կատարման համար նախատեսել դիմողների կողմից ինտերնետային համապատասխան կայքի միջոցով՝ նույնականացման քարտի կիրառմամբ, մոբայլ ստորագրությամբ կամ սպասարկման գրասենյակի միջոցով անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման հնարավորություն, որոնց առկայության դեպ- քում դիմում ներկայացնելու օրենքով նախատեսված պահանջը կհամարվի կատարված:

ՔԿԱԳ էլեկտրոնային համակարգում դիմումների մշակման համապատասխան չափանիշների սահմանման դեպքում, մարդկային գործոնի ներկայությունը գրանցման կատարման ժամկետների վերաբերյալ որոշում կայացնելիս կարելի է ամբողջովին բացառել՝ հնարավորություն ընձեռելով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում դիմողներին պետական գրանցման օրը և վայրը ինքնուրույն ընտրելու: Ինչ վերաբերվում է փաստաթղթերում նշված տեղեկությունների մշակմանը, ապա այն կարող է իրականցվել կենտրոնացված տեսքով՝ մասնագետ-օպերատորների կողմից:

Իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրի ոլորտ. Իրավաբանական անձնաց պետական գրանցման բնագավառում բոլոր ծառայությունները արդեն իսկ մատուց- վում են առցանց կամ պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակների միջոցով՝ ինչի հաշվին զգալիորեն բարելավվել է ծառայությունների մատուցման որակը, կրճատվել են ծառայությունների մատուցման ժամկետները, ծառայությունները ավելի հասանելի են դարձել քաղաքացիներին: Մշակվել ու ներդրվել են փակ բաժնետիրական ընկերություններ և հասարակական կազմակերպություններ հիմնադրելու համար անհրաժեշտ փաստաթղթերի նմուշային ձևեր: Մշակվել և կառավարություն է ներկայացվել օրենքների նախագծերի փաթեթ, որի ընդունման և ներդրման դեպքում օրենքով սահմանված դեպքերում կիրականացվի իրավաբանական անձի իրական սեփականատիրոջ մասին տեղեկությունների գրանցում:

Մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու համար առաջնային է իրավա- բանական անձնաց արխիվային գործերի թվայնացումը: Թվայնացումից բացի որոշակի բարելավումներ պետք է իրականացվեն արդեն իսկ գործարկված համակարգերում (azdarar.am, e-register.am, registration.am) դրանք զարգացնելու, դրանց արդյունավետությունն առավել բարձրացնելու, ինչպես նաև ինքնաշխատ կերպով մատուցվող ծառայությունների մասնաբաժինը ավելացնելու նպատակով:

Պետական ռեգիստրի կողմից մատուցվող ծառայությունները ավելի հասանելի կլինեն էլեկտ- րոնային թվային ստորագրության կիառումը մեծացնելու դեպքում:

Բարեփոխումների կարևորագույն բաղադրիչն է բիզնես ռեգիստրի հիմնումը, ինչը հնարա- վորություն կտա ընկերությունների վերաբերյալ հիմնական տեղեկատվության հավաքագրումը և համապատասխան տեղեկատվության տրամադրումը այդ թվում և առցանց, ինչը կհեշտացնի թե՛ ֆինանսական կազմակերպությունների, թե՛ պետական մարմինների, թե՛ անմիջապես գործարարությամբ զբաղվողների աշխատանքը՝ անհրաժեշտ տեղեկատվությունը մեկ պատուհանից ստանալով:

Քաղաքացիներին արդյունավետ ծառայություններ մատուցելու համար նախատեսվում է նաև ավտոմեքենաների նկատմամբ ապահովված իրավունքների գրանցումների ներառումը շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների համակարգում, ինչպես նաև շարժական գույքի կադաստրի վարման համապատասխան իրավական հիմքի ձևավորումը և միասնական գրանցամատյանի վարումը, ինչպես նաև այդ գրանցամատյանի շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցամատյանին համակցումը:

Էլեկտրոնային արդարադատության ոլորտ. Էլեկտրոնային կառավարման ոլորտում քաղա- քացիներին և բիզնես ոլորտին պետության կողմից մատուցվող ծառայությունների որակի, մատչելիության ու արդյունավետության բարձրացումը ապահովելու նպատակով նախատեսվում է խթանել ոլորտում թվայնացման և էլեկտրոնային եղանակով պետական ծառայությունների մատուցման գործընթացը: Մասնավորապես, արդեն ընդունվել են լիցենզիաների էլեկտրոնային միասնական գրանցամատյան ստեղծելու վերաբերյալ օրենսդրական ակտերի նախագծերը, որոնց հիման վրա ներդրվում է լիցենզիաների էլեկտրոնային միասնական www.e-license.am գրանցամատյանը, գործարկվել է ՀՀ արդարադատության նախարարության «Թեժ գիծ»՝ www.e-hotline.am համակարգը, ընդլայնվել է պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակների և մատուց- վող ծառայությունների թիվը, ներդրվել և պիլոտային կիրարկման փուլում է գտնվում հարցումների միասնական էլեկտրոնային www.e-request.am հարթակը, միաժամանակ աշխատանքներ են իրականացվում կայքի հնարավորությունների վերաբերյալ հանրային իրազեկումն ապահովելու ուղղությամբ, աշխատանքներ են իրականացվում դատարանների էլեկտրոնային միասնական համակարգի, պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական www.e-verify.am համակարգի և անչափահասների արդարադատության խորհրդի կայքի ներդրման ուղղությամբ: Էլեկտրոնային կառավարման համակարգերի զարգացման նպատակով նախատեսվում է անցում կատարել բոլոր պետական մարմիններում ներդրված համակարգերի միասնական մուտքի և նույնականացման համակարգին:

Հակակոռուպցիոն ոլորտ. Վերջին ժամանակահատվածում կոռուպցիայի դեմ պայքարում իրականացվել են մի շարք օրենսդրական բարեփոխումներ: Մասնավորապես, քրեականացվել է ապօրինի հարստացումը, անկախ կանխարգելիչ հակակոռուպցիոն մարմին ստեղծելու նպատակով ընդունվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև ընդունվել են «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքը և դրանից բխող ենթա- օրենսդրական ակտերը, բարեփոխվել են հայտարարագրման և շահերի բախման ինստիտուտները և այլն: Միաժամանակ, Կառավարության 2018 թվականների միջոցառումների ծրագրով նախատեսվել են կոռուպցիայի դեմ պայքարում առաջիկայում իրականացվելիք քայլերը:

Տվյալ ոլորտում օրենսդրական նախաձեռնությունները կյանքի կոչելու, Կառավարության 2018 թվականի ծրագրով նախատեսված՝ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտին վերաբերող միջոցառումներն իրականացնելու, ինչպես նաև հանրային կառավարման ոլորտում հակակոռուպցիոն բնույթի շարունակական բարեփոխումներ կատարելու նպատակով՝ 2019 թվականի ընթացքում նախատեսվում է իրագործել հետևյալ միջոցառումները՝

- զարգացնել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը, այդ թվում՝ շարունակել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործունեության ապահովմանն ուղղված ենթաօրենսդրական ակտերի մշակումը,
- շարունակել ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի ստեղծման աշխատանքները՝ օրենքով նախատեսված ժամկետներում ավարտին հասցնելու և հարթակը գործարկելու նպատակով,
- շահագրգիռ մարմինների և քաղաքացիական հասարակության հետ շարունակական համագործակցության միջոցով մշակել հակակոռուպցիոն նոր գործուն, հեռանկարային ռազմավարություն, միաժամանակ ապահովել գործող ռազմավարության իրագործումը,
- շարունակել համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ՝ միջազգային պարտավորությունների գնահատման գործընթացներում մասնակցելու, վերջիններիս շրջանակներում Հայաստանին տրված հանձնարարականների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով,
- շարունակել իրականացնել ներպետական օրենսդրության և փորձի կատարելագործմանն ուղղված միջոցառումներ՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2018 թվականի ծրագրի 4-րդ՝ «Պայքար կոռուպցիայի և կաշառակերության դեմ» բաժնի պահանջները,
- նախաձեռնել և շարունակել կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ իրականացմանն ուղղված այլ միջոցառումներ:

Սփյուռք

2019 թվականին ոլորտի հիմնական արդյունքները կլինեն.

- Սփյուռքի մարդկային, ֆինանսական, տնտեսական և մտավոր ներուժի կենտրոնացումը ՀՀ-ում,
- Հայաստանի և Սփյուռքի միջև փոխշահավետ համագործակցության ապահովումը,
- Սփյուռքի ներուժը Հայաստանի կառավարման համակարգում ներգրավելու արգելքների և խոչընդոտների վերացումը,
- Հայրենադարձության քաղաքականության մշակում, ինտեգրում և դրա իրականացմանն ուղղված մեխանիզմների ներդրումը,
- Սփյուռքում ՀՀ-ի գործնական դերակատարման կարևորության բարձրացումը,
- Հայապահպանության ամրապնդում և զարգացում, գիտակրթական, մշակութային, տեղեկատվական իրազեկում, Սփյուռքում հայրենիքի և հայ ինքնության վերաբերյալ իմացության մակարդակի բարձրացումը:

2019 թվականին մատուցվելիք ծառայություններում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

- «Արի տուն» և «Ամառային դպրոց» ուսումնաճանաչողական ծրագրերը միավորվել են «Քայլ դեպի տուն» ուսումնաճանաչողական ծրագրի մեջ,
- ներդրվել է հայրենադարձությունը խթանող «ՆերՈՒԺ» ծրագիրը:

Ոլորտի ծառայությունների մատուցման ձևում խոշոր փոփոխություններ չեն նախատեսվել:

2019 թվականին ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր ևս չեն նախատեսվել:

Կրթություն

Մարդկային զարգացման ապահովման քաղաքականության հիմնական գերակայությունը կրթության կայուն զարգացման ապահովումն է՝ կրթության որակի, արդյունավետության և մատչելիության բարձրացման միջոցով: Պետական քաղաքականության մեջ կրթությունը գերակայությունների շարքում շարունակում է մնալ որպես ազգային արժեք և երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացն ապահովող հիմնարար գործոն:

Կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն առաջընթացի, մարդկային կապի-տալի վերարտադրության ու զարգացման նախապայմաններից մեկը: Տարածաշրջանային և համաշխարհային գործընթացներին համապատասխան ազգային կրթական համակարգ զարգացնելը ներկայիս հրամայականն է: Ըստ այդմ, այն պետք է

բավարարի և՛ յուրաքանչյուրին, և՛ ողջ հասարակությանն ու պետությանը՝ որպես հավաքական ամբողջություն:

Կրթության զարգացման գլխավոր նպատակն է ապագային միտված կրթական այնպիսի համակարգի ձևավորումը, որը լիարժեք ծառայում է ազգային շահերին, արտահայտում է կրթության համապատասխանությունը տնտեսության և հասարակության զարգացման ապագա ակնկալիքներին, յուրաքանչյուր քաղաքացու հնարավորություն է տալիս կյանքի բոլոր փուլերում ստանալ իր պահանջմունքներին համապատասխան որակյալ կրթություն:

Հանրակրթության ոլորտում կշարունակվեն հիմնական բարեփոխումները, որոնց նպատակներն են միջնակարգ կրթության որակի բարձրացումը, բնակչության բոլոր խավերի համար որակյալ կրթության հավասար մատչելիության ապահովումը միջնակարգ դպրոցի բոլոր (ինչպես նաև՝ նախադպրոցական) մակարդակներում և համակարգի արդյունավետության շարունակական բարձրացումը:

Շարունակվելու են տարրական դասարանների աշակերտներին, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին անվճար դասագրքերով ապահովելու քաղաքականությունը, հանրապետության դպրոցների համակարգչային սարքավորումների պահպանման, շարժական ինտերնետային կայանի շահագործման աշխատանքները:

«Դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովում» ծրագրի շրջանակում սննդով կապահովվեն ՀՀ Արարատի, Սյունիքի, Վայոց Ձորի, Տավուշի, Շիրակի մարզերի, 2019 թվականի սեպտեմբերից՝ Արագածոտնի մարզում հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում և դպրոցին նախապատրաստման խմբերում (նախակրթարաններում) ընդգրկված երեխաները:

Կշարունակվի ուսուցիչների վերապատրաստման գործընթացը՝ ապահովելով նրանց մաս-նագիտական հմտությունների բարձրացումը և որակավորման համապատասխանեցումը որոշակի չափորոշիչների, իսկ ուսուցիչների ատեստավորման կարգի կիրառմամբ նախատեսվում է մեծապես նպաստել հանրակրթության որակի բարձրացմանը:

ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների պակասը լրացնելու նպատակով շարունակվելու են ՀՀ մարզերը մանկավարժական կադրերով համալրելու աշխատանքները:

Սեյսմիկ և այլ վտանգների տեսանկյունից իրականացվելու են աշխատանքներ կապված դպրոցների շենքերի բարելավման, աղետների պատրաստվածության ու արձագանքման կարողությունների հզորացման ուղղություններով, բարելավվելու են փոքրաթիվ աշակերտա-

կազմ ունեցող հանրակրթական դպրոցների ուսումնական գործընթացի բնականոն և համակողմանի կազմակերպմանն առնչվող հարցերը:

Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման նպատակով ՀՀ Շիրակի մարզում կստեղծվեն երկու, ՀՀ Արագածոտնի մարզում մեկ, իսկ Երևան քաղաքում առնվազն հինգ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ:

Արտադպրոցական դաստիարակության ոլորտի զարգացման և կատարելագործման նպատակով շարունակվելու են արտադպրոցական կրթական նոր ծրագրերի մշակման և ներդրման գործընթացները, որոնք կնպաստեն սովորողների հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարմանը, հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական, ստեղծագործական կարողությունների զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական, կիրառական և հումանիտար գիտելիքների կատարելագործմանը:

«Դպրոցներում STEM կրթության և ռոբոտատեխնիկայի զարգացման իրականացում» ծրագրի շրջանակներում աշակերտներին հնարավորություն կընձեռվի ուսումնասիրել մեխանիկայի, էլեկտրոնիկայի, ծրագրավորման և ռոբոտատեխնիկայի հիմունքները, որի արդյունքում կզարգանա նրանց ճարտարագիտական և համակարգային մտածողությունը, թիմային աշխատաոճն ու համագործակցության ձգտումը:

Մասնագիտական կրթության բնագավառում կիրականացվեն մի շարք նախաձեռնություններ՝ ուղղված մասնագիտական կրթության որակի բարելավմանը, աշխատաշուկայի և միջազգային չափանիշներին ու պահանջներին համապատասխան կադրերի պատրաստման կարո- ղությունների հզորացմանը, եվրոպական կրթական տարածքին ինտեգրմանը, կրթության որակի ապահովմանը: Մասնագիտական կրթության ոլորտի իրականացվելիք բարեփոխումների հիմնական նպատակներից են լինելու, մասնավորապես, կրեդիտների կուտակման ու փոխանցման համակարգերի կատարելագործումը, սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների համար սոցիալական և ֆինանսական աջակցության ծրագրերի իրականացումը:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում առաջնային խնդիրներն են լինելու ուսուցման կազմակերպման նոր մոդելների ներդրումը (աշխատանքի վրա հիմնված), համակարգի բովանդակային արդիականացումը, ուսումնական հաստատությունների բարեկարգումը և ժամանակակից ուսումնական միջավայրի ստեղծումը:

Բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում կարևորվելու են պետական ֆինանսավորման մեխանիզմների մշակումը և զուգահեռ ներդնումը՝ կախված բուհերի հավատարմագրման արդյունքներից, եվրոպական բարձրագույն կրթական տարածքի

ինտեգրման սկզբունքների իրականացումը, ՀՀ պետական և ոչ պետական բուհերի գործունեության համար արդար մրցակցային դաշտի և հավասար հնարավորությունների ստեղծումը:

Սփյուռքի հետ տարվող աշխատանքները հիմնականում ուղղված կլինեն աջակցելու Սփյուռքի կրթօջախների գործունեությանը՝ նպաստելով հայապահպանման խնդիրների լուծմանն ու միջմշակութային երկխոսության զարգացմանը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կրթության բարելավման ծրագրի շրջանակներում նախատեսվում է շարունակել աջակցել կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին:

Առաջնային են լինելու նախադպրոցականից մինչև հետբուհական կրթության որակի, մասնավորապես՝ սովորողների, միջավայրի, ծրագրերի և ուսումնական նյութերի բովանդակության, գործընթացների, ինչպես նաև վերջնարդյունքների որակի բարելավումն ըստ ներպետական և միջազգային ցուցիչների:

Գիտության ոլորտ

ՀՀ գիտության ոլորտը պետք է լինի միջազգայնորեն մրցունակ, եվրոպական հետազոտական տարածքի հետ ինտեգրված, տնտեսության մրցունակությանը և անվտանգությանն անմիջականորեն նպաստող համակարգ: Այդ նպատակակետի ձեռքբերման համար անհրաժեշտ է իրականացնել գիտության ոլորտի բարեփոխումներ՝ ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմամբ և այդ արդյունավետության գնահատման հստակ, արդի պահանջներին համապատասխան չափանիշների ներդրմամբ:

2019 թվականին առաջնահերթ գերակա խնդիրներն են.

- ֆինանսավորման արդյունավետության բարձրացումը,
- տրամադրվող միջոցների ուղղումը դեպի երկրի տնտեսության պահանջներից բխող և գիտական հետազոտությունների արդի պահանջներին համապատասխանող ուղղություն- ներին,
- երիտասարդ գիտնականների համար Հայաստանում ապրելու և ստեղծագործելու պայ- մանների ստեղծումը,
- կրթության, գիտության, տեխնոլոգիաների և ինովացիայի սիներգետիկ համակարգի ձևավորման նախադրյալների ստեղծումը,
- հայագիտության ոլորտի հետազոտությունների խթանումը և միջազգային գիտական համագործակցության զարգացումը:

Վերոնշյալ գերակա խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներն են.

- գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատում,
- գիտության ոլորտի օպտիմալացում և կառուցվածքային բարեփոխումների իրականացում,
- երկակի նշանակություն ունեցող և պաշտպանական խնդիրներին միտված ծրագրերի, ինչպես նաև տնտեսության պահանջներից բխող գիտատեխնիկական ծրագրերի իրականացում,
- գիտական կադրերի վերարտադրության արդյունավետ համակարգի ներդրում,
- գիտական կազմակերպությունների համար նպաստավոր տնտեսական միջավայրի ձևավորման, ֆինանսավորման մեջ տնտեսության մասնավոր հատվածի ներգրավման խրախուսման մեխանիզմների մշակում և ներդրում,
- հայագիտության հետազոտությունների առաջանցիկ զարգացման ապահովում, այդ թվում՝ միջազգային համագործակցության զարգացման մակարդակի բարձրացում:

ՀՀ առողջապահության նախարարություն

Բնակչության առողջության պահպանման և բարելավման հիմնախնդիրները դիտարկվում են որպես պետության կայուն զարգացումը պայմանավորող հիմնական գործոններից և ազգային անվտանգության ապահովման առաջնահերթություններից մեկը: Առողջապահության ոլորտի գոր- ծունեության բարելավման և զարգացման քաղաքականության հիմքում որդեգրվել է ապահովել յուրաքանչյուր քաղաքացու առողջության պահպանման սահմանադրական իրավունքը՝ բուժօգնության տրամադրման հավասարություն, արդարություն, մատչելիություն, բժշկական օգնության որակի ապահովում:

Ոլորտում իրականացվող քաղաքականությունն ուղղված է լինելու հանրային առողջապահական ծառայությունների հզորացմանը, հիվանդությունների կանխարգելմանը, առողջ կենսակերպի համար պայմանների ստեղծմանը:

Առողջության առաջնային պահպանման, մոր և մանկան առողջապահական, վերարտադրողական առողջության պահպանման ծառայությունները լինելու են պետության առաջնահերթությունը:

Հանրային առողջապահական ծառայությունների հզորացման ոլորտում ՀՀ կառավարությունն ապահովելու է հանրային առողջապահության միասնական պետական քաղաքականության մշակումը և իրականացումը, օրենսդրական դաշտի բարելավումը, վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման պատճառների ուսումնասիրությունը և դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Բնակչության հիգիենիկ և հակահամաճարակային անվտանգության բնագավառում տարվող քաղաքականության հիմնական նպատակն է բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը, մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցության նվազեցումը՝ սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի, հիգիենիկ նորմատիվների պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության միջոցով:

Շարունակվելու են աշխատանքները հանրային առողջության համար վտանգ ներկայացնող իրավիճակներին արձագանքման կատարելագործման, համընդհանուր լաբորատոր ցանցի և լաբորատոր համակարգի շարունակական զարգացման, առողջ ապրելակերպի քարոզչության, աշխատողների առողջության պահպանման հիմնական կանոնների ու նորմերի սահմանման և կիրառման ուղղություններով:

Արտահիվանդանոցային և հիվանդանոցային առողջապահական ծառայությունների որակի, մատչելիության, հասանելիության ապահովման ոլորտում բժշկական օգնության կազմակերպման որակի բարձրացման առումով՝ բժշկական ծառայությունների որակի կառավարման նպատակով փուլ առ փուլ ներդրվելու են ապացուցողական բժշկության վրա հիմնված բժշկական օգնության տրամադրման չափորոշիչները: ՀՀ կառավարությունը շարունակելու է մարզային բժշկական կազմակերպությունները (առողջության առաջնային պահպանման օղակի և հիվանդանոցային) վերանորոգելու, վերակառուցելու և վերազինելու ծրագրի իրականացումը՝ հանրապետության ամբողջ տարածքում հասանելի դարձնելով ժամանակակից բժշկական ծառայությունները: Աշխատանքներ են իրականացվելու ոլորտը նորագույն սարքավորումներով վերազինելու և միասնական էլեկտրոնային համակարգ ներդնելու ուղղություններով:

Աշխատանքներ են իրականացվելու բնակչության անապահով և սոցիալապես առավել խոցելի խմբերի համար բժշկական ծառայությունների մատչելիության բարձրացման ուղղությամբ:

Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի (տեղամասային թերապևտ, մանկաբույժ, ընտանեկան բժիշկ) գործառույթները առավելագույնս ուղղվելու են հի- վանդությունների կանխարգելմանն ու վաղ հայտնաբերմանը:

Մոր ու մանկան առողջության պահպանման ծառայությունների բարելավման ոլորտում ՀՀ կառավարությունը նպաստելու է մոր և մանկան առողջության ցուցանիշների բարելավմանը՝ ուղղորդված առողջապահական ծրագրային միջոցառումների իրականացման միջոցով ապահովելու է մոր ու մանկան առողջության առաջնային պահպանման համակարգում կանխարգելիչ ծրագրային ուղղությունների ուժեղացումը:

2019 թվականին շարունակվելու է 2018 թվականին ընդհատված՝ «Անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը:

Առողջապահական կադրային ներուժի ապահովման ոլորտում իրականացվելու են աշխատանքներ բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական բարելավման ուղղությամբ:

Ներդրվելու են մեխանիզմներ առողջապահական կադրային ներուժի տարածքային օպտիմալ բաշխման, մարզային առողջապահական կազմակերպությունները որակյալ կադրերով ապահովելու և բժշկի աշխատանքը մարզում հնարավորինս խրախուսելու համար: Կարևորելով նշված կադրային խնդիրը՝ 2019 թվականին կվերականգնվի «Բժիշկ-մասնագետների ժամանակավոր ուղեգրման միջոցով ՀՀ մարզային առողջապահական կազմակերպություններում բժշկական ծառայությունների մատուցում» ծրագիրը:

Դեղային և տեխնոլոգիական քաղաքականությունը հիմնականում ուղղված է լինելու դրանց մատչելիության, անվտանգության և կիրառման արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև ավելի արդիական ու արդյունավետ դեղերով ապահովմանը:

Դեղերի անվտանգության, արդյունավետության և որակի ապահովման ոլորտում աշխատանք- ներ կիրականացվեն հանրապետությունում անվտանգ, արդյունավետ, որակյալ և մատչելի դեղեր ունենալու ուղղությամբ՝ դեղային ազգային քաղաքականության մշակման, դեղերի շրջանառության բոլոր փուլերի կանոնակարգման, այս ոլորտի պետական վերահսկողության բարելավման, հայրենական արտադրության դեղերի մրցունակության ապահովման և տեղական դեղարտադրության խրախուսման միջոցով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

2019 թվականին կշարունակվեն աշխատանքները կենսաթոշակային, զբաղվածության, հաշմանդամության բնագավառներում բարեփոխումների, կառուցակարգային փոփոխությունների, ինտեգրված սոցիալական ծառայությունների կայացման ուղղությամբ, միաժամանակ, ուշադրության կենտրոնում կլինեն նաև տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց և երեխաների հիմնահարցերի, ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերը և դրանց մոնիթորինգն ու գնահատումը: Կշարունակվի համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ՝ սոցիալական պաշտպանության համակարգը եվրակառույցների ամրագրած հիմնարար սկզբունքներին համահունչ դարձնելու նպատակով:

Սոցիալական աջակցության բնագավառում 2019 թվականին նախատեսվում է պետական նպաստների քաղաքականության մեջ շարունակել ընտանիքների անապահովության գնահատման ծրագրի հասցեականության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, մասնավորապես՝ առցանց եղանակով ստացվող անհրաժեշտ տվյալների շրջանակի հնարավոր ընդլայնում, համադրումներ տարբեր տեղեկատվական բազաների տվյալների հետ՝ նպաստառության ոչ ենթակա ընտանիքների հայտնաբերման նպատակով: Քննարկվում են ընտանիքների անապահովության գնահատման կարգում նոր բնութագրիչների ներառման, դրանց կիրառման հետ կապված հարցադրումները:

Հաշվի առնելով երեխաներին սոցիալական աջակցություն տրամադրելու առաջնահերթության սկզբունքը՝ նախատեսվում է ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստ ստացող ընտանիքների թվում երեխա ունեցող ընտանիքների թիվը պահպանել առնվազն 75%-ի սահմաններում: ՀՀ վիճակագրական կոմիտեի 2016 թվականի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության տվյալների համաձայն, եթե հանրապետությունում 2016 թվականին չիրականացվեր ընտանեկան նպաստի ծրագիրը, ապա ծայրահեղ աղքատությունը կկրկնապատկվեր՝ այն կլիներ 3.8 %՝ 1.8 %-ի դիմաց և աղքատության մակարդակը՝ 30.2%՝ 29.4 %-ի դիմաց:

Ընթացքի մեջ է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրումը. շարու նակվելու են հանրապետության մնացած տարածաշրջաններում համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների համար հատկացված շինությունների վերանորոգման ու վերազինման աշխատանքները:

Ներկայումս շարունակվում են սոցիալական դեպքի վարման գործառնական հենքի ձևավորման, ինչպես նաև տեղեկատվական համակարգի կատարելագործման ուղղությամբ կատարվող աշխատանքները: Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման գործընթացում կարևորվում է համագործակցության ապահովման միջոցով աշխատանքների իրականացումը, և այդ համակարգի հիմնական բաղադրիչներից են միջգերատեսչական սոցիալական համագործակցության կողմերը և ոչ պետական կազմակերպությունները: Շարունակվելու են սոցիալական աջակցության տարածքային մարմինների և համագործակցող կողմերի ներկայացուցիչների վերապատրաստման, անհրաժեշտ հմտությունների և ունակությունների ուսուցման ծրագրերը: 2019 թվականին նախատեսվում է ձևավորել որակավորման կրեդիտային սանդղակի վրա հիմնված սոցիալական աշխատողների հավաստագրման համակարգի նախադրյալները:

Շարունակվում է սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց կացարանի խնդրի լուծման նպատակով սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման,

կացարանի և այլ սոցիալական ծառայությունների տրամադրման հասցեական ծրագրերի իրականացման աշխատանքները:

Աշխատանքի և զբաղվածության բնագավառում 2019 թվականին պետական քաղաքակա նությունը կշարունակվի ուղղվել կայուն և ժամանակավոր զբաղվածությանը նպաստող ծրագրերի իրականացմանը, ինչպես նաև սոցիալ-աշխատանքային հարաբերությունները կանոնակարգող մեխանիզմների կատարելագործմանը: Այս համատեքստում առանձնապես կարևորվում են՝

- զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության մեծացմանը և կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջացառումների իրականացումը,
- կայուն և ժամանակավոր զբաղվածության ապահովմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև աշխատաշուկայի կարգավորման նպատակային ծրագրերի և արդյունավետ գործիքների ներդրումը,
- սոցիալ-աշխատանքային երաշխիքների հետևողական կատարելագործումը, այդ թվում՝ ՀՀ աշխատանքային օրենսդրության փոփոխություններ՝ ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների համապատասխանեցման, ինչպես նաև իրավակիրառական պրակ տիկայից բխող խնդիրների լուծման նպատակով,
- սոցիալական գործընկերության զարգացումը ու ամրապնդումը, մասնավորապես, ճյուղային, տարածքային ու կազմակերպությունների մակարդակում:

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառում 2019 թվականին աշխատանքներն ուղղված կլինեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանությանը, հաստատություններում նրանց խնամքի, դաս տիարակության, ուսման և ֆիզիկական զարգացման նպատակով նպաստավոր պայմանների ստեղծմանը, ինչպես նաև թրաֆիքինգի և սեռի հատկանիշով բռնության երևույթի կանխարգելմանը: Նշված խնդիրների լուծմանն ուղղված 2019 թվականին ՀՀ պետական բյուջեով կշարունակվի համապատասխան միջոցառումների իրականացումը:

Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի բնագավառում 2019 թվականին կշարունակվեն հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը և իրավունքների պաշտպանությանն ուղղված աշխատանքները՝ բնագավառի օրենսդրության կատարելագործում, հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների և մատչելի պայմանների ապահովում:

Կշարունակվեն աշխատանքները հաշմանդամություն ունեցող անձի կարիքի գնահատման նոր՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության Ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված մոդելի ներդրման ուղղությամբ:

Նախատեսվում է հաշմանդամություն ունեցող անձանց պետական նպատակային ծրագրերի շրջանակներում տրամադրվող բոլոր աջակցող տեխնոլոգիաները տրամադրել հավաստագրերով՝ հնարավորություն ընձեռելով անձին ձեռք բերել իր կարիքին առավել հարմար պարագա:

Շարունակվելու են նաև աշխատանքները՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնմանը:

Շարունակվելու է ՀՀ կառավարության կողմից 2017 թվականի հավանության արժանացած «Ծերացման հետևանքների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազ- մավարության և դրա իրականացման 2017-2021 թվականների միջոցառումների ծրագրի» իրականացման գործընթացը, որի շրջանակներում խնամքի ծառայությունները կմատուցվեն անձանց՝ ըստ նրանց գնահատված կարիքների, կներդրվեն ինչպես տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցողների, խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայություններ:

Շարունակվելու է խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների իրականացումը հասարակական կազմակերպությունների միջոցով՝ մրցութային եղանակով:

Կենսաթոշակային ապահովության բնագավառում 2019 թվականին նախատեսվում է սահ- մանել նվազագույն կենսաթոշակի չափ՝ նպատակ ունենալով, որ որևէ կենսաթոշակառու չստանա այդ չափից ցածր կենսաթոշակ: Կբարձրացվեն նաև ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափերը, այդ նպաստների համար կսահմանվի նվազագույն չափ:

Կշարունակվեն «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի արդիականացման (կատարելագործման) և տեխնիկական վերազինման (սերվերային համալիրի արդիականաց- ման աշխատանքները՝ որոշումների կայացման գործընթացի ավտոմատացման, այլ տեղեկատվա կան համակարգերից ինքնաշխատ եղանակով ստացվող և կիրառվող տեղեկատվության (տվյալների) շրջանակի ընդլայնման, կենսաթոշակային ապահովության և պետական նպաստների բնագավառի կառավարման համակարգի արդյունավետության բարելավման նպատակով:

2019 թվականին նախատեսվում է երկրորդ երեխայի ծննդյան դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափի սահմանում 150.0 հազ. դրամի չափով 2018 թվականի տարեսկզբի 50.0 հազ. դրամի դիմաց: Միաժամանակ մեկից ավելի երեխա ծնվելու դեպքում երեխայի

միանվագ նպաստի վճարի չափը կկազմի նոր ծնված յուրաքանչյուր երեխայի հնարավոր բոլոր կարգաթվերի համար սահմանված չափերի հանրագումարի չափով (նոր ծնված երեխաներից ամենաբարձր կարգաթիվ ունեցող երեխայի համար սահմանված չափի դիմաց):

2019 թվականին կշարունակվի նաև առցանց եղանակով մատուցվող ծառայությունների շրջա նակի ընդլայնումը:

2019 թվականին մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի չափը կմնա անփոփոխ:

2019 թվականին կվերանայվեն ընտանեկան դրամագլխի օգտագործման ուղղությունները:

Ժողովրդագրության բնագավառում «Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական քաղաքականության ռազմավարությունը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի N 27 արձա-նագրային որոշման և ՀՀ կառավարության կողմից հաստատվելիք ՀՀ ժողովրդագրական իրա-վիճակի բարելավման ազգային ծրագիրի շրջանակներում, կիրականացվեն ժողովրդագրական զարգացման իրավական դաշտի հետագա կատարելագործման միջոցառումներ: Միաժամանակ, կշարունակվեն ժողովրդագրական քաղաքականության հիմ- նական ուղղությունների վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումները:

Մշակույթի ոլորտ

2019 թվականի ոլորտի զարգացման հիմնական ուղղություններն են հանդիսանալու.

- Մշակութային ժառանգության ծրագիրը,
- Արվեստների ծրագիրը,
- Կինեմատոգրաֆիայի ծրագիրը,
- Գրքի և գրչության ծրագիրը,
- Մշակութային և գեղագիտական դաստիարակության ծրագիրը,
- Մարզերի մշակութային զարգացման ծրագիրը,
- Ազգային արխիվի ծրագիրը:

Մշակութային ժառանգության ծրագրի շրջանակներում կշարունակվեն պահպանության աշխատանքները՝ ուղղված ՀՀ տարածքում և արտերկրում գտնվող մշակութային արժեքների և պատմամշակութային հուշարձանների հաշվառմանն ու գիտական ուսումնասիրությունների իրականացմանը, մշակութային ժառանգության (նյութական և ոչ նյութական) անխաթար պահպանմանը և վերականգնմանն ու սերունդներին փոխանցմանը, դրանց նպատակային օգտագործմանն ու հանրահռչակմանը, ժամանակակից մշակութային զարգացումներին հանրության լիիրավ մասնակցությանը, տեղեկատվական հասանելիության ապահովմանը:

Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական աշխատանքներն ուղղված կլինեն հուշարձանների պետական հաշվառմանը, պահպանական գոտիների նախագծերի, հուշարձանների պետական կադաստրի կազմմանը, պեղումների կատարմանը:

Մշակութային արժեքների փորձաքննության նպատակով իրականացվող գործընթացները նպատակաուղղված են մշակութային նշանակության առարկաների մշակութաբանական և արվես- տաբանական փորձաքննության աշխատանքների իրականացմանը:

Աջակցություն հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրմանը ծրագիրն ուղղված է հուշարձանների լուսանկարմանը, չափագրմանը, վիմագրերի ընդօրինակմանն ու վերծանմանը, քարտեզագրմանը, գրավոր աղբյուրների և արխիվային նյութերի ուսումնա- սիրությանը, հուշարձանի վավերագրերի, ըստ բնակավայրերի վավերագրված հուշարձանների ցուցակների կազմմանը:

Թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների նպատակով իրականացվող ծրագրերը նպատակաուղղված կլինեն թանգարանային հավաքածուների պահպանությանն ու համալրմանը, հանրահռչակմանը, գիտական ուսումնասիրությանը, թանգարանային ցուցադրությունների արդիականացմանը, նոր հարթակների, վիրտուալ (նաև բջջային) տեղեկատվական համակարգերի ստեղծմանը, պետություն-մասնավոր համագործակցության ընդլայնմանը, մշտադիտարկումների իրականացմանը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ մշակութային ժառանգության թվայնացմանը և տեղեկատվական շտեմարանների շարունակական զարգացմանը, թանգարանային մասնագետների վերապատրաստմանը և միջազգային համագործակցության ընդլայնմանը:

Աջակցություն ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման նպատակով իրականացվող ծրագրերը ուղղված կլինեն անցյալում ստեղծված, պահպանվող, կիրառվող և բանավոր ճանապարհով փոխանցվող ավանդական մշակութային արժեքների ամբողջության պահպանությանը, պաշտպանությանը, հանրահռչակմանը (ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկերի համալրմանը, ցանկերում ընդգրկված հայկական տարրերի հանրահռչակմանը, գիտաճանաչողական ֆիլմերի, հեռուստառադիոհաղորդումների պատրաստմանը և հեռարձակմանը, փառատոների, համերգների կազմակերպմանը, միջազգային ասպարեզում ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտի համագործակցության ընդլայնմանը):

Հուշարձանների պահպանության ոլորտում իրականացվող ծրագրերը նպատակաուղղված կլինեն պատմամշակութային հուշարձանների հաշվառմանը, պահպանությանը (այդ թվում՝ պատմական միջավայրի), հուշարձանների վավերագրման և ուսումնասիրման (այդ թվում՝

դիտանցում, պեղում), գիտանախագծային փաստաթղթերի կազմման, ամրակայման, նորոգման ու վերականգնման (այդ թվում՝ հրատապ) և օգտագործման աշխատանքներին:

Արվեստների ծրագրի շրջանակներում իրականացվող ծրագրերը նպատակաուղղված կլինեն ազգային արժեհամակարգի հիման վրա ստեղծված հայ ժամանակակից թատերարվեստի, երաժշտարվեստի, պարարվեստի և կերպարվեստի զարգացմանն ու միջազգային ասպարեզում հանրահռչակմանը, անհատի և հանրության հոգևոր-մշակութային առաջընթացի գործում մշակույթի ռազմավարական դերակատարման բարձրացմանը, ստեղծագործական և գեղարվեստական բարձր նշաձողի պահպանմամբ և հանրության տարբեր շերտերի մշակութային պահանջարկին համապատասխան մշակութային արտադրանքի և ծառայությունների մատուցման գործընթացի ապահովմանը, մշակութային ենթակառուցվածքների արդիականացմանը, մշակութային ծառայությունների որակի բարելավմանն ու մատչելիության ապահովմանը, ստեղծագործական ներուժ ունեցող անհատների դրսևորմանը և նրանց գործունեության համար բարենպաստ դաշտի ստեղծմանը, նորարարական մտահղացումների խթանմանը, երիտասարդ ստեղծագործողներին միջազգային մշակութային գործընթացներին ինտեգրման աջակցմանը, ոլորտում գործող ստեղծագործական միությունների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնմանը և մրցակցային դաշտի ձևավորմանը:

Կինեմատոգրաֆիայի ծրագրի շրջանակներում իրականացվող գործընթացները նպատակաուղղված կլինեն խաղարկային, մուլտիպլիկացիոն և վավերագրական կինոնկարների արտադրութ յան աջակցմանը, կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանմանը, կինոարվեստի պրոպագանդմանը, տարածմանը, մատչելիության ապահովմանը, հայկական կինոյի ավանդույթների շարունակականության ապահովմանը:

Գրքի և գրչության ծրագրի շրջանակում իրականացվող ծրագրերն ուղղված կլինեն գրականության զարգացմանն ու տարածմանը, տպագիր արտադրանքի միջոցով հոգևոր-մշակութային ժառանգության փոխանցմանը, ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնություններին (մամուլ, գրականություն) աջակցմանը՝ պահպանելու իրենց լեզուն, գրականությունը, ավանդույթները, մշակույթը, գրական, մշակութային, ազգային փոքրամասնությունների համար լույս տեսնող լրատվամիջոցների և պարբերականների գործունեության շարունակականությանը, գրքի միջազգային ցուցահանդեսներին մեր երկրի մասնակցությանը, հանրապետական գրական ծրագրերի (փառատոներ, շնորհանդեսներ, հոբելյանական ցերեկույթներ, վարպետության դասեր, ընթերցումներ, քննարկումներ և այլն) կազմակերպմանը, ստեղծագործողների և մշակութային հետազոտողների աշխատանքների խթանմանը, գրադարանների գրքային հավաքածուների համալրմանն ու պահպանմանը, ժամանակակից

տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ գրավոր ժառանգության (անձեռնմխելի հավաքածուներ) թվայնացմանը, տեղեկատվական շտեմարանների շարունակական զարգացմանը, գրադարանային հավաքածուների օգտագործման մատչելիության ապահովմանը, ոլորտի մասնագետների վերապատրաստմանը, միջազգային համագործակցության ընդլայնմանը, մատենագիտական տվյալների կազմմանն ու հրապարակմանը, հանրությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը:

Մշակութային և գեղագիտական դաստիարակության ծրագիրը նպատակաուղղված է կադրերի պատրաստման պետպատվերի համակարգի կատարելագործմանը, մշակութային կրթության որակի բարձրացմանը, մասնագետների կրթության շարունակականության և մատչելիության ապահովմանը, ՀՀ ապագա քաղաքացիների գեղագիտական դաստիարակության ձևավորմանը նպաստող ծրագրերի իրականացմանը, մանկապատանեկան տարիքի երեխաների, ներառյալ սոցիալապես անապահով, բազմազավակ ընտանիքների, հաշմանդամ, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կրթության իրականացման պայմանների մատչելիության և որակի ապահովմանը:

Մարզերի մշակութային զարգացման ծրագրի շրջանակներում իրականացվող գործընթացներն ուղղված կլինեն մարզերում մշակութային կյանքի և մշակութաստեղծ գործունեության ակտիվացմանը, համայնքներում մշակույթի հասանելիության և մշակութային կյանքին մարզային բնակչության ընդգրկվածության ընդլայնմանը, մշակութային միջոցառումների կազմակերպմանն ու իրականացմանը, համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպմանը, համայնքային ենթակայության մշակույթի տների, ակումբների և կենտրոնների հիմնանորոգմանը, կառուցմանը և նախագծմանը:

Ազգային արխիվի ծրագրի շրջանակներում իրականացվող գործընթացները նպատակաուղղված են ՀՀ ազգային արխիվային հավաքածուի պահպանության, համալրմանը, հաշվառմանը, արխիվային փաստաթղթերի վերանորոգմանը, փաստաթղթերի գիտատեխնիկական մշակմանը, ՀՀ արխիվային հավաքածուի փաստաթղթերի թվայնացման աշխատանքների իրականացմանը, ֆիլմերի թվայնացմանը, նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ տեղեկությունների էլեկտրոնային շտեմարանի ստեղծման աշխատանքների իրականացմանը, հանրության կողմից արխիվային նյութերի օգտագործման ապահովմանը:

Ֆիզիկական կուլտուրա, սպորտ և երիտասարդության բնագավառ

Ռազմավարական նպատակները: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում իրականացվող քաղաքականությունը կիրականացվի օլիմպիական հերթափոխի և բարձրակարգ մարզիկների պատրաստման, բնակչության ֆիզիկական դաստիարակության

ապահովման, ՀՀ-ում գործող մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման, ֆիզկուլտուրային-առողջարարական զանգվածային, հանրապետական և մարզային միջոցառումների անցկացման, հաշմանդամային սպորտին, մարզական-հասարակական կազմակերպություններին պետական աջակցության, մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին անհրաժեշտ մարզագույքով ապահովման միջոցով:

Երիտասարդության հարցերի ոլորտում ՀՀ կառավարության կողմից տարվող պետական քաղաքականությունը ենթադրում է բարձրացնել հասարակական, քաղաքական զարգացումներին նրանց մասնակցության աստիճանը, նպաստել երիտասարդության գործունեությունն ապահովող իրավական դաշտի զարգացմանը, երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային և գիտական մակարդակի բարձրացմանը, ազատ ժամանցի ակտիվ և նպատակային կազմակերպմանը, ուսումնասիրել առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիր-ները և բարելավել երիտասարդների կենսապայմանները, հայտնաբերել և խրախուսել տաղանդավոր երիտասարդներին, նպաստել երիտասարդության շրջանում հայրենասիրական դաստիարակության, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը, ակտիվացնել, զարգացնել համագործակցությունը միջազգային երիտասարդական կառույցների հետ, ստեղծել պայմաններ երիտասարդությանը անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելու համար, ստեղծել պայմաններ նրանց լիակատար ինքնադրսևորման համար:

Հիմնական գերակայությունների վերջնական արդյունքները, դրանց իրագործման ռազմավարությունները: Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության հարցերի ոլորտներում հիմնական գերակայություն է համարվում բնակչության ֆիզիկական պատրաստվածության բարձրացման, ֆիզիկական դաստիարակության անընդհատության ապահովման, առողջ ապրելակերպի արմատավորման, անհատի ներդաշնակ զարգացման, հայրենիքի պաշտպանության գործին ֆիզիկապես և հոգեպես կոփված երիտասարդների պատրաստմանն ուղղված միջոցառումների իրականացումը, հաշմանդամային սպորտի զարգացումը, ՀՀ հավաքական թիմերում ընդգրկված մարզիկների նպատակային նախապատրաստումը և մրցումներին մասնակցությունը:

Ոլորտի զարգացման 2019 թվականի ռազմավարական ուղղվածությունը ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառներում ըստ ենթաոլորտների հանգում է հետևյալ նպատակների իրականացմանը՝

Մասսայական սպորտ՝

- Բնակչության ֆիզիկական դաստիարակության ապահովում,

- Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի իրավական դաշտի կատարելագործում,
- ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացում,
- «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացում,
- «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացում,
- «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» մրցույթի անցկացում,
- «Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն» մրցույթի անցկացում,
- Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացում,
- Հանրապետական ուսանողական մարզական խաղերի անցկացում,
- ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և ԼՂՀ հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-7-րդ դասարանների աշակերտների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացում,
- ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և ԼՂՀ հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադայի անցկացում,
- ՀՀ գյուղական մարզական խաղերի անցկացում,
- Տարեցների հանրապետական խաղերի անցկացում,
- Պետական մարմինների աշխատակիցների միջև հրաձգության հանրապետական մրցույթ:

Մեծ նվաճումների սպորտ՝

- ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում,
- Միջազգային մարզական միջոցառումների հաղթողներին և մրցանակակիրներին դրամական մրցանակների հանձնում,
- Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին անվանական թոշակի հատկացում,
- Հավաքական թիմերի ավագ մարզիչների վարձատրություն և աշխարհի չեմպիոններին պատվովճարի հատկացում,
- ՀՀ հավաքական թիմերին մարզահագուստով և մարզահանդերձանքով ապահովում,
- Եվրախորհրդի սպորտի մասին համաձայնագրին անդամակցում,
- Հակադոպինգային համաշխարհային գործակալությանը անդամակցում,

- Աջակցություն հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի զարգացմանը,
- Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ:

Միջին մասնագիտական կրթություն և արտադպրոցական դաստիարակություն՝

- Մանկապատանեկան մարզադպրոցներում պարապողների հոգևոր և ֆիզիկական զարգացման, ռազմահայրենասիրական դաստիարակության, ինչպես նաև նրանց կողմից ընտրված մարզաձևերից ունակությունների ձեռքբերման և կատարելագործման համար բարենպաստ պայմանների ստեղծում ու մատուցվող ծառայությունների ապահովում,
- Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում միջին մասնագիտական կրթությամբ որակյալ կադրերի պատրաստում,
- Որակի վերահսկման մեխանիզմների արդիականացում,
- Մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման կազմակերպում:

Պետական երիտասարդական քաղաքականություն՝

- Հասարակական կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցության խթանում,
- Երիտասարդական աշխատանքի կայացում և հետագա զարգացում,
- Երիտասարդների առողջ ապրելակերպի խթանում, հոգևոր-մշակութային արժեքների պահպանում և զարգացում, ռազմահայրենասիրական դաստիարակություն,
- Տեղական, ազգային և միջազգային մակարդակներում երիտասարդական համագործակցության, միջմշակութային երկխոսության և երիտասարդների շարժունության խրախուսում:

Բնապահպանության ոլորտ

Ռազմավարության ընդհանուր նկարագրություն

ՀՀ բնապահպանության ոլորտում ՀՀ կառավարության առաջնահերթ **ռազմավարական նպատակներն** են՝

- ապահովել շրջակա միջավայրի պահպանությունը և բնական ռեսուրսների (այդ թվում՝ ընդերքի) բանական օգտագործումը,
- շարունակել Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման և պահպանության միջոցառումների իրականացումը,
- ապահովել անտառների ապօրինի հատումների կանխումը, անապատացման դեմ պայքարը, կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության պահպանումը, մթնոլորտի գերնորմատիվային աղտոտվածության կանխարգելմանը, կլիմայի

փոփոխության մեղմմանը և հարմարվողականությանը, ինչպես նաև օզոնային շերտի պահպանմանն ուղղված քայլերի, ջրի և անտառի ազգային ծրագրերի ամբողջական իրականացումը,

- կատարելագործել բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման մեխանիզմները, ապահովել բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման ազգային ծրագրի ամբողջական իրականացումը,
- մշակել և կիրառել նոր մոտեցումներ հասարակության բնապահպանական իրազեկության բարձրացման և էկոլոգիական կրթության ու դաստիարակության հարցերում,
- ապահովել բնական միջավայրի աղտոտման կանխարգելումը, վտանգավոր քիմիական ու ռադիոակտիվ նյութերի և թափոնների կառավարումը, բնական և մարդածին ազդեցությունների կանխատեսման և (կամ) կանխարգելման համակարգի զարգացումը՝ ներառյալ գոյություն ունեցող մշտադիտարկումների ցանցի կատարելագործումն ու ընդլայնումը,
- բնապահպանական տեսակետից նախընտրելի տեխնոլոգիաների և ծրագրերի ֆինանսավորման, բնապահպանության ոլորտում կառավարման կատարելագործման նպատակով արդիականացնել բնապահպանական քաղաքականության իրականացման հիմնական սկզբունքները, մշակել կանաչ տնտեսության ներդրման մոտեցումները, խրախուսել մասնավոր ու հանրային հատվածների համագործակցության մեխանիզմների և նորերի ներդրման շարունակական զարգացումը:

I. «Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարում

Ծրագրի շրջանակներում 2019 թվականին իրականացվելու են ներքոհիշյալ միջոցառումները՝

1. Սևանա լճի համալիր ծրագրով նախատեսված համապատասխան միջոցառումների կատարումը,

2. 2019 թվականին բյուջետային հատկացումները նպատակաուղղվելու են հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների («Սևան», «Դիլիջան», «Արևիկ» և «Արփի լիճ» ազգային պարկեր, «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետարգելոցներ, «Սոսիների պուրակ», «Խուստուփ», «Զանգեզուր» և «Զիկատար» պետական արգելավայրեր, դենդրոպարկեր և բնության հատուկ պահպանվող այլ տարածքներ) պահպանությանը, անտառային տարածքների խնամքի և բնապահպանական այլ աշխատանքների և գիտական ուսումնասիրությունների իրականացմանը, ինչպես նաև Կովկասյան տարածաշրջանային

կենտրոնի հայաստանյան մասնաճյուղի գրասենյակի վարձակալության ծառայությունների ֆինանսավորմանը:

II. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ

Ծրագրի շրջանակներում 2019 թվականին իրականացվելու է շարունակական բնույթ ունեցող «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և փորձաքննություն» ու «Շրջակա միջավայրի մոնիթորինգ և տեղեկատվության ապահովում» միջոցառումները, որի շրջանակներում 2019 թվականին իրականացվելու են նաև թափոնների ուսումնասիրության աշխատանքներ:

III. Բնագիտական նմուշների պահպանություն և ցուցադրություն

Ծրագրի շրջանակներում 2019 թվականին իրականացվելու է «Բնագիտական նմուշների պահպանություն և ցուցադրություն» միջոցառումը:

IV. Բնապահպանական ծրագրերի իրականացում համայնքներում

Ծրագրի շրջանակներում «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն ՀՀ 8 համայնքների կտրամադրվեն սուբվենցիաներ բնապահպանական ծրագրերի իրականացման համար՝ 178,7 մլն դրամի չափով:

Նախատեսվող հատկացումների հաշվարկման հիմքում դրվել են.

- Օրենքով սահմանված համապատասխան ընկերությունների կողմից 2015-2017 թվականներին պետական բյուջե փաստացի վճարված բնապահպանական վճարների գումարները,
- նշված վճարների գումարների՝ ըստ այդ ընկերությունների գործունեությունից վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների բաշխման համամասնությունները (սահմանված են ՀՀ բնապահպանության նախարարության կողմից),
- Օրենքի համաձայն 2017 թվականին այդ համայնքներին փաստացի տրամադրված և ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված սուբվենցիաների գումարները,
- համայնքների կողմից հաստատված և ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված բնապահպանական ծրագրերը:

V. «Անտառների կառավարում»

Ծրագրի շրջանակներում 2019 թվականին իրականացվելու են ներքոհիշյալ միջոցառումները՝

1. «Անտառպահպանական ծառայություններ» (2019 թվականին բյուջետային հատկացումները նպատակաուղղվելու են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի պահպանման ծախսերին),

2. «Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ»,
3. «Անտառկառավարման պլանների կազմում»,
4. «Անտառների կադաստրի վարում»,
5. «Անտառների վնասակար օրգանիզմների դեմ պայքար»,
6. «Անտառային պետական մոնիտորինգի իրականացում»:

Բյուջեների կազմման բնագավառ

Բյուջետային ծրագրեր իրականացնող պետական մարմինների և ընդհանրապես ՀՀ կառավարության հաշվետվողականությունն ու պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով պետական ֆինանսների արդյունավետ և նպատակային օգտագործման համար իրականացվել են բյուջետային գործընթացի ավանդական ձևաչափից դեպի «փողի դիմաց արժեք» հենքի վրա ձևավորվող «ծրագրային» բյուջետային գործընթացին անցնելու աշխատանքները:

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեն ներկայացվում է ծրագրային ձևաչափով: Պետական բյուջեի որևէ ծախսային ծրագիր վերագրված է բացառապես մեկ պետական մարմնի՝ նպատակ ունենալով որոշակիացնել ծրագրերի պատասխանատուների իրավունքներն ու պարտականությունները: Ծրագրի իրականացման աստիճանը գնահատվում է ոչ թե հատկացված միջոցների ծախսման ծավալից ելնելով, այլ ծրագրի արդյունքներին հասնելու համար իրականացման ենթակա միջոցառումների ոչ ֆինանսական ցուցանիշներով:

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեում ներառվում են պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվներով կանխատեսվող եկամուտները և ծախսերի ցուցանիշները՝ պայմանավորված տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքում արտաբյուջետային հաշիվների միասնական ներկայացման և դրանց գծով հաշվետվությունների միջև առկա խզումների չեզոքացման անհրաժեշտությամբ, ինչպես նաև պետական ֆինանսների կառավարման համակարգի թափանցիկության ապահովմամբ: Արտաբյուջետային միջոցների ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծում ներառումը կապահովի պետական բյուջեի ծրագրավորման և հաշվետվողականության միասնականության հիմքերը:

Քայլեր են ձեռնարկվել հանրային միջոցների կառավարման ոլորտում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերում գործող իրավաբանական անձանց՝ ՊՈԱԿ-ներում և ՀՈԱԿ-ներում, հիմնադրամներում և բաժնետիրական ընկերություններում ֆինանսական կարգապահական և ռեսուրսների օգտագործման թափանցիկության ապահովման համար լրացուցիչ իրավական հիմքեր ստեղծելու նպատակով: ՊՈԱԿ-ների հաշիվները

առևտրային բանկերից, ըստ կառավարության կողմից սահմանված ժամանակացույցի տեղափոխվելու են գանձապետարան և նրանց նկատմամբ 2019 թվականից սկսած կիրառվելու է բյուջետային հիմնարկների հաշիվների նկատմամբ կիրառվող նախնական հսկողություն:

Բացի այդ, իրավական դաշտում հնարավորություն է ստեղծվել ՀՈԱԿ-ների, պետական և տեղական ինքնակառավարման համակարգում գործող հիմնադրամների և բաժնետիրական ընկերությունների հաշիվները, անհրաժեշտության դեպքում, գանձապետարանում բացելու համար:

Հարկային և մաքսային վարչարարության ոլորտ

Պետական եկամուտների վարչարարության ոլորտում իրականացվելիք միջոցառումները բխելու են ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրից և ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրից:

Մասնավորապես, պետական եկամուտների վարչարարության ոլորտում 2019 թվականին նախատեսվում են իրականացնել միջոցառումներ՝ հետևյալ ուղղություններով.

1. Աշխատանքներ կտարվեն 2019 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսված հարկային եկամուտների ապահովման ուղղությամբ:
2. Կշարունակվեն աշխատանքները հարկային և մաքսային հսկողության մեխանիզմների կատարելագործման, դրանց արդյունավետության բարձրացման և թիրախավորված հսկողություն իրականացնելու ուղղություններով: Մասնավորապես, նախատեսվում է՝
   - կատարելագործել հարկային և մաքսային մարմինների կողմից իրականացվող հսկողության մեխանիզմները՝ տեսչական ընթացիկ հսկողությունն աստիճանաբար տեղափոխելով էլեկտրոնային դաշտ: Արդյունքում, նախատեսվում է կրճատել արտագնա ստուգումների քանակի և հարկ վճարողների թվաքանակի հարաբերակցությունը, բարձրացնել մեկ ստուգման և ուսումնասիրության արդյունավետությունը, ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության աճ,
   - հսկողական աշխատանքներ իրականացնել տնտեսության մեջ կատարվող գործարքների լիարժեք փաստաթղթավորման ուղղությամբ՝ կարևորելով հատկապես խոշոր տնտեսա-վարողների կողմից իրականացվող գործարքների լիարժեք փաստաթղթավորումը,
   - կատարելագործել ՊԵԿ համակարգում իրականացվող վերլուծությունները և դրանց իրականացումն աստիճանաբար կենտրոնացնել մոնիթորինգային կենտրոնում՝

ընդլայնելով վերլուծությունների շրջանակները և ապահովելով դրանց առավելագույն ավտոմատացում: Նշված աշխատանքների շրջանակներում, մասնավորապես՝ նախատեսվում է հսկիչ-դրամարկղային մեքենաներով կամ հաշվարկային փաստաթղթերով կատարվող գործարքների մոնիթորինգի, վարձու աշխատողների գրանցման և աշխատավարձերի հաշվարկման մոնիթորինգի, ինչպես նաև կամերալ ուսումնասիրությունների արդյունքներով ռիսկային ճանաչված հարկ վճարողներին էլեկտրոնային եղանակով ծանուցումների տրամադրման և դրանից հետո վարքագիծը չշտկած հարկ վճարողների մոտ համապատասխան հսկողական միջոցառումների իրականացում,

- վերանայել ռիսկերի կառավարման և ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրողականության էլեկտրոնային ավտոմատ կառավարման համակարգի ռիսկային չափանիշները, դրանք համապատասխանեցնել կատարված օրենսդրական փոփոխություններին, փոխարինել չգործող չափանիշներն առավել արդյունավետ չափանիշներով՝ հարկային մարմնի կողմից հրապարակվող ստուգման ենթակա հարկ վճարողների ցանկում առավել ռիսկային հարկ վճարողներ ընդգրկելու և ստուգումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով,
- ընդլայնել երրորդ անձանցից ստացվող տեղեկությունների էլեկտրոնային մշակման շրջանակը, կատարելագործել դրանց ստացման և վերլուծման էլեկտրոնային համակարգերը,
- մաքսային հսկողության համակարգի կատարելագործման աշխատանքների շրջանակներում՝ բարձրացնել ռիսկերի գնահատման համակարգերի արդյունավետությունը, սահմանային հսկողությունն աստիճանաբար տեղափոխել հետբացթողումային փուլ:

3. Կշարունակվեն հարկային և մաքսային մարմինների ՏՏ ենթակառուցվածքների կատարելագործման աշխատանքները՝ ուղղված մասնավորապես՝
   - ՊԵԿ էլեկտրոնային կառավարման համակարգերի կատարելագործմանը, տեխնիկական և ծրագրային վերազինմանը,
   - մեծ ծավալի տվյալների (Big Data) ժամանակակից NoSQL կառուցվածքով տվյալների շտեմարանների ներդրմանը՝ նպաստելով տեղեկատվական հոսքերի կառավարման և վերլուծությունների իրականացման արդյունավետության բարձրացմանը,
   - ինքնաուսուցանվող (machine-learning) արհեստական ինտելեկտով համակարգերի մշակմանը,

- հարկերի վճարման էլեկտրոնային համակարգի գործարկմանը, ինչը կհանգեցնի հարկ վճարողների ռեսուրսների խնայողությանը և վճարումների կատարման պարզեցմանը,
- կամերալ ուսումնասիրությունների իրականացման էլեկտրոնային համակարգի գործարկմանը, ինչը կապահովվի ուսումնասիրությունների իրականացման միասնականությունը և կհանգեցնի գործընթացի արդյունավետության բարձրացմանը,
- հարկային հաշվարկների ավտոմատ լրացման (Pre-filing) համակարգի ընդլայնմանը և կատարելագործմանը: Նախատեսվում է, որ ինքնաշխատ համակարգի կողմից կլրացվի հարկային հաշվարկը և հարկ վճարողը միայն կստուգի, կհաստատի և կուղարկի այն հարկային մարմին:

4. Աշխատանքներ կտարվեն արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների համար ապրանքների սահմանահատման, ձևակերպման և բացթողման գործընթացների պարզեցման ու դյուրինացման ուղղությամբ: Այդ ուղղությամբ նախատեսվում է՝
   - մաքսային մարմիններում էլեկտրոնային կառավարման և հսկողության համակարգի համապատասխանեցում (այդ թվում՝ նոր ենթահամակարգերի գործարկում) ԵԱՏՄ մաքսային օրենսգրքին և դրա կիրարկումն ապահովող իրավական այլ ակտերին,
   - մաքսային ձևակերպումների վրա ծախսվող ժամանակի կրճատում,
   - այլ երկրների մաքսային մարմինների հետ ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ նախնական տվյալների փոխանակման համակարգերի ներդրում:

Կշարունակվեն ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի կիրարկումն ապահովելու նպատակով մշակվող ԵԱՏՄ մաքսային օրենսգրքից բխող ազգային օրենսդրության կիրարկումն ապահովող նորմերի մշակմանն (մշակման մասնակցությանը) ուղղված աշխատանքները:

Կշարունակվեն ՀՀ ՊԵԿ կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքները՝ մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման, ուսումնական կարիքների գնահատման մոդելի կիրառման, հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստման և ատեստավորման, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցման ուղղություններով:

Կշարունակվեն աշխատանքները հարկային մարմին հարկ վճարող գործընկերային հարաբերությունների, ինչպես նաև ՀՀ ՊԵԿ գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ընդլայնման ուղղություններով: Այդ նպատակով աշխատանքները կտարվեն «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի «Հարկերի վճարում» և «Արտաքին առևտուր» ցուցիչներով ՀՀ զբաղեցրած դիրքի բարելավման, հարկային և մաքսային մարմինների գործունեության վերաբերյալ առավել ընդգրկուն տեղեկատվության

հրապարակման, հարկային և մաքսային վարչարարության կազմակերպման գործընթացներում հարկ վճարողների հետ առավել սերտորեն համագործակցելու, «Օրինապահ հարկ վճարող» կարգավիճակը հաստատող հավաստագրերի տրամադրման գործընթացը կատարելագործելու, հորիզոնական մոնիթորինգի համակարգի ներդրման և այլ ուղղություններով:

Պետական գույքի կառավարման ոլորտ

Նախատեսվում է՝

- ապահովել պետական գույքի կառավարման քաղաքականության շարունակականությունը և մասնավորեցման գործող նոր 2017-2020թթ. ծրագրի շրջանակներում իրականացնել պետական գույքի մասնավորեցման գործընթացը,
- իրականացնել պետական գույքի կառավարման 2018-2020թթ. ծրագրով սահմանված միջոցառումները և նախատեսված գործողությունները,
- մասնավորեցման ծրագրում ընդգրկված առևտրային կազմակերպությունների պետական բաժնեմասի արդյունավետ կառավարման շնորհիվ բարձրացնել կազմակերպությունների գրավչությունը տեղական և օտարերկրյա ներդրողների համար,
- շարունակել արդիականացնել պետական գույքի հաշվառման համակարգը՝ ընդլայնելով պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի հաշվառման բազան և ապահովելով հաշվառման տվյալների հավաստիությունը,
- պետական գույքի մասնավորեցման միջոցով ապահովել մասնավորեցվող առևտրային կազմակերպություններում ներդրումների ներգրավման և սոցիալական երաշխիքների ապահովման առաջնայնությունը,
- պետական գույքի մասնավորեցումից, օտարումից ու վարձակալությունից ստացված միջոցների հաշվին ավելացնել պետական բյուջեի դրամական եկամուտները,
- վարձակալության տրամադրված պետական գույքի վարձակալների կողմից իրականացվող ներդրումների շնորհիվ բարելավել պետական սեփականություն հանդիսացող շենք-շինությունների վիճակը,
- իրականացնել պետական գույքի հանձնման-ընդունման աշխատանքները, ավարտին հասցնել պետական անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցման գործընթացը,
- մասնավորեցման և օտարման գործընթացի արդյունավետ իրականացման շնորհիվ նպաստել հանրապետությունում տնտեսական աճի խթանմանը,

- առաջնորդվել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում սահմանված տնտեսական գործունեության արդյունավետության որոշման, ղեկավար անձնակազմի աշխատանքի գնահատման և խրախուսման նոր մշակվող համակարգով,
- պետական գույքի կառավարման ոլորտում ապահովել պետություն-մասնավոր հատված համագործակցության մասնակիցների շահերի ներդաշնակությունը:

2019 թվականին ՀՀ կառավարությունը վերոհիշյալ առաջնային ռազմավարական նպատակներին համահունչ հետամուտ կլինի ապահովել հետևյալ հիմնական արդյունքները՝

1. իրականացնել «ՀՀ պետական գույքի մասնավորեցման 2017-2020թթ. ծրագրի մասին» ՀՀ օրենքում ընդգրկված ընկերությունների և օբյեկտների մասնավորեցումը՝ նպաստելով տնտեսության զարգացմանը, տնտեսական աճի ապահովմանը, մասնավոր հատվածում օտարերկրյա և ներքին ներդրումների ներգրավմանը, շուկայական մրցակցության և արտահանման խթանմանը, աշխատատեղերի ստեղծմանը և աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրագործմանը, պետական բյուջեի եկամուտների ավելացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, մարդկային կապիտալի զարգացմանը և պետության այլ գործառույթների կատարմանը,
2. վարձակալությունը որպես պետական գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման գործիք կիրառելուն ուղղված նոր քաղաքականության մշակումը, ինչի հաշվին կավելանան նաև ՀՀ պետական բյուջեի մուտքերը և կատարվող ներդրումները,
3. ՀՀ սեփականության իրավունքով պատկանող գույքը հավատարմագրային և կոնցեսիոն կառավարման հանձնելու պրակտիկայի ընդլայնումը, որի շնորհիվ էականորեն կբարձրանա պետական գույքի օգտագործման արդյունավետությունը,
4. արմատապես բարեփոխել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով առևտրային կազմակերպությունների գործունեության ֆինանսատնտեսական մոնիտորինգի, արդյունավետության որոշման և գնահատման համակարգը, և բարելավել պետական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման որակն ու բարձրացնել աշխատանքի արդյունավետությունը,
5. բարձրացնել պետական անշարժ գույքի հետագա տնօրինման արդյունավետությունը, դրանից ստացվող եկամուտների ծավալը,

Անշարժ գույքի կադաստր

2019 թվականին Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի նպատակներն են լինելու.

Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարման համակարգի արդիականացում: Հասարակության տեղեկատվական պահանջները բավարարելու նպատակով կոմիտեն առաջիկա տարիներին կփորձի ամբողջապես անցնել առցանց ծառայությունների ինքնաշխատ համակարգի՝ հրաժարվելով թղթային փաստաթղթաշրջառանությունից: Այս, ինչպես նաև համակարգում առկա կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով կիրականացվեն կառուցվածքային բարեփոխումներ, աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով կկրճատվի այժմ գործող վեց տարածքային ստորաբաժանումների թիվը՝ վերածվելով երեք գործառնական ստորաբաժանումների: Կկրճատվի նաև սպասարկման 40 գրասենյակների թիվը:

Կոմիտեի հաջորդ խոշոր և հավակնոտ ծրագիրը նպատակ ունի քարտեզագրական կարողությունների և երկրատեղեկատվական համակարգի հիման վրա ստեղծել Հայաստանի Հանրապետության ինտեգրված, միասնական կադաստր՝ նպատակ ունենալով տեղեկատվական տեխնոլոգիաների նորագույն լուծումներով կայացնել ոլորտի կադաստրների համակարգը, որն էլ իր հերթին կնպաստի տարածական որոշումների օպերատիվության բարձրացմանը և հողային քաղաքականության պատշաճ վարմանը: Այդ և գեոդեզիայի ու քարտեզագրության բնագավառի զարգացման նպատակով 2019 թվականին նախատեսվում է Հայաստանի ամբողջ տարածքի օդալուսանկարահանման միջոցով ստեղծել երկրատեղեկատվական համակարգի բազային քարտեզը: Այս ուղղությամբ շարունակվելու է նախորդ տարիներին սկսված աշխատանքը՝ քարտեզագրական հիմքի ստեղծում, աշխարհագրական անվանումների քարտադարանի վարում և ատլասների թարմացում:

Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի միասնական գնահատման և միասնական հարկման համակարգի ներդրում, ինչը հնարավորություն կտա գործարկել Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի հարկով արդարացի հարկման մեխանիզմներ, ապահովել անշարժ գույքի շուկայի գնային իրավիճակի վերաբերյալ վերլուծական տեղեկատվություն, խթանել պարապուրդի մատնված գույքի կիրառումը տնտեսությունում ավելացված արժեքի ստեղծման համար, նպաստել անշարժ գույքի հարկով հարկման վարչարարության պարզեցմանը:

Հասարակական կարգի պահպանություն

Հանրապետությունում տեղի ունեցող իրավաքաղաքական նոր փոփոխություններին համահունչ հասարակությունը պահանջել, իսկ պետական իշխանությունն արդեն իսկ

ձևակերպել է ոստիկանությանն առաջադրվող նոր խնդիրները և մարտահրավերները, որոնց լուծման համար անհրաժեշտ են ոչ թե իրավիճակային գործողություններ, այլ համակարգված ծրագրեր և գործելակերպի թարմություն:

Կոռուպցիայի հակազդման բնագավառում ոստիկանության օպերատիվ ստորաբաժանումների աննախադեպ ակտիվությունը, նախաձեռնողականությունը և նախնական արդյունքները այլևս նպաստել են ոստիկանության և հասարակության միջև անհաղթահարելի թվացող անջրպետի վերացմանը, սակայն հասարակական տրամադրությունների առկա դինամիկան պետք է ամրապնդել ոստիկանության մասին կայուն վստահելի հասարակական կարծիքով: Դրա համար անհրաժեշտ են օրենսդրական և կառուցվածքային նոր փոփոխություններ, մասնավորապես.

1. «Ոստիկանության մասին» նոր օրենքի ընդունում: Խնդիրը կայանում է նրանում, որ ոստիկանությունը չունի բավարար և հստակ լիազորություններ պատահարների, վարչական իրավախախտումների քննության, իրավախախտումների կանխարգելման և օպերատիվ-հետախուզական ոչ գաղտնի կամ բացահայտ գործունեության բնագավառներում: Ոստիկանության բոլոր ծառայողները թվարկված ոլորտներում, հատկապես բացահայտ օպերատիվ-հետախուզական գործունեությունում պետք է ունենան և իրացնեն միևնույն իրավունքներն ու պարտականությունները: Օպերատիվ-հետախուզական ոչ գաղտնի գործունեությունը ոստիկանության վարչական գործունության մի մասն է, չունի իրավակարգավորման որևէ առանձնահատկություն, հետևաբար թե պարեկային ծառայողները, թե օպերլիազորները, և թե համայնքային ոստիկանության ու ճանապարհային ոստիկանության տեսուչները պետք է գործեն միևնույն ստանդարտներով ու լիազորություններով՝ անկախ իրենց պաշտոնական դիրքից: Սա էապես կպարզեցնի և դյուրին կդարձնի ոստիկանության աշխատանքը, կապահովի մեր ծառայողների հատուկ կարգավիճակի միասնականությունը: Ինչ վերաբերվում է գաղտնի օպերատիվ գործունեությանը, ապա այն պետք է հանդիսանա քրեական դատավարության օրենսգրքի և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկան, ինչպես աշխարհի գրեթե բոլոր երկրներում:

2. Ոստիկանության կառուցվածքը պետք է համապատասխանի նրա հիմնական գործառութային ուղղվածությանը: Կենտրոնական ապարատի օպերատիվ ստորաբաժանումները նպատակահարմար է միավորել մեկ քրեական ոստիկանության դեպարտամենտում, ընդ որում՝ դեպարտամենտին ենթակա գործերի օպերատիվ-հետախուզական և հետաքննական ենթակայությունը պետք է հստակ սահմանել օրենքով: Կազմակերպված և կոռուպցիոն, վերազգային հանցավո ր ության, թրաֆիկինգի ու նարկոտիզմի դեմ պայքարը,

հասարակական հնչեղություն ստացած հանցագործության դեպքերով տարածքային մարմիններին աջակցությունը պետք է դառնա քրեական ոստիկանության դեպարտամենտի հիմնական գործառույթը: Դեպարտամենտը պետք է ունենա ռեսուրս և ժամանակ՝ զբաղվելու վերլուծական, հսկողական և հաշվետվողական աշխատանքներով, գործի որպես օպերատիվ ստորաբաժանումների գլխադասային շտաբ և ոչ թե զբաղվի հանցավորության դեմ ընթացիկ պայքարով:

Հասարակական անվտանգության ոստիկանությունը, ոստիկանության գվարդիան (այսինքն՝ վերակազմակերպված ոստիկանության զորքերը և մեր հատուկ նշանակության ստորաբաժանումները), քրեական ոստիկանությունը և պետական պահպանության գլխավոր վարչությունը պետք է հանդիսանան ոստիկանության կենտրոնական ապարատի առանցքը:

3. Նոր ձևավորվող հասարակական անվտանգության ոստիկանությունը նախատեսվում է կազմակերպել ճանապարհային ոստիկանության, պարեկապահակետային ստորաբաժանումների և հետաքննության տեսուչների հենքի վրա: Այս ստորաբաժանումը ներկայանալու է շուրջօրյա-շարժական պարեկային ծառայություն իրականացնելով, որի խնդիրները լինելու են.

ա) քաղաքացիներին աջակցություն ցուցաբերելը նրանց կողմից սեփական իրավունքները և օրինական շահերը պաշտպանելիս,

բ) օգնություն ցույց տալը անօգնական կամ կյանքի համար վտանգավոր այլ իրավիճակներում հայտնված քաղաքացիներին,

գ) երթևեկության կազմակերպումը խցանումների, զանգվածային հասարակական միջոցառումների, դժբախտ պատահարների, այդ թվում՝ տեխնածին աղետների և արտակարգ այլ իրավիճակների ընթացքում,

դ) դեպքի վայրի պահպանությունը, հանցագործություն կատարած անձանց «տաք հետքերով» հայտնաբերումը, անհետաձգելի քննչական գործողությունների կատարումը:

Իրավախախտումների հայտնաբերումը երթևեկության ոլորտում չպետք է հանդիսանա պարեկային ստորաբաժանման հիմնական խնդիրը, իրավախախտումների արձանագրումը պետք է հետևի միայն կոպիտ վարչական իրավախախտումներին ու հանցագործության դեպքերին:

Պարեկային ոստիկանության ենթակառուցվածքն է հանդիսանալու օպերատիվ կառավարման կենտրոնը, որն ընդունելու է իրավախախտումների և պատահարների վերաբերյալ հաղորդումներ: Կենտրոնին հասանելի են լինելու հասարակական վայրերում տեղադրված բոլոր տեսանկարահանող սարքերը, ոստիկանության և այլ մարմինների տեղեկատվական այն շտեմա- րանները, որոնք անհրաժեշտ են անհետաձգելի օպերատիվ-

հետախուզական միջոցառումներ իրականացնելու համար: Կենտրոնը ունենալու է օպերատիվ կապ փրկարար ծառայության (911) և շտապ օգնության (1-03) օպերատիվ կենտրոնների հետ, և ընդհանուր առմամբ ապահովելու է պարեկային ոստիկանության ուժերի և միջոցների կառավարումը: Կենտրոնը ստեղծվելու է «Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի» շրջանակներում Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի կողմից հատկացված 450000 ԱՄՆ դոլար վարկային միջոցների հաշվին:

4. Ճանապարհային երթևեկության կազմակերպման ոլորտում տուգանային միավորների ներդրմամբ ուժեղացնել այդ ոլորտում անվտանգության ապահովման մակարդակը: Յուրաքանչյուր իրավախախտման համար կիրառվելու է տարբեր տուգանային միավորներ՝ կախված իրավախախտման բնույթից: Մեկ տարվա համար վարորդին տրվելու է 9 միավոր և ամեն խախտման համար դրանից նվազեցվելու է կոնկրետ չափի տուգանային միավոր: Միավորների սպառումը հանգեցնելու է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցման՝ 6 ամիս ժամկետով, իսկ կասեցման ժամկետը լրանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին միավորները սպառելու դեպքում՝ վարելու իրավունքից զրկում՝ 1 տարի ժամկետով:

Վարչական պատասխանատվության նոր ինստիտուտներն իրավախախտ վարորդներին նյութական լրացուցիչ զրկանքներ չեն պատճառելու, փոխարենը նպաստելու են վարչական իրավախախտումների ընդհանուր և հատուկ կանխարգելմանը և ոչ թե պատժիչ գործառույթների իրականացմանը:

5.Ամբողջովին վերանայվելու է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների կանխարգելման համակարգը: Օբյեկտների պետական պաշտպանությունը պահակային ծառայությամբ կազմակերպելը ժամանակի մեջ սպառվել է դեռևս նախորդ դարում: Առնվազն անհասկանալի է, որ ՊՊԳՎ ստորաբաժանումները իներցիայով շարունակում են մասնակցել նույնիսկ գնումների գործընթացին, ինչը առևտրային պրոյեկտ է և ոչ թե հանցագործությունների պրոֆիլակտիկա: Բիզնես դաշտում ոստիկանության գործունեությունը ուղղակի անընկալելի է հասարակության համար: Մինչդեռ փաստ է, որ նշված ստորաբաժանումները շուկայում մրցավազքի մեջ են մտնում հենց ոստիկանության կողմից լիցենզավորվող մասնավոր պահնորդական կազմակերպությունների հետ, ինչը մշտապես հարուցել է վերջիններիս արդարացի դժգոհությունը: Առաջնահերթ ենք համարում հետևյալ միջոցառումները.

-Պետական պահպանության վարչությունը իրականացնելու է ռազմավարական և հատուկ կարևորության օբյեկտների պահպանությունը՝ բացառապես պետական բյուջեից հատկացումների հաշվին,

-Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների կանխարգելումը խթանելու նպատակով ՊՊԳՎ ստորաբաժանումները մասնավոր օբյեկտների պաշտպանությունը պետք է իրականացնեն բացառապես տեխնիկական միջոցներով՝ ոստիկանության ստորաբաժանումներին միացված ահազանգման համակարգերով,

-Պահակային պահպանությունը պետք է թողնել մասնավոր պահնորդական կազմակերպություններին: Համոզված ենք, որ ոստիկանական արագ արձագանքման ուժերի պրոֆեսիոնալիզմը մասնավոր սեփականատերերի համար առավել նախընտրելի է դարձնելու համագործակցությունը հենց ոստիկանության հետ: Միաժամանակ, բացառվելու է ՊՊԳՎ ստորաբաժանումների մասնակցությունը գնումների գործընթացին:

Ծառայությունների մատուցումից ստացվող միջոցները կուղղվեն ստորաբաժանումների տեխնիկական վերազինմանը, անհրաժեշտ գույքի ձեռքբերմանը:

Օրենսդրական համապատասխան ակտերի ընդունումից հետո ՊՊԳՎ-ին է վերապահվելու քրեական դատավարության մասնակիցների, պետական պաշտոնատար անձանց, օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ անձանց անձնական անվտանգության պաշտպանության ապահովումը, ինչը կբարձրացնի ոստիկանության վարկանիշը:

Այսպիսով, առաջիկա կարճաժամկետ հատվածում նախատեսվող օրենսդրական և վարչարարական վերոգրյալ փոփոխությունները, գործնական կիրառության նոր գործիքների և մեթոդների ներդնումը էական նշանակություն կունենա ժողովրդավարական հասարակարգերում ձևավորված չափանիշներին համապատասխանող ոստիկանություն ունենալու հասարակության և պետության արդի պահանջն ըստ ամենայնի և հետևողականորեն իրագործելու համար:

Մ Ա Ս Ի – Բ. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Տարեկան բյուջետային ծրագրի այս հատվածը ներկայացնում է ընթացիկ տնտեսական իրավիճակը հանրապետությունում, ինչպես նաև 2019 թվականի մակրոտնտեսական հեռանկարները:

Տնտեսական կանխատեսումների նպատակը

Հայաստանի տնտեսության իրավիճակի կանխատեսումները նկարագրում են այն իրական միջավայրը, որի պայմաններում գործելու է կառավարությունը: Մյուս կողմից կառավարության հարկաբյուջետային քաղաքականությունն ազդում է մակրոտնտեսական միջավայրի վրա, հետևաբար մակրոտնտեսական կանխատեսումները հնարավորություն են տալիս հասկանալու, թե կառավարության որդեգրած հարկաբյուջետային քաղաքականությունը որքանով է համահունչ տնտեսության այլ հատվածների զարգացման միտումներին:

Տնտեսական կանխատեսումների իրականացման երկրորդ կարևոր հիմնավորումն այն է, որ ազգային տնտեսության իրավիճակը մեծ ազդեցություն ունի կառավարության ֆինանսական ռեսուրսների վրա: Տնտեսական բարձր աճն ապահովում է գործարարների ավելի մեծ եկամուտներ, որոնք իրենց հերթին կառավարության համար ապահովում են ավելի մեծ հարկային եկամուտներ: Եվ հակառակը, տնտեսական աճի ցածր մակարդակը բերում է հարկերի ավելի ցածր մակարդակի և կառավարության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության և օժանդակության ավելի մեծ պահանջարկի: Մակրոտնտեսական կանխատեսումները նաև հիմք են հանդիսանում ապագայում բյուջեի վրա հնարավոր ծանրաբեռնվածության մեծացման հետ կապված ռիսկերի գնահատման համար:

Տնտեսության նկարագրություն

Տնտեսությունը կարելի է նկարագրել ցուցանիշների հետևյալ հիմնական խմբերով.

Համախառն առաջարկ (չափվում է տնտեսության առանձին ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների իրական աճերով և համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) իրական աճով),

Համախառն պահանջարկ (չափվում է պետական, մասնավոր հատվածների և արտաքին աշխարհի կողմից ապրանքների և ծառայությունների վրա կատարվող ծախսումներով (սպառում/ՀՆԱ, ներդրում/ՀՆԱ, զուտ արտահանում/ՀՆԱ)),

Գնային փոփոխականներ (ՀՆԱ դեֆլյատոր, որն իրենից ներկայացնում է տնտեսությունում ստեղծված ՀՆԱ-ի գների փոփոխությունը, և գնաճ, որը չափվում է սպառողական գների ինդեքսով (ներառյալ ներմուծված սպառողական ապրանքների գները) (ՍԳԻ)),

Ֆինանսական համակարգի խորություն (չափվում է հետևյալ փոփոխականներով՝ փողի ագրեգատներ/ՀՆԱ, վարկեր/ՀՆԱ, ավանդներ/ՀՆԱ, և ցույց է տալիս, թե ֆինանսական համակարգը որքանով է ներգրավված երկրի տնտեսական կյանքում),

Արտաքին աշխարհի հետ տնտեսական հարաբերություններ (չափվում է հիմնականում երկրի ընթացիկ հաշվի հաշվեկշռով),

Պետական հատվածի դիրքը տնտեսությունում (չափվում է հիմնականում պետական հատվածի ծախսերի և եկամուտների ծավալով (պետական ծախսեր/ՀՆԱ, հարկային եկամուտներ/ՀՆԱ)):

Աղյուսակ 1-ում ներկայացված է տնտեսության ներկա իրավիճակի հակիրճ նկարագրությունը՝ ըստ վերը նշված վեց գլխավոր տնտեսական բնութագրիչների: ՀՀ կառավարության բյուջետային ուղերձի այս հատվածում նկարագրված են նաև այն հիմնական գործոններն ու միտումները, որոնք պայմանավորում են Աղյուսակ 1-ում նշված ցուցանիշերը և տնտեսության զարգացման հեռանկարները:

Աղյուսակ 1. ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի հիմքում դրված հիմնական տնտեսական չափորոշիչներ

Չափորոշիչ	2015	2016	2017	2018	2019
	փաստ.	փաստ.	փաստ.	կանխ.	կանխ
Տնտեսական աճ (ՀՆԱ % փոփոխություն)	3.2	0.2	7.5	6.5	4.9
Ներդրումների մակարդակ (Ներդրում/ՀՆԱ %)	20.7	18.0	19.0	23.3	23.6
Սպառման մակարդակ (Սպառում/ՀՆԱ %)	91.2	90.8	91.6	89.1	88.7
ՀՆԱ ինդեքս դեֆլյատոր	101.2	100.3	102.2	104.4	104.0
Գնաճ միջին	3.7	-1.4	1.0	2.7	3.5
Գնաճ 12-ամսյա	-0.1	-1.1	2.6	3.5	3.1

Պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ %	-4.8	-5.5	-4.8	-1.7	-2.2
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ	-2.6	-2.3	-2.8	-4.5	-3.7

Համախառն առաջարկ

Երկրում համախառն առաջարկն իրական արտահայտությամբ չափվում է տնտեսության առանձին ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների հանրագումարով: Դրա փոփոխությունը նախորդ տարվա համեմատ գնահատվում է ՀՆԱ-ի իրական աճի[1] միջոցով: Ուստի այս բաժնում կներկայացվի տնտեսության հիմնական ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների փոփոխության դինամիկան վերջին տարիներին և ապագայում ակնկալվող զարգացումները:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

Նախորդ տարիներին արտաքին աշխարհից եկող ոչ բարենպաստ զարգացումների արդյունքում ՀՀ տնտեսական աճի դանդաղման միտումը 2017 թվականին փոխվեց և տնտեսական աճի տեմպերը էապես արագացան՝ հանգեցնելով մակրոտնտեսական իրավիճակի զգալի բարելավման: Գրանցվեց հետճգնաժամային շրջանում աննախադեպ բարձր տնտեսական աճ՝ պայմանավորված ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոնների բարենպաստ զարգացումներով: Դրանք էին գործընկեր երկրների տնտեսական աճի տեմպերի արագացումը, մետաղների միջազգային գների աճը, ներհոսող դրամական փոխանցումների ավելացումը, վարկավորման ծավալների աճը, բնակչության և տնտեսվարող սուբյեկտների դրական սպասումները, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականությունը, մասնավորապես՝ ներդրումների ներգրավման և արտահանման խթանման ուղղությամբ:

2017 թվականին գրանցված 7.5% տնտեսական աճը պայմանավորված էր հիմնականում ծառայությունների և արդյունաբերության աճերով: Նշված ժամանակա-հատվածում ծառայություններն աճել են 12.4%-ով՝ ապահովելով տնտեսական աճի 6.0 տոկոսային կետը, արդյունաբերությունը՝ 6.6%-ով, ապահովելով տնտեսական աճի 1.2 տոկոսային կետը, իսկ շինարարությունն աճել է 2.5%-ով՝ 0.2 տոկոսային կետով նպաստելով տնտեսական

1ՀՆԱ-ի իրական աճ ասելով հասկանում ենք տնտեսությունում ստեղծված ՀՆԱ-ի ծավալային աճը՝ առանց գնային փոփոխության:

աճին[2]: Գյուղատնտեսությունը նվազել է 5.3%-ով, բացասաբար ազդելով տնտեսական աճին 0.9 տոկոսային կետով:

2018 թվականի տարեսկզբից տնտեսությունում գրանցված բարձր աճի միտումները պահպանվեցին: 2018 թվականի առաջին կիսամյակում ՀՆԱ-ի իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 8.3%, ինչին հիմնականում նպաստել են ծառայությունները (5.0 տոկոսային կետ), որի մեջ իր հերթին զգալի դերակատարում են ունեցել հատկապես առևտուրը, մշակույթ, զվարճություններ և հանգիստ ենթաճյուղը, ֆինանսական և ապահովագրական գործունեությունը, ինչպես նաև առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկման ենթաճյուղը: ՀՆԱ-ի աճին նպաստել են նաև մյուս ճյուղերը՝ արդյունաբերությունը (1.3 տոկոսային կետ)՝ ի դեմս մշակող արդյունաբերության, շինարարությունը (0.5 տոկոսային կետ) և գյուղատնտեսությունը (0.5 տոկոսային կետ):

2018 թվականի հունվար-օգոստոսին գրանցվեց տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ)[3] նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 7.7% աճ: Ընդ որում, տնտեսական ակտիվությանը հիմնականում նպաստել է ծառայությունների աճը (5.8 տոկոսային կետ): Աճին նպաստել են նաև մյուս ճյուղերի՝ առևտրի (0.8 տոկոսային կետ), արդյունաբերության (0.6 տոկոսային կետ) և շինարարության (0.5 տոկոսային կետ) համախառն թողարկման իրական աճերը, իսկ գյուղատնտեսության նվազումը փոքր-ինչ հակազդել է ՏԱՑ-ի աճին (-0.1 տոկոսային կետ):

Կանխատեսում. 2018 թվականին տնտեսության աճի տեմպերը նախորդ տարվա զարգացումների համեմատ կլինեն ավելի դանդաղ, իսկ աճը հիմնականում պայմանավորված կլինի ծառայությունների և արդյունաբերության աճերով: Տնտեսության մյուս ճյուղերը նույնպես դրական նպաստում կունենան տնտեսական աճին: 2018 թվականին 6.5% տնտեսական աճի կանխատեսման համար հիմք են հանդիսացել ներքին տնտեսական զարգացումները (մասնավորապես՝ 2018 թվականի հունվար-օգոստոս ամիսներին գրանցված տնտեսական ակտիվության ցուցանիշի բարձր աճը, ինչը պայմանավորված է եղել տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի աճով), ինչպես նաև արտաքին

---

2 Նշված պարբերության ցուցանիշները վերաբերում են տնտեսության ճյուղերում ստեղծված ավելացված արժեքին:

3 2011 թվականից ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը ամսական ՀՆԱ-ից անցում է կատարել ՏԱՑ-ի հաշվարկմանը: Ի տարբերություն Ազգային հաշիվների մեթոդաբանությամբ հաշվարկվող ՀՆԱ ցուցանիշի (որն ունի եռամսյակային և տարեկան պարբերականություն) ամսական ՏԱՑ-ը բնութագրում է տնտեսությունում ապրանքների և ծառայությունների թողարկման ծավալների փոփոխությունը, այլ ոչ թե ավելացված արժեքի փոփոխությունը: Բացի այդ, ամսական ՏԱՑ-ը չի ընդգրկում արտադրանքի զուտ հարկերը և ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունները (ՖՄԱՉԾ), որոնք ներառվում են եռամսյակային և տարեկան ՀՆԱ-ի արտադրական եղանակով հաշվարկներում:

աշխարհից սպասվող զարգացումները (մասնավորապես՝ հիմնական գործընկեր երկրների և աշխարհի տնտեսական աճի կանխատեսումները և հումքային ապրանքների գների աճը):

2019 թվականին տնտեսական աճը կմոտենա իր ներուժային մակարդակին՝ պայմանավորվելով արդյունաբերության և ծառայությունների աճով: 2019 թվականին կանխատեսվում է 2018 թվականի համեմատ ՀՆԱ-ի 4.9% իրական աճ: Տնտեսական աճի կանխատեսումներում հաշվի են առնվել ներդրումների աճի միտումները, ՀՀ կառավարության կառուցվածքային բարեփոխումների ընթացքը, ինչպես նաև գործընկեր երկրների տնտեսական աճերի և հումքային ապրանքների գների զարգացման միտումները:

Աղյուսակ 2.-ում և Գծապատկեր 1.-ում ներկայացված են 2015-2019 թվականների ՀՀ տնտեսության ճյուղերի իրական աճերը և առանձին ճյուղերում արձանագրված և կանխատեսվող ՀՆԱ-ի իրական աճերին ճյուղերի նպաստման չափերը:

Աղյուսակ 2. Տնտեսության ճյուղերի իրական աճերը (ավելացված արժեքով)

	2015	2016	2017	2018	2019
	փաստ.	փաստ.	փաստ.	կանխ.	կանխ.
ՀՆԱ	3.2	0.2	7.5	6.5	4.9
Արդյունաբերություն	6.2	7.6	6.6	5.0	5.0
Գյուղատնտեսություն	13.2	-5.0	-5.3	4.0	4.0
Շինարարություն	-3.1	-14.1	2.5	6.1	5.5
Ծառայություններ	1.6	3.2	12.4	8.0	5.0
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	-5.1	-3.7	10.1	5.9	5.3

Գծապատկեր 1. ՀՆԱ-ի իրական աճին տնտեսության առանձին ճյուղերի նպաստումները[4]*



Ներդիր 1

Այլ կառույցների կողմից ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները

Աղյուսակում ներկայացված են այլ կառույցների կողմից ՀՀ տնտեսական աճի 2018 և 2019 թվականների կանխատեսումները: Այսպես, ՀՀ կենտրոնական բանկի և «Մուդիս» միջազգային վարկանշային կազմակերպության կանխատեսումներով ՀՀ տնտեսական աճը 2019 թվականին կկազմի 5.5%: Իսկ մյուս միջազգային հեղինակավոր կառույցների կանխատեսումներով այն կլինի համեմատաբար ցածր:

Աղյուսակ. ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները

	2018*	2019*
Արժույթի միջազգային հիմնադրամ (2018թ. ապրիլ)	5.5%	4.8%
Համաշխարհային Բանկ (2018թ. հունիս)	4.1%	4.0%
Մուդիս (2018թ. սեպտեմբեր)	6.0%	5.5%
Ֆիթչ (2018թ. հունիս)	4.7%	4.0%
ՀՀ կենտրոնական բանկ (2018թ. օգոստոս)	6.2%	5.5%

4 Այսուհետ՝ «*» նշանակում է 2018 թվականի սպասողական և 2019 թվականի կանխատեսվող ցուցանիշ:

Արդյունաբերություն

2017 թվականին արդյունաբերությունն աճել է՝ պայմանավորված հիմնականում մշակող և հանքագործական արդյունաբերության աճերով: Արդյունաբերության մյուս ենթաճյուղերը նույնպես դրսևորել են աճի միտումներ:

2017 թվականին արձանագրվել է արդյունաբերության 12.6% աճ, ընդ որում՝ մշակող արդյունաբերությունն աճել է 15.7%-ով, իսկ հանքագործական արդյունաբերությունը՝ 13.9%-ով, պայմանավորված ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պահանջարկի աճերով[5]:

Ջրամատակարարման և էլեկտրաէներգիայի ճյուղերն աճի ցուցանիշներ են արձանագրել, համապատասխանաբար՝ 8.1% և 1.2%: Ջրամատակարարման ոլորտի աճն ապահովել է թափոնների հավաքում և մշակում ենթաճյուղը՝ 26% աճով:

2018 թվականին արդյունաբերության ճյուղի աճի տեմպերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ դանդաղել են: 2018 թվականի հունվար-հուլիս ամիսներին արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի համախառն թողարկման ծավալների 4.3% աճ: 2018 թվականին արդյունաբերության աճը հիմնականում տեղի է ունեցել ի հաշիվ մշակող արդյունաբերության 9.3% աճի, իսկ հանքագործական արդյունաբերությունը նվազել է 2.2%-ով: Մշակող արդյունաբերության աճը հիմնականում պայմանավորված է եղել այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (44.5%), ոսկերչական արտադրատեսակների (34.3%) և սննդամթերքի (4.0%) արտադրության աճերով:

«Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ճյուղն աճել է 4.7%-ով՝ պայմանավորված էլեկտրաէներգիայի արտադրության, հաղորդման և բաշխման 7.3% աճով:

Կանխատեսում. 2018 թվականին արդյունաբերության ճյուղում կպահպանվեն աճի միտումները: Արդյունաբերության ճյուղում տարվա առաջին յոթ ամիսների տնտեսական զարգացումների հիման վրա կանխատեսվում է, որ 2018 թվականին տարեկան աճը կկազմի շուրջ 5.0%:

2019 թվականին կանխատեսվում է արդյունաբերության շուրջ 5.0% աճ, ինչը պայմանավորված կլինի ինչպես գործընկեր երկրների զարգացման միտումներով, այնպես էլ տնօրինվող եկամտի աճով պայմանավորված՝ ներքին պահանջարկի աճով:

---

5 Այսուհետ ներկայացված են ճյուղերի համախառն թողարկումների ցուցանիշները:

Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության ճյուղի անկումը շարունակվեց նաև 2017 թվականին: Ճյուղում 2017 թվականին արձանագրվեց 2.9% անկում: Գյուղատնտեսության ճյուղի նվազումը պայմանավորված է եղել բուսաբուծության ենթաճյուղի 7.2% նվազմամբ: Բուսաբուծության նվազմանն ամենամեծ ազդեցությունն են ունեցել հացահատիկի, բանջարեղենի և կարտոֆիլի, համապատասխանաբար՝ 49.9%, 11.1% և 9.7% նվազումները: Չնայած գրանցված նվազմանը՝ ոլորտում իրականացվել են ներդրումներ, որոնց աճը 2017 թվականին կազմել է 33.4%[6]:

2018 թվականին հունվար-հուլիսին գյուղատնտեսության ճյուղը աճ է արձանագրել: Գյուղատնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքն իրական արտահայտությամբ աճել է 4.4%-ով[7], որը պայմանավորվել է բուսաբուծության 14.2% աճով, մինչդեռ անասնաբուծությունը նվազել է 3.7%-ով: 2018 թվականին գյուղատնտեսության աճը պայմանավորվել է հիմնականում արտադրության ինտենսիվ գործոններով, հաշվի առնելով, որ ցանքատարածությունները նվազել են շուրջ 16.2%-ով[8]:

Կանխատեսում. 2018 թվականին, հաշվի առնելով ընթացիկ զարգացումները, կանխատեսվում է գյուղատնտեսության ճյուղի շուրջ 4.0% աճ:

2019 թվականին գյուղատնտեսության աճը կանխատեսվում է պատմական ներուժային մակարդակին համահունչ: 2019 թվականին ևս ճյուղի աճը կկազմի շուրջ 4.0%: Կանխատեսման համար հիմք են հանդիսացել ճյուղի զարգացմանն ուղղված կառավարության կողմից իրականացվող ծրագրերի[9] և ոլորտում իրականացված ներդրումների ակնկալվող արդյունքները, գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացված կանխատեսումներն ու նախորդ տարիներին ճյուղի զարգացման միտումները:

---

6 Իրականացված կապիտալ շինարարության աճի ցուցանիշն է:

7 Ենթաճյուղերի նպաստումների ցուցանիշները այս և հաջորդ ճյուղերի համար հաշվարկվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից՝ ՀՀ ԱՎԾ ամսական ցուցանիշների պաշտոնական հրապարակումների հիման վրա:

8 Կերային մշակաբույսերի նվազումը կազմել է 15.7%, բոստանային մշակաբույսերինը՝ 31.3%, բանջարանոցայինը՝ 23%, կարտոֆիլը՝ 12.0%, տեխնիկական մշակաբույսերը 19.8%, հացահատիկայինը՝ 15.5%:

9 Ռեսուրսային ներուժի օգտագործման մակարդակի բարձրացման, սերմնաբուծության և տոհմային գործի համակարգի ամրապնդման, բույսերի առավել վտանգավոր հիվանդությունների դեմ պայքարի, հողային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման և անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների իրականացման, վարկերի, ինչպես նաև գյուղատնտեսության մեջ օգտագործվող կարևորագույն նյութական ռեսուրսների մատչելիության, արդիական տեխնոլոգիաների ներդրման, մասնավորապես գյուղատնտեսական և ագրոպարենային ոլորտում այլ տեխնիկայի լիզինգային մեխանիզմներով մատակարարման, ինտենսիվ այգեգործության խթանման, ոռոգման արդիական տեխնոլոգիաների ու կարկտապաշտպան ցանցերի ներդրման, գյուղատնտեսական կոոպերացիայի խթանման, ոլորտի խորհրդատվական համակարգի զարգացման և այլ ծրագրեր:

Շինարարություն

Տնտեսությունում իրականացված շինարարության ծավալները 2017 թվականին դրսևորել են աճի միտում: 2017 թվականին ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված շինարարության ծավալներն աճել են 2.2%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է եղել միջազգային վարկերի հաշվին իրականացված շինարարության ծավալների 20.5% աճով: Շինարարության աճին հիմնականում հակազդել են կազմակերպությունների և համայնքների միջոցների հաշվին իրականացվող շինարարության նվազումները (համապատասխանաբար՝ 1.8% և 26.1%):

2018 թվականի առաջին յոթ ամիսներին տնտեսությունում իրականացված շինարարության աճի տեմպերն արագացել են և ճյուղը գրանցել է երկնիշ աճ: 2018 թվականի հունվար-հուլիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ շինարարության ծավալներն աճել են 10.4%-ով, ինչը պայմանավորված է եղել պետական բյուջեի (հատկապես՝ միջազգային վարկային միջոցների), կազմակերպությունների և բնակչության միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալների համապատասխանաբար՝ 22.1%, 7.7% և 8.4% աճերով: Շինարարության ծավալների աճին փոքր-ինչ հակազդել են համայնքների և մարդասիրական օգնության միջոցների հաշվին իրա-կանացված շինարարության ծավալների, համապատասխանաբար՝ 21.9% և 6.9% նվազումները:

2018 թվականի առաջին յոթ ամիսներին տնտեսությունում իրականացված շինարարության ծավալում խոշոր մասնաբաժին են ունեցել անշարժ գույքի հետ կապված (կշիռը՝ 27.0%), տրանսպորտի (կշիռը՝ 15.0%) և էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում (կշիռը՝ 11.9%) գործունեության տեսակներով իրականացված շինարարության ծավալները:

Կանխատեսում. 2018 թվականին կանխատեսվում է շինարարության ճյուղի աճի տեմպի արագացում: Հաշվի առնելով 2018 թվականի միտումները՝ ակնկալվում է, որ մինչև տարեվերջ ճյուղի աճի տեմպը կդանդաղի և կկազմի շուրջ 6.1%:

2019 թվականին ճյուղում կշարունակվեն աճի միտումները: 2019 թվականին կանխատեսվում է շինարարության 5.5% աճ, ինչը պայմանավորված կլինի ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ներդրումների աճով:

Ծառայություններ և առևտուր

Ծառայությունների (ներառյալ առևտուրը) ոլորտում արձանագրված բարձր աճի տեմպերի միտումները պահպանվել են 2017 թվականին: 2017 թվականի ընթացքում մատուցված ծառայությունների (առանց առևտրի շրջանառության) 14.4% աճը հիմնականում պայմանավորված է եղել մշակույթ, զվարճություններ և հանգիստ (22.3%), ֆինանսական և ապահովագրական գործունեության (20.6%), տրանսպորտ (14.7%, հատկապես՝ ցամաքային տրանսպորտ), ինչպես նաև կացության և հանրային սննդի կազմակերպման (19.4%) հետ կապված ծառայությունների աճերով:

2018 թվականին նախորդ տարվա համեմատ ծառայությունների աճի տեմպերն արագացել են: 2018 թվականի հունվար-հուլիս ամիսներին մատուցված ծառայությունների ծավալը 2017 թվականի համապատասխան ժամանակահատվածի համեմատ իրական արտահայտությամբ աճել է 18.7%-ով, ինչին հիմնականում նպաստել են մշակույթ, զվարճություններ և հանգստի, ֆինանսական և ապահովագրական գործունեության, կացության և հանրային սննդի կազմակերպում, ինչպես նաև տրանսպորտի ոլորտներում մատուցված ծառայությունների, համապատասխանաբար՝ 36.2%, 16.7%, 26.2% և 12.7% աճերը:

Առևտրի շրջանառության ծավալներն արձանագրել են աճի բարձր ցուցանիշներ: 2017 թվականին առևտրի շրջանառությունն աճել է 14.0%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է եղել մեծածախ առևտրի 25.8% աճով: Առևտրի շրջանառության աճին նպաստել է նաև մանրածախ առևտրի աճը (5.5%):

2018 թվականի հունվար-հուլիս ամիսներին առևտրի շրջանառությունը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 8.9%-ով, ինչը ևս հիմնականում պայմանավորված է եղել մեծածախ առևտրի 16.6% աճով:

Կանխատեսում. 2019 թվականին ծառայությունների աճը համահունչ կլինի տնտեսական աճին: Հաշվի առնելով ընթացիկ զարգացումները և 2018 թվականի աճի միտումները՝ մինչև տարեվերջ աճը կկազմի շուրջ 8.0%, իսկ 2019 թվականին ճյուղի աճը փոքրինչ կդանդաղի և կկազմի 5.0%:

Աշխատանքի շուկա

2017 թվականին տնտեսական աճն ուղեկցվել է գործազրկության մակարդակի նվազմամբ: Գործազրկության մակարդակը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 0.2 տոկոսային կետով՝ կազմելով 17.8%: Զբաղվածների թվաքանակը, ի տարբերություն նախորդ տարիներին արձանագրված շարունակական նվազման, աճել է 0.6%-ով:

Գործազրկության մակարդակի նվազման միտումը շարունակվել է նաև 2018 թվականին: 2018 թվականի առաջին եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի

նկատմամբ գործազրկության մակարդակը նվազել է՝ 19.0%-ից հասնելով 17.6%-ի, իսկ զբաղվածների թվաքանակն աճել է 5.5%-ով՝ կազմելով 1027.9 հազար մարդ:

ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից նոր մեթոդաբանությամբ հաշվարկված գործազրկության մակարդակը 2018 թվականի առաջին եռամսյակում կազմել է 20.6%՝ 1.2 տոկոսային կետով նվազելով նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ[10]: Զբաղվածների թիվն աճել է նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ 4.5%-ով, իսկ գործազուրկների թիվը կրճատվել է 2.5%-ով:

2017 թվականին միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 3.3%-ով[11], իսկ 2018 թվականի հունվար-օգոստոսին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 3.7%-ով՝ կազմելով 168,467 դրամ: Ընդ որում պետական հատվածում աշխատավարձն աճել է 1.8%-ով, իսկ մասնավոր հատվածում՝ 3.7%-ով՝ կազմելով համապատասխանաբար 144,406 դրամ և 182,768 դրամ: Իրական աշխատավարձի աճը, 2018 թվականի հունվար-օգոստոսի 2.5% միջին գնաճի պայմաններում, կազմել է 1.2%[12]:

Գծապատկեր 2. Տնտեսության ճյուղերի տեսակարար կշիռները ՀՆԱ-ում



10 Նոր մեթոդաբանությամբ զբաղվածությունը համարվում է աշխատանքի հինգ ձևերից միակը, որն իրականացվում է այլոց համար՝ վարձատրության կամ եկամտի դիմաց: Նախկին սահմանման համեմատ զբաղվածների թվաքանակից բացառվել են նրանք, ովքեր հետազոտվող շաբաթում իրենց տնտեսությունում զբաղվել են ապրանքների արտադրությամբ՝ սեփական վերջնական սպառման համար, եթե արտադրված արտադրանքը նշանակալի մասնաբաժին է ունեցել տնային տնտեսության սպառման մեջ: (Նոր մեթոդաբանությունն առավել մանրամասն տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջում http://armstat.am/file/article/sv_06_18a_141.pdf):

11 2017թվականի աշխատավարձի վերաբերյալ ցուցանիշը նախնական է. ներառված չեն փոքր և գերփոքր կազմակերպությունների տվյալները:

12 ՀՀ վիճակագրական կոմիտեն 2018թվականի հունվարից անցում է կատարել միջին աշխատավարձի հաշվարկման տեղեկատվական նոր աղբյուրի՝ վարչական ռեգիստրի գործիքի կիրառմանը: 2018թվականի աշխատավարձի վերաբերյալ ցուցանիշները ներկայացնում են 1 և ավելի աշխատող ունեցող կազմակերպությունների տվյալները:

Ամփոփելով նշենք, որ 2018-2019 թվականներին տնտեսությունում արդյունաբերության և ծառայությունների մասնաբաժինները կմնան կայուն՝ ամբողջական առաջարկի ճյուղային կառուցվածքում կազմելով ՀՆԱ-ի համապատասխանաբար՝ 17.3 և 49.6%-ը: (տես՝ Գծապատկեր 2):

Համախառն պահանջարկ

Համախառն պահանջարկը պատկերացում է տալիս տնտեսությունում եկամուտների ծախսման ուղղությունների վերաբերյալ: Համախառն պահանջարկը կազմված է ներքին և արտաքին պահանջարկներից: Ներքին պահանջարկը տեղեկատվություն է տալիս, թե ձևավորված եկամուտները ուղղվելու են սպառմանը, թե ներդրվելու են տնտեսության մեջ: Նշվածը հիմնականում բնութագրվում է պետական և մասնավոր հատվածների կողմից ստեղծված ընդհանուր եկամտում սպառման և ներդրումների մասնաբաժիններով, որոնք արտացոլվում են սպառում/ՀՆԱ և ներդրումներ/ՀՆԱ ցուցանիշներով: Իսկ արտաքին պահանջարկը տեղեկատվություն է տալիս գործընկեր երկրների կողմից մեր ապրանքների և ծառայությունների վրա կատարված ծախսումների մասին, որը բնութագրվում է զուտ արտահանման ցուցանիշով:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

Սպառում

2017 թվականին վերջնական սպառման բարձր՝ 9.6% աճը պայմանավորված է եղել տնօրինվող եկամտի աճով: Տնտեսությունում իրականացված սպառումը իր հերթին պայմանավորված է եղել ինչպես մասնավոր սպառման աճով, որի վրա դրական ազդեցություն է ունեցել ներհոսող դրամական փոխանցումների աճը, այնպես էլ պետական սպառման աճով:

2018 թվականի հունվար-հունիսին վերջնական սպառումը իրական արտահայտությամբ աճել է շուրջ 2.3%-ով: 2018 թվականի առաջին կիսամյակում բնակչության տնօրինվող եկամտի աճի և վարկավորման ծավալների ավելացման պայմաններում մասնավոր սպառումն իրական արտահայտությամբ աճել է 4.4%-ով: Պետական սպառումը նվազել է 9.1%-ով՝ պայմանավորված զսպող հարկաբյուջետային քաղաքականությամբ:

Կանխատեսում. 2018-2019 թվականներին կանխատեսվում է վերջնական սպառման աճ: 2018 թվականին ակնկալվում է սպառման 5,4% իրական աճ՝ պայմանավորված մասնավոր սպառման աճով: 2019 թվականին տնօրինվող եկամտի աճի տեմպի դանդաղման պայմաններում կանխատեսվում է սպառման 5% իրական աճ: Ընդ որում՝ վերջնական սպառումը կաճի և՛ մասնավոր և՛ պետական հատվածներում:

Կապիտալ ներդրումներ

Կապիտալ ներդրումները հետճգնաժամային երկարատև նվազումից հետո 2017 թվականին առաջին անգամ գրանցել են բարձր աճի տեմպեր: 2017 թվականին կապիտալ ներդրումների 13.9% աճը պայմանավորված է եղել ինչպես մասնավոր հատվածի ներդրումների, այնպես էլ պետական ներդրումների աճերով:

2018 թվականի հունվար-հունիսին կապիտալ ներդրումներն աճել են՝ պայմանավորված մասնավոր ներդրումների աճով: 2018 թվականի առաջին կիսամյակում իրականացված կապիտալ ներդրումներն իրական արտահայտությամբ աճել են 76.1%-ով: Ընդ որում, հիմնական միջոցներում ներդրումներն աճել են 14.7%-ով: Առաջին կիսամյակում ներդրումների աճը պայմանավորված է եղել մասնավոր ներդրումների շուրջ 86.9% աճով, որին նպաստել է տնտեսությունում վարկավորման ծավալների աճը: Իսկ պետական ներդրումներն իրական արտահայտությամբ նվազել են 3%-ով:

Կանխատեսում. 2018-2019 թվականներին կանխատեսվում է ներդրումների աճ: Ընթացիկ տարվա զարգացումներով պայմանավորված 2018 թվականին ակնկալվում է ներդրումների 32.7% իրական աճ: 2019 թվականին կանխատեսվում է և՛ պետական, և՛ մասնավոր հատվածներում ներդրումային ակտիվության աճ, ինչի արդյունքում սպասվում է ներդրումների շուրջ 6.1% իրական աճ:

Զուտ արտահանում[13]

2017 թվականին զուտ արտահանումը վատթարացել է՝ պայմանավորված ներմուծման բարձր աճով: 2017 թվականին ապրանքների և ծառայությունների արտահանումն իրական արտահայտությամբ աճել է 18.2%-ով, իսկ ներմուծումը՝ 24.8%-ով: Արտահանման ծավալների աճը պայմանավորված է եղել հիմնական գործընկեր երկրներում պահանջարկի բարելավմամբ, իսկ ներմուծման աճը՝ բնակչության տնօրինվող եկամտի աճով:

13 Այս բաժնում ներկայացված են արտահանման և ներմուծման իրական աճի ցուցանիշները:

2018 թվականի հունվար-հունիսին զուտ արտահանումը վատթարացել է՝ պայմանավորված արտահանման նկատմամբ ներմուծման առաջանցիկ աճով: Ընդ որում՝ 2018 թվականի հունվար-հունիսին ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ իրական արտահայտությամբ աճել են 9.7%-ով, իսկ ներմուծումը՝ 21.2%-ով: Արտահանման ծավալների աճը պայմանավորված է եղել արտաքին պահանջարկի և առևտրի պայմանների բարելավմամբ, իսկ ներմուծմանը՝ ներքին պահանջարկի աճով:

Կանխատեսում. 2018 թվականին կանխատեսվում է արտահանման 8.2% և ներմուծման 10.6% իրական աճ: 2019 թվականին արտաքին պահանջարկի աճի պայմաններում կանխատեսվում է արտահանման 8.0% իրական աճ, իսկ տնօրինվող եկամտի աճի պայմաններում՝ ներմուծման շուրջ 7.0% իրական աճ:

Աղյուսակ 3. ՀՆԱ-ի ծախսային բաղադրիչների իրական աճերը, տոկոս

	2015	2016	2017	2018*	2019*
	փաստ.	փաստ.	փաստ.	կանխ.	կանխ.
Սպառում	-6.2	-1.2	9.6	5.4	5.0
Ներդրումներ	-1.2	-8.7	13.9	32.7	6.1
Արտահանում	4.9	19.1	18.2	8.2	8.0
Ներմուծում	-15.1	7.6	24.8	10.6	7.0
Ընդամենը ՀՆԱ	3.2	0.2	7.5	6.5	4.9

Աղյուսակ 4. Ծախսային բաղադրիչների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի կազմում

	2015	2016	2017	2018*	2019*
	փաստ.	փաստ.	փաստ.	կանխ.	կանխ.
Սպառում	91.2	90.8	91.6	89.1	88.7
Ներդրումներ	20.7	18.0	19.0	23.3	23.6
Զուտ արտահանում, այդ թվում՝	-12.1	-9.6	-12.2	-13.6	-12.5
Արտահանում[14]	29.7	33.1	37.3	38.7	41.0

14 Ներառված են նաև ծառայությունները:

Ներմուծում	41.9	42.8	49.5	52.3	53.5
Ընդամենը ՀՆԱ	100	100	100	100	100

Ամփոփելով նշենք, որ 2019 թվականին համախառն պահանջարկի շարժիչ կհանդիսանա ներքին պահանջարկը: 2018-2019 թվականներին համախառն պահանջարկը կաճի ներքին պահանջարկի ավելացման շնորհիվ: Ընդ որում, 2018 թվականին ներքին պահանջարկի աճին կնպաստեն մասնավոր ներդրումների և մասնավոր սպառման աճերը, իսկ 2019 թվականին՝ նաև պետական ներդրումների և սպառման աճերը:

Գնային փոփոխականներ

Գների մակարդակը տնտեսության մեջ բնութագրվում է սպառողական գների ինդեքսով (ՍԳԻ) կամ ՀՆԱ դեֆլյատորով, իսկ դրանց փոփոխությունները ցույց են տալիս տնտեսությունում նկատվող գնաճի կամ գնանկման միտումները: ՍԳԻ-ն ցույց է տալիս ՀՀ սպառողական շուկայում որոշակի քանակությամբ ապրանքների (ներառյալ՝ ներմուծված) և ծառայությունների գների վարքագիծը, իսկ ՀՆԱ դեֆլյատորը՝ միայն մեր տնտեսությունում ստեղծված ապրանքների և ծառայությունների գների վարքագիծը:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

2017 թվականին ՀՀ ԿԲ կողմից վարվող դրամավարկային քաղաքականությունը բնութագրվել է ընդլայնող ուղղվածությամբ: Գնաճի ցուցանիշի կայունացմանն (4±1.5) ու համախառն պահանջարկի ընդլայնմանը նպաստելու նպատակով ՀՀ ԿԲ-ն այս ժամանակահատվածում թուլացրել է դրամավարկային պայմանները՝ նվազեցնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով :

2017 թվականին ՀՀ սպառողական շուկայում գնանկումային միջավայրը փոխվել է գնաճայինի: Դեկտեմբեր ամսին 12 ամսյա գնաճը կազմել է 2.6%, իսկ միջին գնաճը՝ 1%: Գնաճի վերականգնմանը հիմնականում նպաստել են ներքին պահանջարկի և միջազգային շուկաներում որոշ ապրանքների գների վերականգնումը, ինչպես նաև տարվա ընթացքում ՀՀ ԿԲ-ի դրամավարկային քաղաքականության խթանող ուղղության պահպանումը:

2018 թվականի հուլիսին 12-ամսյա գնաճը մայիս և հունիս ամիսների նվազումից հետո կտրուկ աճել է՝ կազմելով 2.3%: Տնտեսական զարգացումներից ելնելով ՀՀ ԿԲ-ը տարվա ընթացքում չի փոփոխել վերաֆինանսավորման տոկոսադրույքը (6%)[15]:

15 12-ամսյա գնաճը 2018 թվականի օգոստոսին կազմել է 3.3%:

Կանխատեսում. 2018 թվականին 2-րդ կիսամյակում 12-ամսյա գնաճը կավելանա՝ պահպանվելով տատանման թույլատրելի միջակայքում և կանխատեսվող հորիզոնում կգտնվի նպատակային 4% (+-1.5) ցուցանիշի շուրջ[16]:

Գծապատկեր 3. 2017-2018 թվականներին 12-ամսյա գնաճի նպաստումները խոշոր ապրանքախմբերով, տոկոսային կետ



ՀՆԱ դեֆլյատոր: 2017 թվականին ՀՆԱ ինդեքս դեֆլյատորի աճը կազմել է 2.2%: ՀՆԱ դեֆլյատորի աճին հիմնականում նպաստել են գյուղատնտեսության և արդյունաբերության դեֆլյատորների աճը:

2018 թվականի վեց ամիսների տվյալներով ՀՆԱ դեֆլյատորը աճել է 4.4%-ով, որին հիմնականում նպաստել է գյուղատնտեսության դեֆլյատորի աճը: Դեֆլյատորի զարգացումները համահունչ են եղել տարվա ընթացքում ՍԳԻ-ի զարգացման միտումներին: ՀՆԱ դեֆլատորին աճի ուղղությամբ նպաստել են նաև շինարարության, ծառայությունների և արդյունաբերության դեֆլյատորների աճերը:

Կանխատեսում. Մինչև տարեվերջ, կանխատեսվում է ՀՆԱ դեֆլյատորի 4.4% աճ, իսկ 2019 թվականին այն կկազմի շուրջ 4.0%, որը պայմանավորված կլինի ՍԳԻ վերականգնմամբ:

16 Տես ՀՀ ԿԲ-ի Դրամավարկային քաղաքականության ծրագիրը, 2018 թվականի 3-րդ եռամսյակ:

Ֆինանսական շուկա

Այս բաժնում կներկայացվեն ֆինանսական շուկաները բնութագրող երկու հիմնական՝ ֆինանսական միջնորդության և ֆինանսական շուկայում ձևավորված տոկոսադրույքների ցուցանիշները:

Ֆինանսական միջնորդության մակարդակը բնութագրում է ֆինանսական ինստիտուտների (բանկեր, վարկային կազմակերպություններ, ներդրումային ընկերություններ և այլն) ակտիվներն ու պարտավորությունները՝ ձևավորված սուբյեկտների խնայողությունները միավորելու և ներդրումների վերածելու նպատակով:

Ֆինանսական շուկայում ձևավորված տոկոսադրույքներն ազատ մրցակցության պայմաններում ցույց են տալիս փողի գինը՝ հաշվի առած ֆինանսական շուկայի մասնակիցների կողմից գնահատվող տարբեր ռիսկերի աստիճանը: Գնաճի տրված մակարդակի պայմաններում, եթե տոկոսադրույքները բարձր են, ապա ռիսկայնության աստիճանը բարձր է կամ հակառակը:

Այսինքն՝ ֆինանսական շուկայի միջոցով կարգավորվում է փողի նկատմամբ առաջարկը և պահանջարկը (փողի զանգված, փողի բազա) և դրա գինը (բանկային տոկոսադրույք) տնտեսական գործունեություն ծավալողների համար:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

Դրամավարկային հատված և ֆինանսական շուկա

2017 թվականին փողի բազան նվազել է՝ պայմանավորված ՀՀ ԿԲ զուտ արտաքին ակտիվների նվազմամբ: 2017 թվականի տարեվերջին փողի բազան կազմել է շուրջ 1032 մլրդ դրամ՝ տարեսկզբի համեմատ նվազելով 1%-ով: Ընդ որում, զուտ արտաքին ակտիվները նվազել են 1.6%-ով, իսկ զուտ ներքին ակտիվները գրեթե չեն փոփոխվել (աճել են 0.05%-ով):

Փողի բազայի նվազմանը հիմնականում նպաստել է ՀՀ ԿԲ-ում արտարժութային թղթակցային հաշիվների նվազումը: Այսպես. փողի բազայում ԿԲ-ից դուրս կանխիկն աճել է 13.3%-ով (նպաստումը փողի բազայի աճին կազմել է 5.8 տոկոսային կետ), իսկ պարտադիր պահուստները դրամով և արտարժույթով նվազել են, համապատասխանաբար՝ 1.1 և 30.9%-ով (նպաստումը փողի բազայի փոփոխությանը կազմել է համապատասխանաբար -0.3 և -7.6 տոկոսային կետ):

2018 թվականի հուլիսին փողի բազայի 12 ամսյա աճը կազմել է 5%, ընդ որում՝ արտարժույթով թղթակցային հաշիվներն նվազել են 35.2%-ով, իսկ ԿԲ-ից դուրս կանխիկ դրամը և դրամով թղթակցային հաշիվներն աճել են, համապատասխանաբար՝ 11.1%-ով և 18.5%-ով (նպաստումներն աճին համապատասխանաբար -6.7, 5.4, 5.6 տոկոսային կետ):

2017 թվականին փողի զանգվածի աճն արագացման միտում է ցուցաբերել: 2017 թվականի տարեվերջին փողի զանգվածը կազմել է 2582.8 մլրդ դրամ՝ տարեսկզբի նկատմամբ աճելով 18.5%-ով, նախորդ տարվա 17.5%-ի համեմատ: Ընդ որում, զուտ արտաքին ակտիվների աճը կազմել է 77.2%, իսկ զուտ ներքին ակտիվները՝ 11%:

Փողի զանգվածի աճը պայմանավորվել է հիմնականում դրամային ավանդների աճով: Փողի զանգվածի աճին բանկային համակարգից դուրս կանխիկը նպաստել է 2.5 տոկոսային կետով, իսկ դրամային և արտարժույթով ավանդները, համապատասխանաբար՝ 11.7 և 4.2 տոկոսային կետերով:

2018 թվականի հուլիսին փողի զանգվածի 12 ամսյա աճի տեմպը կազմել է 11.7 տոկոս, և վերջինիս ամենամեծ նպաստումը կրկին ունեցել են դրամով ավանդները՝ 8.3 տոկոսային կետ, իսկ արտարժույթով ավանդների և շրջանառությունում կանխիկի նպաստումը համապատասխանաբար կազմել է 1.3 և 2.1 տոկոսային կետ:

Գծապատկեր 4. 2017 թվականին փողի բազայի և փողի զանգվածի աճին նպաստումները, տոկոսային կետ





2017 թվականին ավանդների և վարկերի ծավալների (ռեզիդենտների) աճն արագացել է նախորդ տարվա համեմատ: Ավանդների և վարկերի աճի միտումը շարունակվել է նաև 2018 թվականի առաջին յոթ ամիսներին: Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2017 թվականին նախորդ տարվա նկատմամբ աճել են 19.5%-ով, որին 13.3 տոկոսային կետով նպաստել է դրամային ավանդների աճը, 6.2 տոկոսային կետով՝ արտարժութային ավանդներինը: 2018 թվականի հուլիսին ավանդների

ծավալի 12 ամսյա աճի տեմպը կազմել է 12%, որին դրամային ավանդների նպաստումը կազմել է 9.2 տոկոսային կետ, իսկ արտարժույթով ավանդներինը՝ 2.9 տոկոսային կետ:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները 2017 թվականին նախորդ տարվա նկատմամբ աճել են 17.1%-ով՝ 2016 թվականի 5.6% դիմաց: Վարկերի աճին 10.2 տոկոսային կետով նպաստել են դրամային վարկերի և շուրջ 7 տոկոսային կետով՝ արտարժութային վարկերի աճերը: Վարկերի աճին հիմնականում դրական են նպաստել առևտրի, սպառողական վարկերի, արդյունաբերության, շինարարության, հիպոթեքային, սպասարկման ոլորտի վարկերի աճերը, իսկ տրանսպորտի և կապի, գյուղատնտեսության ոլորտներին տրամադրված վարկերը նվազել են՝ բացասաբար ազդելով վարկերի աճին: 2018 թվականի հուլիսին վարկերի ծավալի 12 ամսյա աճը կազմել է 21.7%, որին դրամային վարկերի նպաստումը կազմել է 14.4 տոկոսային կետ, իսկ արտարժութային վարկերի նպաստումը՝ 7.3 տոկոսային կետ:

2017 թվականին և 2018 թվականի ընթացքում դոլարայնացման մակարդակը նվազել է: Արտարժութային ավանդներ/ընդամենը ավանդներ հարաբերակցությունը տարեվերջին 2016 թվականի նկատմամբ նվազել է 4.1 տոկոսային կետով՝ կազմելով 60.4%: Միտումը շարունակվել է նաև 2018 թվականի հունվար-հուլիս ամիսներին, և ժամանակաշրջանի վերջում նշված հարաբերակցությունը կազմել է 59.7%՝ 2017 թվականի դեկտեմբերի նկատմամբ նվազելով ևս 0.7 տոկոսային կետով:

2017 թվականին ավանդների և վարկերի տոկոսադրույքները նվազման միտումներ են դրսևորել, ինչը շարունակվել է նաև 2018 թվականի հունվար-հուլիսին: 2017 թվականին դրամային ավանդների (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույքը կազմել է 9%՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 2.6 տոկոսային կետով: ՀՀ դրամով վարկավորման (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույքը կազմել է 14.4%՝ նվազելով 3 տոկոսային կետով: Արտարժույթով ավանդների (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույքը 2017 թվականին կազմել է 3.9%՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 1.4 տոկոսային կետով: Արտարժույթով վարկավորման (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույքը կազմել է 8%՝ նվազելով 1 տոկոսային կետով: 2018 թվականի հունվար-հուլիսին դրամային ավանդների տոկոսադրույքները նախորդ համադրելի ժամանակաշրջանի նկատմամբ նվազել են 0.5, իսկ արտարժութային ավանդներինը՝ 1.2 տոկոսային կետերով՝ կազմելով համապատասխանաբար 8.7% և 2.9%: Նույն ժամանակահատվածում դրամով վարկերի տոկոսադրույքները նվազել են 2.2, իսկ արտարժութային վարկերինը՝ 0.2 տոկոսային կետով և կազմել համապատասխանաբար 13.1% և 8.1%:

Գծապատկեր 5. Վարկերի և ավանդների ծավալների աճը (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, %) և տոկոսադրույքները[17]





Շուկայական տոկոսադրույքների նվազմանը զուգընթաց վարկերի և ավանդների տոկոսադրույքների սպրեդը[18] գրեթե կայուն միտում է ունեցել և 2018 թվականին (2017 թվականի համեմատ) աճել է 0.1 տոկոսային կետով՝ կազմելով շուրջ 4.6 տոկոսային կետ: Իսկ 2018 թվականի հունվար-հուլիսին միջին սպրեդը նախորդ համադրելի ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 0.1 տոկոսային կետով և կազմել 4.8 տոկոսային կետ:

Ամփոփելով նշենք, որ ֆինանսական շուկայում տոկոսադրույքների, այդ թվում՝ առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկավորման տոկոսադրույքների նվազումն ուղեկցվել է վարկավորման ծավալների աճի միտումներով՝ դրական նպաստում ունենալով տնտեսական ակտիվությանը:

Վճարային հաշվեկշիռ

Հայաստանի արտաքին տնտեսական գործունեության արդյունքում տեղի են ունենում տնտեսական հոսքեր դեպի հանրապետություն և հակառակ ուղղությամբ: Այդ հոսքերը

17 Ավանդների և վարկերի մինչև մեկ տարի ժամկետայնությամբ, դրամով և արտարժույթով միջին կշռված տոկոսադրույքներ

18 Արտարժույթով և դրամով միջին կշռված մինչև 1 տարի ժամկետով տոկոսադրույքների ամսական միջին սպրեդը

արտացոլվում են երկրի վճարային հաշվեկշռում: Վճարային հաշվեկշիռը բաղկացած է երկու հիմնական բաժիններից.

ընթացիկ հաշիվ (ցույց է տալիս ոչ ռեզիդենտների հետ իրականացվող իրական գործարքները՝ ներմուծում, արտահանում, տրանսֆերտներ և գործոնային եկամուտներ),

կապիտալի և ֆինանսական հաշիվ (ցույց է տալիս ոչ ռեզիդենտների հետ ֆինանսական բնույթի գործարքները (կապիտալի ներհոսքն ու արտահոսքը)):

Ընթացիկ հաշվի հաշվեկշիռը ՀՆԱ-ի նկատմամբ կարևոր ցուցանիշ է՝ տնտեսության արտաքին կայունության և արտաքին աշխարհի հետ հարաբերությունների վերլուծության տեսանկյունից: Արտաքին աշխարհի հետ հարաբերություններում Հայաստանը համարվում է փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, ինչը նշանակում է, որ տնտեսական հոսքերի շարժը դեպի երկիր և երկրից դուրս հնարավորինս ազատականացված է: Դրա հետ մեկտեղ փոքր բաց տնտեսություններին հատկանշական է բարձր զգայունությունը համաշխարհային տնտեսության զարգացումներից (միջազգային բորսաներում գնանշվող ապրանքների գներ, գործընկեր երկրների տնտեսական զարգացում, համաշխարհային տնտեսության զարգացման միտում և այլն): Ուստի այս բաժնում կներկայացվի ընթացիկ հաշվի և դրա վրա ազդող հիմնական գործոնների փոփոխության դինամիկան վերջին տարիներին և ապագայում ակնկալվող զարգացումները, իսկ բյուջեի ծրագրի տեսանկյունից արտաքին աշխարհից եկող հնարավոր ռիսկերը կներկայացվեն հաջորդ բաժիններում:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

Ընթացիկ հաշիվ[19]

2017 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը շարունակել է պահպանվել ցածր մակարդակում՝ կազմելով ՀՆԱ-ի 2.8%-ը: Հիմնականում ներքին պահանջարկի աճով պայմանավորված, առևտրային հաշվեկշռի պակասուրդը տարվա ընթացքում խորացել է, ինչը դոլարային արտահայտությամբ արտահանման երկնիշ աճի (24.9%) համեմատ ապրանքների ներմուծման առաջանցիկ աճի (33%) հետևանք էր: Մինչդեռ ծառայությունների հաշվեկշիռի դրական ազդեցությունը ընթացիկ հաշվի վրա շարունակվել է նաև 2017 թվականին, երբ ծառայությունների արտահանման աճը (18.4%) գերազանցել է ներմուծման աճին (16%): Տարվա արդյունքներով Հայաստան ներհոսող տրանֆերտների և գործոնային զուտ եկամուտների աճը նախորդ երեք տարիների նվազումից հետո վերականգնվել է՝ մեղմելով ապրանքների

19 Ըստ ՀՀ վճարային հաշվեկշռի (արտահանումը և ներմուծումը ՖՕԲ գներով):

առևտրային հաշվեկշռի բացասական ազդեցությունը ընթացիկ հաշվի պակասուրդի ձևավորմանը:

2018 թվականի ընթացիկ տվյալներով առևտրային հաշվեկշռի բացասական ճեղքը շարունակում է խորանալ, իսկ դրամական փոխանցումների ներհոսքի աճի միտումը պահպանվում է՝ որոշ չափով մեղմելով ընթացիկ հաշվի վրա արտահանման համեմատ ներմուծման առաջանցիկ աճի արդյունքում առևտրային հաշվեկշռի բացասական ազդեցությունը:

Կանխատեսում. 2018 թվականին սպասվում է, որ ներմուծման բարձր աճի պայմաններում ընթացիկ հաշվի պակասուրդը կխորանա և կկազմի ՀՆԱ-ի շուրջ 4.5%-ը:

2019 թվականին ապրանքների ներմուծման աճը՝ մոտ լինելով արտահանման աճին՝ կնպաստի առևտրային հաշվեկշռի բացասական պակասուրդի խորացմանը, այդուհանդերձ՝ ապրանքների և ծառայությունների արտահանման առաջանցիկ աճը ներմուծման համեմատ դրական կազդի երկրի ընթացիկ հաշվի ձևավորմանը: **2019 թվականին ընթացիկ հաշիվը կմոտենա իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակին՝ կազմելով շուրջ 3.7%:** Դրամական փոխանցումների աճի տեմպը 2019 թվականին կդանդաղի, իսկ ծավալները դեռևս զիջելու են հետճգնաժամային տարիների դրամական փոխանցումների միջին մակարդակը:

Գծապատկեր 6. Ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ



Արտաքին առևտուր[20]

20 Արտաքին առևտրի վիճակագրությունը ըստ բեռնամաքսային հայտարարագրերի (ներմուծում՝ ՍԻՖ գներով):

2017 թվականին և՛ արտահանումը, և՛ ներմուծումը շարունակել են աճել բարձր տեմպերով, որի պայմաններում արտաքին ապրանքաշրջանառության ընդլայնումը շարունակվել է, իսկ առևտրային հաշվեկշիռը ցուցաբերել է վատթարացման միտում: Արտաքին ապրանքաշրջանառությունը (6,321 մլն ԱՄՆ դոլար) նախորդ տարվա համեմատ աճել է 24.8%-ով: Նույն ժամանակահատվածում դոլարային արտահայտությամբ արտահանումն աճել է 24.1%-ով (2,223.9 մլն ԱՄՆ դոլար), իսկ ներմուծումը՝ 25.2%-ով (4,097.1 մլն ԱՄՆ դոլար):

Արտաքին ապրանքաշրջանառությունը 2018 թվականի առաջին ութ ամիսների արդյունքներով նախորդ տարվա համեմատ աճել է 26.4%-ով (4,752.2 մլն ԱՄՆ դոլար): Ընթացիկ տարվա հունվար-օգոստոս ամիսներին տեղի է ունեցել դոլարային արտահայտությամբ արտահանման ծավալների 16.5% աճ և ներմուծման ծավալների 32.0% աճ: Ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը (1578.6 մլն ԱՄՆ դոլար) աճել է նախորդ տարվա համեմատ՝ պայմանավորված ներմուծման առաջանցիկ աճով:

Ներմուծում

2017 թվականին հիմնականում ներքին պահանջարկի և տնտեսական ակտիվության աճերի ազդեցությամբ պայմանավորված արձանագրվել է ներմուծման ծավալների բարձր աճ: Դոլարային արտահայտությամբ ներմուծման աճին (25.2%) ամենամեծ նպաստումն է ունեցել ներդրումային բնույթ ունեցող՝ «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբով (4.9 տոկոսային կետ), որի կշիռը ներմուծման մեջ զգալի ավելացել է՝ հասնելով 15.3%-ի: Ներմուծման կառուցվածքում ամենամեծ (15.7%) կշիռ ունեցող «Հանքահումքային արտադրանք» ապրանքախումբը ներմուծման աճին նպաստել է 1.9 տոկոսային կետով, ինչը հիմնականում պայմանավորված էր հումքային ապրանքների գների աճով: Ներմուծման աճին դրական նպաստում են ունեցել նաև «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախումբը (2.2 տոկոսային կետ), «Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» (2.4 տոկոսային կետ) ապրանքախումբը (հիմնականում՝ դեղագործական արտադրանք) և «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախումբը (2.2 տոկոսային կետ), որը միջանկյալ սպառման բնույթ ունի՝ ներմուծվում է վերամշակման և հետագայում արտահանման նպատակով:

2018 թվականի հունվար-հուլիս ամիսներին[21] դոլարային արտահայտությամբ ներմուծման ծավալների աճը կազմել է 32.1%, ընդ որում՝ աճ է արձանագրվել գրեթե բոլոր հիմնական ապրանքախմբերով: Ըստ ապրանքների լայն տնտեսական դասակարգման[22] ընթացիկ տարվա յոթ ամիսների ներմուծման աճին հիմնականում նպաստել են. «Միջանկյալ սպառման ապրանքները» (14.1 տոկոսային կետով) և «Կապիտալ ապրանքները» (10.6 տոկոսային կետով), դրական են նպաստել նաև «Վերջնական սպառման ապրանքները» (4.2 տոկոսային կետով) և «Մարդատար ավտոմեքենաները» (3.2 տոկոսային կետով):

Ըստ 20 ապրանքախմբերի դասակարգման՝ ներմուծման աճի 10.4 տոկոսային կետը պայմանավորել է «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբով, ինչը վկայում է բարձր ներդրումային ակտիվության մասին: Ներմուծման աճին նպաստել են նաև «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «Մանածագործական իրեր» ապրանքախմբերը (համապատասխանաբար՝ 2.7 և 2.2 տոկոսային կետերով): Նշանակալի է եղել նաև «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբի աճը (5.1 տոկոսային կետ):

Կանխատեսում. Հաշվի առնելով ընթացիկ զարգացումները ակնկալվում է, որ մինչև տարեվերջ դոլարային արտահայտությամբ ապրանքների ներմուծման առաջանցիկ աճը արտահանման աճի համեմատ կպահպանվի և 2018 թվականի արդյունքներով աճը կկազմի մոտ 20%: **2019 թվականին ներմուծման աճը կկազմի շուրջ 11%՝ զիջելով արտահանման աճին:**

Արտահանում

2017 թվականի արտահանման երկնիշ աճի տեմպերն արագացել են. դոլարային արտահայտությամբ աճը (24.1%) պայմանավորվել է արտաքին պահանջարկի աճով (հիմնական գործընկեր երկրների տնտեսական զարգացման դրական միտումներով) և գնային մրցունակության բարելավմամբ (իրական արդյունավետ փոխարժեքի արժեզրկման միտում): ՀՀ արտահանման ծավալները զգալի աճել են դեպի ԵԱՏՄ անդամ պետություններ՝ մեծ մասամբ կրելով հիմնական գործընկեր երկրի՝ ՌԴ-ի տնտեսական զարգացումների ազդեցությունը:

---

21 2018 թվականի ընթացիկ զարգացումնեևը ներկայացված են հունվար-հուլիսի ցուցանիշներով, քանի որ արտաքին առևտրի կառուցվածքին վերաբերող պաշտոնական տվյալները դեռևս հասանելի են միայն հունվար-հուլիսի համար:

22 Ապրանքների լայն տնտեսական դասակարգմամբ (BEC) խմբավորումները՝ ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներն են:

Հիմնականում պայմանավորված միջազգային շուկաներում մետաղների գների աճով արտահանման աճին հիմնականում նպաստել են «Հանքահումքային արտադրանք» և «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերը (11.4 և 2.6 տոկոսային կետերով): Արտահանման աճին դրական նպաստում են ունեցել նաև «Պատրաստի սննդի արտադրանք» (6.0 տոկոսային կետ) և «Մանածագործական իրեր» (2.2 տոկոսային կետ) ապրանքախմբերը: Արտահանման աճը զսպող ապրանքախմբերն էին. «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (-2.6 տոկոսային կետ) և «Բուսական ծագման արտադրանք» (-1.1 տոկոսային կետ):

2018 թվականի առաջին յոթ ամիսներին արտահանման բարձր աճի միտումը պահպանվել է՝ հիմնականում պայմանավորված գործընկեր երկրներում պահանջարկի աճով և առևտրի պայմանների բարելավմամբ: Արտահանման 17.3% աճը հիմնականում պայմանավորվել է «Հանքահումքային արտադրանք», «Մանածագործական իրեր», «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «Բուսական ծագման արտադրանք» և «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերով (համապատասխանաբար՝ 4.6, 4.3, 3.5, 1.4 և 1.3 տոկոսային կետեր):

Կանխատեսում. 2018 թվականի ընթացիկ զարգացումների, համաշխարհային շուկայում մետաղների գների աճի և գործընկեր երկների տնտեսական բարձր ակտիվության պայմաններում ակնկալվում է դոլարային արտահայտությամբ 15.7% արտահանման աճ (անվանական արժեքով): **2019 թվականին՝ գործընկեր երկրների տնտեսական աճերի և ՀՀ կառավարության կողմից տնտեսության արտահանելի ոլորտում վարվող քաղաքականության ուղղությանը համահունչ, կանխատեսվում է արտահանման շուրջ 14.0% աճ (դոլարային արտահայտությամբ):**

Գործընկեր երկրներ

Համաշխարհային և հատկապես գործընկեր երկրների փոփոխական և անհամաչափ տնտեսական զարգացումները իրենց ազդեցություն են թողնում Հայաստանի վրա, որը, լինելով փոքր և բաց տնտեսություն, արագ է արձագանքում այդ երևույթներին:

2017 թվականին համաշխարհային տնտեսական աճը կազմել է 3.7%, ընդ որում՝ զարգացած երկրներում աճը եղել է 2.4%, որից՝ ԱՄՆ-ն աճել է 2.3, Եվրամիությունը՝ 2.4%-ով: Զարգացող երկրներում աճը 2017 թվականին եղել է ավելի բարձր՝ 4.7%, որից՝ ՌԴ-ն նախորդ տարվա անկումից հետո աճել է 1.5%-ով: 2017 թվականից նավթի համաշխարհային գների աճը դրական ազդեցություն է ունեցել ՌԴ տնտեսության վերականգնման վրա, ինչի արդյունքում,

դեպի Հայաստան փոխանցվող դրամական միջոցների ծավալը ավելացել է (մոտ 22%-ով): Զուգահեռ զգալի աճել են պղնձի համաշխարհային գները՝ նպաստելով ՀՀ արտահանման աճին: Նշված տնտեսական զարգացումներով պայմանավորված արտարժույթի ներհոսքը դեպի հանրապետություն աճել է՝ նպաստելով տնօրինվող եկամուտների և ՀՀ տնտեսական աճի արագացմանը: Այդուհանդերձ՝ 2017 թվականին ՌԴ-ի կողմից կատարված ուղղակի ներդրումների զուտ ներհոսքը նախորդ տարվա համեմատ կրճատվել է (շուրջ 10%-ով):

2018 թվականին ակնկալվում է, որ համաշխարհային տնտեսական աճը կկազմի 3.9%, ընդ որում՝ զարգացած երկրները, ինչպես և նախորդ տարի, կաճեն 2.4%-ով, իսկ զարգացող երկրների աճը կընթանա ավելի արագ տեմպերով՝ 4.9%: Համաշխարհային աճը դառնում է անհավասարաչափ, մասնավորապես՝ սպասվում է, որ մինչև տարեվերջ ԵՄ-ի տնտեսական աճը կդանդաղի՝ կազմելով 2.2%, իսկ ԱՄՆ-ի և ՌԴ-ի աճերը կարագանան՝ կազելով 2.9 և 1.7%: ԱՄՆ-ում վարվող խթանող քաղաքականությունը օգնեց տնտեսությանը 2018 թվականի առաջին կիսամյակում գրանցել համեմատաբար բարձր տնտեսական աճ, որը կպահպանվի մինչև տարեվերջ: ՌԴ տնտեսությունը 2018 թվականին շարունակում է աճել. ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակում ՌԴ տնտեսական աճին նպաստել են նավթի գների աճը և նվազող գործազրկության մակարդակը: Ընթացիկ տարվա օգոստոսի վերջից ՌԴ նկատմամբ կիրառվող նոր պատժամիջոցները, բարձր նավթի գների պարագայում, ՌԴ տնտեսական աճի վրա մեծ ազդեցություն չեն ունենա: ՌԴ-ից ուղղակի ներդրումների զուտ ներհոսքի նախորդ տարվա կրճատման միտումը ընթացիկ տարվա առաջին կիսամյակի տվյալներով շարունակվել է նաև 2018 թվականին:

Կանխատեսում. 2019 թվականին համաշխարհային տնտեսությունը կաճի ընթացիկ տարվա տեմպով, կամ՝ 3.9%-ով: Որոշ առաջատար երկրներում վերելքը, ըստ գնահատականների, արդեն հասել է իր գագաթնակետին. զարգացած երկրների տնտեսական աճը 2019 թվականին կդանդաղի՝ կազմելով 2.2%, այդ թվում՝ թուլանում են ինչպես ԱՄՆ-ի (2.7% աճ), այնպես էլ ԵՄ-ի (1.9% աճ) հեռանկարները: Այդուհանդերձ՝ ԵՄ երկրներից ՀՀ հիմնական գործընկեր Գերմանիայի տնտեսական աճի սպասումները դրական են՝ նախորդ (ապրիլյան) կանխատեսման համեմատ ԱՄՀ-ի վերջին հրապարակումներում (հուլիս) Գերմանիայի 2019 թվականի տնտեսական աճը վերանայվել է դեպի վերև:

Զարգացող երկրների աճն 2019 թվականի էլ ավելի կարագանա՝ 5.1%, որից սակայն ՌԴ-ն կաճը ընդամենը 1.5%-ով՝ 0.2 տոկոսային կետով զիջելով 2018 թվականի համապատասխան ցուցանիշը: Հատկանշական է, որ ՌԴ-ի հեռանկարները ԱՄՀ-ի վերջին հրապարակումներում չեն վերանայվել:

Կանխատեսվում է նաև, որ նավթի գները 2019 թվականից կնվազեն (ըստ Բլումբերգի՝ -0.9%), ինչպես նաև կնվազեն մետաղների գները (-6.2%):

Ներմուծման աշխարհագրական կառուցվածքը

2017 թվականին երկրի սպառողական պահանջարկը հիմնականում բավարարվել է հետևյալ գործընկեր երկրներից ներմուծման հաշվին՝ Ռուսաստան (նպաստումը՝ 5.8 տոկոսային կետ, ներմուծվում է հիմնականում. հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր, հացահատիկներ), Չինաստան (3.7, էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր, միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր, տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով), Կանադա (2.0, Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ), որոնք ապահովել են 2017 թվականի ընդհանուր ներմուծման 25.2% աճի 11.5 տոկոսային կետը:

2018 թվականի յոթ ամիսների տվյալներով ներմուծման 32.1% աճին հիմնականում նպաստել են Չինաստանը՝ 5.6, Ռուսաստանը՝ 4.5, Գերմանիան՝ 3.5 և ԱՄՆ-ը՝ 2.6 տոկոսային կետերով: Նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ ԵՄ և Այլ երկրների կշիռները ընդհանուր ներմուծման մեջ աճել են 2.4 և 0.6 տոկոսային կետերով, իսկ ԵԱՏՄ երկրների կշիռը նվազել է 3.9 տոկոսային կետով:

Արտահանման աշխարհագրական կառուցվածքը

2017 թվականի ՀՀ արտահանման աճի շուրջ 27.1 տոկոսային կետը ապահովել են Հայաստանյան ապրանքների նկատմամբ հիմնական պահանջարկը ներկայացնող հետևյալ երկրները. Շվեյցարիա՝ 10.4, Ռուսաստան՝ 9.4 և Բուլղարիա՝ 7.3 տոկոսային կետերով: Մյուս կողմից արտահանման աճին 7.0 տոկոսային կետով հակազդել է դեպի Կանադա արտահանվող ծավալների կրճատումը: Նշված երկրներ արտահանվող հիմնական ապրանքա-տեսակներն են՝ բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ, ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ, հանքաքար, խարամ և մոխիր, ալյումին և իրեր դրանից և այլ ապրանքներ:

2018 թվականի հունվար-հուլիս ամիսների ընթացքում ՀՀ արտահանման 17.3% աճի 14.1 տոկոսային կետը ապահովել են հետևյալ հիմնական գործընկեր երկները. Ռուսաստան՝ 6.7, Շվեցարիա՝ 4.0 և Ռումինիա՝ 3.4 տոկոսային կետերով: Նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ ԵԱՏՄ և ԵՄ երկրներ կշիռները ՀՀ ընդհանուր

արտահանման մեջ աճել են 2.7 և 1.2 տոկոսային կետերով, իսկ Այլ երկրների կշիռը՝ նվազել 4.1 տոկոսային կետով:

2017 թվականին ՀՀ արտաքին առևտրի աշխարհագրական կառուցվածքը նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոփոխվել: 2017 թվականի արտաքին առևտրաշրջանառության 30.5%-ը բաժին է ընկել ԱՊՀ (որից 28.1%-ը՝ ԵԱՏՄ), 24.3%-ը՝ ԵՄ և 45.2%-ը՝ Այլ երկրներին: ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 28.4% աճին ամենամեծ դրական նպաստումն են ունեցել Այլ երկները՝ 10.7 տոկոսային կետով (հիմնականում այդ երկրներից ներմուծման հաշվին): 2017 թվականին ՀՀ խոշոր առևտրային գործընկերների շրջանակում ընդգրկված էին. ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանը (առևտրաշրջանառության 27.2%, նախորդ տարվա 26.8%-ի դիմաց) և Ուկրաինան (համապատասխանաբար՝ 2% և 2.2%): Իսկ ԵՄ և Այլ երկրներից. Չինաստանը (առևտրաշրջանառության 9.4%, նախորդ տարվա 9%-ի դիմաց), Շվեյցարիան (5.7% և 2.4%), Գերմանիան (5.3% և 6.4%), Բուլղարիան (5.1% և 3.7%), Իրանը (4.1% և 4.7%), Վրաստանը (3.8% և 4.8%):

Ընթացիկ տարվա յոթ ամիսներին արտաքին առևտրաշրջանառության 29.4%-ը բաժին է ընկել ԱՊՀ (որից 26.4%-ը՝ ԵԱՏՄ), 26.0%-ը՝ ԵՄ և 44.6%-ը՝ Այլ երկրներին: ԵՄ երկրների կշիռը ՀՀ արտաքին առևտրաշրջանառության մեջ աճել է 1.8 տոկոսային կետով, ինչը հիմնականում պայմանավորվել է այդ երկրներից ներմուծման ծավալների 47.8% աճով:

Փոխարժեք

ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևորման տեմպը դանդաղում է: Վերջին տարիների ընթացքում ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը շարունակաբար արժեզրկվել է: 2017 թվականի առաջին չորս ամիսներին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամը փոքր ինչ արժևորված էր, այնուհանդերձ՝ արժևորումն ունեցել է դանդաղման միտում, իսկ սկսած մայիս ամսից՝ փոխարինվել է արժեզրկմամբ՝ տարեվերջին նախորդ տարվա համեմատ արժեզրկվելով 0.5 տոկոսով:

2018 թվականի սկզբից ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ ցուցաբերել է արժևորման միտում, որը մայիս ամսից սկսել է դանդաղել: Արդյունքում ընթացիկ տարվա առաջին յոթ ամիսներին ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արժևորվել է 0.4 տոկոսով՝ կազմելով 481.95 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց:

Իրական արդյունավետ արտահայտությամբ ՀՀ դրամի արժեզրկման տեմպը տերեսկզբից աստիճանական դանդաղել է: ՀՀ ազգային արժույթը ոչ միայն դոլարի, այլ նաև արտաքին առևտրի տեսանկյունից առավել կարևոր մի քանի արժույթներից բաղկացած

«զամբյուղի» նկատմամբ (անվանական արդյունավետ փոխարժեք[23]) ընթացիկ տարվա առաջին յոթ ամիսներին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ արժեզրկվել է մոտ 1.3%-ով, ինչը նշանակում է, որ ՀՀ դրամը արժեզրկվել է հիմնական արժույթների միավորված գնի համեմատ, ընդ որում՝ վերոնշյալ «զամբյուղում» ընդգրկված մնացած երկրների արժույթները դոլարի նկատմամբ արժևորվել են ավելի շատ (շուրջ 1.7%-ով), քան ՀՀ դրամը (0.4%): Հիմնականում պայմանավորված անվանական արդյունավետ փոխարժեքի վարքագծով, իրական արդյունավետ փոխարժեքի արժեզրկումը տարեսկզբից աստիճանական դանդաղել է՝ 2018 թվականի հունվար-հուլիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ արժեզրկվելով 2.7%-ով:

Ամփոփելով նշենք, որ 2019 թվականին ՀՆԱ-ի նկատմամբ ընթացիկ հաշվի պակասուրդը կկայունանա՝ մոտենալով իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակին, ընդ որում՝ արտահանումը ներմուծման համեմատ կունենա առաջանցիկ աճի տեմպ, իսկ դրամական փոխանցումների աճը աստիճանական կդանդաղի:

Հարկաբյուջետային հատված

2017 թվականին տնտեսական աճի բարձր տեմպերի պայմաններում հարկաբյուջետային և պարտքի կայունության պահպանման նպատակով նպատակադրվել և իրականացվել է զսպող հարկաբյուջետային քաղաքականություն: 2017 թվականին ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 22.2%-ը՝ նախորդ տարվա 23.1%-ի դիմաց, իսկ հարկեր և տուրքերը՝ ՀՆԱ-ի 20.8%-ը նախորդ տարվա 21.3%-ի դիմաց: Սակայն, նշված ժամանակահատվածում հարկերի իրական պատկերն արտացոլող ճշգրտված հարկերը (առանց ԱԱՀ վերադարձի և գերավճարների)[24] կազմել են ՀՆԱ-ի 19.5%՝ արձանագրելով նախորդ տարվա մակարդակի 0.2 տոկոսային կետով բարելավում: 2017 թվականի արդյունքներով նախորդ տարվա նկատմամբ պետական բյուջեի եկամուտների

23 Արդյունավետ փոխարժեքը ցույց է տալիս ազգային արժույթի փոխարժեքի միջինացված շարժընթացը ոչ թե մեկ, այլ մի քանի, հանրապետության համար առավել կարևոր արժույթներից բաղկացած “զամբյուղի” նկատմամբ: Ընդ որում, հաշվարկներում զամբյուղը կազմող արժույթները նախ բերվում են դոլարային արտահայտության, որից հետո ճշգրտվում են ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքով, այսինքն՝ հաշվարկվում է դրամի կրոս կուրսը՝ յուրաքանչյուր տարադրամի 1 միավորի դիմաց (դրամի անուղղակի գնանշում): Հաշվարկներում օգտագործվել են ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքի 2018թ սեպտեմբերի 20-ի դրությամբ տվյալները:

24 Հարկային եկամուտների բարելավման միտումները հասկանալու համար առավել նպատակահարմար է քննարկել ճշգրտված հարկերի ցուցանիշը (հարկային եկամուտներից հանած ԱԱՀ-ի վերադարձը և գերավճարները), որը առավել ամբողջական է արտացոլում տնտեսության զարգացումների հետ առնչությունը: Գերավճարները հանդիսանում են ՀՀ ՖՆ գնահատականներ:

անվանական աճը կազմել է 5.7%, իսկ հարկային եկամուտներ և տուրքերինը՝ 7.3%, ճշգրտված հարկային եկամուտները՝ 11.2%:

ՀՀ պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը 2017 թվականի արդյունքներով նախորդ տարվա նկատմամբ նվազել է 1.6 տոկոսային կետով և կազմել 27.0%:

2017 թվականին իրականացված հարկաբյուջետային զսպող քաղաքականության արդյունքում պետական բուջեի պակասուրդը կազմել է ՀՆԱ-ի 4.8%, իսկ ՀՀ տնտեսության վրա ազդեցություն արտացոլող պակասուրդը կազմել է ՀՆԱ-ի 3.2%-ը, նախորդ տարվա 5.0%-ի դիմաց (ցուցանիշները չեն ներառում ՌԴ-ից ստացված ռազմական վարկի հաշվարկային ծախսերը, որոնք 2017 թվականին կազմել են ՀՆԱ-ի 1.6%, իսկ 2016 թվականին՝ 0.5%-ը):

2018 թվականի առաջին յոթ ամիսներին հարկաբյուջետային քաղաքականության ուղղությունը պահպանվել է: 2018 թվականի հունվար-հուլիս ամիսների արդյունքներով ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 714.7 մլրդ դրամ, հարկեր և տուրքերը՝ 675.2 մլրդ դրամ, իսկ հարկերի միասնական հաշվի զուտ մուտքերը 2018 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ կազմել են 33.8 մլրդ դրամ: Նշենք, որ պետական բյուջեի ընդհանուր հարկային եկամուտների, ինչպես նաև առանձին հարկատեսակների մուտքերը համադրելի չեն նախորդ տարվա մուտքերի հետ, ուստի դրանց համեմատությունը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների նկատմամբ չի ներկայացվում[25]:

ՀՀ պետական բյուջեի ծախսերը 2018 թվականի հունվար-հուլիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել են 1.8%-ով, որից ընթացիկ ծախսերի գծով արձանագրվել է 1.1%, իսկ կապիտալ ծախսերի գծով՝ 6.4% նվազում: Արդյունքում, պետական բյուջեի պակասուրդը կազմել է 18.0 մլրդ դրամ, նախորդ տարվա 66.3 մլրդ դրամի դիմաց:

Ներդիր 2

Հայաստանի Հանրապետության հարկաբյուջետային կանոնները

ՀՀ հարկաբյուջետային նոր, արդիականացված կանոնների համակարգը գործարկվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017թ-ի դեկտեմբերի 20-ին «ՀՀ բյուջետային համակարգի մասին» և «Պետական պատքի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարող օրենքների նախագծերի ընդունմամբ, որոնք ուժի մեջ են մտել 2018 թվականի հունվարի 27-ից: Հարկաբյուջետային նոր կանոններն իրենց արտացոլումն են գտել «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.2, 8.3 և 8.4 մասերում, ինչպես նաև «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերում: Հարկաբյուջետային կանոններն ամբողջացվել են 2018թ-ի օգոստոսի 23-ին՝ ՀՀ Կառավարության համապատասխան որոշման ընդունմամբ (ՀՀ վարչապետի կողմից ստորագրվել է 2018թ-ի օգոստոսի 29-ին):

Կանոնների արդիականացված համակարգն ուղղված է արդյունավետ հակացիկլիկ հարկաբյուջետային քաղաքականության համար հիմքերի ստեղծմանը, պետական պարտքի կայունացմանը և առավել ճկուն ուղենիշներ է պարունակում երկարաժամկետ տնտեսական աճը

25 Առավել մանրամասն տե՛ս 2018 թվականի առաջին կիսամյակի բյուջեի հաշվետվության՝ «Պետական բյուջեի եկամուտներ» բաժնում:

խթանող հարկաբյուջետային քաղաքականության համար: Համակարգի հիմնական կանոններն են.

Երբ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը գերազանցում է 40%-ը, կապիտալ ծախսերը չպետք է փոքր լինեն բյուջեի պակասուրդից:

Կառավարության պարտք/ՀՆԱ 50-60% միջակայքում ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին աճով, ինչպես նաև հաջորդ տարում կազմվող Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում Կառավարությունը ներկայացնում է միջոցառումների ծրագիր՝ համախառն ներքին արդյունքի նկատմամբ կառավարության պարտքի մակարդակի կանխատեսվող հետագիծը 5 տարիների ընթացքում 50 տոկոսից նվազեցնելու համար:

Երբ Կառավարության պարտքը գերազանցում է ՀՆԱ 60%-ը, ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին աճից 0.5 տոկոսային կետով նվազեցված ցուցանիշով, ընթացիկ ծախսերը սահմանափակվում են հարկերի և տուրքերի մեծությամբ, ինչպես նաև Կառավարությունը Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային ու տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովների քննարկմանը ներկայացնում է միջոցառումների ծրագիր՝ ՀՆԱ նկատմամբ կառավարության պարտքի մակարդակի կանխատեսվող հետագիծը 5 տարիների ընթացքում 60 տոկոսից նվազեցնելու համար:

Ներկայացված սահմանափակումները չեն գործում կառավարության որոշմամբ սահմանված բացառիկ դեպքերում՝ ելնելով խոշորածավալ տարերային և տեխնածին աղետների, պատերազմական գործողությունների, տնտեսությունը խաղաղ ժամանակաշրջանից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման, տնտեսական ցնցման հանգամանքներով պայմանավորված բացասական տնտեսական զարգացումների առկայությամբ:

2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտք գերազանցել էր ՀՆԱ 50%-ը (կազմել է 53.7%), ինչը հիմք է հանդիսացել ՀՀ Կառավարության պարտքի նվազեցման 2019-2023թթ. ծրագրի մշակման և ՀՀ 2019-2021թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի կազմում դրա ներկայացման համար: Ըստ ծրագրի, ՀՀ Կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը մինչև 2023թ-ը կնվազեցվի 50 տոկոսից՝ 2023թ-ին հասցնելով 49.8 տոկոսի:

Հարկաբյուջետային կանոնների արդիականացման վերաբերյալ տե՛ս ՀՀ Կառավարության պարտքի նվազեցման 2019-2023 թվականներին. ծրագիրը և հետևյալ հղումը. http://www.minfin.am/website/images/files/Upgrading%20Fiscal%20Rules_Armenian.pdf:

Կանխատեսում. 2019 թվականի հարկաբյուջետային շրջանակը կառուցվել է 2017 թվականին մշակված և 2018 թվականից ուժի մեջ մտած հարկաբյուջետային կանոնների արդիականացված համակարգի հիման վրա: Հարկաբյուջետային կանոններին համահունչ՝ 2019 թվականի հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ամբողջական պահանջարկի վրա լինելու է գրեթե չեզոք: 2018 թվականին մինչև տարեվերջ կշարունակվի հարկաբյուջետային կոնսոլիդացումը՝ պայմանավորված ծախսերի զսպող ազդակի դրսևորմամբ: Հաշվի առնելով պետական բյուջեի ցուցանիշների ընթացիկ զարգացումները՝ 2018 թվականի պետական բյուջեի սպասվող պակասուրդը վերանայվել է նվազման ուղղությամբ (վերջինս մինչև տարեվերջ կարող է փոփոխվել՝ կախված եկամուտների և ծախսերի կատարողականից): Իսկ 2019 թվականին հարկաբյուջետային քաղաքականությունը տնտեսության վրա կունենա չեզոք ազդեցություն:

Գծապատկեր 7. Հարկաբյուջետային ազդակը[26] 2014-2019 թվականներին



Հաշվի առնելով նախորդ տարիներին ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության խնդիրների ախտորոշումը՝ հարկաբյուջետային արդիականացված կանոնների համակարգը թույլ է տվել 2019 թվականի պետական բյուջեի հիմքում էական փոփոխություն նախագծել: Կառավարությունը հիմք ընդունելով նախորդ տարիներին քաղաքականության ոլորտում բացահայտված հիմնախնդիրները նախանշել է այնպիսի հարկաբյուջետային քաղաքականություն, որը համահունչ կլինի «ոսկյա կանոնին», կայուն հիմքեր կստեղծի երկարաժամկետ տնտեսական աճի համար, այսինքն՝ կապիտալ ծախսերի մասնաբաժնի մեծացում, ընթացիկ ծախսերի և հարկային եկամուտների միջև ճեղքի փոքրացում: Այսպես, 2019 թվականի համար կանխատեսվում է ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների 20.7% մակարդակ՝ 2018 թվականի համեմատ ապահովելով 0.4 տոկոսային կետ բարելավում: Եթե 2015-2017 թվականին ընթացիկ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը գերազանցել է հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը շուրջ 3.0 տոկոսային կետով, ապա 2019 թվականին այդ բացասական ճեղքը կփոքրանա՝ կազմելով շուրջ 0.3 տոկոս: Մյուս կողմից անկալվում է, որ 2019 թվականին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կկազմի ՀՆԱ-ի 2.2%-ը՝ շարունակելով պահպանել «ոսկյա կանոնը»:

26 Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա գնահատելու համար օգտագործվել է հարկաբյուջետային ազդակի ցուցանիշը, որը բյուջեի եկամուտների ազդակի և ծախսերի ազդակի հանրագումարն է: Հաշվարկներն իրականացվել են եկամտային և ծախսային մասերից զտելով ԱԱՀ-ի վերադարձը, քանի որ 2017թ.-ի հունիսից այդ ցուցանիշը բացակայում է:

Գծապատկեր 8. Կապիտալ ծախսերի և պակասուրդի կշիռը ՀՆԱ-ում, %



Գծապատկեր 9. Ընթացիկ ծախսերի և հարկեր, տուրքերի կշիռը ՀՆԱ-ում,%



Հավելված. Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ

Ցուցանիշներ	2015	2016	2017	2018	2019
	փաստ.	փաստ.	փաստ.	կանխ.	կանխ.
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	5,043.6	5,067.3	5,568.9	6,193.0	6,756.2
Իրական ՀՆԱ ինդեքս	103.2	100.2	107.5	106.5	104.9
ՀՆԱ դեֆլյատոր	101.2	100.3	102.2	104.4	104.0
Գնաճ (12-ամսյա) %	-0.1	-1.1	2.6	3.5	3.1
Գնաճ (միջին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ) %	3.7	-1.4	1.0	2.7	3.5
ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների					
ՀՆԱ	3.2	0.2	7.5	6.5	4.9
Արդյունաբերություն	6.2	7.6	6.6	5.0	5.0
Գյուղատնտեսություն	13.2	-5.0	-5.3	4.0	4.0
Շինարարություն	-3.1	-14.1	2.5	6.1	5.5
Ծառայություններ	1.6	3.2	12.4	8.0	5.0
Զուտ հարկեր	-5.1	-3.7	10.1	5.9	5.3
ՀՆԱ ծախսային կոմպոնենտների իրական աճերը					
Վերջնական սպառում	-6.2	-1.2	9.6	5.4	5.0
Պետական	4.7	-2.4	13.1	4.1	9.7
Մասնավոր	-7.7	-1.0	8.9	5.6	4.1
Կապիտալի համախառն կուտակում	-1.2	-8.7	13.9	32.7	6.1
Պետական	5.8	1.5	33.6	-34.0	30.6
Մասնավոր	-2.5	-10.8	9.2	52.0	3.0
Ապրանքների և ծառայությունների արտահանում	4.9	19.1	18.2	8.2	8.0
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	-15.1	7.6	24.8	10.6	7.0
Արտաքին հատված, մլն. ԱՄՆ դոլար					
Ընթացիկ հաշիվ	-272.4	-238.1	-328.5	-579.5	-514.0
Ապրանքների և ծառայությունների արտահանում	3,136.3	3,500.4	4,267.7	4,937.7	5,629.0
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	4,418.2	4,516.2	5,720.1	6,669.2	7,338.5
Ապրանքների արտահանում	1,623.9	1,890.7	2,361.1	2,731.8	3,114.2
Ապրանքների ներմուծում	2,810.3	2,835.1	3,770.6	4,524.7	5,022.4
Ապրանքների արտահանման աճ, %	-4.4	16.4	24.9	15.7	14.0
Ապրանքների ներմուծման աճ, %	-25.1	0.9	33.0	20.0	11.0
ՀՆԱ-ի նկատմամբ տոկոս					
Ընթացիկ հաշիվ	-2.6	-2.3	-2.8	-4.5	-3.7
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-12.1	-9.6	-12.6	-13.6	-12.5
Ապրանքների և ծառայությունների արտահանում	29.7	33.2	37.0	38.7	41.0
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	41.9	42.8	49.6	52.3	53.5
Առևտրային հաշիվ	-11.2	-9.0	-12.2	-14.1	-13.9
Ներմուծման ծածկույթը (ամիսներով)	4.8	5.9	4.9	4.4	4.5

ԲՅՈՒՋԵԻ ԾՐԱԳՐԻ ՌԻՍԿԵՐԸ[27] ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տնտեսական աճի ռիսկերը և դրանց ազդեցության ուղղությունները

Համաշխարհային տնտեսության վերելքը շարունակվում է անհամաչափ տեմպերով, ընդ որում՝ չնայած գլոբալ աճի տեմպերի արագացմանը, աճի հեռանկարները վտանգող ռիսկերն ավելանում են, իսկ երկրների նպաստումները ընդհանուր աճին պարբերաբար վերանայվում: Գործընկեր երկրների անհամաչափ տեմպերով զարգացումը, անորոշությունները՝ հատկապես կապված առևտրային հարաբերությունների լարվածության և սպասվածից ավելի խիստ համաշխարհային ֆինանսական պայմանների հետ պարտադրում են գնահատել հնարավոր ռիսկերի ի հայտ գալու պարագայում բյուջեի բազիսային ծրագրի հիմքում ընկած հիմնական ենթադրություններից և ՀՆԱ կանխատեսումներից հնարավոր շեղումների ազդեցությունը ՀՀ բյուջեի հոսքերի, այդ թվում՝ մուտքերի, ելքերի և հնարավոր լրացուցիչ ֆինանսավորման պահանջի վրա:

Համաշխարհային տնտեսության աճն արագացնող դրական ազդակները ի հայտ են եկել դեռևս 2016 թվականի երկրորդ կեսերից, և, ըստ գնահատականների, որոշ զարգացած երկրներում արդեն հասել են գագաթնակետին, իսկ ռիսկերի հաշվեկշիռը տեղաշարժվել է դեպի վատացում, այդ թվում՝ կարճաժամկետ հատվածում: Չնայած 2019 թվականի գլոբալ տնտեսական աճի վերջին՝ ընթացիկ տարվա հուլիսի կանխատեսումները ապրիլյան կանխատեսումների համեմատ չեն փոփոխվել, այդուհանդերձ կատարվել են որոշ ճշգրտումներ, համաձայն որոնց երկրների հեռանկարները շատ տարբեր են:

Հատկանշական է, որ Հայաստանի հիմնական գործընկեր երկրներից նվազման ուղղությամբ կանխատեսումների վերանայումները հիմնականում վերաբերում են ԵՄ երկրներին, մասնավորապես՝ Ֆրանսիային (-0.3 տոկոսային կետ) և Իտալիային (-0.1): Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա չնայած տնտեսական աճի կանխատեսման վերանայում տեղի չի ունեցել, սակայն առկա են նվազման ուղղությամբ ռիսկեր՝ կապված նավթի գների և ՌԴ նկատմամբ կիրառվող և նախատեսվող պատժամիջոցների հետ:

Համաշխարհային տնտեսական աճի հեռանկարները ռիսկային են նաև առևտրային ոլորտում լարվածության պատճառով, կապված՝ ԱՄՆ-ի կողմից որոշ ներմուծվող ապրանքների

---

27 Բյուջեի ծրագրի ռիսկերը դրանք այն հավանականային գործոններն են որոնց ի հայտ գալը կնշանակի բյուջեի ծրագրային ցուցանիշներից շեղումներ: Ռիսկերը պայմանականորեն բաժանված են երկու խմբերի՝ մակրոտնտեսական ռիսկերի և հարկաբյուջետային ռիսկերի: Առաջին խմբի մեջ ներառված են մակրոտնտեսական կանխատեսումների և ենթադրությունների ռիսկերը, իսկ երկրորդ խմբի մեջ՝ պետական բյուջեի հոսքերի տեղի ունենալու հետ կապված ռիսկը:

մաքսատուրքերի բարձրացման և առևտրային գործընկերների պատասխան միջոցառումների հետ: Այդ լարվածության էսկալացիան կարող է վատացնել գործարարների և ֆինանսական շուկայի մասնակիցների տրամադրությունները և վնաս հասցնել առևտրին, ինչպես նաև ներդրումներին:

Այսպիսով, տնտեսական աճի արտաքին ռիսկերը դեռևս առկա են և կարող են ուղղակի և անուղղակի ազդեցության ճանապարհներով փոխանցվել ՀՀ տնտեսություն: Այս պայմաններում խիստ կարևորվում է կառուցվածքային փոփոխությունների իրականացումը՝ տնտեսական աճի ներուժի ամրապնդման, աճին ավելի մեծ կայունություն և ներառականություն հաղորդելու համար: Վերոնշյալ հիմնախնդիրների լուծման ուղղությամբ միջոցառումների հետաձգման կամ քաղաքականության փոփոխության միջոցով ոչ բավարար չափով արձագանքման պայմաններում համաշխարհային տնտեսական աճի հնարավոր դանդաղումը կարող է փոխանցվել ՀՀ տնտեսություն:

Արտաքին ռիսկերին զուգահեռ առկա են նաև ներքին միջավայրի զարգացումներից բխող ռիսկեր, որոնք արտաքին ռիսկերի հետ մեկտեղ ՀՀ տնտեսական աճի վրա կարող են ունենալ ինչպես նվազման, այնպես էլ աճի ուղղությամբ ազդեցություններ: Այսպես.

Տնտեսական աճի նվազման ուղղությամբ ռիսկերն են.

Արտաքին ռիսկերը՝ պայմանավորված աշխարհաքաղաքական զարգացումներով, մասնավորապես՝ Ռուսաստանի դեմ ընթացիկ տարվա օգոստոսին ԱՄՆ-ի կողմից ընդունված պատժամիջոցների փաթեթի երկրորդ փուլի ուժի մեջ մտնելու դեպքում (նախատեսված է նոյեմբերի վերջին), կարող են հանդես գալ Ռուսաստանի տնտեսական աճի սպասվածից ցածր տեմպերով, ինչի արդյունքում հնարավոր է տրանսֆերտների կանխատեսվածից պակաս ներհոսք, արտահանման ցածր աճ և ներդրումների նվազում:

ԱՄՆ-ի կողմից մաքսատուրքերի բարձրացման և առևտրային գործընկեր երկրների պատասխան միջոցառումների հետ կապված առևտրային ոլորտի լարվածությունը դեռևս կշարունակվի, ինչը կարող է խաթարել ինչպես աշխարհի, այնպես էլ ՀՀ գործընկեր երկրների տնտեսական աճի հեռանկարները:

ԱՄՆ և Եվրամիության որդեգրած դրամավարկային քաղաքականության ազդեցությամբ տոկոսադրույքների բարձրացումը կառաջացնի փոխարժեքի արժեզրկման հետ կապված ռիսկեր, որոնք կարող են հանգեցնել արտաքին պարտքի սպասարկման լրացուցիչ բարդությունների, արտահանման և ներմուծման կառուցվածքային տեղաշարժերի:

Կապիտալի հոսքերի հետագա նվազման միտումը դեպի զարգացող երկրներ կարող է շարունակվել, հատկապես՝ այն երկրներ, որոնք ունեն ավելի թույլ տնտեսական հեռանկարներ,

կամ՝ բարձր քաղաքական ռիսկեր: Այս պայմաններում, կարող են առաջանալ դեպի ՀՀ ՕՈՒՆ-ի ներհոսքի ռիսկեր:

Բնակլիմայական անբարենպաստ պայմանները գյուղատնտեսության ոլորտում կարող են լրացուցիչ ռեսուրսների ներդրման պահանջ առաջացնել՝ դանդաղեցնելով կառավարության բարեփոխումները[28], որի պայմաններում տնտեսական աճի մակարդակը կարող է կանխատեսվածից ավելի ցածր լինել:

Ամուլսարի հանքավայրի շահագործման հետ կապված անորոշությունները, կամ՝ ներդրումային ծրագրով նախատեսվածից պակաս ներդրումները, ինչպես նաև աշխատանքների կատարման ժամանակացույցով նախատեսվածից ավելի ուշ արդյունահանումը, կարող են հանգեցնել շինարարության և արդյունաբերության 2019 թվականի ծավալների նվազմանը, հետևաբար նաև տնտեսական աճի ավելի ցածր մակարդակի:

Աշխարհաքաղաքական վիճակը, այդ թվում՝ տարածաշրջանային ռազմական հակամարտությունները, ինչպես նաև հարևան երկրների հետ քաղաքական հակադրությունները կարող են սահմանափակել մասնավոր ներդրումների հետագա ներհոսքը և թուլացնել տնտեսական ակտիվությունը:

Տնտեսական աճի ավելացման ուղղությամբ ռիսկերն են.

ՀՀ կառավարության կողմից իրականացվող կառուցվածքային բարեփոխումների՝ հատկապես գործարար միջավայրի, արտահանման խթանման, ներդրումների ներգրավման, հարկային բարեփոխումների, պետական համակարգի արդիականացման և կոռուպցիայի մակարդակի նվազեցման ուղղությամբ կառավարության կողմից իրականացվող քաղաքականության արդյունքների ավելի արագ դրսևորման դեպքում տնտեսական աճի մակարդակը կլինի կանխատեսվածից ավելի բարձր:

Կառավարության կողմից իրականացվող հարկաբյուջետային քաղաքականության, մասնավորապես՝ կապիտալ ծախսերի ժամանակին և ամբողջությամբ կատարումը կարող է էական ազդեցություն ունենալ տնտեսական աճի տեմպերի վրա:

Արտաքին դրական ռիսկեր կարող են ի հայտ գալ գործընկեր երկրների սպասվածից ավելի բարձր տնտեսական աճերի պայմաններում:

---

28 Սա հիմնականում աշխատում է այն տրամաբանությամբ, որ անբարենպաստ բնակլիմայական պայմանների արդյունքում սոցիալական և տնտեսական բացասական հետևանքները վերացնելու համար, կառավարությունը պարտադրված է լինելու ռեսուրսների սահմանափակվածության պայմաններում այլ ծրագրից միջոցները վերաուղղել վերոնշյալ խնդիրների լուծմանը, ինչի արդյունքում կարտամղվեն բարեփոխումների ծրագրերի համար հատկացված միջոցները:

ՌԴ-ում բարձր գնաճի պայմաններում, կբարձրանա հայկական ապրանքատեսակների գնային մրցունակությունը ՌԴ ապրանքային շուկաներում, որի պարագայում հնարավոր է արտահանման ավելացում:

Ռեսուրսների՝ հիմնականում գունավոր մետաղների համաշխարհային գների, հնարավոր աճը կարող է հանգեցնել արտահանման ծավալների ավելացմանը:

Իրական տնտեսական աճի կանխատեսումների հետ կապված անորոշությունների և ռիսկերի հաշվեկշռի վերաբերյալ վերոնշյալ միտումների ազդեցության քանակական գնահատականներն իրենց արտացոլումն են գտել ստորև ներկայացված տնտեսական աճի հավանականային բաշխման գծապատկերում և համապատասխան աղյուսակում:

Գծապատկեր 10. Իրական ՀՆԱ-ի աճի տեմպերի կանխատեսումների հավանականային բաշխումը 2019 թվականին, ըստ եռամսյակների (կուտակային)[29]



Ինչպես երևում է Գծապատկեր 10.-ից, իրական ՀՆԱ-ի կուտակային աճի կենտրոնական կանխատեսումներից շեղման ռիսկերը հավասարակշռված են: Կանխատեսումների բաշխման հավանականությունները առավել պարզորոշ երևում են ստորև բերված աղյուսակում:

29 Հավանականային կանխատեսման գրաֆիկի կառուցման ընդհանուր մեթոդաբանությունը ներկայացված է Ներդիր 3-ում:

Աղյուսակ 5. Իրական ՀՆԱ-ի աճի կանխատեսումների հավանականությունների բաշխումը

Տնտեսական աճի միջակայքը	Տնտեսական աճի՝ տվյալ միջակայքում ձևավորվելու հավանականությունը			
	2019 I եռ.	2019 II եռ.	2019 III եռ.	2019 IV եռ.
1	2	3	4	5
2-4%	0.17	0.20	0.25	0.25
4-6%	0.37	0.38	0.38	0.38
6-8%	0.31	0.28	0.24	0.23

Աղյուսակ 5-ի 1-ին սյունը ներկայացնում է տնտեսական աճի գտնվելու հնարավոր միջակայքերը, իսկ 2-ից 5-րդ սյուները՝ համապատասխան միջակայքերից յուրաքանչյուրում տնտեսական աճի ձևավորվելու հավանականությունները՝ ըստ 2019 թվականի կանխատեսվող եռամսյակների:

Աղյուսակում ներկայացված՝ տնտեսական աճի գտնվելու ամենահավանական 4-6% կենտրոնական միջակայքը և հարակից, համապատասխանաբար՝ 2-4% և 6-8% միջակայքերը միասին ծածկում են բաշխման ընդհանուր հավանականության շուրջ 86%-ը, այսինքն՝ հավանականությունը, որ տնտեսական աճը կգտնվի 2-8% միջակայքում, կազմում է 86%: Ինչպես տեսնում ենք 2019 թվականին տնտեսական աճի ձևավորվելու հավանականությունը ամենաբարձրն է 4-6% միջակայքում (Գծապատկեր 10-ում այն մուգ կարմիր է, իսկ Աղյուսակ 5-ում՝ հոծ նշումով):

Ամփոփելով նշենք, որ վերը նկարագրված ռիսկերը և անորոշությունները կարող են շեղումներ մտցնել բյուջեի բազային սցենարի հիմքում ընկած կանխատեսումներում և ենթադրություններում, ինչն էլ կարող է անդրադառնալ բյուջեի կանխատեսված հոսքերի վրա:

Պետական բյուջեի վրա մակրոտնտեսական կանխատեսված ցուցանիշներից շեղման ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը

2019 թվականի հարկային եկամուտների վրա ազդեցության գնահատումը

Կանխատեսումների ռիսկ

Սովորաբար կանխատեսումներն իրագործելիս ի հայտ են գալիս որոշ շեղումներ, որոնք կախված են լինում օգտագործվող կանխատեսման մոդելների տեղայնացումից և մասնավորեցումից, տնտեսության կառուցվածքային տեղաշարժերից[30], նոր ի հայտ եկող երևույթներից (որի վերաբերյալ նախկինում տեղեկատվությունը բացակայել է) և այլն: Այս ռիսկերն ընդունված է անվանել կանխատեսման ռիսկեր: Բյուջեի ծրագրի կատարման տեսանկյունից կարևորվում է ՀՆԱ-ի կանխատեսման ռիսկի գնահատումը, քանի որ բյուջեի ծրագրված սցենարի հարթ իրականացումը կախված է տնտեսությունում ստեղծված անվանական ՀՆԱ-ի մեծությունից: ՀՆԱ-ի գծով կանխատեսումների ռիսկը գնահատվել է նախորդ տարիներին պետական բյուջեների հիմքում դրվող ՀՆԱ կանխատեսված ցուցանիշների և ՀՆԱ փաստացի ցուցանիշների միջև շեղման հիման վրա: Մասնավորապես, հետճգնաժամային 2010-2017 թվականների փաստացի ՀՆԱ իրական աճերը միջին հաշվով շեղվել են կանխատեսվածից 2.0%: Այս պարագայում, հաշվի առնելով կանխատեսվածից ցածր ՀՆԱ ձևավորման վերոնկարագրյալ ռիսկերի գերակշռությունը՝ որպես ռիսկ է դիտարկվել ՀՆԱ իրական աճի կանխատեսված մակարդակից 2.0 տոկոսային կետով ավելի ցածր մակարդակի ձևավորումը:

Արդյունքում, ՀՆԱ նվազման ռիսկի ազդեցությունը հարկային եկամուտների վրա 2019 թվականի համար գնահատվում է 9.9 մլրդ ՀՀ դրամ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

Ենթադրություններից շեղումների ռիսկ

Որպես կանոն բյուջեի հիմքում դրվող կանխատեսումները կառուցվում են որոշակի ենթադրությունների հիման վրա, որոնք էլ իրենց հերթին կախված են նաև արտաքին գործոններից (օրինակ՝ ներքին տնտեսության գնաճը միջազգային շուկաների գների կանխատեսվող վարքագծից): Սակայն միշտ չէ, որ այդ ենթադրությունները կանխատեսվող

30 Սա որոշակիորեն կապված է նաև մոդելների սպեցիֆիկացիաների հետ, քանի որ ժամանակային շարքերի վրա հիմնված մոդելներն իրենց մեջ ներառում են տնտեսության նախորդ ժամանակահատվածի զարգացումների տեղեկատվությունը, իսկ կանխատեսվող տարում ի հայտ եկող տնտեսության կառուցվածքային տեղաշարժը միայն կարող է ներառվել հաջորդ տարվա կանխատեսումների մոդելներում:

հորիզոնում իրականություն են դառնում՝ կապված Կառավարության և Կենտրոնական Բանկի կառավարման դաշտից դուրս ի հայտ եկող երևույթների հետ (օրինակ՝ նավթի գների հնարավոր փոփոխությունները): Պատմականորեն՝ որոշակի գործոնների ազդեցությամբ, տեղի են ունենում շեղումներ այդ ենթադրություններից, ինչն էլ շեղումներ է մտցնում բազիսային կանխատեսումներում: Օրինակ՝ կանխատեսման համար հիմք է ընդունվում ԿԲ-ի կողմից գնաճի կանխատեսված կենտրոնական արժեքը, սակայն իրականում տարբեր գործոնների ազդեցությամբ կարող են տեղի ունենալ նշված արժեքից շեղումներ, ինչը կարող է շեղել նաև բյուջեի հիմքում դրվող կանխատեսումները:

Գնաճի շեղման հնարավոր չափը. Գնաճի ցուցանիշի շեղման հնարավոր չափ է դիտարկվում ՀՀ ԿԲ-ի կողմից դրամավարկային քաղաքականության ծրագրում (գնաճի հաշվետվություններում) ներկայացվող գնաճի նպատակային ցուցանիշի կենտրոնական արժեքից շեղման առավելագույն չափը:

ՀՀ ԿԲ-ի կողմից կանխատեսվող և միջնաժամկետ հորիզոնում գնահատվում է գնաճի կայունացում նպատակային ցուցանիշի շուրջ: 2018 թվականի հունվար-հուլիս ժամանակահատվածում գնաճը հիմնականում գտնվել է տատանումների թույլատրելի միջակայքի ստորին հատվածում: Կանխատեսվող հորիզոնում ակնկալվում է, որ գնաճը կշարունակի ընդլայնվել՝ ձևավորվելով տատանման թույլատրելի միջակայքի ստորին հատվածում, իսկ միջնաժամկետ հատվածում կկայունանա նպատակային ցուցանիշի շուրջ: Կանխատեսված ցուցանիշից գնաճի շեղման ռիսկերը գնահատվում են հավասարակշռված՝ գնաճի կենտրոնական արժեքից դեպի ներքև՝ 1.5 տոկոսային կետի չափով (այսինքն՝ գնաճի ներքին սահմանը 2.5 % է) և դեպի վերև շեղումը՝ 1.5 տոկոսային կետի չափով (վերին սահմանը 5.5 % է):

Գնաճի շեղման ռիսկը կարող է ազդեցություն ունենալ ՀՀ պետական բյուջեի և՛ եկամտային, և՛ ծախսային կատարողականների վրա՝ անուղղակի հարկերի, ինչպես նաև ապրանքների և ծառայությունների գծով ծախսերի ուղղությամբ: Գնանկումային պայմաններում հարկերից մուտքերը կկրճատվեն և ընդհակառակը:

Արդյունքում, գների նվազման ռիսկի ազդեցությունը հարկային եկամուտների վրա 2019 թվականին գնահատվում է 2.4 մլրդ դրամ՝ ֆինանսական պահանջի նվազեցման ուղղությամբ:

Փոխարժեքի շեղման հնարավոր չափը. ՀՀ ԿԲ-ն և ՀՀ ՖՆ-ն փոխարժեքի կանխատեսումներ չեն իրականացնում և մակրոտնտեսական քաղաքականությունն իրականացվում է լողացող փոխարժեքի սկզբունքի հիման վրա, ընդ որում, յուրաքանչյուր տարվա մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումների հիմքում դրվում է փոխարժեքի անփոփոխ (որոշակի պահի դրությամբ) մակարդակ: Սակայն փոխարժեքի տատանումները

կազդեն բյուջեի եկամուտների վրա՝ սահմանին գանձվող հարկային եկամուտների, ինչպես նաև ծախսերի վրա՝ պետության կողմից ներմուծվող ապրանքների գնման մասով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատմականորեն և՛ արժևորման, և՛ արժեզրկման ուղղությամբ փոխարժեքի տատանումների բացարձակ շեղման միջին չափը չի գերազանցել 5.0 %-ը՝ որպես ռիսկ է դիտարկվել ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի առավելագույնը 5 % արժեզրկումը:

Արդյունքում, փոխարժեքի 5.0% արժեզրկման ռիսկի դրսևորման դեպքում այլ հավասար պայմաններում բյուջեն կարող է ունենալ շուրջ 13.2 մլրդ դրամ լրացուցիչ մուտք:

Ներմուծման գծով ռիսկի հնարավոր չափը. Քանի որ մաքսային սահմանին ներմուծումից գանձվող անուղղակի հարկերը էական կշիռ ունեն պետական բյուջեի ընդհանուր հարկային եկամուտներում, անհրաժեշտ է գնահատել նաև ներմուծման հնարավոր նվազման պարագայում հարկային եկամուտների նվազման ռիսկի չափը: Հետճգնաժամային տարիներին ներմուծման գծով կանխատեսումների շեղման միջին բացարձակ չափը սահմանվում է 13.1%, սակայն, հաշվի առնելով ներմուծման կանխատեսումների ռիսկերի թուլացման միտումը, գնահատվել է 10.8% շեղման չափ: Ծրագրվածից 10.8%-ով պակաս ներմուծման ռիսկի դրսևորման պայմաններում բյուջեի հարկային եկամուտների վրա ազդեցությունը գնահատվում է ավելի քան 12.5 մլրդ դրամ՝ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

Ամփոփելով վերը նկարագրված կանխատեսումների և ենթադրություններից շեղումների ռիսկի գնահատականները, գնահատվող հորիզոնում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական ցուցանիշների՝ իրական ՀՆԱ-ի աճի, գնաճի, փոխարժեքի տատանողականության և ներմուծման ռիսկերի ազդեցության քանակական ամփոփ գնահատականները ներկայացվում են ստորև.

Աղյուսակ 6. Հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական կանխատեսումների և ենթադրությունների ռիսկերի ազդեցություն [31]

Ռիսկի տեսակը	Ազդեցության գնահատականը, մլրդ ՀՀ դրամ
	2019
Ռիսկերի առանձին հանդես գալու պայմաններում	
Կանխատեսվածից 2.0 տոկոսային կետով ավելի ցածր իրական ՀՆԱ-ի աճ	-9.9
1.5 տոկոսային կետով ավելի ցածր գնաճի ռիսկ	-2.4

31 ՀՆԱ, ներմուծման, փոխարժեքի և գների գծով հավանական ռիսկերի քանակային գնահատականը ստացվել է՝ հիմք ընդունելով այս գործոնների պատմական շարժի բացարձակ միջին սխալը:

Փոխարժեքի առավելագույնը 5.0 տոկոսով արժեզրկման ռիսկ	13.2
Ներմուծման 10.8 տոկոսով նվազման ռիսկ	-12.5
Վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա հանդես գալու պայմաններում	**-15.1**

Այսպիսով, գնահատվում է, որ հարկային եկամուտների վրա ազդող վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա ի հայտ գալու պարագայում հարկային եկամուտների ծրագրված մակարդակից շեղումը կկազմի շուրջ 15.1 մլրդ դրամ՝ նվազման ուղղությամբ: Մյուս կողմից, կարելի է նկատել, որ հարկային եկամուտների ծրագրված մակարդակից շեղումը ավելի էական կլինի, եթե ի հայտ գան միայն ՀՆԱ-ի և ներմուծման գծով ռիսկերը:

Հարկային եկամուտների վրա առանձին ռիսկերի ազդեցության չափի վերաբերյալ պատկերացում են տալիս նաև ստորև ներկայացվող զգայունության գնահատականները, սակայն այս դեպքում դիտարկվում է հարկային եկամուտների աճի վրա ազդող գործոնների աճերի 1% փոփոխության ազդեցությունը, ինչը ներկայացված է հարկային եկամուտների զգայունության աղյուսակում:

Աղյուսակ 7. Հարկային եկամուտների զգայունությունը հիմնական տնտեսական գործոնների նկատմամբ, %

	ՀՆԱ	Գնաճ	Փոխարժեք	Ներմուծում
Միջին տարեկան ազդեցություն	0.24	0.10	0.18	0.05

Ինչպես երևում է աղյուսակից հարկային եկամուտների աճի վրա ազդող էական գործոններ են հանդիսանում իրական ՀՆԱ փոփոխությունը և փոխարժեքի փոփոխությունը:

Հարկային եկամուտների կանխատեսումների հետ կապված անորոշությունների և ռիսկերի հաշվեկշռի վերաբերյալ գնահատականները իրենց արտացոլումն են գտել ստորև ներկայացվող հարկային եկամուտների հավանականային բաշխման գծապատկերում և համապատասխան աղյուսակում (տես Գծապատկեր 11. և Աղյուսակ 8.)[32]:

32 Հարկային եկամուտների գծով ռիսկերի ազդեցության գնահատականը կառուցվել է ՀՀ ֆինանսների նախարարության ռիսկերի գնահատման համակարգի ներքո կառուցված մոդելի հիման վրա:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների տարեկան աճի տեմպերի կանխատեսումների հավանականային բաշխումը, %[33]



Ակնհայտորեն, կենտրոնական կանխատեսումներից հարկային եկամուտների աճի շեղման ուղղությամբ ռիսկերն առավելապես նվազման ուղղություն ունեն: Կանխատեսումների բաշխման հավանականությունները առավել պարզորոշ երևում են ստորև բերվող աղյուսակում:

Աղյուսակ 8. Հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխումը

Հարկային եկամուտների աճի միջակայքը	Հարկային եկամուտների աճի՝ տվյալ միջակայքում ձևավորվելու հավանականությունը			
	2019-I	2019-II	2019-III	2019-IV
7-10%	0.28	0.30	0.30	0.31
10-13%	0.46	0.44	0.43	0.43
13-16%	0.17	0.15	0.15	0.14

Աղյուսակ 8-ի առաջին սյունը ներկայացնում է հարկային եկամուտների աճի հավանականային միջակայքերը, իսկ 2-ից 5-րդ սյուները նշված միջակայքերից յուրաքանչյուրում այդ աճի ձևավորվելու հավանականությունները՝ ըստ 2019 թվականի կանխատեսվող եռամսյակների:

Պարզության համար աղյուսակում ընդգծվել են ամենահավանական 10-13% հարկային եկամուտների աճի միջակայքը և հարակից՝ համապատասխանաբար 7-10% և 13-16% միջակայքերը: Ամենաբարձր հավանականությունը, որ հարկային եկամուտների աճը կգտնվի 10-13 % միջակայքում, կազմում է ավելի քան 43.0%, իսկ հարկային եկամուտների աճը ընդհանուր 7-

33Հավանականային կանխատեսման գրաֆիկի կառուցման ընդհանուր մեթոդաբանությունը ներկայացված է Ներդիր 3-ում:

16% միջակայքում բացատրվում է շուրջ 90%-ով: Միաժամանակ, հաշվի առնելով նվազման ուղղությամբ ազդող ռիսկերի ազդեցության գերակշռությունը, ավելի մեծ է կենտրոնական միջակայքից ներքև, քան թե վերև ձևավորվելու հավանականությունը:

Ներդիր 3

Իրական ՀՆԱ-ի և հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխման գծապատկերի կառուցումը

Իրական ՀՆԱ և հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխումը ներկայացնող գծապատկերները ցույց են տալիս տնտեսության զարգացման ապագա ընթացքի վերաբերյալ Կառավարության գնահատականները՝ տնտեսական աճի ծրագրային ցուցանիշների վերաբերյալ, ինչպես նաև հարկային եկամուտների հավաքագրման կանխատեսվող ընթացքը:

Կանխատեսումների հավանականային բաշխման գծապատկերի կառուցման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ բոլոր կանխատեսումները ինչ-որ չափով անորոշ են: Կարևոր են հաշվի առնվել ոչ միայն կոնկրետ կանխատեսված արժեքները, այլ նաև բոլոր այն վերոնշյալ ռիսկերը, որոնց արդյունքում կարող են շեղումներ առաջանալ իրական ՀՆԱ կանխատեումների և հարկերի կանխատեսումների կենտրոնական արժեքներից: Հիմնվելով միայն կետային կանխատեսումների վրա հնարավոր չէ բավարար չափով տեղեկատվություն ներկայացնել դրանց հետ կապված անորոշությունների և դրանց աղբյուրների վերաբերյալ: Այդ պատճառով կարևորվում է որոշակի վստահության միջակայքի կառուցման խնդիրը, որը թույլ կտա գնահատել իրադարձությունների զարգացման հավանական ընթացքը: Իրական ՀՆԱ և հարկերի կանխատեսումների հավանականային բաշխման ներկայացված գծապատկերները հիմնվում են Անգլիայի բանկի կողմից մշակված մեթոդաբանության վրա և հաշվի են առնում կանխատեսումների հավանականային բաշխման ասիմետրիկության առկայությունը:

Հայաստանի համար իրական ՀՆԱ-ի և հարկերի աճի կանխատեսումների բաշխման գծապատկերները կառուցվել են երեք չափորոշիչների հիման վրա.

1. կենտրոնական արժեքները, 2. անորոշության չափը (դիսպերսիան), որը ստանալու համար հիմք են հանդիսացել փաստացի պատմական շարքերի կանխատեսումային սխալները և 3. ռիսկերի հարաբերական հաշվեկշիռը՝ անհամաչափության գործակցի գնահատման նպատակով:

Ունենալով կանխատեսված կենտրոնական արժեքները, անորոշության չափը (ցրվածքը) և ռիսկերի հաշվեկշիռը՝ կառուցվել է իրական ՀՆԱ-ի և հարկերի կանխատեսումների հավանականային բաշխան գրաֆիկը 2019 թվականի համար՝ ըստ եռամսյակների:

ՀՆԱ-ի և հարկերի կանխատեսման գծապատկերներում կենտրոնական մուգ (կարմիր) ավելի նեղ միջակայքը ներառում է նաև կանխատեսման կենտրոնական սցենարը (կանխատեսված արժեքները): Որքան հավանականային կանխատեսումները հեռանում են կենտրոնական սցենարից, այնքան ավելի ցածր է դառնում դրանց իրագործման հավանականությունը, ինչը գծապատկերում արտահայտվում է ավելի թույլ գունավորմամբ: Ներկայացված բաշխումը սիմետրիկ չէ, քանի որ ապագայի համար առկա են տնտեսական աճի և հարկերի կենտրոնական կանխատեսումից ավելի ցածր մակարդակների ձևավորման ռիսկեր:

2019 թվականի պետական բյուջեի վրա ազդեցության ընդհանուր գնահատականը և մեղմման հնարավորությունները

Պետական բյուջեի հոսքերի գծով ռիսկերի ընդհանուր ազդեցության գնահատականը, որը ներկայացված է Աղյուսակ 9.-ում ներառում է ինչպես հարկային եկամուտների, այնպես էլ պետական բյուջեի այլ հոսքերի վրա մակրոտնտեսական ռիսկերի ազդեցության քանակական գնահատականները:

Աղյուսակ 9. Հարկային եկամուտների և պետական բյուջեի այլ հոսքերի գծով ռիսկերի ընդհանուր ազդեցության գնահատականը[34]

Ֆինանսավորման պահանջ (-պահանջի մեծացում, + պահանջի նվազում)

Մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվող ռիսկեր	2019
Կանխատեսածից 2.0 տոկոսով ավելի ցածր ՀՆԱ ձևավորում	-9.9
1.5 տոկոսային կետով ավելի ցածր գնաճի ռիսկ	3.3
Փոխարժեքի առավելագույնը 5%-ով արժեզրկման ռիսկ	6.7
Ներմուծման 10.8 տոկոսով նվազման ռիսկ	-12.5
ԵՄ բյուջետային աջակցության դրամաշնորհների չստացման ռիսկեր	-3.6
Ընդամենը	**-16.1**

Աղյուսակ 9.-ում ցույց են տրված գնահատված լրացուցիչ ֆինանսական ռիսկերը, որոնք կհանգեցնեն լրացուցիչ ֆինանսավորման պահանջի առաջացման: Ակնհայտորեն երևում է, որ գնաճի և փոխարժեքի գնահատված տատանումների հետևանքով կնվազի նախատեսված ֆինանսավորման պահանջը և համապատասխանաբար կփոփոխվեն նաև պետական բյուջեի ծախսերը՝ նվազման ուղղությամբ: Հաշվի առնելով մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվող մակարդակից վերոնշյալ հնարավոր շեղումների ռիսկերի գնահատականները՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների հավաքագրման և ծախսերի կատարման տեսանկյունից 2019 թվականին ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտի լրացուցիչ ֆինանսավորման պահանջը կկազմի շուրջ 16 մլրդ ՀՀ դրամ կամ՝ ՀՆԱ-ի 0.2%-ը: Հնարավոր ռիսկերի ի հայտ գալու պարագայում առաջնային պետք է լինի զսպել հնարավոր պարտքի մեծացումը և ռիսկերը հիմնականում չեզոքացնել ծախսերը կասեցնելով: Ընդ որում՝ ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության հիմնական նպատակադրումը լինելու է սոցիալական բնույթի ծախսերի կրճատման բացառումը, իսկ հնարավորության դեպքում՝ բյուջեի ծախսերի ամբողջական իրականացումը:

34 Ընդհանուր ազդեցության գնահատականը հիմնված է մակրոտնտեսական ռիսկերի առանձին հանդես գալու ենթադրության վրա:

ՄԱՍ II-Ա ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Միջնաժամկետ հարկաբյուջետային սկզբունքները և ցուցանիշները

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման ընթացքում ՀՀ կառավարությունն առաջնորդվել է ՀՀ 2019-2021թթ. Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով ամրագրված հիմնական սկզբունքներով: Ստորև բերված Աղյուսակ 10-ում ներկայացված են 2017-2019թթ պետական բյուջեների ցուցանիշներն արտացոլող ամփոփ ցուցանիշները:

Աղյուսակ 10.2017-2019թթ պետական բյուջեի ամփոփ ցուցանիշները

Ցուցանիշներ	2017թ փաստացի	2018թ ծրագիր	2019թ նախագիծ
Ա.			
1. Ընդամենը եկամուտներ	1,237.8	1,354.8	1,490.6
այդ թվում՝			
- ներքին եկամուտներ	1,223.1	1,315.8	1,451.6
որից՝			
- հարկեր և պետական տուրքեր	1,158.0	1,255.8	1,399.2
2. Ընդամենը ծախսեր	1,504.8	1,515.7	1,642.2
այդ թվում՝			
- ընթացիկ ծախսեր	1,267.3	1,345.6	1,422.7
- ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	237.4	170.1	219.5
3. Դեֆիցիտ (պակասուրդ)	267.0	160.9	151.6
Բ. Արտահայտված ՀՆԱ-ի նկատմամբ %-ով			
1. Ընդամենը եկամուտներ	22.2%	21.9%	22.1%
որից՝			
- ներքին եկամուտներ	22.0%	21.2%	21.5%
որից՝			
- հարկեր և պետական տուրքեր	20.8%	20.3%	20.7%
2. Ընդամենը ծախսեր	27.0%	24.5%	24.3%
այդ թվում՝			
- ընթացիկ ծախսեր	22.8%	21.7%	21.1%
- ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	4.3%	2.7%	3.2%
3. Դեֆիցիտ (պակասուրդ)	4.8%	2.6%	2.2%
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	5568.9	6,193.0	6756.2

Հիմք ընդունելով ՀՆԱ-ի 22.1 %-ի չափով կանխատեսված ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի եկամուտների մակարդակը և ելնելով ՀՆԱ-ի 2.2 %-ի չափով դեֆիցիտի ֆինանսավորման հնարավորություններից, ՀՀ կառավարությունը ծրագրում է 2019 թվականին ապահովել ծախսերը ՀՆԱ-ի 24.3 %-ի կամ 1,642.2 մլրդ դրամի չափով:

ՄԱՍ II – Բ.ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծի եկամուտների, ծախսերի, դեֆիցիտի մակարդակները ձևավորվել են մակրոտնտեսական զարգացումների ակնկալվող սցենարի սահմաններում, որը ներկայացվել է սույն ուղերձի մաս II-Ա-ում:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված բյուջետային եկամուտների կազմում, ինչպես և նախորդ տարիներին, գերակշիռ մաս են կազմում հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով ակնկալվող մուտքերը, ինչը ներկայացված է Գծապատկեր 12-ում:

Գծապատկեր 12. ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված բյուջետային եկամուտների կառուցվածքը (%-ով ընդհանուրի նկատմամբ)



ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 1,490.6 մլրդ դրամ եկամուտներ, որից հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով՝ 1,399.2 մլրդ դրամ: Բյուջետային եկամուտների՝ ըստ առանձին եկամտատեսակների կանխատեսումների մանրամասները ներկայացված են «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի բացատրագրի՝ եկամուտների կանխատեսմանը վերաբերվող մասում (սույն ուղերձի մաս 3):

2019 ԹՎԱԿԱՆԻ ԾԱԽՍԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվի առնելով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի եկամուտների կանխատեսվող մակարդակը և դեֆիցիտի ու պետական պարտքի նպատակային ցուցանիշները, որոնք ներկայացվում են հաջորդ բաժնում, ՀՀ կառավարությունը ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի ծախսերի ծավալը առաջարկում է սահմանել 1,642.2 մլրդ դրամի չափով:

ՀՀ կառավարությունն առաջիկա տարիներին առավել կարևորում է պետական բյուջեի ծախսային հետևյալ գերակայությունները (սույն ծրագրի իմաստով գերակայություն են համարվում այն ոլորտները, որոնց հատկացվում են լրացուցիչ բյուջետային ռեսուրսների զգալի մասը կամ որոնց ֆինանսավորման համար ներգրավում են վարկային ռեսուրսներ).

Սոցիալական ոլորտի առանձին ճյուղերում (մասնավորապես՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն), ինչպես նաև պետական կառավարման բնագավառում պետական մարմինների գործունեության արդյունավետության, նպատակաուղղվածության և հասցեականության մակարդակի բարձրացման, նրանց կողմից հանրությանը մատուցվող ծառայությունները բնակչության համար ավելի մատչելի դարձնելու նպատակով իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովում.

Հանրապետության տարածքային ամբողջականությունը, տարածաշրջանում կայունությունը և Արցախյան հակամարտության կողմերի ուժերի հավասարակշռությունը պահպանելու նպատակով պաշտպանության և ազգային անվտանգության կառույցների կենսագործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ապահովում.

Տնտեսության առանձին ոլորտներում (մասնավորապես և հիմնականում՝ գյուղատնտեսություն, ջրային տնտեսություն, ճանապարհային տնտեսություն և էներգետիկա) ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացում:

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ

2019 թվականին, ինչպես և նախորդ տարիներին, բյուջետային մուտքերի ընդհանուր ծավալը ձևավորվելու է նաև բյուջետային որոշ ծախսերի ֆինանսավորման համար օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից պաշտոնական դրամաշնորհների և արտոնյալ վարկերի տեսքով Հայաստանի Հանրապետությանը հատկացվող աջակցության հաշվին: Ստորև ներկայացված Գծապատկեր 13-ում արտացոլված են 2019 թվականի բյուջետային մուտքերի ընդհանուր գումարում ներքին և արտաքին աղբյուրներից ստացվելիք մուտքերի տեսակարար կշիռները (տոկոսներով):

Գծապատկեր 13. ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մուտքերի ընդհանուր գումարում ներքին և արտաքին աղբյուրներից ստացվելիք մուտքերի տեսակարար կշիռները (%) ընդամենը մուտքերի մեջ



Այս հարցի վերաբերյալ տեղեկատվությունը ըստ հիմնական բաղադրիչների և մանրամասների ևս ներկայացված է «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի բացատրագրում:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ԵՎ ՊԱՐՏՔԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի դեֆիցիտը ծրագրավորվել է ՀՆԱ-ի 2.24 %-ի չափով և կազմում է 151.6 մլրդ դրամ: Վերը նշված բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներում ներքին աղբյուրների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ կկազմի 35.7% (շուրջ 54.2 մլրդ դրամ): Դեֆիցիտի ֆինանսավորման ներքին աղբյուրների հիմնական մասը 2019 թվականին ձևավորվելու է պետական արժեթղթերի տեղաբաշխումից գոյացող մուտքերից, ելքերի ֆինանսավորմանն ուղղվող ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի միջոցներից, կայունացման դեպոզիտային հաշվի միջոցներից, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտներին տրամադրված բյուջետային վարկերի զուտ մուտքերից (տրամադրվածից հանած մարումները):

Դեռևս զգալի են արտաքին աղբյուրներից՝ միջազգային կազմակերպություններից (հիմնականում Համաշխարհային բանկից) և օտարերկրյա պետություններից ստացվելիք արտոնյալ վարկերի հաշվին պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորմանն ուղղվող միջոցները: ՀՀ պետական պարտքը բնութագրող 2017 թվականի փաստացի և 2018 ու 2019 թվականների համար կանխատեսվող հիմնական ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11.ՀՀ պետական պարտքը 2017-2019 թթ (մլն ԱՄՆ դոլար, տարեվերջի դրությամբ)

Ցուցանիշներ	2017	2018	2019
Պետական պարտք՝ ընդամենը	**3,280**	**3,409**	**3,610**
այդ թվում՝			
արտաքին պարտք	2,660	2,749	2,880
որից՝ Կենտրոնական բանկի պարտք	291	274	249
ներքին պարտք	620	661	730
ՀՀ կառավարության պարտք, մլրդ դրամ	2,369	2,475	2,631

Ինչպես երևում է Աղյուսակ 11-ից, 2017-2019 թվականների տարեվերջի դրությամբ պետական պարտքի գերակշռող մասը բաժին է ընկնում արտաքին պարտքին (համապատասխանաբար 81.1%-ը, 80.6 % և 79.8.0 %-ը):

Համաձայն կանխատեսումների, ծրագրային ժամանակահատվածում, ի տարբերություն նախորդ տարիների, արտաքին օժանդակության կառուցվածքում գերակշռելու են նպատակային ծրագրերի ֆինանսավորման համար նախատեսված բյուջետային աջակցության պաշտոնական դրամաշնորհներն ու վարկերը (70.3%, Աղյուսակ 12):

Աղյուսակ 12.2019թ ակնկալվող արտաքին օժանդակությունն ըստ բնույթի

Ցուցանիշներ	Գումարը (մլրդ դրամներով)	Տեսակարար կշիռը արտաքին օժանդակության ընդհանուր գումարում (%)
1. Ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակություն	**83.0**	29.7
1.1 Պաշտոնական դրամաշնորհներ	9.0	x
1.2 Վարկեր	74.0	x
2. Ծրագրային (նպատակային) օժանդակություն	**196.6**	70.3
2.1 Պաշտոնական դրամաշնորհներ	30.0	x
2.2 Վարկեր	166.6	x
Ընդամենը արտաքին օժանդակություն	**279.6**	

Բյուջետային փաթեթում ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակության թերստացման պայմաններում ծախսերի ծրագրի վերանայման անհրաժեշտության առաջացման դեպքում այդ վերանայումն իրականացվելու է՝ ելնելով ծախսերի գերակայության աստիճանից: Ծրագրային (նպատակային) պաշտոնական դրամաշնորհների և վարկերի թերստացումը հանգեցնելու է այն ծրագրերի գծով ծախսերի կրճատմանը, որոնք անմիջականորեն կապակցված են ֆինանսավորման այդ աղբյուրներին:

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծի հաշվարկներում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.1-րդ մասի պահանջի համաձայն կիրառվել են ս.թ սեպտեմբերի 3-ի դրությամբ ՀՀ արտարժութային շուկայում ձևավորված տարադրամի փոխարժեքները ՀՀ դրամով:

Աղյուսակ 13.ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծի հաշվարկներում կիրառված տարադրամների փոխարժեքները ՀՀ դրամով

Տարադրամի տեսակը	Փոխարժեքը ՀՀ դրամով
1 ԱՄՆ դոլար	483.38
1 եվրո	560.62
1 Մեծ Բրիտանիայի ֆունտ ստեռլինգ	622.11
1 Ռուսաստանյան ռուբլի	7.12
1 Շվեյցարական ֆրանկ	498.18
1 Կանադական դոլար	370.26
10 ճապոնական իեն	43.53
1 Չինական յուան	70.72

ՄԱՍ III. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է ՀՀ 2019 թվականի պետական բյուջեն հաստատել՝ եկամուտների գծով՝ 1,490.6 մլրդ դրամ, ծախսերի գծով՝ 1,642.2 մլրդ դրամ, իսկ դեֆիցիտը՝ 151.6 մլրդ դրամ:

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող դեֆիցիտի գումարը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով ճշտված և ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի կատարման արդյունքներով փաստացի ձևավորված ցուցանիշների նկատմամբ նախատեսված է համապատասխանաբար՝ 115.4 մլրդ դրամ և 9.3 մլրդ դրամ նվազեցումով: ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծի դեֆիցիտի և 2019 թվականի համար ծրագրվող անվանական ՀՆԱ-ի հարաբերությունը կանխատեսվում է 2.24 %-ի չափով, ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող դեֆիցիտի ֆինանսավորման համար ծրագրավորված վարկերի զգալի մասը կտրամադրվի Համաշխարհային բանկի կողմից (ներգրավվող վարկերի տրամադրման ժամկետների և տոկոսադրույքների մասին տվյալները ներկայացված են սույն բացատրագրի N 3 հավելվածում և N 18 աղյուսակում):

ՄԱՍ III-Ա. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում (սույն մասում այսուհետ՝ Նախագիծ) եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 1,490.6 մլրդ դրամի չափով, որից 28.0 մլրդ դրամը արտաբյուջետային ծրագրերի գծով, 2018 թվականի համար ճշտված 1,354.8 մլրդ դրամի և 2017 թվականին փաստացի ստացված 1,237.8 մլրդ դրամ համադրելի գումարների դիմաց:

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի եկամուտների ծրագրավորվող կազմում մեծ տեսակարար կշիռ կունենան հարկերը և պետական տուրքերը՝ 93.9%, իսկ պաշտոնական դրամաշնորհները և այլ եկամուտները կապահովեն տարեկան բյուջետային եկամուտների համապատասխանաբար 2.6%-ը և 3.5%-ը:

Աղյուսակ 14.ՀՀ 2017-2019թթ պետական բյուջեների եկամուտների կառուցվածքը

Եկամտատեսակը	2017թ համադրելի փաստացի		ՀՀ 2018թ ճշտված		2019թ նախագիծ	
	մլրդ դրամ	%-ով ընդամենի նկատմամբ	մլրդ դրամ	%-ով ընդամենի նկատմամբ	մլրդ դրամ	%-ով ընդամենի նկատմամբ
Ընդամենը, որից	1,237.8	100.0%	1,354.8	100.0%	1,490.6	100.0%
1. Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,158.0	93.6%	1,255.8	92.7%	1,399.2	93.9%
2.Պաշտոնական դրամաշնորհներ	14.6	1.2%	39.1	2.9%	39.0	2.6%
3. Այլ եկամուտներ	65.2	5.3%	60.0	4.4%	52.4	3.5%

Ակնկալվում է, որ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ հարաբերությունը կկազմի 22.1%՝ 2018 թվականի սպասողական և 2017 թվականի փաստացի 21.9%-ի և 22.2%-ի դիմաց:

Աղյուսակ 15.ՀՀ 2017-2019թթ պետական բյուջեների եկամուտների համեմատականը

ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿ	2017թ համադրելի փաստացի		ՀՀ 2018թ ճշտված		2019թ նախագիծ	
	Գումար (մլրդ դրամ)	ՀՆԱ-ի նկատ-մամբ (%)	Գումար (մլրդ դրամ)	ՀՆԱ-ի նկատ-մամբ (%)	Գումար (մլրդ դրամ)	ՀՆԱ-ի նկատ-մամբ (%)
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, որից	1,237.8	22.2%	1,354.8	21.9%	1,490.6	22.1%
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,158.0	20.8%	1,255.8	20.3%	1,399.2	20.7%
Պաշտոնական	14.6	0.3%	39.1	0.6%	39.0	0.6%

ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿ	2017թ համադրելի փաստացի		ՀՀ 2018թ ճշտված		2019թ նախագիծ	
	Գումար (մլրդ դրամ)	ՀՆԱ-ի նկատ-մամբ (%)	Գումար (մլրդ դրամ)	ՀՆԱ-ի նկատ-մամբ (%)	Գումար (մլրդ դրամ)	ՀՆԱ-ի նկատ-մամբ (%)
դրամաշնորհներ						
Այլ եկամուտներ	65.2	1.2%	60.0	1.0%	52.4	0.8%

2019 թվականի համար Նախագծով առաջարկվող եկամուտների կանխատեսումները ներկայացված են սույն բացատրագրի առանձին բաժիններում:

Հարկային եկամուտներ և պետական տուրքեր

Պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը 2019 թվականի համար ծրագրվել են 1,399.2 մլրդ դրամի չափով, որից 2.1 մլրդ դրամը արտաբյուջետային ծրագրերի գծով, 2018 թվականի համար ճշտված և 2017 թվականի փաստացի համադրելի մուտքերի համապատասխանաբար՝ 1,255.8 և 1,158.0 մլրդ. դրամի դիմաց:

2019 թվականի հարկային եկամուտները և պետական տուրքերը ծրագրելիս օգտագործ-վել են այն մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները, որոնք էական ազդեցություն ունեն առանձին հարկատեսակների հարկման բազայի ձևավորման վրա: Մասնավորապես, հիմք են ընդունվել Աղյուսակ 3.-ում ներկայացված մակրոտնտեսական ցուցանիշները:

Աղյուսակ 16. <u>Առանձին մակրոտնտեսական ցուցանիշների 2017-2019թթ փաստա-ցի/կանխատեսումային մեծությունները</u>

Ցուցանիշներ	2017	2018	2019
	փաստ	ճշտված	կանխատե-սում
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	5,568.9	6,193.0	6,756.2
ՀՆԱ-ի իրական աճ (%, տոկոս)	2.5	6.5	5.5
ՀՆԱ-ի դեֆլյատոր (%, տոկոս)	0.5%	4.4%	3.5%

Ինչպես նախորդ տարիներին, 2019 թվականի հարկային եկամուտների և պետական տուրքերի ցուցանիշը ծրագրվել է հաշվի առնելով.

- մակրոտնտեսական միջավայրը բնութագրող ցուցանիշների կանխատեսումները,
- հարկային օրենսդրության՝ 2019 թվականին ուժի մեջ մտնող հայտնի փոփոխությունների հնարավոր ազդեցության գնահատականները,
- նախորդ տարիների հավաքագրման վարքագիծը, ինչպես նաև՝

- վարչարարական միջոցառումներից ակնկալվող լրացուցիչ մուտքերը:

Նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի կանխատեսումների հիման վրա հարկային եկամուտները և պետական տուրքերը 2019 թվականի համար ծրագրվել են 1,358.7 մլրդ դրամի չափով, առանց արտաբյուջետային ծրագրերի: Հարկային օրենսդրության փոփոխությունների հնարավոր ազդեցությունը գնահատվել է 19.0 մլրդ դրամ, 4.5 մլրդ դրամը՝ պետական բյուջեի սուբսիդիաներ և դրամաշնորհներ ծախսային հոդվածների գծով 2019 թվականի պետական բյուջեում ավելացված արժեքի հարկի գումարների նախատեսմամբ, նախորդ տարիների կուտակված գերավճարների մարումների գծով նախատեսվել է 10.0 մլրդ դրամ, արտաբյուջետային ծրագրերի գծով՝ 2.1 մլրդ դրամ, իսկ մնացած՝ շուրջ 24.9 մլրդ դրամը ակնկալվում է ապահովել վարչարարական միջոցառումների արդյունքում:

Աղյուսակ 17. ՀՀ 2019 թվականի հարկային եկամուտների և պետական տուրքերի կանխատեսումն ըստ առանձին գործոնների

	Ընդամենը	որից՝					
		Նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումներ	Հարկային օրենսդրության ազդեցության գնահատականներ	Սուբսիդիաներ և դրամաշնորհներ ծախսային հոդվածների գծով ԱԱՀ-ի նախատեսում	Վարչարարական միջոցառումներ	Արտաբյուջետային ծրագրեր	Նախորդ գերավճարների մարումներ
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,399.2	1,358.7	19.0	4.5	24.9	2.1	-10.0

Սույն մասի հաջորդ բաժնում ներկայացված են առանձին հարկատեսակների կանխատեսումների մեթոդաբանությունն ու համապատասխան ծրագրային ցուցանիշները՝ նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումները հաշվի առնելով: 2019 թվականի հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով 1,370.1 մլրդ դրամի չափով մուտքերի գնահատականները կատարվել են համապատասխան մուտքերի գծով ընթացիկ տարվա հունվար-օգոստոս ամիսների փաստացի և տարեկան սպասողական, նախորդ տարիների փաստացի մուտքերի, և, ինչպես արդեն վերը նշվեց, մակրոտնտեսական շրջանակում կատարված առանձին մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումների հիման վրա: Հարկ է նշել, որ այս գործոնի ազդեցությամբ 2019 թվականի հարկային

եկամուտները և պետական տուրքերը կանխատեսվել են նախորդ տարիներին կիրառված կանխատեսման մեթոդներով (հաշվարկները կատարված են այլ հավասար պայմաններում):

Հարկային, մաքսային քաղաքականություն և վարչարարություն

Պետական եկամուտների վարչարարության ոլորտում իրականացվելիք միջոցառումները բխելու են ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրից և ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրից:

Մասնավորապես, պետական եկամուտների վարչարարության ոլորտում 2019թ. նախատեսվում են իրականացնել միջոցառումներ՝ հետևյալ ուղղություններով.

- 2019 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսված հարկային եկամուտների ապահովում.
- հարկային և մաքսային հսկողության մեխանիզմների կատարելագործում, դրանց արդյունավետության բարձրացում և թիրախավորված հսկողության իրականացում.
- հարկային և մաքսային մարմինների ՏՏ ենթակառուցվածքների կատարելագործում.
- արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների համար ապրանքների սահմանահատման, ձևակերպման և բացթողման գործընթացների պարզեցում ու դյուրինացում.
- ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի կիրարկումն ապահովելու նպատակով մշակվող ԵԱՏՄ մաքսային օրենսգրքից բխող ազգային օրենսդրության կիրարկումն ապահովող նորմերի մշակում.
- ՀՀ ՊԵԿ կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներ՝ մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարում, ուսումնական կարիքների գնահատման մոդելի կիրառում, հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստում և ատեստավորում, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցում.
- հարկային մարմին - հարկ վճարող գործընկերային հարաբերությունների, ինչպես նաև ՀՀ ՊԵԿ գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ընդլայնում:

Հարկային եկամուտներն ըստ նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ

Ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ) գծով 2019 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 452.1 մլրդ դրամի չափով: Կանխատեսումները կատարվել են առանձին-առանձին ըստ սպառման և ՀՀ ներմուծվող արտադրանքի համար վճարվող ԱԱՀ-ի գումարների: Սպառումից ԱԱՀ-ի գծով 2019 թվականի մուտքերը գնահատելու համար դիտարկվել է ազգային հաշիվների համակարգի տնօրինվող եկամտի օգտագործման հաշվի «Վերջնական սպառման ծախսեր» հոդվածի 2017 թվականի փաստացի և մակրոտնտեսական զարգացումների շրջանակում կանխատեսված ցուցանիշները: Նախապես գնահատվել է հարկի փաստացի բազան[35]: Այդ նպատակով 2019 թվականի համար 5,932.7 մլրդ դրամի չափով կանխատեսված վերջնական սպառման ծախսերի ծավալը նվազեցվել է՝

ՀՆԱ-ի՝ ԱԱՀ-ով չհարկվող մասի գնահատված ծավալի չափով՝ 2,695.5 մլրդ դրամ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսության առանձին ճյուղերում ստեղծված ավելացված արժեքն ամբողջությամբ ենթակա չէ ԱԱՀ-ով հարկման (պետական կառավարում, կրթություն, առողջապահություն և այլն) կամ ոչ լրիվ ծավալով է ենթակա ԱԱՀ-ով հարկման (գյուղատնտեսություն, շինարարություն, առևտուր, տրանսպորտ և այլն):

Աղյուսակ 18. Սպառումից գանձվող ԱԱՀ-ի 2017-2019թթ փաստացի բազայի գնահատումը. նվազեցման ենթակա գումարներ ըստ ՀՆԱ-ի ճյուղերի

Ցուցանիշները	2017	2018	2019
	Փաստ	Սպասողական	կանխատեսում
Նվազեցման ենթակա գումարներ ըստ ՀՆԱ-ի ճյուղերի, որից՝	2,187.7	2,472.8	2,695.5
Արդյունաբերություն	84.7	89.1	97.3
Գյուղատնտեսություն	471.7	588.8	636.9
Շինարարություն	246.9	266.7	292.7
Առևտուր	111.9	123.5	134.8
Տրանսպորտ և կապ	85.5	94.4	103.1
Այլ ճյուղեր	1,187.0	1,310.2	1,430.7

ՀՆԱ-ի առանձին ճյուղերի՝ ԱԱՀ-ով չհարկվող ծավալների 2019 թվականի գնահատականները կատարված են՝ հիմք ընդունելով 2017 թվականի համապատասխան վիճակագրական ցուցանիշները, մասնավորապես՝

ա) Արդյունաբերություն. ԱՎԾ հրապարակումների համաձայն տնտեսության առանձին ճյուղերում փոքր կազմակերպությունների՝ տվյալ ճյուղի մեջ ունեցած տեսակարար կշռի (8.5%)

35 Այսուհետ՝ «փաստացի բազա» հասկացությունն իրենից ներկայացնում է տվյալ տարվա ՀՆԱ-ի՝ տվյալ հարկատեսակի համար գնահատված հարկունակ մասը:

կիրառմամբ (աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-դեկտեմբերին» ամսական զեկույց, Կազմակերպությունների արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) արտադրության վրա կատարված ծախսերի տարեկան ցուցանիշներն ըստ միջին և խոշոր կազմակերպությունների «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2017թ» տարեկան զեկույց).

բ) Գյուղատնտեսություն. գյուղատնտեսական մթերքի ապրանքայնության[36] մակարդակը գյուղացիական տնտեսություններում ցուցանիշի (56.7%) կիրառմամբ *(աղբյուրը՝ «Գյուղատնտեսական մթերքի իրացումը (օգտագործումը գյուղացիական տնտեսությունների կողմից 2017 թվականին» վիճակագրական տեղեկագիր).*

գ) Առևտուր. փոքր կազմակերպությունների ընդհանուրի մեջ ունեցած տեսակարար կշռի ցուցանիշի (18.6%) կիրառմամբ (աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-դեկտեմբերին» ամսական զեկույց, Կազմակերպությունների արտադրանքի (ապրանքների, ծառայությունների) արտադրության վրա կատարված ծախսերի տարեկան ցուցանիշներ ըստ միջին և խոշոր կազմակերպությունների «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2017թ»).

դ) Տրանսպորտի և կապ. փոքր կազմակերպությունների ընդհանուրի մեջ ունեցած տեսակարար կշիռների՝ համապատասխանաբար՝ 41.0% և 9.4% հիման վրա (աղբյուրը՝ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2016թ», «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2017թ»).

ե) Շինարարություն. մարդասիրական օգնության և բնակչության միջոցների հաշվին, ինչպես նաև փոքր կազմակերպությունների ընդհանուրի մեջ ունեցած տեսակարար կշռի հաշվարկված ցուցանիշի (60.2%) հիման վրա (աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին» ամսական զեկույց, «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2017թ»).

զ) Այլ ճյուղեր. (ֆինանսական գործունեություն, պետական կառավարում, կրթություն, առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցում, տնային տնտեսությունների վարման ծառայություններ) նվազեցվել են ամբողջ ծավալով:

Վերջնական սպառման ծախսերը նվազեցվել է 2019 թվականի համար ծրագրված զուտ անուղղակի հարկերի գումարի չափով՝ 679.5 մլրդ դրամ և ավելացվել է ակցիզային հարկի և մաքսատուրքի կանխատեսված մուտքերի՝ 209.3 մլրդ դրամի չափով, քանի որ վերջիններս,

36 Գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնության մակարդակն իրենից ներկայացնում է տնտեսության կողմից վաճառված, ապրանքափոխանակման և ծառայությունների դիմաց բնամթերքով տրված ծավալների տեսակարար կշիռների հանրագումար

համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի, ներառվում են ԱԱՀ-ի հարկման բազայում:

Նշված հաշվարկներով ԱԱՀ-ի բազան 2019 թվականի համար գնահատվել է 2,766.9 մլրդ դրամի չափով, որի նկատմամբ կիրառելով 2018 թվականի համար հարկման բազայի նկատմամբ տվյալ հարկի սպասողական մուտքերի գծով գնահատված 16.3% դրույքաչափը, կանխատեսվել են սպառումից ԱԱՀ-ի գծով 2019 թվականի մուտքերը:

Աղյուսակ 19.Սպառումից գանձվող ԱԱՀ-ի 2017-2019թթ. բազայի գնահատումը

Ցուցանիշները	2017	2018	2019
	Փաստ	սպասողական	կանխատեսում
1. Վերջնական սպառում	5,099.2	5,494.1	5,932.7
2. Նվազեցման ենթակա գումարներ	2,761.9	3,093.3	3,375.1
2.1 Ըստ ՀՆԱ-ի ճյուղերի	2,187.7	2,472.8	2,695.5
2.2 Արտադրանքի զուտ անուղղակի հարկեր	574.2	620.5	679.5
3. Ավելացման ենթակա գումարներ	154.9	194.1	209.3
4. ԱԱՀ-ի հարկման բազա (տող1-տող2+տող3)	2,492.2	2,594.9	2,766.9

Այսպիսով, վերը նշված մեթոդով հաշվարկված ԱԱՀ-ից 2019 թվականին հավաքագրման ենթակա բյուջետային մուտքերը կանխատեսվել են 452.1 մլրդ դրամի չափով:

ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿ

Ակցիզային հարկի գծով 2019 թվականի բյուջետային մուտքերը գնահատվել են 120.4 մլրդ դրամ: Կանխատեսումները կատարվել են ներքին շրջանառությունից և ներմուծումից (այդ թվում ԵՏՄ անդամ երկրներից ներմուծումից) առանձին՝ հաշվի առնելով 2018 թվականի գնահատված տարեկան համապատասխան սպասողական մուտքերը և 2019 թվականի համար կանխատեսվող սպառման իրական և ապրանքների ներմուծման աճի տեմպերը (8.0% և 12.6%):

Աղյուսակ 20.Ակցիզային հարկի 2017թ. փաստացի և 2018-2019թթ կանխատեսվող ցուցանիշները

Ցուցանիշները	2017	2018	2019
Ակցիզային հարկ ՀՀ-ում արտադրվող ապրանքներից	37.2	64.1	66.0
Սպառման իրական աճը	10.9%	7.7%	8.0%
Ակցիզային հարկ ՀՀ ներմուծվող ապրանքներից	45.1	48.8	54.4
Ապրանքների ներմուծման աճ	33.6%	4.0%	12.6%
Ակցիզային հարկ ներմուծումից (բացի ԵՏՄ ներմուծումից)	31.5	36.3	40.9
Ակցիզային հարկ ԵՏՄ ներմուծումից	13.6	12.5	13.5
ԸՆԴԱՄԵՆԸ	82.3	109.9	120.4

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ

Շահութահարկի գծով 2019 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 166.1 մլրդ դրամ: Շահութահարկի գծով կանխատեսումներում հիմք է ընդունվել 2018 թվականի տվյալ հարկատեսակի գծով հավաքագրումների ամսական միտումները, որը ճշգրտվել է 2015-2017 թվականների հունվար-օգոստոս ամիսներին հավաքագրված հարկերի կշռով: Շահութահարկի գծով 2019 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսման համար կիրառվել է փորձագիտական գնահատմամբ ստացված 1.1 տոկոսային կետով աճը, որը կիրառվել է տվյալ հարկատեսակի գծով 2018 թվականի համար գնահատված մեծության վրա:

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ

Եկամտային հարկի գծով 2019 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 372.2 մլրդ դրամ: Եկամտային հարկի գծով կանխատեսումներում հիմք է ընդունվել 2018 թվականի տվյալ հարկատեսակի գծով հավաքագրումների ամսական միտումները, որը ճշգրտվել է 2017 թվականների հունվար-օգոստոս ամիսներին հավաքագրված հարկերի կշռով: Եկամտային հարկի գծով 2019 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսման համար կիրառվել է 2016-2017 թվականների եկամտային հարկի գծով փաստացի աճի և հիպոտեկի գծով եկամտային հարկի վերադարձի փորձագիտական գնահատմամբ ստացված ցուցանիշները, որոնք կիրառվել են 2018 թվականի համար գնահատված մեծության վրա:

ՄԱՔՍԱՏՈՒՐՔ

2019 թվականի բյուջետային մուտքերը մաքսատուրքի գծով գնահատվել են 89.8 մլրդ դրամ: Մաքսատուրքի գծով 2019թ. մուտքերը գնահատելիս հաշվի է առնվել այն հանգամանքը, որ սկսած 2015 թվականից պետական բյուջե մուտքագրվող մաքսատուրքերի գերակշիռ մասը ձևավորվում է ԵՏՄ անդամ պետությունների համար նախապես սահմանված մաքսատուրքերի վերաբաշխումների դրույքաչափերին համապատասխան, մասնավորապես, ԵՏՄ պայմանագրով սահմանված դրույքաչափերն են՝

Ռուսաստանի Դաշնություն	85.265%
Ղազախստան	7.055%
Բելառուս	4.56%
Ղրղզստան	1.90%
Հայաստանի Հանրապետություն[37]	1.22%

37 ...2017թ. հունվարից ԵՏՀ մաքսատուրքերի վերաբաշխման դրույքաչափը Հայաստանի Հանրապետության համար սահմանվել է 1.22%.

2019 թվականի ՀՀ պետական բյուջեի մաքսատուրքերի գծով կանխատեսումներն իրա-կանացնելիս դիտարկվել է Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից 2018 և 2019 թվականների համար ԵՏՄ անդամ երկրների ներմուծման գծով կանխատեսվող ցուցանիշները, որոնք ճշգրտվել են մաքսատուրքերի վերաբաշխումների դրույքաչափերին համապատասխան, ինչի արդյունքում ԵՏՄ անդամ երկրների համար ճշգրտված ներմուծման աճը, ներառյալ փոխարժեքի արժեզրկումը, կանխատեսվել է 5.6%, որն էլ կիրառվել է 2018 թվականի համար մաքսատուրքերի սպասողական 84.1 մլրդ. դրամ մեծության վրա:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐ

Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի գծով 2019 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 59.7 մլրդ. դրամ: Նշված վճարների 2019 թվականի մուտքերը գնահատվել են ըստ հարկի և վճարի, հաշվի առնելով նախորդ տարիների փաստացի, ընթացիկ տարվա սպասողական մուտքերը, արդյունաբերության ճյուղի 2019 թվականին ակնկալվող աճի՝ 9.2%-ի (հարկային մարմինների կողմից գանձվող վճարների դեպքում) և ապրանքների ներմուծման աճի՝ 12.6%-ի (մաքսային մարմինների կողմից գանձվող վճարների դեպքում) տեմպերը:

Այս եկամտատեսակից մուտքերի գերակշիռ մասը կազմում է ռոյալթին (արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտա-դրանքի իրացման համար)՝ 45.9 մլրդ դրամ:

Մուտքերի հաջորդ խոշոր խումբը մաքսային մարմինների կողմից գանձվող բնապահպանական հարկերն են, որոնք 2019 թվականի համար ծրագրվել են 8.3 մլրդ դրամի չափով՝ 2018 թվականի սպասողականի նկատմամբ կիրառելով ներմուծման 12.6% աճի տեմպը:

Մնացած 5.5 մլրդ դրամը ծրագրվել է բնապահպանական հարկի և բնօգտագործման մյուս վճարների գծով:

ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՐԿ ԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿ

Արտոնագրային հարկի և շրջանառության հարկի գծով 2019 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են համապատասխանաբար 7.9 մլրդ դրամ և 24.1 մլրդ դրամ: Կանխատեսումները կատարված են ընթացիկ տարվա համապատասխան մուտքերի և անվանական ՀՆԱ-ի (շրջանառության հարկի դեպքում) և տնտեսական աճի (արտոնագրային վճարների դեպքում) համապատասխանաբար 9.1% և 4.9%-ի տեմպերը:

ԱՅԼ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Այլ հարկային եկամուտների գծով, որը ներառում է ճանապարհային հարկը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) և օգտագործման պարտադիր վճարները, սոցիալական վճարը, պետական բյուջե մուտքագրվող այլ հարկային եկամուտները, 2019 թվականին գանձվելիք գումարները ծրագրվել են 26.7 մլրդ դրամ:

Մասնավորապես ճանապարհային հարկի գծով մուտքերը կանխատեսվել են 3.4 մլրդ դրամ, ըստ հարկային և մաքսային մարմինների կողմից գանձվող վճարների: Գնահատման հիմքում ընկած է 2018 թվականի համար հաշվարկված վճարների նկատմամբ ըստ գանձող մարմնի համապատասխանաբար 2019 թվականի համար կանխատեսվող ՀՆԱ-ի իրական աճի և ներմուծման աճի տեմպերի կիրառման մոտեցումը:

Ռադիոհաճախականության օգտագործման մուտքերը 2019 թվականի համար գնահատվել են 6.9 մլրդ դրամի չափով՝ նկատի ունենալով Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի ներկայացրած հայտը:

2019 թվականին սոցիալական վճարի գծով բյուջետային մուտքերը ծրագրավորվել են 14.2 մլրդ դրամ: Սոցիալական վճարի գծով 2019 թվականի մուտքերը գնահատվել են, հաշվի առնելով «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն 2018 թվականի հուլիսի 1-ից համակարգի լիակատար գործարկմամբ պայմանավորված մասնակիցների թվաքանակի ավելացումը: Հաշվարկներում դիտարկվել է նաև կուտակային համակարգի մասնակիցների միջին աշխատավարձի բնականոն աճի գործոնը:

Այլ հարկային եկամուտների գծով 2019 թվականին կանխատեսվել է 2.2 մլրդ դրամ եկամուտ:

s

2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ի լրումն վերոշարադրյալին հարկ է նշել, որ ՀՀ 2019 թվականի հարկային եկամուտների մուտքերի կանխատեսմամբ հանդերձ միջազգային պրակտիկայում ընդունված մոտեցումների հիման վրա կատարվել է ավելացված արժեքի հարկի, շահութահարկի և եկամտային հարկի գծով 2018 թվականի հարկային ծախսերի մեծության գնահատում, որի արդյունքները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 21. 2019 թվականի հարկային ծախսերի մեծության ամփոփ գնահատական

Հ/Հ	Հարկային ծախսերի տեսակը	Հարկային ծախսերի չափը	Կշիռը հարկային եկամուտների մեջ	Կշիռը ՀՆԱ-ի մեջ
1	**ԱԱՀ-ի գծով, այդ թվում՝**	**348,473**	***24.91%***	***5.16%***
1.1.	գյուղատնտեսություն	26,046	*1.86%*	*0.39%*
1.2.	առողջապահություն	47,462	*3.39%*	*0.70%*
1.3.	Կրթություն	23,712	*1.69%*	*0.35%*
1.4.	ֆինանսներ և ապահովագրություն	48,843	*3.49%*	*0.72%*
1.5.	ԱԱՀ-ի շեմ	21,329	*1.52%*	*0.32%*
1.6.	խաղատների գործունեություն	34,614	*2.47%*	*0.51%*
1.7.	ինտերնետ շահումով խաղերի կազմակերպում	18,604	*1.33%*	*0.28%*
1.8.	ոսկու և թանկարժեք քարերի իրացում	7,313	*0.52%*	*0.11%*
1.9.	մարդասիրական օգնություն	3,402	*0.24%*	*0.05%*
1.10.	պարարտանյութերի իրացում	3,956	*0.28%*	*0.06%*
1.11.	այլ օրենքներով տրված արտանություններ	2,140	*0.15%*	*0.03%*
1.12.	Վերը չնշված այլ արտոնություններ	111,051	*7.94%*	*1.64%*
2	**Շահութահարկի գծով, այդ թվում՝**	**19,928**	***1.42%***	***0.29%***
2.1.	գյուղատնտեսություն	4,089	*0.29%*	*0.06%*

2.2.	հարկվող շահույթի նվազեցման արտոնություններ, բացառությամբ՝ գյուղատնտեսության	1,262	*0.09%*	*0.02%*
2.3.	շահութահարկի նվազեցման արտոնություններ	357	*0.03%*	*0.01%*
2.4.	ԱԱՀ-ի շեմ	14,219	*1.02%*	*0.21%*
3	**Եկամտային հարկի գծով, այդ թվում՝**	**73,860**	***5.28%***	***1.09%***
3.1.	գյուղատնտեսություն	73,860	*5.28%*	*1.09%*
Ընդամենը		**442,261**	***31.61%***	***6.55%***

Կատարված գնահատման անհրաժեշտությունը, կարևորությունը, մեթոդաբանությունը, միջազգային փորձը և ավելացված արժեքի հարկի, շահութահարկի և եկամտային հարկի գծով 2018 թվականի հարկային ծախսերի գնահատականներն ըստ հարկատեսակների և արտոնությունների հիմնական տեսակների ներկայացված են սույն բացատրագրի N 12 հավելվածում:

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

Պետական տուրքերի գծով 2019 թվականի բյուջետային մուտքերը ծրագրվել են 39.5 մլրդ դրամի չափով՝ 2018 թվականի համար հաստատված[38] 35,0 մլրդ դրամի և 2017 թվականին փաստացի ստացված[39] 36.9 մլրդ դրամի դիմաց:

Պետական տուրքերի գծով 2019 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսումները կատարվել են ըստ դրանց նախորդ տարիների փաստացի հավաքագրումների միտումների, հաշվի առնելով ՀՀ օրենսդրության մեջ կատարված առանձին փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև պետական տուրքի յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունները:

Պետական տուրքի առանձին տեսակների («Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված հիմնական խմբերի) գծով 2019 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսումները, հաշվարկման մեթոդների համառոտ նկարագրությունը, ծրագրային և փաստացի ցուցանիշների համեմատականները ներկայացվում են ստորև:

38 Այս բաժնում որպես ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի պետական տուրքի համար հաստատված ցուցանիշներ դիտարկվել են ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշման N 6 հավելվածով ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի պետական տուրքի գծով հաստատված ցուցանիշները:

39 Առանց ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից ծախս-եկամուտ գործառույթի եղանակով ստացված 248.5 մլն դրամի չափով այն եկամուտների, որոնք հաշվառվում են պետական տուրքերի կազմում:

Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար գանձվող պետական տուրքերի գծով 2019 թվականի մուտքերը գնահատվել են 1,774.2 մլն դրամի չափով՝ 2018 թվականի համար հաստատված 1,990.0 մլն դրամ և 2017 թվականի փաստացի ստացված 1,667.0 մլն դրամ ցուցանիշների դիմաց: Պետական տուրքի այս տեսակի գծով 2019 թվականի ցուցանիշը ծրագրվել է 2019 թվականի մուտքերի փորձագիտական գնահատականի չափով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար գանձվող պետական տուրքի գծով 2019 թվականի մուտքերը կանխատեսվել են 126.5 մլն դրամի չափով՝ 2018 թվականի համար հաստատված 111.9 մլն դրամի և 2017 թվականին փաստացի ստացված 110.6 մլն դրամի դիմաց: Պետական տուրքի այս տեսակի գծով 2019 թվականի ցուցանիշը ծրագրվել է 2018 թվականի սպասողական մուտքերի չափով՝ 2018 թվականի առաջին 7 ամիսների փաստացի միջին ցուցանիշի հիման վրա:

Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2019 թվականի մուտքերը կանխատեսվել են 2,030.0 մլն դրամի չափով՝ 2018 թվականի համար հաստատված 1,900.0 մլն դրամի և 2017 թվականին փաստացի ստացված 1,914.1 մլն դրամի դիմաց: Պետական տուրքի այս տեսակի գծով 2019 թվականի ցուցանիշը ծրագրվել է հաշվի առնելով փորձագիտական գնահատականը, որը ներառել է վիզային ռեժիմների դյուրացման կամ վերացման փաստը ((2017 և 2018 թվականներին առանց վիզայի ռեժիմի սահմանումը Իրանի Իսլամական Հանրապետություն՝ (երկկողմանի), Արաբական Միացյալ Էմիրություններ՝ (միակողմանի), Ճապոնիա՝ (միակողմանի), Քաթար՝ (միակողմանի), Ավստրալական Միություն, Նոր Զելանդիա, Սինգապուրի Հանրապետություն, Կորեայի Հանրապետություն (միակողմանի)):

Պետական գրանցման համար գանձվող պետական տուրքերի գծով 2019 թվականի մուտքերը կանխատեսվել են 5,155.0 մլն դրամի չափով՝ 2018 թվականի համար հաստատված 3,884.5 մլն դրամի և 2017 թվականին փաստացի ստացված 4,570.2 մլն դրամի դիմաց:

Պետական գրանցման համար գանձվող պետական տուրքերի գերակշռող մասը՝ 94.3 %-ը կամ 4,862.0 մլն դրամը 2019 թվականին ապահովվելու է պետական տուրքի հետևյալ 4 խմբերի հաշվին:

Ավտոմեքենայի պետական համարանիշ տալու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների գրանցման, ինչպես նաև պետական համարանիշ տալու և կորցրածը վերականգնելու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2019 թվականի մուտքերը

ծրագրվել են 1,812.5 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2019 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 35.2 %-ը)՝ 2018 թվականի հաստատված 1,324.0 մլն և 2017 թվականի փաստացի ստացված 1,576.0 մլն դրամի դիմաց: Պետական տուրքի այս տեսակի գծով 2019 թվականի մուտքերը ծրագրվել են 2018 թվականի սպասողական մուտքերի նկատմամբ կիրառելով փորձագիտական գնահատման աճի տեմպը, իսկ 2018 թվականի սպասողական մուտքերը գնահատվել են 2018 թվականի առաջին 7 ամիսների փաստացի միջին ցուցանիշի հիման վրա:

Հարկ է նշել, որ պետական տուրքի նշված տեսակի մուտքերի կանխատեսումներում հաշվի են առնվել պետական համարանիշերի պահանջարկի ավելացումը՝ պայմանավորված համարանիշերի ձևաչափերում տառատեսակների փոփոխությամբ, ավտոմեքենաների ներմուծման, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների կողմից ավտոմեքենաների ձեռք բերման գործարքների աճով:

Ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) տալու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2019 թվականի մուտքերը ծրագրվել են 947.8 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2019 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 18.4 %-ը), որը 2018 թվականի հաստատված և 2017 թվականի փաստացի ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար 269.0 մլն դրամով և 133.7 մլն դրամով: Պետական տուրքի այս տեսակի գծով 2019 թվականի մուտքերը կանխատեսվել են նախորդ կետում նշված սկզբունքով:

Լիցենզառուներին տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության համապատասխան նմուշի փաստաթուղթ տրամադրելու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2019 թվականի մուտքերը ծրագրվել են 1,130.2 մլն դրամի չափով՝ (պետական գրանցումից 2019 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 21.9 %-ը) 2018 թվականի հաստատված 810.7 մլն և 2017 թվականի փաստացի ստացված 1,100.8 մլն դրամի դիմաց: Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների մասով 2018 թվականի մուտքերը կանխատեսվել են 14.3 մլն դրամի չափով՝ ելնելով փորձագիտական գնահատականներից: Ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների մասով 2019 թվականի մուտքերը կանխատեսվել են 2018 թվականի սպասողական մուտքերի չափով՝ 2018 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերի նկատմամբ կիրառելով 2014-2017 թվականների տարեկան մուտքերում առաջին 7 ամիսների մուտքերի միջինացված տեսակարար կշռի ցուցանիշը:

Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար գանձվող

պետական տուրքեր, որոնց գծով 2019 թվականի մուտքերը կանխատեսվել են 971.5 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2019 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 18.8 %-ը), 2018 թվականի համար հաստատված 840.0 մլն դրամի և 2017 թվականին փաստացի ստացված 842.6 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2019 թվականի մուտքերը ծրագրվել են 2018 թվականի սպասողական մուտքերի նկատմամբ կիրառելով փորձագիտական գնահատման աճի տեմպը, իսկ 2018 թվականի սպասողական մուտքերը գնահատվել են 2018 թվականի առաջին 7 ամիսների փաստացի միջին ցուցանիշի հիման վրա:

Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, բույսերի սորտերի, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2019 թվականի մուտքերը կանխատեսվել են 430.7 մլն դրամի չափով՝ 2018 թվականի համար հաստատված 450.0 մլն դրամի և 2017 թվականին փաստացի ստացված 414.1 մլն դրամի դիմաց: Պետական տուրքի այս տեսակի գծով 2019 թվականի մուտքերը կանխատեսվել են 2018 թվականի սպասողական ցուցանիշի նկատմամբ կիրառելով փորձագիտական գնահատման աճի տեմպը, իսկ 2018 թվականի սպասողական մուտքերը կանխատեսվել են 2018 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերի նկատմամբ կիրառելով 2017թվականի տարեկան մուտքերում 1-ին 7 ամիսների մուտքերի տեսակարար կշիռը: 2015 և 2016 թվականների փաստացի ցուցանիշները հաշվի չեն առնվել, ելնելով այն հանգամանքից, որ դրանք ներառում են 1995-1996 թվականներին Մտավոր սեփականության գործակալություն ներկայացված ապրանքային նշանների միջազգային հայտերի գործողության ժամկետի հերթական երկարաձգմամբ (ժամկետը կարող է երկարաձգվել տասը տարին մեկ՝ հաշված հայտը ներկայացնելու թվականից) պայմանավորված լրացուցիչ փաստացի մուտքեր:

Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2019 թվականի մուտքերը կանխատեսվել են 3,157.5 մլն դրամի չափով՝ 2018 թվականի համար հաստատված 2,535.0 մլն դրամի և 2017 թվականին փաստացի ստացված 2,709.0 մլն դրամի դիմաց: Պետական տուրքի այս տեսակի գծով 2019 թվականի մուտքերը ծրագրվել են 2019 թվականի մուտքերի փորձագիտական գնահատականի չափով:

Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար գանձվող պետական տուրքերի գծով 2019 թվականի մուտքերը կանխատեսվել են 11,328.5 մլն դրամի չափով՝

2018 թվականի համար հաստատված 10,430.1 մլն և 2017 թվականին փաստացի ստացված 11,380.2 մլն դրամի դիմաց: Հարկ է նշել որ 2018 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 2017 թվականի դեկտեմբերի 26-ի № ՀՕ-265-Ն օրենք, որի համաձայն հեռուստահաղորդումների եթերային հեռարձակման համար սահմանված տարեկան պետական տուրքերի դրույքաչափերում կատարվել է փոփոխություն, մասնավորապես՝ հինգ ընկերություն 20 մլն ՀՀ դրամի փոխարեն այսուհետ վճարելու է 1 մլն ՀՀ դրամ, վեց ընկերություն 10 մլն ՀՀ դրամի փոխարեն՝ 500 հազ. ՀՀ դրամ և ինը ընկերություն 1 մլն ՀՀ դրամի փոխարեն՝ 100 հազ. ՀՀ դրամ, ինչը թույլ է տալիս արձանագրել, որ 2018-2019 թվականներին պետական տուրքի նշված տեսակի գծով մուտքերը նվազելու են:

Այս խմբի պետական տուրքերի 2019 թվականի մուտքերի գերակշիռ մասը՝ 10,618.9 մլն դրամը կամ 93.7%-ը նախատեսվում է գանձել վիճակախաղերի, շահումներով խաղերի, քաղաքաշինության, պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և բնական ռեսուրսների, տրանսպորտի, էներգետիկայի բնագավառներում լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար վճարվելիք պետական տուրքերի հաշվին: Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար գանձվող պետական տուրքերի գծով կանխատեսումներն իրականացվել են՝ ելնելով օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների վերաբերյալ առկա քանակական տվյալներից, 2017 թվականի փաստացի և 2018 թվականի սպասողական մուտքերից:

Այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2019 թվականի մուտքերը կանխատեսվել են 15,435.3 մլն դրամի չափով՝ 2018 թվականի համար հաստատված 13,671.6 մլն դրամի և 2017 թվականի փաստացի ստացված 14,060.3 մլն դրամի դիմաց: Նշված պետական տուրքերից 2019 թվականի բյուջետային մուտքերի գերակշռող մասը՝ 12,441.6 մլն դրամը (80.6%), ապահովվելու է ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար գանձվող պետական տուրքի հաշվին:

ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար գանձվող պետական տուրքի գծով 2019 թվականի մուտքերը կանխատեսվել են 2018 թվականի սպասողական մուտքերի նկատմամբ կիրառելով «Զվարթնոց» օդանավակայանի կառավարչի կողմից ներկայացված Մաստեր Պլանում նախատեսված ուղևորափոխադրումների տարեկան 1.0% աճը: 2018թ սպասողականը կանխատեսվել է 2018 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերի նկատմամբ կիրառելով 2016-2017 թվականների տարեկան մուտքերում առաջին 7 ամիսների տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշը:

Պաշտոնական դրամաշնորհներ

Օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից 2019 թվականին ակնկալվում է ստանալ 39,0 մլրդ դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ, ՄԺԾԾ-ով նախատեսված 37.9 մլրդ դրամի դիմաց: Պաշտոնական դրամաշնորհների գծով ՄԺԾԾ-ով նախատեսված և Նախագծով առաջարկվող գումարների միջև 2.1 մլրդ դրամ տարբերությունը պայմանավորված է ինչպես դրամաշնորհների կազմի և ծավալի ճշգրտմամբ, այնպես էլ հաշվարկների հիմքում դրված 1 ԱՄՆ դոլարի և 1 եվրոյի դրամային փոխարժեքների փոփոխություններով (նշված ցուցանիշները ՄԺԾԾ-ի հաշվարկներում կազմել են համապատասխանաբար 480.23 և 591.02 դրամ, Նախագծում՝ 483.38 և 560.62 դրամ): Յուրաքանչյուր դեպքում պաշտոնական դրամաշնորհները ծրագրվում են ծրագրավորման պահին առկա համաձայնագրերի կամ դոնորների հետ ձեռքբերված նախնական հստակ համաձայնությունների հիման վրա:

Մասնավորապես, 2019 թվականին պաշտոնական դրամաշնորհների ստացում է նախատեսվում՝

Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակություն պաշտոնական դրամաշնորհային (չկապակցված դրամաշնորհներ) ծրագրերից՝ 16.0 մլն եվրո կամ 8.9 մլրդ դրամ:

Նպատակային օժանդակություն պաշտոնական[40] դրամաշնորհային (կապակցված դրամաշնորհներ) ծրագրերից՝ 62.2 մլն ԱՄՆ դոլար կամ 30.1 մլրդ դրամ, որից՝

1) Ռուսաստանի Դաշնության աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ 13.5 մլն ԱՄՆ դոլար կամ 6.5 մլրդ դրամ,
2) Եվրոմիության աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակ-ներում՝ 16.4 մլն ԱՄՆ դոլար կամ 7.9 մլրդ դրամ,
3) ԳԴՀ զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ 7.6 մլն ԱՄՆ դոլար կամ 3.7 մլրդ դրամ,
4) Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ 4.7 մլն ԱՄՆ դոլար կամ 2.3 մլրդ դրամ,

---

40 Որոշակի ծախսային ծրագրերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ: Նպատակային պաշտոնական դրամաշնորհային ծրագրերի գծով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծի ցուցանիշների մանրամասները ներկայացված են նախագծի N 1 հավելվածի N 15 աղյուսակում:

5) Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ 9.3 մլն ԱՄՆ դոլար կամ 4.5 մլրդ դրամ,
6) Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքի ծրագրի (3-րդ տրանշ) շրջանակներում՝ 4.9 մլն ԱՄՆ դոլար կամ 2.4 մլրդ դրամ,
7) Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ 2.7 մլն ԱՄՆ դոլար կամ 1.3 մլրդ դրամ,
8) Այլ դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ 3.1 մլն ԱՄՆ դոլար կամ 1.5 մլրդ դրամ:

Այլ եկամուտներ

Նախագծով այլ եկամուտների գծով մուտքերը 2019 թվականի համար ծրագրվել են 52.4 մլրդ դրամի չափով, որից 25.9 մլրդ դրամը արտաբյուջետային ծրագրերի գծով, 2018 թվականի համար ճշտված 60.0 մլրդ դրամի և 2017 թվականի փաստացի 65.2 մլրդ դրամի դիմաց:

2018 թվականի համար հաստատված ցուցանիշի նկատմամբ (առանց արտաբյուջետային ծրագրերի) 2019 թվականի ծրագրային ցուցանիշի աճը հիմնականում պայմանավորված է բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում գանձապետական միասնական հաշվի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների գծով մուտքերով, որոնք հիմնականում ձևավորվում են ՀՀ կենտրոնական բանկում ավանդադրվող՝ տվյալ տարվա բյուջեի կատարման ընթացքում ժամանակավորապես ազատ բյուջետային միջոցներից:

Վերը նշված գործոնի ազդեցությունից բացի, 2018 թվականի համար հաստատված ցուցանիշի նկատմամբ 2019 թվականի ծրագրային ցուցանիշի աճի գործոններից մեկն էլ իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինների գծով մուտքերն են:

Ընդհանուր առմամբ այլ եկամուտների գծով 2019 թվականի ծրագրային ցուցանիշները 2017 թվականի փաստացի, 2018 թվականի հաստատված, ինչպես նաև 2019 թվականի համար ՄԺԾԾ-ով հաստատված ցուցանիշների հետ համեմատելիս պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ առանձին եկամտատեսակներ ձևավորվում են արտարժութային հիմքով, որի արդյունքում արտարժույթի փոխանակային արժեքների փոփոխությունները ևս ազդում են ստացվող համապատասխան գումարների վրա:

Այլ եկամուտների կազմում հաշվառվող առանձին եկամտատեսակների գծով 2019 թվականի մուտքերը ծրագրվել են՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները, նախորդ տարիների մուտքերի հավաքագրման միտումները, ինչպես նաև ընթացիկ տարվա անցած ժամանակահատվածի փաստացի մուտքերը:

Ստորև ներկայացվում են 2019 թվականի այլ եկամուտների գծով կանխատեսվող մուտքերի՝ 2018 թվականի հաստատված և 2017 թվականի փաստացի մուտքերի նկատմամբ համեմատականը, հաշվարկներում կիրառված մեթոդաբանության համառոտ նկարագրությունը:

Պետական հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի (բացառությամբ հողի) վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարները 2019 թվականի համար կանխատեսվում են շուրջ 3,192.6 մլն դրամ, 2018 թվականի համար հաստատված 2,343.6 մլն դրամի և 2017 թվականին փաստացի ստացված 2,042.5 մլն դրամի դիմաց: Կանխատեսումներում հիմք են ընդունվել պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված տեղեկությունները վարձակալական պայմանագրերի համաձայն 2018, 2019 թվականներին վճարվելիք վարձավճարների վերաբերյալ, ինչպես նաև համապատասխան բյուջետային փաստացի մուտքերի գծով գանձապետական տվյալները:

Բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում գանձապետական միասնական հաշվի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարներից, իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժիններից 2019 թվականին ակնկալվում են 3,432.0 մլն դրամի չափով մուտքեր: Մասնավորապես.

- Բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում պետական բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների գծով մուտքերը ծրագրվել են 2,160.0 մլն դրամ՝ 2018 թվականի համար հաստատված 1,570.0 մլն դրամի և 2017 թվականի փաստացի ստացված 6,098.5 մլն դրամի դիմաց: 2019 թվականի մուտքերն ապահովվելու են հիմնականում ի հաշիվ ժամանակավորապես ազատ բյուջետային միջոցները ՀՀ կենտրոնական բանկում ավանդադնելու դիմաց ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքված «Հաշվի սպասարկման մասին» պայմանագրի հիման վրա վճարվելիք տոկոսավճարների:
- Իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժիններից 2019 թվականին ակնկալվում են 1,272.0 մլն դրամի չափով մուտքեր՝ 2018 թվականի համար հաստատված 784.5 մլն դրամի և 2017 թվականին փաստացի ստացված 833.1 մլն դրամի դիմաց: Շահաբաժինների գծով 2019 թվականի

կանխատեսվող մուտքերը ծրագրելիս հաշվի է առնվել ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 202-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն պետական մասնակցության դիմաց պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժինների հաշվարկման բազայի 50%-ի չափով պետական բյուջե կատարվելիք մասհանումների սահմանումը:

Պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարները 2019 թվականին կանխատեսվում են 11,414.9 մլն դրամի չափով: Մասնավորապես.

- ՀՀ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործումից 2018 թվականին ակնկալվում է ստանալ 11,293.3 մլն դրամ, որը ծրագրվել է՝ հաշվի առնելով համապատասխան պայմանագրերով նախատեսված դրույթները: Մասնավորապես, 2019 թվականին տոկոսավճարների գծով մուտքերն ապահովվելու են ի հաշիվ «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր», «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր», «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ներին, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ին և այլ կազմակերպություններին տրամադրված վարկերի դիմաց հաշվարկված տոկոսավճարների:
- Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտին տրամադրված վարկերի գծով 2019 թվականի բյուջետային մուտքերը կգոյանան Վրաստանի Հանրապետությանը տրամադրված վարկի սպասարկման տոկոսավճարներից, որոնք կկազմեն 251.5 հազ. ԱՄՆ դոլար կամ մոտ 121.6 մլն դրամ:

Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից 2019 թվականի մուտքերը ծրագրվել են 3,031.2 մլն դրամի չափով՝ 2018 թվականի համար ծրագրված 2,050.1 մլն դրամի և 2017 թվականին փաստացի ստացված 2,008.0 մլն դրամի դիմաց: Կանխատեսումները կատարված են ըստ համապատասխան իրավական հիմքով վարչական պատժամիջոց կիրառող պետական կառավարման մարմինների՝ հաշվի առնելով պատժամիջոցների գծով 2016-2018 թվականների մուտքերի հավաքագրման միտումները, ինչպես նաև այս բնագավառում իրականացված օրենսդրական փոփոխությունները:

Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտների գծով 2019 թվականի պետական բյուջեի մուտքերը գնահատվել են 4,417.9 մլն դրամի չափով՝ 2018

թվականի համար ծրագրված 4,176.1 մլն դրամի և 2017 թվականին փաստացի ստացված 4,145.4 մլն դրամի դիմաց: Եկամուտների այս խմբի մեծ մասը կազմում են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից 2019 թվականին մատուցվելիք ծառայությունների դիմաց ստացվելիք վճարները՝ 3,991.2 մլն դրամի չափով և հայկական երկաթուղու համակարգի վերաբերյալ կոնցեսիոն պայմանագրով նախատեսված տարեկան վճարը՝ 352.0 մլն դրամի չափով:

Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների գծով 2019 թվականի պետական բյուջեի մուտքերը գնահատվել են 1,027.0 մլն դրամի չափով՝ ելնելով նախորդ տարիների փաստացի մուտքերի միտումներից:

Մ Ա Ս III – Բ. Ծ Ա Խ Ս Ե Ր Ի Կ Ա Ն Խ Ա Տ Ե Ս Ո Ւ Մ

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրավորվել է շուրջ 1,642.2 մլրդ դրամի չափով՝ ներառյալ արտաբյուջետային հաշվի միջոցներով իրականացվող ծախսերը՝ շուրջ 28.0մլրդ դրամ: Ծախսերի ամբողջ ծավալի 86.6 %-ը կամ 1,422.7 մլրդ դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին, 13.3 %-ը կամ 219.5 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերին: ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծի ծախսային մասը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի ճշտված մակարդակի համեմատ ավելացել է շուրջ 126.5 մլրդ դրամով:

Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերի ծավալները, կազմն ու կառուցվածքը ձևավորվել են ելնելով 2019 թվականի մակրոտնտեսական կանխատեսումներից, գների և սակագների կանխատեսվող ցուցանիշներից, հանրապետությունում տնտեսական հարաբերությունների բնականոն ընթացքը խաթարող նոր բյուջետային պարտքերի չառաջացման անհրաժեշտությունից ու առանձին ծախսատեսակների գծով մշակված բյուջետային նորմատիվներից:

«Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծը կազմվել է Ծրագրային բյուջետավորման ձևաչափով՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համահունչ, ապահովելով ծրագրային բյուջետավորման սկզբունքների ամբողջական ներդրումը: Ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման հիմնական նպատակն է բարելավել հանրային ծախսերի առաջնահերթությունների սահմանումը և բարձրացնել հանրային ֆինանսների կառավարման թափանցիկությունը, հաշվետվողականությունը, արդյունավետությունը և արդյունքայնությունը, ինչպես նաև բյուջետային տեղեկատվությունը ներկայացնել այնպիսի ձևաչափով, որը հնարավոր կդարձնի վերահսկել, թե ինչպես է բյուջեն օգտագործվում ընդունված քաղաքականություններն իրականացնելու համար: Փոփոխությունները ֆորմալ առումով ուղղված են ծրագրային դասակարգումը՝ որպես բյուջետային հատկացումների հիմնական դասակարգում սահմանելուն, բյուջետային գործընթացի բոլոր փուլերում (բյուջեի պլանավորում, կատարում, հաշվետվողականություն):

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշներն ու ծախսային ծրագրերի գծով վերջնական արդյունքային ցուցանիշները ներկայացված են համապատասխանաբար սույն բացատրագրի NN 15 և 16 հավելվածներում: Ստորև ներկայացվում են ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծվող ծախսերի ծրագրավորման հիմքում դրվող հիմնական սկզբունքները և առանձնահատկությունները:

Պետական իշխանության մարմինների պահպանման ծախսեր

Պետական իշխանության մարմինների պահպանման ծախսերը ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծում ծրագրավորվել են հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 10-ի N 797-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2019-2021 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրային ցուցանիշները և ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հավանություն տրվեց նոր կազմավորված Կառավարության ծրագրային դրույթները:

Պետական իշխանության մարմինների պահպանման գծով ՀՀ 2019 թվականի բյուջեի նախագծի ֆինանսական ցուցանիշները ծրագրավորելիս հաշվի են առնվել ինչպես պետական կառավարման համակարգի բարեփոխումները, այնպես էլ գործող օրենսդրության պահանջները: Բացի այդ, նախագծում արտացոլվել են պետական կառավարման ոլորտի ծախսերի օպտիմալացման ուղղությամբ ՀՀ կառավարության վարվող քաղաքականության շրջանակում իրականացվող միջոցառումներից բխող փոփոխությունները, ինչը միտված է բյուջետային ծախսերի արդյունավետության և հասցեականության բարձրացմանը, կառավարության կառուցվածքի և կառավարման ապարատի պահպանման ծախսերի հնարավորինս օպտիմալացմանը:

2015 թվականին Հայաստանի Հանրապետությունում նոր Սահմանադրության ընդունմամբ անցում կատարվեց խորհրդարանական կառավարման համակարգին, ինչը նշանակում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների լիազորությունների նոր շրջանակների սահմանում:

Ընդհանուր առմամբ, ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծում պետական իշխանության մարմինների պահպանման ծախսերի ծրագրավորումը բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով.

2015 թվականի Սահմանադրական փոփոխություններից հետո ձեռնարկվել էր համապատասխան օրենսդրական փոփոխությունների և ենթաօրենսդրական կարգավորումների նախապատրաստումը և համաձայնեցումը նոր սահմանադրության դրույթներին:

Պետական կառավարման համակարգի կառուցվածքային և գործառութային փոփոխությունները նոր օրենսդրական կարգավորումների համատեքստում 2018 թվականի մարտի 23-ին Ազգային ժողովի կողմից ընդունվեցին մի շարք օրենքներ, որոնցից ստորև առանձնացվել են նրանք, որոնք անմիջականորեն առնչվում են պետական կառավարման համակարգին և որոշակի ազդեցություն են ունեցել պետական կառավարման համակարգի ծախսերի ծրագրավորման վրա: Այսպես.

1" **«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին»** օրենքով, մասնավորապես, սահմանվել է Կառավարության կազմը և կառուցվածքը, որի համաձայն Կառավարությունը կազմված է վարչապետից, առաջին փոխվարչապետից, երկու փոխվարչապետներից և նախարարներից, իսկ Կառավարության կառուցվածքում ընդգրկվում են 17 նախարարություն, կառավարության կառուցվածքից հանվել է Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարությունը:

2. **«Պետական կառավարման համակարգի մարմինների մասին»** օրենքով սահմանվում է պետական կառավարման համակարգի մարմինների շրջանակը և կազմավորման կարգը: Մասնավորապես սահմանվում է, որ պետական կառավարման համակարգի մարմիններն են՝ նախարարությունները, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա մարմինները, ինչպես նաև մի շարք նոր կարգավորումներ, կապված համակարգի առանձին մարմինների կարգավիճակի և ենթակայության փոփոխության հետ

3. **«Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին»** օրենքով (23.03.2018թ., ՀՕ-207-Ն) կարգավորվում են պետական մարմնում և ենթակա պետական մարմնում կառավարչական իրավահարաբերությունները, ինչպես նաեւ քաղաքացիական իրավահարաբերություններին պետական մարմնի և ենթակա պետական մարմնի մասնակցության հիմնական պայմանները: Ընդ որում, սույն օրենքով սահմանվում է, որ Նախարարությանը ենթակա մարմնի ենթակայությունը համապատասխան նախարարությանը սահմանում է Կառավարությունը, ինչը սահմանվել է Կառավարության 2018 թվականի «Նախարարությանը ենթակա մարմնի ենթակայությունը սահմանելու մասին» N 580-Ա որոշմամբ:

4" **«Հանրային ծառայության մասին»** օրենքով (23.03.2018թ., ՀՕ-206-Ն) սահմանվում են հանրային ծառայության սկզբունքները, հանրային ծառայողի պաշտոնների դասակարգումը, նրանց առանձնահատկությունները մասնավորապես սահմանվում են հանրային ծառայության հետևյալ հիմնական հասկացությունները՝

- ***պետական ծառայությունը*** *մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված լիազորությունների իրականացմանը*

- ***հանրային պաշտոնը*** *դասակարգվում է խմբերի՝ պետական և համայնքային:*

- ***պետական պաշտոնները*** *դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական:*

5" **«Քաղաքացիական ծառայության մասին»** օրենքով (23.03.2018թ., ՀՕ-205-Ն) կարգավորվում են քաղաքացիական ծառայության՝ որպես պետական ծառայության առանձին

տեսակի հետ կապված հարաբերությունները: Վերջին փոփոխությամբ նախատեսվում է, որ օրենքի գործողությունը տարածվում է օրենսդիր, գործադիր, դատական իշխանության մարմիններում, Հանրապետության նախագահի աշխատակազմում, դատախազությունում, քննչական մարմիններում, անկախ պետական մարմիններում, ինքնավար մարմիններում, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա պետական մարմիններում քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձանց վրա: Ընդ որում, պետական ծառայության այլ օրենքներով առանձնահատկություններ նախատեսող ծառայություններում (մարմիններում) աջակցող մասնագիտական գործառույթներ իրականացնող ծառայողները ևս քաղաքացիական ծառայողներ են:

Օրենքով սահմանվում են նաև քաղաքացիական ծառայությանն առնչվող մի շարք նոր կարգավորումներ, մասնավորապես.

-կադրերի ռեզերվում գրանցված լինելու ժամանակահատվածում (վեց ամիս) քաղաքացիական ծառայողը օրենքով սահմանված կարգով երեք ամիս ստանում է վարձատրություն այն համապատասխան մարմնից, որտեղ զբաղեցրել է քաղաքացիական ծառայության պաշտոն, (նախկինում ստանում էր վեց ամիս Քաղաքացիական ծառայության խորհրդից):

- քաղաքացիական ծառայության պաշտոնների դասակարգվել են ղեկավար (5 ենթախումբ) և մասնագիտական(8 ենթախումբ) պաշտոնների խմբերի,

- քաղաքացիական ծառայության ղեկավարումը և համակարգի միասնականությունը ապահովում է վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը, (գործելու է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի փոխարեն):

«Պետական պաշտոններ պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (23.03.2018թ., ՀՕ-209-Ն) օրենքով փոփոխություններ աշխատավարձի հաշվարկման գործակիցները սահմանող հավելվածներում՝ այն համապատասխանեցնելով նոր օրենսդրությանը: Ընդհանուր առմամբ, հիշյալ օրենքում կատարվեցին փոփոխություններ և լրացումներ, որոնց անհրաժեշտությունը բխում է Սահմանադրական փոփոխությունների արդյունքում ընդունված օրենսդրական կարգավորումներից:

«Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (07.03.2018թ., ՀՕ-143-Ն) օրենքով կատարվեցին մի շարք սկզբունքային լրացումներ կապված Հանրապետության Նախագահի, Վարչապետի աշխատակազմերի, ինչպես նաև

Պաշտոնաթող նախագահի գրասենյակի պահպանման առանձնահատկությունների հետ, ապա ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ ընդունվեց պաշտոնաթող հանրապետության նախագահի գրասենյակի գործունեության ֆինանսավորման կարգը :

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ (23.03.2018թ., ՀՕ-208-Ն) սահմանվում է, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հանդիսանում է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի իրավահաջորդը:

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-259-Ն օրենքով նախկինում գործող գնումների բողոքարկման խորհրդի փոխարեն գործողության մեջ է դրվում «գնումների հետ կապված բողոքներ քննող անձ» անկախ մարմնի ինստիտուտը, որն օժտված է անկախ մարմնի իրավասություններով և շարունակելու է գործել որպես ֆինանսների նախարարությանը ենթակա մարմին:

Վերը նշված կառավարման համակարգի օրենսդրական կարգավորումների արդյունքում պետական կառավարման համակարգի մարմինների կանոնադրությունները համապատասխանեցվեցին նոր օրենսդրությանը և հաստատվեցին դրանց կառուցվածքները: Այդ կապակցությամբ, հիշյալ մարմիններում առանձնացվեցին հիմնական մասնագիտական և աջակցող մասնագիտական ստորաբաժանումները՝ ըստ համապատասխան դրանց նշանակության, առանձնացված ստորաբաժանումների կարգավիճակով գործող գործակալությունները վերակազմակերպվեցին համապատասխան մարմինների կառուցվածքում ներառված գրասենյակների, տեսչական գործառույթներ ունեցող առանձնացված ստորաբաժանումները կամ ենթակայությամբ գործող մարմինները վերակազմակերպվեցին և ստեղծվեցին ՀՀ կառավարությանը ենթակա տեսչական մարմինները:

Այսպես, նախկինում առանձին նախարարությունների կառուցվածքներում գործող տեսչությունների հիմքի վրա ստեղծվել և որպես Կառավարությանը ենթակա մարմիններ գործելու են վեց տեսչական մարմիններ:

Օրենքով սահմանված կարգով պետական բյուջեում տեսչական մարմինների պահպանման ծախսերը արտացոլվում են առանձին տողերով:

Ընդունվեց ՀՀ Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքը, որով դատական իշխանության համակարգում ստեղծվեց Բարձրագույն դատական խորհրդի ինստիտուտը՝ որպես դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորող անկախ պետական մարմին: Դատարանների և բարձրագույն դատական խորհրդի ֆինանսավորումն

իրականացվում է պետական բյուջեից՝ ըստ յուրաքանչյուր դատարանի և Բարձրագույն դատական խորհրդի համար առանձին տողերով:

Էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացում.

Պետական կառավարման համակարգի ժամանակակից բարեփոխման ու արդիականացման կարևորագույն միջոց է էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրումն ու զարգացումը:

Այս ուղղությամբ, պետական կառավարման մարմիններում ներդրվել են էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը, հաշվապահական հաշվառման էլեկտրոնային համակարգերը, մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգը, ֆինանսների կառավարման և գնումների գործընթացի հետ կապված ծրագրերն ու համակարգերը, ինչպես նաև առանձին մարմիններում ըստ անհրաժեշտության ներդրվել են տվյալների մշակման ու ամփոփման բազմաթիվ էլեկտրոնային ծրագրեր:

Այս կապակցությամբ ներդրվել են մի շարք էլեկտրոնային կառավարման ծրագրեր, ինչը հնարավորություն է ընձեռնել ընդլայնել «մեկ պատուհանի» սկզբունքով բնակչությանը ծառայությունների մատուցումը, զգալիորեն կրճատել ծառայությունների մատուցման ժամկետները, նպաստել որակի բարձրացմանը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը: Այս սկզբունքի կիրառմամբ են ստեղծվում համալիր սոցիալական կենտրոնները՝ ինտեգրված սոցիալական ծառայություններ մատուցելու նպատակով:

Պետական իշխանության մարմինների պահպանման ծախսերի ծրագրավորումը

Ընդհանուր առմամբ, ՀՀ պետական բյուջեում պետական իշխանության մարմինների պահպանման ծախսերի ծրագրավորվող մակարդակի վրա ազդող գործոններն են՝

- պետական կառավարման համակարգի բարեփոխումներից բխող օրենսդրական փոփոխությունները,

- պետական կառավարման համակարգի կառուցվածքային և գործառութային փոփոխությունները,

- պետական իշխանության մարմինների աշխատողների թվաքանակի փոփոխությունը:

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծում պետական իշխանության մարմիններ-ի պահպանման ծախսերի ծրագրավորումը բնորոշվում է հետևյալ առանձնահատկություն-ներով՝

ՀՀ վարչապետի 2018 թվականի մայիսի 25-ի N 564-Լ որոշմամբ հաստատվել է վարչապետի աշխատակազմի կանոնադրությունը և կառուցվածքը, որի համաձայն Վարչապետի աշխատակազմում, բացի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում-ներից, ներառված են նաև թվով յոթ գրասենյակներ:

«Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքով համակարգում ստեղծվել են նոր մարմիններ, այսպես՝ Վարչապետի ենթակայությամբ՝ Պետական վերահսկողական ծառայությունը, իսկ նախարարությունների ենթակայությամբ՝ Պրոբացիայի ծառայությունը, Բարձրագույն որակավորման կոմիտեն, Անտառային կոմիտեն և Լեզվի կոմիտեն, որոնց ծախսերը պետական բյուջեում արտացոլվում են առանձին տողերով:

«ՀՀ դատական օրենսգրքի», «Սահմանադրական դատարանի մասին», «Դատախազության մասին», «Հաշվեքննիչ պալատի մասին», «ՀՀ հատուկ քննչական ծառայության մասին» և «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան ՀՀ դատարանների, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ դատախազության, ՀՀ հաշվեքննիչ պալատի, ՀՀ հատուկ քննչական ծառայության և ՀՀ քննչական կոմիտեի բնականոն գործունեության ապահովման համար չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով նախատեսվում են պահուստային ֆոնդեր: Յուրաքանչյուր վերը նշված մարմնի պահուստային ֆոնդը ներկայացվում է պետական բյուջեի առանձին տողով, ընդ որում, ֆոնդի մեծությունը հավասար է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով տվյալ մարմնի գծով նախատեսված ընդամենը ծախսերի կամ աշխատավարձի ֆոնդի երկու տոկոսին:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի (09.06.2010թ. ՀՕ-63-Ն) պահանջներից ելնելով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) ոլորտում կիրառվելիք ապահովագրության վճարների նվազագույն և առավելագույն չափերը՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են հատկացումներ ծառայողական ավտոմեքենաների ապահովագրության համապատասխան վճարներ կատարելու համար:

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծում օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների պահպանման ծախսերը հաշվարկվել են հիմք ընդունելով 17665 հաստիքային միավորների քանակը, որը 2018 թվականի համեմատ պակասել է 21 միավորով: Թվաքանակի փոփոխությունը հիմնականում պայմանավորված է վերոնշված մարմինների վերակազմակերպմամբ, նոր մարմինների ստեղծմամբ, ինչպես նաև պետական իշխանության առանձին մարմիններում կառուցվածքային փոփոխությունների հետևանքով աշխատողների թվաքանակի կարգավորմամբ:

ՀՀ պետական իշխանության մարմինների աշխատողների թվաքանակի փոփոխությունը արտացոլված է սույն բացատրագրի N 2ա աղյուսակում:

Համաձայն «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի՝

մարդահամարն անցկացվում է 10 տարին մեկ անգամ: 2019 թվականի համար նախատեսվել են 2020 թվականին անցկացվելիք մարդահամարի նախապատրաստման փուլում փորձնական մարդահամարի անցկացման հետ կապված ծախսեր:

Ծախսերի ծրագրավորման սկզբունքները ըստ առանձին ծախսային ուղղությունների.

Աշխատավարձի ֆոնդ

Պետական իշխանության մարմինների պահպանման ծախսերում աշխատավարձի ֆոնդում ներառվում են ինչպես աշխատողներին վճարվող հիմնական աշխատավարձերը, հավելումներն ու հավելավճարները, այնպես էլ պարգևատրման և դրամական խրախուսման համար օրենսդրությամբ նախատեսված միջոցները: Աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է օրենքի «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի դրույթներին և ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» N 737-Ն որոշման պահանջներին համապատասխան:

2018 թվականի համար աշխատավարձի ֆոնդի հաշվարկման հիմքում բազային աշխատավարձի չափ է ընդունվել 66140.0 դրամը:

Աշխատավարձի ֆոնդը ծրագրավորվել է հաշվի առնելով պետական պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ գործող օրենսդրությամբ նախատեսված հավելավճարները (դասային, դիվանագիտական աստիճանների, կոչման, աշխատանքային ստաժի և այլն), հավելումները (բարձր լեռնային, ծանր, վնասակար աշխատանքների համար և այլն) և պետական ծառայողների հիմնական աշխատավարձի բնականոն աճերը, ինչպես նաև ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չափը չգերազանցող աշխատավարձ ստացողների համար 1000 դրամի չափով դրոշմանիշային վճարի ապահովմամբ պայմանավորված ծախսերը:

Աշխատավարձի ֆոնդում նախատեսվել է նաև պետական ծառայողների պարգևատրման ֆոնդ՝ նրանց 2018 թվականի աշխատավարձի ֆոնդի 10 տոկոսի չափով:

Էներգետիկ ծառայությունների՝ էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսերը ծրագրավորվել են ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրա-

պետության պետական բյուջեի նախագծում Հայաստանի Հանրապետության պետական մարմինների գծով բյուջետային ծախսերի առանձին տեսակների ջեռուցման, վառելիքի և էլեկտրաէներգիայի ձեռքբերման ծավալների հաշվարկման հիմքում դրվող նորմաները հաստատելու մասին» N 629-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով գործող սակագները (բնական գազի 1 մ^3 սակագինը՝ 139.0 դրամ, իսկ ամսական 10.0 հազար մ^3 և ավելի օգտագործելու դեպքում՝ յուրաքանչյուր հազար մ^3 սակագինը 242.1 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, էլեկտրաէներգիայինը՝ 1 կվտ/ժ-ը 44.98 դրամ): Էլեկտրաէներգիայի ծախսերը ծրագրավորվել են սահմանված նորմաներով հաշվարկվածի 65%-ի չափով:

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ

ՀՀ պետական իշխանության մարմինների կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններից օգտվելու վարձի վճարման ծախսերը հաշվարկվել են գործող սակագներով՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր հաստիքային միավորի համար սահմանված նորմատիվը՝ օրական 30 լիտր (հիմք ՀՀ կառավարության 23.09.2004թ. N 1536-Ն որոշում): Բացի այդ, ՀՀ դատարանների համար ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 12-ի N 732-Ա որոշման պահանջներին համապատասխան նախատեսվել է նաև լրացուցիչ ծախս՝ ելնելով դատական նիստերի դահլիճների ընդհանուր մակերեսի մեծությունից:

Կապի ծառայությունների վճարները հաշվարկվել են ՀՀ կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կապի և կոմունալ ծախսերի նորմաներ սահմանելու մասին» N 1536-Ն և ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում կապի ծառայությունների նորմաները և հեռախոսակապից օգտվելու օրինակելի ներքին կանոնները հաստատելու մասին» N 1956-Ն որոշումների պահանջներին համապատասխան: 2018 թվականի համար հեռախոսային խոսակցությունների տարեկան սահմանաչափը ծրագրավորվել է սահմանված նորմայի 30%-ի չափով:

Կապի ծախսերը հաշվարկվել են հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում գործող կապի առանձին օպերատորների կողմից մատուցվող ծառայությունների սակագները՝ ըստ համապատասխան մարմինների հետ կնքված պայմանագրերի:

Գործուղումների և ծառայողական ուղևորությունների ծախսերը հաշվարկվում են ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմաներով:

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծում պահպանվել է արտասահմանյան պաշտոնական գործուղումների հետ կապված ծախսերի գծով հատկացումները ՀՀ պետական բյուջեում առանձին տողով արտացոլվող կենտրոնացված ֆոնդում ներառելու սկզբունքը:

Ծառայողական ավտոմեքենաների պահպանման ծախսերը ծրագրավորվել են ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման մասին» N 194-Ն որոշմամբ հաստատված ՀՀ պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման կարգի համաձայն յուրաքանչյուր մարմնի համար հաշվարկվող (բացառությամբ հարկային, մաքսային և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մարմինների սպասարկման համար նախատեսված ծառայողական ավտոմեքենաների) սահմանաքանակին համապատասխան՝ ընդամենը 834 ավտոմեքենայի համար, ընդ որում՝ 1 մեքենայի պահպանման տարեկան ծախսը հաշվարկվել է 1200.0 հազ. դրամի չափով (պահպանվել է նախորդ տարիների մակարդակը):

ՀՀ պետական իշխանության մարմինների ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակի փոփոխությունը արտացոլված է սույն բացատրագրի N 2բ աղյուսակում:

ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման ծախսերը 2019 թվականի համար ծրագրավորվել են 10,276.3 մլն դրամի չափով, որը 2018 թվականի մակարդակը գերազանցում է 135.8մլն դրամով: Ծախսերի աճը պայմանավորված է Իսրայելում ՀՀ դեսպանի նշանակման, Վահե Դեմիրճյանին ԵԽ մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման վարչություն գործուղելու կապակցությամբ և «Դիվանագիտական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան արձակուրդն անցկացնելու համար ճանապարհածախսի վճարման հետ կապված անհրաժեշտ միջոցների նախատեսմամբ:

2019 թվականի պետական բյուջեում միջոցներ են նախատեսվել նաև ընթացիկ տարվա տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների համար: Այդ կապակցությամբ ծախսերը ծրագրավորվել են 734,3 մլն դրամի չափով:

2019 թվականի համար հերթական՝ 2020 թվականին անցկացվելիք մարդահամարի նախապատրաստման շրջանակներում փորձնական մարդահամարի կազմակերպման հետ կապված ծախսերը ծրագրավորվել են շուրջ 149.6 մլն դրամի չափով:

Ծրագրավորված ծախսերի համեմատական վերլուծությունը

ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների պահպանման ծախսերի ընդհանուր գումարը (առանց այս ոլորտում իրականացվող նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերի) ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծում ծրագրա-

վորված է 104,742.9 մլն դրամի չափով, որը 2017 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2018 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների նկատմամբ կազմում է համապատասխանաբար 120,2 և 109,6 տոկոս: Նշված ցուցանիշների համեմատությունը արտացոլված է սույն բացատրագրի N 2 աղյուսակում: Ստորև ներկայացվում է վերը նշված ծախսերի վերծանումն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հիմնական հոդվածների:

Աշխատավարձի ֆոնդ

Օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների աշխատողների աշխատավարձի ֆոնդը 2019 թվականի համար ծրագրավորվել 74,495.0 մլն դրամի չափով, որը 2018 թվականի ծրագրավորվածից ավել է, 9,104.7 մլն դրամով:

Աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի դրույթներին և ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» N 737-Ն որոշման պահանջներին համապատասխան: Միաժամանակ, բոլոր մարմինների համար՝ բացառությամբ արտաբյուջետային հաշիվներ ունեցողների, նախատեսվել է պարգևատրման ֆոնդ, որը պետական ծառայողների պարգևատրման ֆոնդի հետ միասին կազմում է հիմնական աշխատավարձի ֆոնդի 30%-ը: Արտաբյուջետային հաշիվներ ունեցողների աշխատողների պարգևատրման համար նույն սկզբունքով միջոցներ նախատեսվել են արտաբյուջետային միջոցների հաշվին:

Էներգետիկ ծառայությունների ծախսերը (ներառում է էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը) ծրագրավորվել են 2,199.3 մլն դրամի չափով, որը 2018 թվականի ծրագրավորվածից ավելի է 34.2 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է վերոնշված կառուցվածքային փոփոխություններով, ինչպես նաև առանձին մարմիններում այդ ծախսերի կանոնակարգմամբ:

Կոմունալ ծառայությունների վճարները ներառում է ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև միջատազերծման հետ կապված ծախսերը: Նշված ծախսերը ծրագրավորվել են 98.8 մլն դրամի չափով, որը 2018 թվականի ծրագրավորվածից ավելի է 11.7 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է վերոնշված կառուցվածքային փոփոխություններով:

Կապի ծառայությունների գծով ծախսերը ծրագրավորվել է 2,032,2 մլն դրամի չափով, այն 2018թ. ծրագրավորվածից ավելի է 55.9 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է վերոնշված կառուցվածքային փոփոխություններով:

Ապահովագրական ծախսերը ծրագրավորվել են 37.0 մլն դրամի չափով՝ ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակին համապատասխան:

Գույքի և սարքավորումների վարձակալության գծով ծախսերը ծրագրավորվել են ներկայացված պայմանագրերին համապատասխան՝ 341,8 մլն դրամ:

Գործուղումների և ծառայողական ուղևորությունների ծախսերը ծրագրավորվել են 2,381,2 մլն դրամի չափով, որը 2018 թվականի ծրագրավորվածից պակաս է 244.6 մլն դրամով: Ներքին գործուղումների համար նախատեսված ծախսերը աճել են՝ 16.9 մլն դրամով, իսկ արտասահմանյան գործուղումների գծով նախատեսված ծախսերը պակասել են շուրջ 261,4 մլն դրամով՝ պայմանավորված այդ ծախսերի կանոնակարգմամբ:

Պայմանագրային ծառայությունների ձեռք բերման ծախսերը ծրագրավորվել են 2,674,5 մլն դրամի չափով, որը 2018 թվականի մակարդակից ավելի է 35,7 մլն դրամով: Պայմանագրային ծառայությունները ներառում են՝ վարչական ծառայությունները, համակարգչային ծառայությունները, աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունները, տեղեկատվական ծառայությունները, կառավարչական ծառայությունները, կենցաղային և հանրային սննդի ծառայությունները, ներկայացուցչական ծախսերը և ընդհանուր բնույթի այլ ծառայությունները:

Նյութեր - ծախսերը ծրագրավորվել են 989,9 մլն դրամի չափով, որը 2018 թվականի ծրագրավորվածից պակաս է 25.4 մլն դրամով: Նյութերը ներառում են գրասենյակային նյութերի, գյուղատնտեսական ապրանքների, կենցաղային և հանրային սննդի նյութերի և հատուկ նպատակային այլ նյութերի ձեռք բերման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ դատախազների, քննչական կոմիտեի ծառայողների, հատուկ քննչական ծառայողների, ՀՀ դատարանների դատական կարգադրիչների, հարկադիր կատարողների, բնապահպանական տեսուչների, հարկային և մաքսային ծառայողների մասնագիտական համազգեստների ձեռքբերման ծախսերը, որը ծրագրավորվում է հիմք ընդունելով համազգեստները կրելու օրենսդրությամբ սահմանված ժամկետները:

Տրանսպորտային միջոցների պահպանման ծախսերը ծրագրավորվել են 1,176,7 մլն դրամի չափով, որը 2018 թվականի ծրագրավորվածից պակաս է 174.9 մլն դրամով: Այս ծախսերը տարանջատված են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման երեք հոդվածներում՝ տրանսպորտային նյութեր, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում և պարտադիր վճարներ: Նվազեցումը պայմանավորված է պետական կառավարման ապարատի ծախսերի օպտիմալացման գործընթացի շրջանակներում կրճատված 68 մեքենայի պահպանման ծախսերի կրճատմամբ, ինչպես նաև առանձին մարմիններում այս ծախսերի կանոնակարգմամբ (1 մեքենայի պահպանման ծախսը ծրագրա-

վորված է 1.2 մլն դրամի չափով):

Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին - ծախսերը ծրագրավորվել են 761.8 մլն դրամի չափով՝ «Սպասարկում» և «Կոնդի առանձնատների տնտեսություն» պետական ոչ առևտրային կազմակերպություններին պետական աջակցության համար:

Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին – ծրագրավորվել է 1073.6 մլն դրամի չափով՝ ՀՀ օրենսդրությամբ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի պահպանման համար նախատեսված պետական աջակցություն:

Այլ ընթացիկ դրամաշնորհներ – 118.3 մլն դրամի չափով, որը ներառում է «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» Հիմնադրամին պետական աջակցության համար նախատեսված միջոցները (110.3 մլն դրամ), ինչպես նաև «Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան հաշվարկված հանձնաժողովի տարեկան բյուջեի մեկ տոկոսի չափով հաշվարկված գումարը (8.0 մլն դրամ), որն ուղղվելու է հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպություններին:

Այլ նպաստներ բյուջեից - ծրագրավորված է 2,002.2 մլն դրամի չափով՝ ներառում է ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորների պատգամավորական գործունեության հետ կապված ծախսերը (հիմք ընդունելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթները, նշված ծախսը նախատեսվել է յուրաքանչյուր պատգամավորի համար ամսական 50.0 հազ. դրամի չափով), «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման ծախսերը, պատգամավորների, դատավորների, դատախազների, քննիչների՝ այլ վայր գործուղվելու դեպքում բնակվարձի փոխհատուցման գումարները, յուրաքանչյուր մարզպետարանին այս հոդվածով նախատեսվող գումարները, ծառայողական պարտականությունները կատարելիս հարկադիր կատարողի կողմից հասարակական տրանսպորտից օգտվելու և անձնական օգտագործման ավտոմեքենան ծառայողական նպատակներով օգտագործելու հետ կապված ծախսերի հատուցման գումարը, ինչպես նաև պետական իշխանության առանձին մարմինների առանձնահատկություններով պայմանավորված համապատասխան ծախսերը: Բացի այդ, նախատեսված են համապատասխան միջոցներ՝ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության և համայնքային ենթակայության սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված

լիազորությունների իրականացման ֆինանսավորումն ապահովելու նպատակով:

Այլ ծախսեր - այս ծախսերում ներառված են՝ ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների, ՀՀ ռազմական կցորդների, արտասահմանում ՀՀ առևտրային ներկայացուցչությունների պահպանման ծախսերը, ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի նախագահի և ՀՀ վարչապետի ֆոնդերը, ՀՀ Նախագահի կողմից առանձին անձանց պարգևատրելու համար անհրաժեշտ մեդալների և շքանշանների պատրաստման ծախսերը, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ դատարանների, ՀՀ դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ հատուկ քննչական ծառայության և ՀՀ հաշվեքննիչ պալատի պահուստային ֆոնդերը: Այլ ծախսերը ծրագրավորվել են 12,077.5 մլն դրամի չափով, որը 2018 թվականի ծրագրավորվածից պակաս է 75,5 մլն դրամով, որը պայմանավորված է հիմնականում ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման ծախսերի 135,8 մլն դրամով ավելի նախատեսմամբ, նոր ստեղծված (Ղազախստանում և Լիբանանում) ՀՀ ռազմական կցորդների ծախսերի նախատեսմամբ՝ 72,1 մլն դրամով, առանձին մարմինների պահուստային ֆոնդերի՝ օրենսդրական փոփոխություններին համապատասխանեցմամբ:

Միաժամանակ, 2019 թվականի պետական բյուջեում չի նախատեսվել ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի վարույթում գտնվող արբիտրաժային գործերով Հայաստանի Հանրապետության շահերը պաշտպանելու համար փաստաբանական, իրավաբանական ծառայությունների գնման և արբիտրաժային դատարանի կողմից քննության համար գանձվող վճարները հատուցելու նպատակով 2018 թվականին նախատեսված 386,5 մլն դրամը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը նախատեսվել են 1713.3 մլն դրամի չափով՝ պետական իշխանության առանձին մարմիններում կարողությունների զարգացման համար:

Միաժամանակ 2019 թվականի պետական բյուջեում ներառվել են նաև արտաբյուջետային միջոցների հաշիվներ ունեցող պետական մարմինների ծախսերի նախահաշիվները, որը կազմում է ընդամենը 9.9 մլրդ դրամ, այդ թվում՝

ՀՀ արդարադատության նախարարություն	337.0 մլն դրամ
Հարկադիր կատատումն ապահովող ծառայություն	1418.8 մլն դրամ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	385.1 մլն դրամ
Պետական եկամուտների կոմիտե	6785.0 մլն դրամ
Սննդամթերքի անվտանգություն տեսչական մարմին	248.0 մլն դրամ
Քաղաքացիական ավիացիայի կոմիտե	781.2 մլն դրամ:

ՀՀ առողջապահության նախարարություն

Նախագծով նախատեսվում է հատկացնել (առանց կառավարման ապարատի պահպանման ծախսերի) 88,619.7 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 80,497.5 մլն դրամի դիմաց: ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի (այսուհետ՝ 2018 թվական) համապատասխան ցուցանիշի նկատմամբ ծախսերի ավելացումը կազմում է 8,122.2 մլն դրամ կամ 10.1 տոկոս: Ծախսերի ավելացումը հիմնականում պայմանավորված է առողջապահության ոլորտի աշխատակիցների աշխատավարձի բարձրացմամբ և սոցիալապես անապահով և առանձին խմբերում ընդգրկված որոշ անձանց համար ապահովագրական փաթեթների ձեռքբերմամբ:

Առողջապահության ոլորտում իրականացվող բարեփոխումների գործընթացում խնդիր է դրվում առկա միջոցների և ներուժի պայմաններում ապահովել քաղաքացու առողջության պահպանման սահմանադրական իրավունքը, բարձրացնել բնակչության համար երաշխավորված անվճար բժշկական օգնության որակը և հասանելիությունը, նպաստել ծնելիության և կյանքի միջին տևողության ավելացմանը:

Ինչպես Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեով, այնպես էլ Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի նախագծով առողջապահության ծախսերի ձևավորումն ունի երկու հիմնական մոտեցում.

- ✓ առողջապահական գերակայությունների պահպանում,
- ✓ սոցիալական ուղղվածության ապահովում:

Հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

Հանրային առողջության պահպանման ծրագիր

Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի նախագծով «Հանրային առողջության պահպանում» ծրագրի գծով նախատեսվել է 4,553.3 մլն դրամ՝ 2018 թվականի 4,014.7 մլն դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է հինգ միջոցառման իրականացում: Այսպես.

1. «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվել է 1,847.4 մլն դրամ՝ 2018 թվականի 1,873.6 մլն դրամի դիմաց կամ 26.2 մլն դրամով պակաս, պայմանավորված՝ օպտիմալացման աշխատանքների իրականացման հետ:

Միջոցառմամբ նախատեսվում է իրականացնել համաճարակաբանական հետազոտություններ վարակային հիվանդությունների օջախներում, մանրէաբանական հետազոտությունների, վարակիչ և ոչ վարակիչ զանգվածային հիվանդությունների, թունավորումների հաշվառում, համաճարակների, բռնկումների, արտակարգ իրավիճակների ժամանակ հատուկ հակահամաճարակային միջոցառումների, մալարիայի դեմ պայքարի և կանխարգելման միջոցառումների իրականացում, էպիզոոտոլոգիական հետազոտություն հանրապետության տարածքում ժանտախտի, տուլարեմիայի և այլ բնական օջախային վարակների էպիզոոտիաները հայտնաբերելու և մարդկանց մեջ հիվանդացությունը ժամանակին կանխելու նպատակով և այլն:

2. «Իմունականխարգելման ազգային ծրագիր» միջոցառման գծով նախատեսվել է 2,326.1 մլն դրամ՝ 2018 թվականի 1,825.3 մլն դրամի դիմաց կամ 500.8 մլն դրամով ավել, որը պայմանավորված է՝ 2018 թվականից պոլիոմիելիտի կենդանի պատվաստանյութի կիրառման աստիճանաբար դադարեցմամբ և վերջինիս փոխարինմամբ պոլիոմիելիտի ինակտիվացված պատվաստանյութով, նախատեսվել է հնգավալենտ պատվաստանյութն աստիճանաբար փոխարինել հեքսավալենտ պատվաստանյութով, որի բաղադրության մեջ մտնում է նաև ինակտիվացված պոլիոմիելիտի պատվաստանյութը: Այդ պատվաստանյութն ունի մի շարք առավելություններ (երեխային ներարկվող պատվաստումների թվի նվազում, հետպատվաստումային ռեակցիաների թվի կրճատում, սառցային շղթայի բեռնվածության կրճատում և պատվաստանյութերի անվտանգության ապահովում և այլն):

Իմունականխարգելման ազգային ծրագրի շրջանակներում նախատեսվում է ազգային օրացույցում ընդգրկված պատվաստումների ժամանակին և որակով իրականացումը:

3. «Արյան հավաքագրման ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվել է 253.0 մլն դրամ՝ 2018 թվականի չափով:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է դոնորական արյան հավաքագրում և պաշարում, կադրային դոնորի փոխհատուցում, դոնորական արյան վարակային անվտանգության ապահովում, հակառեզուս իմունոգլոբուլինի պատրաստում, պահպանում, տրամադրում, հանրապետությունում վեց արյան փոխներարկման կայանների պահպանում և այլն:

4. «Առողջ ապրելակերպի խթանման և հանրային իրազեկման ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվել է 26.9 մլն դրամ՝ 2018 թվականի 62.9 մլն դրամի դիմաց կամ 36.0 մլն դրամով պակաս, որը պայմանավորված է՝ միջոցառման շրջանակում իրականացվող

առողջապահական համակարգի վիճակագրական ցուցանիշների մշակման, վիճակագրական հաշվետվությունների վերլուծական աշխատանքների դադարեցմամբ:

Միջոցառումն ընդգրկում է ամենամյա պետական նպատակային ծրագրերի շրջանակում «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ու դրանից բխող առողջապահության նախարարության կողմից մշակված և ընդունված նորմատիվային ակտերի լուսաբանման աշխատանքներ, օրգանիզմի կոփման և առողջ ապրելակերպի քարոզչության և այլ աշխատանքներ:

5. «Ծխելու դեմ պայքարի և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագիր» որի գծով նախատեսվել է 100 մլն դրամ:

Միջոցառումը նոր նախաձեռնություն է, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ծխելու դեմ պայքարի քարոզարշավներին նվիրված թվով 100 միջոցառում (սպորտային միջոցառումներ, տեսահոլովակների, վավերագրական տեսաֆիլմերի պատրաստում և հեռարձակում, հակածխախոտային ուղղվածության գովազդային վահանակների տեղադրում, թոք-շոուներ, ցուցահանդեսներ և այլն):

Առողջության առաջնային պահպանման ծրագիր

Առողջապահության բնագավառում շարունակվելու է առողջության առաջնային պահպանման ոլորտի հետագա զարգացման ապահովումը, կանխարգելիչ ուղղվածության ուժեղացումը, բժշկական օգնության և ծառայություններ ստանալու մատչելիության ու որակի ապահովումը բնակչության բոլոր խմբերի (հատկապես՝ սոցիալապես խոցելի խմբերի) համար:

Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի նախագծով «Առողջության առաջնային պահպանում» ծրագրի գծով նախատեսվել է 26,118.5 մլն դրամ՝ 2018 թվականի 20,697.4 մլն դրամի դիմաց կամ 5,421.1 մլն դրամով ավել, որը պայմանավորված է հետևյալով.

- Ծրագրում ընդգրկված «Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ» միջոցառման գծով ծախսերը նվազել են 5.6 մլն դրամով:
- Միևնույն ժամանակ, «Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ» և «Ախտորոշման ճշտման նպատակով լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ նեղ մասնագիտացված կենտրոններում» միջոցառումների գծով ծախսերն աճել են 5,426.6 մլն դրամով:

Առողջության առաջնային պահպանման ծրագիր շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ հինգ միջոցառումները.

1. «Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ» միջոցառումը ներառում է ընտանեկան բժշկի և տեղամասային թերապևտի (մանկաբույժի) կողմից բնակչության առողջության առաջնային պահպանման, անհրաժեշտության դեպքում հիվանդանոցային բուժման ուղեգրման, գյուղական բնակավայրերում բուժակ-մանկաբարձական կետերի միջոցով բնակչության մինչբժշկական օգնության և սպասարկման իրականացումը, բուժքույրերի կողմից դպրոցներում երեխաների բժշկական օգնության և սպասարկման ապահովումը, անվճար և արտոնյալ պայմաններով դեղամիջոցներ ստանալու իրավունք ունեցող անձանց դեղերով ապահովումը: Նշված միջոցառման շրջանակներում նախատեսվում է նաև նեղ մասնագիտացված ամբուլատոր ծառայությունների, արտահիվանդանոցային մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների (հղիների նախա և հետծննդյան հսկողության իրականացում, գինեկոլոգիական հիվանդությունների կանխարգելում, ախտորոշում և բուժում), ամբուլատոր պայմաններում լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների և զորակոչային ու նախազորակոչային տարիքի անձանց բուժման և փորձաքննության ծառայությունների իրականացումը:

«Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվել է 25,404.5 մլն դրամ՝ 2018 թվականի 20,002.3 մլն դրամի դիմաց կամ 5,402.2 մլն դրամով ավել, որը պայմանավորված է հիմնականում աշխատավարձի բարձրացմամբ:

Նախատեսվում է բժիշկի հաշվարկային միջին ամսական աշխատավարձը 2018 թվականի 178.5 հազ. դրամի փոխարեն սահմանել 240.0 հազ. դրամ, բուժքույրի համար՝ 80.8 հազ. դրամի փոխարեն սահմանել 120.0 հազ. դրամ, իսկ կրտսեր բուժանձնակազմի համար՝ 80.8 հազ. դրամի փոխարեն սահմանել 100.0 հազ. դրամ:

Միջոցառման շրջանակներում ընտանեկան բժիշկների, տեղամասային թերապևտների (մանկաբույժների), նեղ մասնագետների, մանկաբարձ-գինեկոլոգների, բուժքույրերի, մանկաբարձուհիների, կրտսեր բուժանձնակազմի և վարչատնտեսական անձնակազմի պահպանման, ինչպես նաև տեղամասերի և մասնագիտացված կաբինետների աշխատանքների ապահովման տնտեսական և դեղորայքային (առաջին օգնության համար անհրաժեշտ դեղորայքի և վիրակապական նյութերի) ծախսերի գծով նախատեսվել է 19,620.0 մլն դրամ:

Ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում ըստ բժշկական ցուցումների լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացման նպատակով նախատեսվել է 3,146.2 մլն դրամ՝ 2018 թվականի 2,689.8 մլն դրամի փոխարեն:

Միջոցառման շրջանակներում անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի 447.5 հազ. շահառուների համար նախատեսվել է 1,115.2 մլն դրամ:

Բուժքույրերի կողմից դպրոցներում երեխաների բժշկական օգնության և սպասարկման ապահովման գծով նախատեսվել է 768,7 մլն դրամ՝ 2018 թվականի 526.0 մլն դրամի փոխարեն:

Միջոցառման շրջանակներում զինկոմիսարիատներին կից բժշկական հանձնաժողովներում ընդգրկված մասնագետների կողմից զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննությունն անցկացնելու համար նախատեսվել է 718 մլն դրամ՝ 2018 թվականի 530.6 մլն դրամի փոխարեն, իսկ փորձաքննությանն ուղեգրման ճանապարհածախսի համար նախատեսվել է նույն չափով՝ 36.3 մլն դրամ:

Ելնելով նրանից, որ ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության ֆինանսավորումն իրականացվում է բժշկի մոտ գրանցված բնակչության մեկ շնչի հաշվով ֆինանսավորման սկզբունքով՝ հաշվարկի համար բնակչության հաշվարկային մեծությունն ընդունված է 2018 թվականի հունիսի 1-ի գրանցված բնակչության թիվը՝ 2,907 հազար, որից մեծահասակներ՝ 2,236 հազար (այդ թվում իգական սեռի անձինք՝ 1,207.7 հազար), երեխաներ՝ 671 հազար, որից նախազորակոչային և զորակոչային տարիքի պատանիներ՝ 56.0 հազար:

Տարվա կտրվածքով տեղամասային թերապևտի (ընտանեկան բժշկի) կողմից 18 տարին լրացած և ավելի բարձր տարիքի անձանց բժշկական օգնության և սպասարկման համար մեկ բնակչի հաշվով հատկացվող միջինացված գումարը նախատեսվել է 3,256 դրամ, իսկ նեղ մասնագետի և դիսպանսերային ծառայության համար՝ 1,816 դրամ: Մանկաբույժի (ընտանեկան բժշկի) կողմից մինչև 18 տարեկան երեխաների բժշկական օգնության և սպասարկման համար մեկ երեխայի (այդ թվում՝ պատանու) հաշվով հատկացվող միջինացված գումարը նախատեսվել է 6,777 դրամ, իսկ նեղ մասնագետի և դիսպանսերային ծառայության համար՝ 2,456 դրամ: Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության գծով տարվա կտրվածքով իգական սեռի մեկ անձի հաշվով հատկացվող միջինացված գումարը նախատեսվել է 1,725 դրամ: Դպրոցներում իրականացվող երեխաների բժշկական օգնության և սպասարկման ծախսերն ըստ մեկ աշակերտի ֆինանսավորման՝ նախատեսվել են տարեկան 2,131 դրամ: Բնակչության լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտության ծախսերը (առանց զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց) ըստ մեկ շնչի ֆինանսավորման՝ նախատեսվել են 644 դրամ, իսկ զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց համար՝ 7,247 դրամ: Բացի դրանից, մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության շրջանակներում իրականաց-

վող լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների գծով՝ իգական սեռի մեկ անձի հաշվով հատկացվող միջինացված գումարը նախատեսվել է 749 դրամ:

2. «Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններ» միջոցառումը, որը ներառում է շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների ամբուլատոր բուժման կազմակերպումը հիվանդանոցներում և մասնագիտացված կենտրոններում:

Միջոցառման գծով նախատեսվել է 133.0 մլն դրամ՝ 2018 թվականի չափով:

3. «Բնածին հիպոթիրեոզի, ֆենիլկետոնուրիայի և լսողության խանգարումների վաղ հայտնաբերման նպատակով նորածնային սկրինինգի անցկացում» միջոցառման գծով նախատեսվել է 303.5 մլն դրամ՝ 2018 թվականի չափով:

Միջոցառման նպատակն է՝ մասնագիտացված ախտորոշման կենտրոնների, պոլիկլինիկաների և հիվանդանոցների միջոցով նորածնային սկրինինգների իրականացումը, որոնք ուղղված են բնածին, ժառանգական հիվանդությունների հնարավորինս վաղ ախտորոշմանը, ինչի շնորհիվ հնարավոր է հասնել հիվանդության կանխարգելման, ինչպես նաև բուժման կամ ախտաբանական վիճակի շտկման:

4. «Ախտորոշման ճշտման նպատակով լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ նեղ մասնագիտացված կենտրոններում» միջոցառումը ներառում է բժշկական ցուցումներով մասնագիտացված կենտրոններում իրականացվող լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները:

Միջոցառման գծով նախատեսվել է 233.1 մլն դրամ՝ 2018 թվականի 208.7 մլն դրամի փոխարեն կամ 24.4 մլն դրամով ավել: Աճը նախատեսվում է ուղղել լաբորատոր-գործիքային հետազոտությունների գների և որպես հետևանք բուժանձնակազմի աշխատավարձի ավելացմանը:

5. «Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ» միջոցառումը ներառում է 6 և 12 տարեկան երեխաների բերանի խոռոչի հիգիենայի պահպանման համալիր միջոցառումների իրականացումը:

Միջոցառման գծով նախատեսվել է 44.4 մլն դրամ՝ 2018 թվականի 50.0 մլն դրամի դիմաց կամ 5.6 մլն դրամով պակաս, որը պայմանավորված է նախատեսվող դեպքերի թվաքանակի (4,667 դեպքով պակաս) պակասեցմամբ:

Պաթանատոմիական, գենետիկ և դատաբժշկական փորձաքննությունների ծրագիր

Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի նախագծով «Պաթանատոմիական, գենետիկ և դատաբժշկական փորձաքննություններ» ծրագրի գծով նա-

խատեսվել է 452.9 մլն դրամ՝ 2018 թվականի 437.5 մլն դրամի դիմաց կամ 15.4 մլն դրամով ավել, որը պայմանավորված է՝ ծրագրում ընդգրկված «Դատաբժշկական և գենետիկ ծառայություններ» միջոցառման գծով ծախսերի 15.4 մլն դրամ ավելացմամբ:

Պաթանատոմիական, գենետիկ և դատաբժշկական փորձաքննություններ ծրագրի շրջանակներում նախատեսվում է երկու միջոցառման իրականացում: Այսպես.

1. «Դատաբժշկական և գենետիկ ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվել է 399.9 մլն դրամ՝ 2018 թվականի 384.5 մլն դրամի դիմաց կամ 15.4 մլն դրամով ավել, որը պայմանավորված է աշխատավարձի բարձրացմամբ:

Միջոցառման նպատակն է Հայաստանի Հանրապետության դատախազության, Հայաստանի Հանրապետության արդարադատության և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության և Հայաստանի Հանրապետության ոստիկանության պատվերի հիման վրա դիակների, կենդանի անձանց, իրեղեն ապացույցների, դատաքիմիական, դատաբժշկաքրեագիտական, դատագենետիկ, հյուսվածքաբանական և դատակենսաբանական փորձաքննությունների, ինչպես նաև դիակների արտաշիրիմումների իրականացնումը:

2. «Պաթանատոմիական ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվել է 53.0 մլն դրամ՝ 2018 թվականի չափով:

Միջոցառման նպատակն է իրականացնել հիվանդությունների ճշտված ախտորոշում՝ սեկցիոն, վիրահատական և բիոպսիոն նյութերի հետազոտության միջոցով, մանկական դիակների դիահերձում, մահվան պատճառների ճշտում:

Դեղապահովման ծրագիր

Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի նախագծով «Դեղապահովման» ծրագրի գծով նախատեսվել է 2,657.9 մլն դրամ՝ 2018 թվականին նախատեսված 2,658.9 մլն դրամի դիմաց կամ 1.0 մլն դրամով պակաս:

Դեղապահովման ծրագրի շրջանակում նախատեսվում է երկու միջոցառման իրականացում: Այսպես.

1. «Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսազերծման և բաշխման աշխատանքներ» միջոցառման գծով նախատեսվել է 57.8 մլն դրամ՝ 2018 թվականի 58.8 մլն դրամի դիմաց կամ 1.0 մլն դրամով պակաս:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսազերծման, հաշվառման, պահպանման, բաշխման և այլ աշխատանքների իրականացում:

2. «Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» միջոցառման գծով նախատեսվել է 2,600.0 մլն դրամ 2018 թվականի չափով:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից դեղորայքային ապահովումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 23 նոյեմբերի 2006 թվականի «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի և հիվանդությունների ցանկերը հաստատելու մասին» N 1717-Ն որոշման համաձայն, ըստ հետևյալ հիվանդությունների ցանկի՝ հոգեկան հիվանդությունների, չարորակ նորագոյացությունների, շաքարային և ոչ շաքարային դիաբետի, տուբերկուլյոզի, էպիլեպսիայի, պարբերական հիվանդության, քրոնիկ երիկամային անբավարարության, ֆենիլկետոնուրիայի և անհաս նորածինների շնչառական խանգարման համախտանիշի և մարդու իմունային անբավարարության (ՄԻԱՎ) վարակի դեպքերում:

Խորհրդատվական, մասնագիտական աջակցություն և հետազոտությունների

Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի նախագծով «Խորհրդատվական, մասնագիտական աջակցություն և հետազոտություններ» ծրագրի գծով նախատեսվել է 815.6 մլն դրամ՝ 2018 թվականի 246.5 մլն դրամի դիմաց կամ 569.1 մլն դրամով ավել:

Խորհրդատվական, մասնագիտական աջակցություն և հետազոտություններ ծրագրի շրջանակներում նախատեսվում է չորս միջոցառման իրականացում: Այսպես.

1. «Խորհրդատվական, մասնագիտական աջակցություն և հետազոտություններ» միջոցառման գծով նախատեսվել է 222.0 մլն դրամ՝ 2018 թվականի 210.1 մլն դրամի դիմաց կամ 11.9 մլն դրամով ավել:

Ծրագրի շրջանակում նախատեսվում են մասնագիտական գործունեության հավաստագրման ծառայություններ, Հայաստանի առողջապահության արդյունավետության գնահատման տարեկան զեկույցի կազմման և նորմատիվ փաստաթղթերի մշակման ծառայություններ, առողջապահության ոլորտի վիճակագրական հաշվետվությունների հետ կապված վերլուծական աշխատանքների տեխնիկական սպասարկման և այլ ծառայություններ:

2. «Գիտաբժշկական գրադարանային ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվել է 43.5 մլն դրամ՝ 2018 թվականի 36.3 մլն դրամի դիմաց կամ 7.2 մլն դրամով ավել, որը պայմանավորված է ԱԱՀ-ի գծով ծախսերի ավելացմամբ:

Միջոցառման նպատակն է գիտաբժշկական գրադարանային հավաքածուների պահպանում և համալրումը, ընթերցողների սպասարկումը, գրադարանային միջոցառումների կազմակերպումը: Այս ծառայությունների նախկինում մատուցվել են Մշակույթի նախարարության գրադարանային ծառայությունների շրջանակներում:

3. «Բժիշկ-մասնագետների ժամանակավոր ուղեգրման միջոցով Հայաստանի Հանրապետության մարզային առողջապահական կազմակերպություններում բժշկական ծառայութ-յունների մատուցում» միջոցառման գծով նախատեսվել է 50.0 մլն դրամ (2018 թվականին միջոցառման գծով գումարի չի նախատեսվել):

Միջոցառման նպատակն է բժիշկ-մասնագետների ժամանակավոր ուղեգրման միջոցով Հայաստանի Հանրապետության մարզային առողջապահական կազմակերպություններում բժշկական ծառայությունների մատուցումը:

4. «Էլեկտրոնային առողջապահության համակարգի պահպանում» միջոցառման գծով նախատեսվել է 500.0 մլն դրամ (2018 թվականին միջոցառման գծով գումար չի նախատեսվել):

Միջոցառումը նոր նախաձեռնություն է, որի նպատակն է Էլեկտրոնային առողջապահության համակարգի պահպանումը:

Մոր և մանկան առողջության պահպանման ծրագիր

Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի նախագծով «Մոր և մանկան առողջության պահպանում» ծրագրի գծով նախատեսվել է 16,008.6 մլն դրամ՝ 2018 թվականի 15,050.2 մլն դրամի դիմաց կամ 958.4 մլն դրամով ավել: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վեց միջոցառման իրականացում: Այսպես.

1. «Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման շրջանակում նախատեսվել է 50,127 դեպքի բուժում 7,002.2 մլն դրամ գումարով՝ 2018 թվականի 47,427 դեպքի և 6,253.8 մլն դրամի դիմաց կամ 2,700 դեպքով և 748.4 մլն դրամով ավել: Աճը նախատեսվում է ուղղել ծննդօգնության գների և որպես հետևանք բուժանձնակազմի աշխատավարձի ավելացմանը:

Միջոցառումն ընդգրկում է ծննդաբերության, նախածննդյան և հետծննդյան բարդու-թյունների բուժօգնությունը:

2. «Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվել է 4,599 հիվանդանոցային դեպքի բուժում 367.0 մլն դրամ գումարով՝ 2018 թվականի չափով:

3. «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման շրջանակներում նախատեսվել է 8,119.4 մլն դրամ գումարով (2018 թվականի չափով) իրականացնել 66,370 հիվանդանոցային դեպքի բուժում՝ 2018 թվականի 54,292 հիվանդանոցային դեպքի դիմաց:

Միջոցառման նպատակն է մինչև 7 տարեկան երեխաների հիվանդանոցային բժշկական օգնության իրականացումն՝ անկախ երեխայի հիվանդության ախտորոշումից և սոցիալական կարգավիճակից, սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված 7-18 տարեկան երեխաների բժշկական օգնության իրականացումը, ինչպես նաև, մինչև 18 տարեկան երեխաների, հիվանդանոցային բժշկական օգնություն պահանջող անհետաձգելի վիճակների և սուր հիվանդությունների դեպքերում բուժօգնության իրականացումը:

4. «Մտավոր, հոգեկան (վարքագծային), լսողական, ֆիզիկական (շարժողական) և զարգացման այլ խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվել է 71,226 դեպքի բուժում 258.9 մլն դրամ գումարով՝ 2018 թվականի չափով:

Միջոցառումը ներառում է մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական և շարժողական խանգարումներով երեխաների առողջական վիճակի գնահատումը և վերականգնողական բուժման ամբուլատոր կազմակերպումը:

5. «Հաշմանդամ և կարիքավոր երեխաներին օրթեզներով և կորսետներով ապահովման ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվել է 51.1 մլն դրամ՝ 2018 թվականի չափով:

Միջոցառումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի նոյեմբերի 1-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում երեխաների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման չափորոշիչները հաստատելու մասին» N 70-Ն հրամանի համաձայն, որը ներառում է մինչև 7 տարեկան և սոցիալապես անապահով և հատուկ խմբերի ցանկում ընդգրկված երեխաների հենաշարժական համակարգի ֆունկցիայի վերականգնմանը նպաստող օժանդակ միջոցների տրամադրումը:

6. «Անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններ» միջոցառումը, որը 2018 թվականին

փակվել էր, 2019 թվականին նորից նախատեսվում է վերաբացել և ծրագրով գծով նախատեսված ծախսերը կազմում են 210.0 մլն դրամ:

Միջոցառման շրջականներում նախատեսվում է սոցիալապես անապահով, բնակչության առանձին և հատուկ խմբերում ընդգրկված 150 անպտուղ զույգերին՝ բժշկական օգնության տրամադրում:

Շտապ բժշկական օգնության ծրագիր

«Շտապ բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը ներառում է հանրապետության տարածքում ամբողջ բնակչության համար անհետաձգելի բժշկական օգնության ապահովումը շտապ բժշկական օգնության կանչերի միջոցով:

Ծրագրի գծով նախատեսվել է 3,292.3 մլն դրամ՝ 2018 թվականի 3,093.3 մլն դրամի դիմաց կամ 199.0 մլն դրամով ավել, որը պայմանավորված է շտապ բժշկական օգնության կանչերի թվաքանակը 408,808 կանչից՝ 435,376 ավելացմամբ:

Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովման ծրագիր

Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի նախագծով «Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում» ծրագրի գծով նախատեսվել է 10,154.9 մլն դրամ՝ 2018 թվականի 8,968.5 մլն դրամի դիմաց կամ 1,186.4 մլն դրամով ավել, որը պայմանավորված է՝ ծրագրում ընդգրկված «Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ» և «Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» միջոցառումների գծով ծախսերի 386.7 մլն դրամ ավելացմամբ:

Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում ծրագրի շրջանակում նախատեսվում է չորս միջոցառման իրականացում: Այսպես.

1. «Հեմոդիալիզի և պերիտոնիալ դիալիզի անցկացման ծառայություններ» միջոցառումը ներառում է հեմոդիալիզի կարիք ունեցող հիվանդների բժշկական օգնության համալիր միջոցառումների իրականացումը հիվանդանոցների միջոցով:

Ծրագրի գծով նախատեսվել է 933 հիվանդի բուժում 2,484.8 մլն գումարով (2018 թվականի չափով)՝ 2018 թվականի 897 հիվանդի դիմաց:

2. «Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվել է 19,710 դեպքի բուժում 3.237.6 մլն դրամ՝ 2018 թվականի 19,447 դեպքի և 2,850.9 մլն դրամի դիմաց կամ 263 դեպքով և 386.7 մլն դրամով ավել, ինչը պայմանավորված է միջոցառման շրջանակներում հիվանդանոցային բժշկական ծառայությունների մատուցման գների վերանայմամբ, որը նախատեսվում է ուղղել աշխատավարձի բարձրացմանը, ինչպես

նաև գլխուղեղի իշեմիկ կաթվածների բուժման արդյունավետության բարձրացմանն ուղղված ազգային ծրագրի ներդրմանը:

Միջոցառումն իրականացվում է՝ համաձայն առողջապահության նախարարության կողմից սահմանված անհետաձգելի վիճակների և հիվանդությունների ցանկի (ծրագրի շրջանակում գործում է համավճարի սկզբունքով փոխհատուցման մեխանիզմը):

3. «Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման շրջանակներում նախատեսվել է 6,391 հիվանդանոցային դեպքի բուժում 2,515.3 մլն դրամ գումարով՝ 2018 թվականի չափով:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել քրոնիկ հոգեկան հիվանդների խնամք, հիվանդների փորձաքննություն, հարկադիր և սուր վիճակների բուժում և նարկոլոգիական դիսպանսերներում թմրամոլությամբ, թունամոլությամբ, ալկոհոլամոլությամբ տառապող անձանց հիվանդանոցային բուժման ապահովում:

4. «Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման շրջանակներում նախատեսվել է հիվանդանոցային 10,297 դեպքի բուժում 1,917.3 մլն դրամ գումարով՝ 2018 թվականի դեպքերի նույն քանակի և 1,117.6 մլն դրամ գումարի դիմաց կամ 799.7 մլն դրամով ավել: Նախատեսվող միջոցների ավելացումը պայմանավորված է միջոցառման շրջանակներում մատուցվող բժշկական ծառայությունների գների վերանայմամբ, որը նախատեսվում է ուղղել աշխատավարձի բարձրացմանը:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել չարորակ նորագոյացությունների համալիր, վիրահատական և ճառագայթային բուժում, չարորակ հիվանդների ճառագայթային բուժում ցերեկային ստացիոնարի պայմաններում, ինչպես նաև քիմիաթերապևտիկ և սիմպտոմատիկ բուժում:

Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնության ծրագիր

Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի նախագծով «Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն» ծրագրի գծով նախատեսվել է 18,468.1 մլն դրամ՝ 2018 թվականի 16,819.1 մլն դրամի դիմաց կամ 1,649.0 մլն դրամով ավել, որը պայմանավորված է հետևյալով.

- Ծրագրում ընդգրկված առանձին «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» և «Ստոմատոլոգիական

բժշկական օգնության ծառայություններ» միջոցառումների գծով ծախսերի ավելացմամբ՝ 1,584.9 մլն դրամով:

•Միևնույն ժամանակ ծրագրում ընդգրկված նոր «Հրատապ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների (ներառյալ բժշկական սարքեր, սարքավորումներ, դեղեր և բժշկական օգնության օժանդակ ծառայություններ) տրամադրում» միջոցառմբ, որի գծով ծախսերը նախատեսվել են 100 մլն դրամ:

Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն ծրագրի շրջանակներում նախատեսվում է վեց միջոցառման իրականացում: Այսպես.

1. «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ».

Միջոցառման շրջանակներում նախատեսվել է 160,154 դեպքի բուժում և հետազոտում 10,955.4 մլն դրամով՝ 2018 թվականի 155.029 դեպքի և 9,506.4 մլն դրամի դիմաց կամ 5,124 դեպքով և 1,449.0 մլն դրամով ավել, որը նախատեսվում է ուղղել ծննդօգնության գների և որպես հետևանք բուժանձնակազմի աշխատավարձի ավելացմանը, ինչպես նաև սոցիալապես անապահով և առանձին խմբերում ընդգրկված որոշ անձանց համար հավելյալ շուրջ 200.0 հազար ապահովագրական փաթեթների ձեռքբերմանը:

2. «Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» միջոցառումը ներառում է ամբուլատոր-պոլիկլինիկական մասնագիտացված ստոմատոլոգիական օգնության իրականացումը սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին մասնագիտացված ստոմատալոգիական պոլիկլինկակաների և ստոմատալոգիական կաբինետներ ունեցող պոլիկլինկակաների միջոցով:

Ծրագրի գծով նախատեսվել է 507.2 մլն դրամ 2018 թվականի 407.2 մլն դրամի դիմաց կամ 100 մլն դրամով ավել, որը պայմանավորված է նախատեսվող դեպքերի թվաքանակի (34,632 դեքով ավել) աճով:

3. «Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման շրջանակներում նախատեսվել է իրականացնել 29,765 շահառուի բուժում՝ 2018 թվականի 16,039 շահառուի դիմաց 3,077.2 մլն դրամով՝ պահպանելով 2018 թվականի ծախսերի մակարդակը: Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների գների վերանայման արդյունքում՝ հնարավոր է եղել նախատեսել նշյալ հետազոտությունների տրամադրում՝ 13,726 ավել շահառուի:

4. «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ» միջոցառման գծով սոցիալական փաթեթի շուրջ

100.0 հազար շահառուների համար, իրենց նախընտրած բժշկական հաստատությունում (համապատասխան բժշկական փաթեթի շրջանակում), բժշկական օգնություն և սպասարկում ստանալու անխոչընդոտ հնարավորությունների ստեղծման նպատակով նախատեսվել է 3,826.3 մլն դրամ՝ 2018 թվականի չափով: Ակտուարական հաշվարկների համաձայն մեկ շահառուի համախառն ապահովագրավճարը կազմում է 38.263 դրամ:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է 25,214 դեպքի բուժում /հետազոտում/ և պետական հիմնարկների ու կազմակերպությունների շուրջ 100.0 հազար աշխատողների պարտադիր պրոֆիլակտիկ ստուգումների (կանխարգելիչ բժշկական քննության) անցկացում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 375-Ն որոշման համաձայն շահառուների բժշկական օգնությունն ու սպասարկումը կազմակերպվում և ֆինանսավորվում է առողջապահության նախարարության և առողջության ապահովագրության ծառայություններ մատուցող ընկերությունների միջև կնքված առողջության ապահովագրության պայմանագրերի միջոցով: Առողջապահական կազմակերպությունների կողմից շահառուներին մատուցված բժշկական օգնության և սպասարկման հատուցումն իրականացվում է ապահովագրական ընկերությունների կողմից:

5. «Թրաֆիքինգի զոհերին բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման շրջանակներում նախատեսվել է 10 դեպքի բուժում 2.0 մլն դրամով՝ 2018 թվականի չափով:

6. «Հրատապ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների (ներառյալ բժշկական սարքեր, սարքավորումներ, դեղեր և բժշկական օգնության օժանդակ ծառայություններ) տրամադրում» միջոցառման գծով նախատեսվել է 100.0 մլն դրամ:

Միջոցառումը նոր նախաձեռնություն է, որի նպատակն է ՀՀ կառավարության 318-Ն որոշման 2-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան հրամանով սահմանված՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում չընդգրկված նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տեսակների և կազմակերպման կարգի համաձայն բժշկական օգնություն ստացող անձանց բժշկական օգնության ծառայությունների մատուցումը, թանկարժեք սարքերի, սարքավորումների և դեղերի տրամադրումը:

Վարակիչ հիվանդությունների կանխարգելման ծրագիր

Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի նախագծով «Վարակիչ հիվանդությունների կանխարգելման» ծրագրի գծով նախատեսվել է 2,503.3 մլն դրամ՝ 2018 թվականի 2,803.2.2 մլն դրամի դիմաց կամ 226.9 մլն դրամով պակաս, որը

պայմանավորված է՝ ծրագրում ընդգրկված «Տուբերկուլյոզի բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման գծով ծախսերի 299.9 մլն դրամ նվազմամբ:

Վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում ծրագրի շրջանակում նախատեսվում է երեք միջոցառման իրականացում: Այսպես.

1. «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվել է 262.1 մլն դրամ՝ 2018 թվականի չափով:

Միջոցառման շրջանակներում իրականացվում է ՄԻԱՎ վարակի տարածվածության մասին տեղեկատվության ստացում, ընտրված խմբերում վարակի միտումների ընթացիկ հսկողություն: Նախատեսվում է ՄԻԱՎ վարակով հիվանդների դիսպանսերային հսկողություն: Նախատեսվում է նաև ՄԻԱՎ հակամարմնի հայտնաբերման գծով համաճարակաբանական հետազոտություն՝ իմունոֆերմենտային անալիզի մեթոդով, արագ թեստավորման, ռեֆերեն-սային մեթոդով և այլն, ինչպես նաև մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում:

2. «Տուբերկուլյոզի բժշկական օգնության ծառայություններ» միջոցառմամբ նախատեսվել է տուբերկուլյոզի 2,860 հիվանդանոցային դեպքի բուժում 1,021.2 մլն դրամ գումարով՝ 2018 թվականի 3,700 դեպքի 1,321.2 մլն դրամի դիմաց, որը պայմանավորված է տուբերկուլյոզով հիվանդների թվի նվազմամբ:

Միջոցառումը ներառում է նոր հայտնաբերված տուբերկուլյոզով հիվանդների և կրկնակի հիվանդացածների բուժման կազմակերպումը հակատուբերկուլյոզային դիսպանսերներում, տուբերկուլյոզով քրոնիկ հիվանդների երկարատև բժշկական օգնության, սպասարկման և խնամքի ապահովումը հակատուբերկուլյոզային դիսպանսերներում, վերականգնողական բուժման կազմակերպումը հակատուբերկուլյոզային առողջարաններում:

3. «Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայու-թյուններ» միջոցառման շրջանակներում նախատեսվել է 10,200 հիվանդանոցային դեպքի բուժում 1,220.0 մլն դրամ գումարով՝ 2018 թվականի 9,542 դեպքի և ծախսերի նույն մակարդակի դիմաց:

Ինֆեկցիոն հիվանդությունների բուժումը ներառում է աղիքային, վիրուսային և միջատներով տարածվող ինֆեկցիաներով ախտահարվածների բուժում, որն ունի սոցիալական նշանակություն: Ինֆեկցիոն հիվանդություններով տառապող անձանց բուժօգնության կազմակերպումն իրականացվում է ընդհանուր և մասնագիտացված ինֆեկցիոն հիվան-դանոցներում, բաժանմունքներում:

Միաժամանակ ՀՀ առողջապահության նախարարությունը նախատեսում է շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագիր, որի նպատակն է ընտրված հիվանդանոցների արդյունավետության և որակի բարելավում.

ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ և ՀՀ Վայոց Ձորի մարզում նոր բժշկական կենտրոնի նախագծում,

- ՀՀ Լոռու մարզի Տաշիր քաղաքի նոր բժշկական կենտրոնի շենքի նախագծում,
- ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ և ՀՀ Վայոց Ձորի մարզում նոր բժշկական կենտրոնի շինարարական աշխատանքների հեղինակային հսկողություն,
- ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ նոր շենքի կառուցման շինարարական աշխատանքներ,
- Եղեգնաձորի բժշկական կենտրոն ՓԲԸ նոր շենքի կառուցման շինարարական աշխատանքներ,
- Մարտունու և Եղեգնաձորի ԲԿ-ների կառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն՝ 2019թ. նախատեսվում է 1,084.5 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 815.6 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 268.9 մլն. դրամ:

2. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման դրամաշնորհային ծրագիր, որի նպատակներն են կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում ԱԱՊ հաստատություններում ոչ վարակիչ հիվանդությունների և մոր և մանկան առողջության ծառայությունների բարելավումը, որը բաղկացած է սքրինինգային հետազոտությունների մասից՝ արգանդի վզիկի քաղցկեղի վաղ հայտնաբերման սքրինինգ, շաքարային դիաբետի վաղ հայտնաբերման սքրինինգ, հղիության ընթացքի վերահսկման նպատակով իրականացվող արյան և մեզի ընդհանուր կլինիկական լրացուցիչ հետազոտություններ, և կատարողականի վրա հիմնված խթանների մասից, որտեղ կհատկացվեն կատարողականի վրա հիմնված վճարումներ, ինչպես նաև կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման իրականացումն և կարողությունների զարգացումը, որով նախատեսվում է իրականացնել սքրինինգային ծրագրին մասնակցելու, առողջ ապրելակերպի խթանմանն և ՈՎՀ հիմնական

ռիսկային գործոնների կանխարգելմանն ուղղված հանրային իրազեկման քարոզարշավ՝ 2019թ. նախատեսվում է. 340.6 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 340.6 մլն. դրամ:

3. ՀՀ կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսավորվող «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկողության կատարելագործում» ծրագիր, որի նպատակն է սքրինինգային հետազոտությունների իրականացումը, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Մամոգրաֆիկ սքրինինգային հետազոտությունների փոխհատուցում Լոռու մարզում,
- Մամոգրաֆիայի շարժական սարքի ձեռքբերում, սքրինինգի ծրագրի իրականացման համար,
- Լոռու մարզում հանրային իրազեկման քարոզարշավի կազմակերպում,
- Ծրագրում ընդգրկված բժշկական անձնակազմի վերապատրաստումներ Լոռու մարզում,
- Համակարգչային սարքավորումների ձեռքբերում շարունակական բժշկական կրթության համար,
- Ծրագրային ապահովման ստեղծում ընտանեկան բժիշկների օնլայն սերտիֆիկացման համար,
- Մարդկային ռեսուրսների ռեգիստրի մշակում,
- Կրծքագեղձի քաղցկեզի բուժման վերաբերյալ ուղեցույցների մշակում,
- Օնլայն մոդուլի մշակում:

2019թ. նախատեսվում է 407.5 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 346.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 61.0 մլն. դրամ:

4. Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ուժեղացում» դրամաշնորհային ծրագիր, որի նպատակներն են Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացումը՝ առավել լավ ախտորոշում և բուժում տրամադրելու համար, դեղակայուն տուբերկուլոզի (ԴԿ ՏԲ) կառավարման ընդլայնումը, ինչպես քաղաքացիական բնակչության, այնպես էլ դատապարտյալների շրջանում, և տուբերկուլոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրումը՝ ՏԲ արդյունավետ վերահսկման նպատակով: Ծրագրի շրջանակներում իրականացվում են գործառույթներ գնումների և մատակարարման ներուժի, մարդկային ռեսուրսների զարգացման, տուբերկուլոզի ախտորոշման և բուժման, հիվանդներին սոցիալական աջակցության, ՏԲ/ՄԻԱՎ համավարակի դեմ պայքարի, վարակի

վերահսկման, մոնիտորինգի և գնահատման համակարգի բարելավման, հանրության իրազեկման ոլորտներում՝ տուբերկուլոզի տարածվածության և մահացության մակարդակները իջեցնելու և դեղակայուն տուբերկուլոզի հետագա զարգացումը կանխելու նպատակով՝ 2019թ. նախատեսվում է 862.7 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 669.6 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 193.1 մլն. դրամ:

5. Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր, որի նպատակ է նպաստել հանրապետությունում ՄԻԱՎ համաճարակի նվազեցմանը՝ հակառետրովիրուսային բուժում տրամադրելով բոլոր նրանց, ովքեր ունեն վերջինիս կարիքը, հղի կանանց և ընդհանուր բնակչության համար ապահովելով խորհրդատվության և թեստավորման հասանելիությունը, իրականացնելով ՄԻԱՎ-ի կանխարգելման միջոցառումներ դատապարտյալների և տեղաշարժվող բնակչության շրջանում: Իրականացնել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ խորհրդատվության, հետազոտության կետերին և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ կատարող լաբորատորիաներին տեխնիկական աջակցության և մեթոդական օգնության տրամադրումը, սեմինար-վարժանքների կազմակերպումը, տեղեկատվական համակարգի հզորացումը, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մոնիտորինգի և գնահատման ազգային միասնական համակարգի ստեղծումը և համաճարակաբանական հետազոտությունների իրականացումը՝ 2019թ. նախատեսվում է 898.8 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 769.6 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 129.3 մլն. դրամ:

Այս ոլորտում 2019 թվականի բյուջետային ծախսերի համեմատությունը 2017-2018 թվականների համադրելի ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 10 աղյուսակում, իսկ 2019 թվականի առողջապահական պետական նպատակային ծրագիրը՝ N 4 հավելվածում:

ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Նախագծով ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից իրականացվելիք ծրագրերին (առանց կառավարման ապարատի գծով ծախսերի) նախատեսվում է հատկացնել 138,126.4 մլն դրամ՝ 2018 թվականի 129,317.9 մլն դրամի դիմաց, ծախսերի աճը կազմել է 8,808.5 մլն դրամ կամ 6.8 տոկոս: 2019 թվականին նախարարությանը նախատեսված հատկացումներն ուղղվելու են 8 ծրագրերի իրականացմանը: Մասնավորապես.

«Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն» ծրագրի գծով նախատեսվել է 11,685.4 մլն դրամ՝ 2018 թվականի 10,265.4 մլն դրամի դիմաց, ծախսերի աճը կազմել է 1,420.0 մլն դրամ կամ 13.8 տոկոս: Ծախսերի աճը պայմանավորված է հետևյալով.

Ծրագրի շրջանակներում «ՆՄԿՈՒ հաստատություններում համապատասխան մասնագետով համալրված մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոնների ստեղծում» միջոցառման գծով նախատեսվում է հատկացնել 92.3 մլն դրամ՝ 95 պետական նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոնների ստեղծման նպատակով (2018 թվականին նշված միջոցառումը նախատեսված չի եղել և այդ նպատակով 48 հաստատությունների համար անհրաժեշտ գումարը՝ 46.7 մլն դրամի չափով, նախատեսվել էր «Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» միջոցառման գծով ՀՀ կրթության և գիտության նախարարությանը նախատեսված ծախսերում):

Ծրագրի շրջանակներում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակի և ուսանողական նպաստների տրամադրման գծով միջոցառումներով նախատեսվել է՝ ընդամենը, 10,157.3 մլն դրամ՝ 2018 թվականի 10,015.4 մլն դրամի դիմաց, կամ՝ ծախսերն աճել են 141.9 մլն դրամով: Նշված միջոցառումների գծով ծախսերը նախատեսվել են հանրապետության 20 արհեստագործական ուսումնարաններում արհեստագործական կրթության մեջ ընդգրկվող 6.1 հազար սովորողների ուսուցման գծով՝ 2018 թվականի 6.5 հազարի դիմաց (սովորողների թվաքանակը 2019 թվականին կնվազի 0.4 հազարով) և 68 հաստատություններում միջին մասնագիտական կրթության մեջ ընդգրկվող 18.0 հազար սովորողների ուսուցման գծով՝ 2018 թվականի 16.9 հազարի դիմաց (սովորողների թվաքանակը 2019 թվականին կավելանա 1.1 հազարով):

Ծրագրի շրջանակներում «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում» միջոցառման իրականացման գծով նախատեսվել է 1,435.8 մլն դրամ՝ 2018 թվականի 250.0 մլն դրամի դիմաց կամ՝ ծախսերի աճը կազմում է 1,185.8 մլն դրամ (ընդհանուր առմամբ՝ կրթական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության գծով ծախսերը նախատեսվել են 2,546.0 մլն դրամի չափով, որը 2018 թվականի համար հաստատված համապատասխան ցուցանիշից (2,387.4 մլն դրամ) ավել է 158.6 մլն դրամով):

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի» գծով նախատեսվել է 10,351.0 մլն դրամ՝ 2018 թվականի 10,371.5 մլն դրամի դիմաց, ծախսերի նվազումը կազմել է 20.5 մլն դրամ կամ 0.2 տոկոս:

Ծրագրի շրջանակներում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակի և ուսանողական նպաստների տրամադրման գծով միջոցառումներով նախատեսվել է՝ ընդամենը, 10,054.7 մլն դրամ՝ 2018 թվականի 10,062.2 մլն դրամի դիմաց, կամ՝ ծախսերի նվազումը կազմում է 7.5 մլն դրամ: Նշված միջոցառումների գծով ծախսերը նախատեսվել են 13.65 հազար ուսանողի հաշվով՝ 2018 թվականի 13.59 հազարի դիմաց:

Ծրագրի շրջանակներում «Ասպիրանտական և դոկտորանտական կրթաթոշակներ» միջոցառման գծով նախատեսվել է 28.5 մլն դրամ՝ 2018 թվականի 35.0 մլն դրամի դիմաց կամ՝ 6.5 մլն դրամով պակաս, այն ուղղվելու է 75 առկա ասպիրանտների և 27 մագիստրանտների կրթաթոշակ տրամադրելուն: «Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում գիտակրթական հաստատություններում» միջոցառման գծով նախատեսվել է 41.4 մլն դրամ՝ 2018 թվականի 47.9 մլն դրամի դիմաց կամ՝ 6.5 մլն դրամով պակաս: Հաշվարկը կատարվել է՝ հիմք ընդունելով առկա և հեռակա ասպիրանտների միջին հաշվարկային թվաքանակի համար մոտ 179 ղեկավարներին վճարվող տարեկան 27.2 մլն դրամը, 4.3 մլն դրամի չափով այլ ծախսերի գումարը, ինչպես նաև հաջորդ ուսումնական տարվա ասպիրանտուրայի հավանական դիմորդների համար «Օտար լեզուներ» և «Համակարգչից օգտվելու հմտություններ» առարկաներից նախապատրաստական դասընթացների և քննությունների կազմակերպման համար անհրաժեշտ 9.9 մլն դրամը:

«Հանրակրթության ծրագրի» գծով նախատեսվել է 87,259.8 մլն դրամ՝ 2018 թվականի 84,486.7 մլն դրամի դիմաց, ծախսերի աճը կազմում է 2,773.1 մլն դրամ կամ 3.3 տոկոս:

Ծրագրի շրջանակներում «Տարրական ընդհանուր հանրակրթություն», «Հիմնական ընդհանուր հանրակրթություն», «Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն» և «Նախադպրոցական կրթություն» միջոցառումների գծով նախատեսվել է՝ ընդամենը, 78,982.3 մլն դրամ՝ 2018 թվականի 73,833.7 մլն դրամի դիմաց, ծախսերի աճը կազմում է 5,148.6 մլն դրամ կամ 7.0 տոկոս՝ պայմանավորված հետևյալով.

ա) երեխաների կանխատեսվող թվաքանակի ավելացման հետ կապված՝ ծախսերն աճել են 2,481.8 մլն դրամով, ինչպես նաև 2,401.5 մլն դրամի չափով լրացուցիչ ծախս է հաշվարկվել համընդհանուր ներառական կրթության անցմամբ պայմանավորված՝ հատուկ մանկավարժների և ուսուցչի օգնականների գծով 1937.2 լրացուցիչ դրույքների նախատեսման հետ կապված (հաշվարկներում համապատասխան միջոցներ են նախատեսվել ՀՀ Լոռու,

Սյունիքի, Տավուշի, Արմավիրի մարզերում, Երևան քաղաքում, իսկ 2019 թվականի սեպտեմբերից՝ նաև ՀՀ Արագածոտնի և Շիրակի մարզերում համընդհանուր ներառական կրթության իրականացման գծով):

բ) հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում և դպրոցին նախապատրաստման խմբերում (նախակրթարաններում) ընդգրկված երեխաների սննդով ապահովման գծով նախատեսվել է 1,121.9 մլն դրամ՝ 2018 թվականի 856.6 մլն դրամի դիմաց կամ՝ ծախսերն աճել են 265.3 մլն դրամով: 2018 թվականին սննդով կապահովվեն ՀՀ Արարատի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի, Շիրակի մարզերի, 2019 թվականի սեպտեմբերից՝ նաև ՀՀ Արագածոտնի մարզի պետական հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում և դպրոցին նախապատրաստման խմբերում (նախակրթարաններում) ընդգրկված, շուրջ 51.8 հազար երեխաները, որոնցից 7.8 հազարը՝ 2019 թվականի սեպտեմբերից ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներում (2018 թվականին պետական բյուջեով նախատեսված 856.6 մլն դրամի շրջանակներում սննդով կապահովվեն շուրջ 43.0 հազար երեխա):

Նախագծով ծախսերը հաշվարկվել են 1334 հանրակրթական դպրոցների, միջին տարեկան հաշվարկով, 381.8 հազար աշակերտի ուսուցման գծով՝ 2018 թվականի 364.2 հազարի դիմաց կամ՝ աշակերտների թվաքանակի ավելացումը կազմում է շուրջ 17.6 հազար (ընդ որում, հաշվարկներում նախադպրոցական կրթության մեջ ընդգրկվածների թվաքանակը նախատեսվել է 6.9 հազար՝ 2018 թվականի 6.6 հազարի դիմաց կամ՝ ավելացումը կազմում է 0.3 հազ. երեխա, իսկ հանրակրթական դպրոցների սովորողների թիվը՝ 374.9 հազար աշակերտ՝ 2018 թվականի 357.6 հազարի դիմաց կամ՝ ավելացումը կազմում է 17.3 հազար աշակերտ):

Համընդհանուր ներառական կրթության համակարգի ընդլայնմամբ պայմանավորված՝ կպակասեն հատուկ կրթությանը և ներառական կրթությանը պետական բյուջեից հատկացվող գումարները, դրանք կուղղորդվեն մանկավարժահոգեբանական աջակցությունների տրամադրմանը երեք մակարդակներում և հանրակրթության մեջ ներառված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանը: Նշվածով պայմանավորված, «Հանրակրթության ծրագրի» շրջանակներում «Տարրական հատուկ հանրակրթություն», «Հիմնական հատուկ հանրակրթություն» և «Միջնակարգ հատուկ հանրակրթություն» միջոցառումների գծով նախատեսվել է՝ ընդամենը, 1,413.3 մլն դրամ՝ 2018 թվականի 2,750.7 մլն դրամի դիմաց, ծախսերի նվազումը կազմում է 1,337.4 մլն դրամ կամ 48.6 տոկոս: Ծախսերը նախատեսվել են շուրջ 1.0 հազ. սաների ուսուցման կազմակերպման գծով՝ 2018 թվականի 1.8 հազար սանի դիմաց:

«Հանրակրթության ծրագրի» շրջանակներում «Ներառական կրթություն տարրական դպրոցում», «Ներառական կրթություն միջին դպրոցում» և «Ներառական կրթություն ավագ դպրոցում» միջոցառումների գծով նախատեսվել է՝ ընդամենը, 1,066.6 մլն դրամ՝ 2018 թվականի 3,196.1 մլն դրամի դիմաց, ծախսերի նվազումը կազմում է 2,129.5 մլն դրամ կամ 66.6 տոկոս: Ծախսերը նախատեսվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, միջին տարեկան հաշվարկով, շուրջ 1.9 հազար երեխաների ուսուցման կազ-մակերպման գծով՝ 2018 թվականի 5.8 հազարի դիմաց: 2019 թվականի սեպտեմբերի դրությամբ նշված միջոցառումները կիրականացվեն հանրապետության 50 հանրակրթական դպրոցներում (2018 թվականին ներառական կրթություն իրականացվում է 151 հանրակրթական դպրոցներում):

«Հանրակրթության ծրագրի» շրջանակներում «Տարրական մասնագիտացված հանրակրթություն», «Հիմնական մասնագիտացված հանրակրթություն», «Միջնակարգ մասնագիտացված հանրակրթություն», «Մասնագիտացված հանրակրթական ուսումնական հաստատությունների երեխաների կրթաթոշակ հիմնական ընդհանուր կրթության մակարդակում» և «Մասնագիտացված հանրակրթական ուսումնական հաստատությունների երեխաների կրթաթոշակ միջնակարգ ընդհանուր կրթության մակարդակում» միջոցառումների գծով նախատեսվել է՝ ընդամենը, 3,420.8 մլն դրամ՝ 2018 թվականի 2,878.7 մլն դրամի դիմաց, ծախսերի աճը կազմում է 542.1 մլն դրամ կամ 18.8 տոկոս: Ծախսերը նախատեսվել են շուրջ 3.3 հազար սովորողի ուսուցման գծով՝ 2018 թվականի 3.0 հազարի դիմաց:

«Հանրակրթության ծրագրի» շրջանակներում «Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում» միջոցառման գծով 2019 թվականին նախատեսվել է հատկացնել 1,077.9 մլն դրամ՝ 2018 թվականի 807.3 մլն դրամի դիմաց կամ՝ ծախսերի աճը կազմել է 270.6 մլն դրամ: «Դպրոցներում STEM կրթության և ռոբոտատեխնիկայի զարգացման իրականացում» միջոցառման գծով նախատեսվել է 352.2 մլն դրամ՝ 2018 թվականի 126.9 մլն դրամի դիմաց կամ՝ ծախսերի աճը կազմել է 225.3 մլն դրամ (ծախսերը նախատեսվել են ռոբոտաշինության 74 խմբակների և ինժեներական 348 լաբորատորիաների խմբակավարների վարձատրության գծով, 2018 թվականի՝ համապատասխանաբար, 57 խմբակների և ինժեներական 103 լաբորատորիաների դիմաց): «Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում» միջոցառման գծով նախատեսվել է 334.9 մլն դրամ՝ 2018 թվականի 292.2 մլն դրամի դիմաց կամ՝ ծախսերի աճը կազմել է 42.7 մլն դրամ:

«Արտադպրոցական դաստիարակության ծրագրի» գծով 2019 թվականին նախատեսվել է 4,132.3 մլն դրամ՝ 2018 թվականի 4,039.2 մլն դրամի դիմաց, ծախսերի աճը կազմում է 93.1 մլն դրամ կամ 2.3 տոկոս:

Վերոնշված ծրագրի շրջանակներում «Գրադարանային ֆոնդի համալրում» միջոցառման գծով 2019 թվականին նախատեսվել է հատկացնել 44.4 մլն դրամ՝ հանրապետության դպրոցներից յուրաքանչյուրում 5-6 անուն հանրամատչելի գրականությամբ ապահովման նպատակով (2018 թվականին նշված միջոցառումը նախատեսված չի եղել):

«Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագրի» գծով 2019 թվականին նախատեսվել է 12,127.3 մլն դրամ՝ 2018 թվականի 12,059.9 մլն դրամի դիմաց, ծախսերի աճը կազմում է 67.4 մլն դրամ կամ 0.6 տոկոս:

Վերոնշված ծրագրի շրջանակներում «Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակում», «Գիտական գրադարանային ծառայություններ», «Գիտատեխնիկական գրադարանային ծառայություններ» միջոցառումների գծով նախատեսվել է, ընդամենը՝ 396.6 մլն դրամ՝ 2018 թվականի 330.5 մլն դրամի դիմաց, կամ ծախսերի աճը կազմում է 66.1 մլն դրամ:

«Գիտական ենթակառուցվածքի արդիականացում» միջոցառման գծով նախատեսվել է 7,147.4 մլն դրամ՝ 2018 թվականի 7,275.6 մլն դրամի դիմաց կամ՝ 128.2 մլն դրամով պակաս, «Հասարակական-քաղաքագիտական հետազոտություններ» միջոցառման գծով՝ 89.8 մլն դրամ (պահպանվել է 2018 թվականի հաստատված բյուջեի մակարդակը):

«Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն» միջոցառման գծով 2019 թվականին նախատեսվել է 851.2 մլն դրամ՝ 2018 թվականի 839.4 մլն դրամի դիմաց կամ՝ 11.8 մլն դրամով ավել, «Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» միջոցառման գծով՝ 1,397.5 մլն դրամ՝ 2018 թվականի 1,306.7 մլն դրամի դիմաց կամ՝ 90.8 մլն դրամով ավել, «Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ» միջոցառման գծով՝ 120.0 մլն դրամ՝ 2018 թվականի 135.0 մլն դրամի դիմաց կամ՝ 15.0 մլն դրամով պակաս:

«Բարձր էներգիաների ֆիզիկայի բնագավառի ենթակառուցվածքների արդիականացում», «Արագացուցչային տեխնոլոգիաների զարգացում» և «Անտենային էտալոնների պահպանում և զարգացում» միջոցառումների գծով 2019 թվականին նախատեսվել է՝ համապատասխանաբար, 705.6; 275.4 և 45.0 մլն դրամ (նշված միջոցառումների գծով պահպանվել է 2018 թվականի հաստատված բյուջեի մակարդակը):

«Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ» միջոցառման գծով նախատեսվել է 842.0 մլն դրամ՝ 2018 թվականի 812.4 մլն դրամի դիմաց

կամ՝ 29.6 մլն դրամով ավել, որը պայմանավորված է հաշվարկի հիմքում դրված հավելավճար ստացողների միջինացված թվերից, քանի որ գիտական աստիճան ունեցողների թվաքանակը տարվա կտրվածքով ենթարկվում է փոփոխության, ինչն ամրագրվում է յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո՝ տվյալ տարվա համար ձևավորելով հստակ ֆինանսավորման գումար: Միջին կտրվածքով հաշվարկվել է հավելավճար գիտության 629 դոկտորների և գիտության 1550 թեկնածուների համար, համապատասխանաբար՝ ամսական 50.0 հազ. դրամի և 25.0 հազ. դրամի հաշվարկով:

«ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների պատվովճարների տրամադրում» միջոցառման գծով նախատեսվել է 182.4 մլն դրամ՝ 2018 թվականի 158.4 մլն դրամի դիմաց կամ՝ 24.0 մլն դրամով ավել, հաշվարկը կատարվել է 58 իսկական և 65 թղթակից անդամների համար, համապատասխանաբար՝ ամսական 150.0 հազ. դրամի և 100.0 հազ. դրամի հաշվարկով:

«ՀՀ ԳԱԱ ինստիտուտների տեխնիկական հագեցվածության բարելավում և արդիականացում» միջոցառման գծով 2019 թվականին նախատեսվել է 50.0 մլն դրամ՝ պահպանելով 2018 թվականի հաստատված բյուջեի մակարդակը:

2019 թվականին չի նախատեսվել «Համահայկական և հանրապետական կրթական խորհրդաժողով» միջոցառման գծով 2018 թվականին նախատեսված 11.7 մլն դրամը (նշված միջոցառումը 2 տարին մեկ է անցկացվում):

«Ապահով դպրոց» ծրագրի գծով նախատեսվել է 1,170.1 մլն դրամ՝ 2018 թվականի 2,197.3 մլն դրամի դիմաց, նվազումը կազմում է 1,027.2 մլն դրամ, որը կրթական օբյեկտների հիմնանորոգման գծով է (ծրագրի շրջանակներում «Կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավում» միջոցառման գծով 2019 թվականին նախատեսվել է 1,060.0 մլն դրամ, «Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի կառուցում» միջոցառման գծով՝ 50.2 մլն դրամ):

«Կրթության որակի ապահովում» ծրագրի գծով նախատեսվել է 9,810.0 մլն դրամ՝ 2018 թվականի 4,000.7 մլն դրամի դիմաց, ծախսերի աճը կազմում է 5,809.3 մլն դրամ կամ 145.2 տոկոս:

2019 թվականին «Համաշխարհային բանկի կողմից իրականացվող «Կրթության բարելավում՝ վարկային ծրագիր» և «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավման ծրագիր» ծրագրի շրջանակներում կապիտալ ներդրումներ ավագ, միջնակարգ և հիմնական դպրոցներում և կրթության ոլորտի կազմակերպություններում /ԿՏԱԿ/» միջոցառումների գծով նախատեսվել է 3,780.5 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,965.7 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 814.8 մլն դրամ: Միջոցառումների

նպատակն է հանրակրթության ոլորտի հետագա բարելավումը՝ դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացման և կրթության հավասար մեկնարկային հնարավորություն-ների ապահովման, միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանն աջակցության, հիմնական կրթական կազմակերպությունների կարողությունների հզորացման և կրթության որակի բարելավման աջակցության միջոցով, ինչպես նաև մասնագիտական կրթության ուղղությամբ նորարարությունների խթանումը՝ նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանն աջակցության միջոցով:

«Գնահատման և թեստավորման ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվել է 494.7 մլն դրամ՝ 2018 թվականի 371.3 մլն դրամի դիմաց կամ՝ ծախսերն աճել են 123.4 մլն դրամով, ծախսերը նախատեսվել են քննական թեստերի և հարցաշարերի մշակման և փորձարկման, դպրոցի ավարտական և բուհերի ընդունելության միասնական քննությունների կազմակերպման և անցկացման, սովորողների գիտելիքների արտաքին ընթացիկ գնահատման, ազգային ստուգատեսերի անցկացման, TIMSS/PIRLS, PISA ստուգատեսներին մասնակցության նպատակով:

«Ատեստավորման նոր համակարգի ներդրում՝ ուղղված ուսուցիչների որակի բարձրացմանը» և «Կրթության և գիտության ոլորտի այլ միջոցառումներ» միջոցառումների գծով նախատեսվել է՝ համապատասխանաբար, 862.4 և 3,715.9 մլն դրամ (2018 թվականին նշված միջոցառումները նախատեսված չեն եղել):

«Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում» ծրագրի գծով նախատեսվել է 1,590.5 մլն դրամ՝ 2018 թվականի 887.8 մլն դրամի դիմաց, ծախսերի աճը կազմում է 702.7 մլն դրամ, որը «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումների» գծով է, համընդհանուր ներառական կրթության անցմամբ պայմանավորված՝ հատուկ կրթական հիմնարկների՝ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների վերանվանման հետ կապված:

Միաժամանակ, 2019 թվականին միջոցներ չեն նախատեսվել 2018 թվականին նախատեսված՝ «Ռազմահայրենասիրական դաստիարակության ռազմավարության իրականացում», «Հայրենյաց ասպետներ» հայրենասիրական կրթադաստիարակչական ծրագիր», «Աջակցություն «Դպրոց-կենտրոնների միություն» իրավաբանական անձանց միության գործունեությանը», «Աջակցություն «Երևանի թվային պլանետարիում» ծրագրի իրականացմանը» և «Կրթության գերազանցության ազգային ծրագրի իրականացում» միջոցառումների գծով:

Այս ոլորտում Նախագծով նախատեսված ծախսերի համեմատությունը ՀՀ 2017 թվականի բյուջետային տարվա փաստացի, ինչպես նաև ՀՀ 2018 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 12 աղյուսակում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Նախարարության գծով ծախսերը (առանց կառավարման ապարատի պահպանման ծախսերի) կկազմեն 438 817.7 մլն դրամ կամ 2019 թվականի պետական բյուջեի ծախսերը 2018 թվականի հաստատված պետական բյուջեի նկատմամբ աճում են 34 748.4 մլն դրամով (2018 թվականին՝ 404 069.3 մլն դրամ) (ստորև ներկայացված տեքստում համեմատությունը կատարվում է 2018 թվականի հաստատված պետական բյուջեի նկատմամբ):

2019 թվականին նախատեսվում է պահպանել 2018 թվականի համար նախատեսված նվազագույն ամսական աշխատավարձի չափը՝ 55.0 հազ. դրամ:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ծախսերն ըստ ծրագրերի (միջոցառումների) բնութագրվում են հետևյալ կերպ.

Պարգևավճարներ և պատվովճարներ

-«Զոհված՝ հետմահու «Հայաստանի ազգային հերոս» ՀՀ բարձրագույն կոչում ստացած կամ «Մարտական խաչ» շքանշանով պարգևատրված անձի ընտանիքին պարգևավճարի տրամադրման ապահովում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 0.8 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 1.6 մլն դրամ): Ծախսերի նվազումը 0.8 մլն դրամի չափով պայմանավորված է պարգևավճարին ուղղվող ծախսերի փոփոխությամբ, ինչպես նաև փաստացի կատարողականից ելնելով, վճարման ծառայության ծախսի վերանայմամբ (նախատեսվում է 0.48% չափով 2018 թվականի 1% դիմաց):

-«Զինծառայողներին, ՀՄՊ մասնակիցներին, այլ պետություններում մարտական գործողությունների մասնակիցներին, զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին, ընտանիքներին տրվող պարգևավճարներ» միջոցառման գծով ծախսը կազմում է 11 668.9 մլն դրամ (պահպանվել է 2018 թվականի մակարդակը):

-«Վետերանների պատվովճարներ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 238.2 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 271.2 մլն դրամ): Ծախսերի նվազումը 33.0 մլն դրամի չափով պայմանավորված է պատվովճար ստացողների թվի նվազմամբ կամ կանխատեսվող շահառուների թիվը կկազմի 397 շահառու (2018 թվականի 452 մարդու դիմաց)՝ պահպանելով պատվովճարի ամսական չափը՝ 50 հազ. դրամ:

-«Զոհված՝ հետմահու «Հայաստանի ազգային հերոս» ՀՀ բարձրագույն կոչում ստացած կամ «Մարտական խաչ» շքանշանով պարգևատրված անձի ընտանիքին տրվող պարգևավճար» միջոցառման ծախսը կազմում է 162.6 մլն դրամ (2018 թվականին՝ 159.0 մլն դրամ): Ծախսերի աճը 3.6 մլն դրամի չափով պայմանավորված է շահառուների թվաքանակի աճով կամ կանխատեսվում է պարգևավճար վճարել 102 մարդու հաշվով (2018 թվականի 100 մարդու դիմաց)՝ պահպանելով 2018 թվականի համար նախատեսված պարգևավճարների չափերը՝ Հայաստանի ազգային հերոսի ընտանիքի համար՝ 250.0 հազ. դրամ, Առաջին աստիճանի Մարտական խաչ շքանշան ունեցող ընտանիքի համար՝ 150.0 հազ. դրամ և Երկրորդ աստիճանի Մարտական խաչ շքանշան ունեցող ընտանիքի համար՝ 100.0 հազ. դրամ:

Անապահով սոցիալական խմբերին աջակցություն

-«Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների իրականացման ապահովում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 377.4 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 395.0 մլն դրամ): Ծախսերի նվազումը 17.5 մլն դրամի չափով պայմանավորված է նպաստներին ուղղվող ծախսերի փոփոխությամբ:

-«Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների տրամադրման համար անհրաժեշտ ձևաթղթերի տպագրություն» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 7.6 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 9.1 մլն դրամ): Ծախսերի նվազումը 1.6 մլն դրամի չափով պայմանավորված է ձեռքբերվելիք ձևաթղթերի քանակի նվազմամբ 120 000 հատով 2018 թվականի 702 140 հատ ձևաթղթի դիմաց:

-«Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» միջոցառման ծախսը կազմում է 37 744.0 մլն դրամ (2018 թվականին՝ 39 498.3 մլն դրամ): Ծախսերի նվազումը 1 754.3 մլն դրամի չափով պայմանավորված է նպաստառուների թվաքանակի նվազմամբ կամ կանխատեսվում է 100 036 ընտանիք 2018 թվականի 104 685 ընտանիքի դիմաց՝ պահպանելով ընտանեկան նպաստի միջին ամսական չափը՝ 31 442.2 դրամ:

Սոցիալական փաթեթների ապահովում

-«Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» միջոցառմամբ ծախսը կազմում է 10 619.5 մլն դրամ (պահպանվել է 2018 թվականի մակարդակը):

Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց

-«Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 2 148.8 մլն դրամի չափով (պահպանվել է 2018 թվականի մակարդակը):

2019 թվականին նախատեսվում է խնամք կազմակերպել միջին տարեկան 1210 միայնակ ծերերի և հաշմանդամ կենսաթոշակառուների համար:

-«Միայնակ տարեցների և հաշմանդամների տնային պայմաններում սոցիալական սպասարկում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 130.4 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 135.2 մլն դրամ): Ծախսերի նվազումը 4.8 մլն դրամի չափով պայմանավորված է շահառուների թվաքանակի նվազմամբ կամ կանխատեսվում է 1350 մարդ 2018 թվականի 1450 դիմաց:

-«Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 13.7 մլն դրամի չափով (պահպանվել է 2018 թվականի մակարդակը):

2019 թվականին կանխատեսվող շահառուների թվաքանակը կկազմի 20 մարդ:

-«Միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 202.7 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 212.9 մլն դրամ): Ծախսերի նվազումը 10.2 մլն դրամի չափով պայմանավորված է.

ա/ շահառուների թվաքանակի նվազմամբ 167 մարդով կամ 2019 թվականին կանխատեսվող շահառուների ընդամենը թիվը կկազմի 3273 2018 թվականի 3440 դիմաց, այդ թվում.

- տնային պայմաններում սպասարկվող շահառուների թիվը կանխատեսվում է 1666 2018 թվականի 1748 շահառուի դիմաց, իսկ ցերեկային խնամքի կենտրոններում սպասարկվողների թիվը ՝ 1607 2018 թվականի 1692 շահառուի դիմաց,

- կպահպանվի ցերեկային խնամքի կենտրոններում տրվող մեկանգամյա սննդի գումարի չափը՝ 144 դրամ:

բ/ շահառուների թվաքանակի նվազմամբ պայմանավորված հաստիքային միավորների թվի նվազմամբ կամ նախատեսվում է 163 2018 թվականի 171 դիմաց:

-«Տարեցների շուրջօրյա խնամք և սոցիալական սպասարկում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 24.0 մլն դրամի չափով (պահպանվել է 2018 թվականի համար նախատեսված չափը):

2019 թվականին միջոցառման շրջանակում շահառուների միջին տարեկան թիվը կկազմի 55 մարդ:

-«Հատուկ խմբերին դասված որոշակի կատեգորիայի անձանց կացարանով ապահովման ծառայությունների տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 6.7 մլն դրամի չափով (պահպանվել է 2018 թվականի համար նախատեսված չափը):

2019 թվականին միջոցառման շրջանակում շահառուների միջին տարեկան թիվը կկազմի 57 մարդ:

-«Մտավոր ու ֆիզիկական սահմանափակումներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայությունների տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 18.5 մլն դրամի չափով (պահպանվել է 2018 թվականի համար նախատեսված չափը):

2019 թվականին միջոցառման շրջանակում շահառուների միջին տարեկան թիվը կկազմի 15 մարդ:

-«Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայությունների տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 12.4 մլն դրամի չափով (պահպանվել է 2018 թվականի համար նախատեսված չափը):

2019 թվականին միջոցառման շրջանակում շահառուների միջին տարեկան թիվը կկազմի 16 մարդ:

-«Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 52.6 մլն դրամի չափով (պահպանվել է 2018 թվականի մակարդակը):

2019 թվականին միջոցառման շրջանակում շահառուների միջին տարեկան թիվը կկազմի 100 մարդ, իսկ մեկ շահառուի գծով մեկ օրվա սննդի գծով ծախսը՝ 760.0 դրամ (սնունդը կտրվի օրական երկու անգամ):

-«Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս շուրջ 20.0 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 19.9 մլն դրամ): Ծախսերի աճը 0.1 մլն դրամի չափով պայմանավորված է միջոցառման գծով ավելացված արժեքի հարկի գծով գումարի նախատեսմամբ՝ 2.8 մլն դրամ, առանձին տնտեսագիտական դասակարգման հոդվածների գծով ծախսերի նվազման պայմաններում:

Ժողովրդագրական վիճակի բարելավում

-«Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի տրամադրման իրականացման ապահովում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 18.2 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 28.4 մլն դրամ): Ծախսերի նվազումը 10.2 մլն դրամի չափով պայմանավորված է նպաստին ուղղվող ծախսերի փոփոխությամբ՝ փաստացի կատարողականից ելնելով, վճարման ծառայության գումարի չափի վերանայմամբ (նախատեսվում է 0.67% չափով 2018 թվականի 1% դիմաց):

-«Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ» միջոցառմամբ նախատեսվում է 2 720.3 մլն դրամի չափով ծախս (2018 թվականին՝ 2 841.0 մլն դրամ): Ծախսերը նվազում են 120.7 մլն դրամով, որը պայմանավորված է նպաստ ստացողների թվի նվազմամբ կամ կանխատեսվում է

12 594 շահառու (2018 թվականի 13 153 մարդու դիմաց)՝ նպաստի ամսական չափի պահպանման պայմաններում՝ 18000 դրամ:

-«Երեխայի ծննդյան միանվագ նպաստ» միջոցառմամբ նախատեսվում է 11 324.5 մլն դրամի չափով ծախս (2018 թվականին՝ 9 977.3 մլն դրամ): Ծախսերը աճում են 1 347.2 մլն դրամով, որը պայմանավորված է.

- երկրորդ երեխայի ծննդյան դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափի աճով 100.0 հազ. դրամով 2018 թվականի 50.0 հազ. դրամի դիմաց:

- մեկից ավելի երեխա ծնվելու դեպքում երեխայի միանվագ նպաստի վճարի չափը նոր ծնված յուրաքանչյուր երեխայի հնարավոր բոլոր կարգաթվերի համար սահմանված չափերի հանրագումարի չափով հաշվարկմամբ (նոր ծնված երեխաներից ամենաբարձր կարգաթիվ ունեցող երեխայի համար սահմանված չափի դիմաց):

- կանխատեսվող ծնունդների թվի նվազմամբ՝ 1 776 մարդով (հաշվարկներում հաշվի է առնվել ՀՀ վիճակագրական կոմիտեի 2015-2017 թվականների փաստացի ծնված երեխաների միջին թվաքանակը՝ 40019 երեխա) 2018 թվականի 41795 դիմաց:

- կանխատեսվող ծնունդների թվի նկատմամբ երրորդ և ավելի երեխաների տեսակարար կշռի փոփոխությամբ (հաշվարկներում հաշվի է առնվել ՀՀ վիճակագրական կոմիտեի 2015-2016 թվականներին փաստացի ընդհանուր ծնված երեխաների նկատմամբ երրորդ և ավելի երեխաների տեսակարար կշիռը): Այսպիսով, կանխատեսվող ընդհանուր ծնունդների թվից երրորդ և ավելի երեխաների թիվը կկազմի 7 674 (կամ 19.18%) 2018 թվականի 8 100 երեխայի դիմաց:

2019 թվականին կպահպանվի 2018 թվականի համար նախատեսված երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափերը՝ առաջին երեխայի ծննդյան դեպքում՝ 50.0 հազ. դրամ, երրորդ և չորրորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 1.0 մլն դրամ, հինգ և ավելի երեխայի ծննդյան դեպքում՝ 1.5 մլն դրամ (երրորդ և ավելի երեխայի ծննդյան դեպքում՝ ընտանեկան դրամագլխի (կապիտալ) համակարգը):

Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում

-«Ժամանակավոր անաշխատունակության թերթիկների տպագրություն» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 1.3 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 11.0 մլն դրամ): Ծախսերի նվազումը 9.7 մլն դրամի չափով պայմանավորված է ձեռքբերվելիք ձևաթղթերի քանակի նվազմամբ կամ կանխատեսվում է ձեռք բերել 29 730 հատ 2018 թվականի 170 000 դիմաց:

-«Մայրության նպաստ» միջոցառմամբ նախատեսվում է 10 164.9 մլն դրամի չափով ծախս (2018 թվականին՝ 10 253.7 մլն դրամ): Ծախսերը նվազում են 88.9 մլն դրամով, որը պայմանավորված է.

ա/ 27 426 չաշխատող անձանց (2018 թվականի 28 644 անձի դիմաց) տրվելիք մայրության նպաստի (միանվագ շուրջ 127.0 հազ. դրամ) գծով ծախսերի նվազմամբ՝ 154.3 մլն դրամի չափով (ծախսերի նվազումը պայմանավորված է կանխատեսվող ծնունդների թվի նվազմամբ),

բ/ 2016 թվականի փաստացի կատարողականից ելնելով ծախսերի աճով 6.9 մլն դրամով:

Միաժամանակ հաշվարկներում հաշվի է առնվել ՀՀ վիճակագրական կոմիտեի 2017 թվականի հանրապետության միջին ամսական անվանական աշխատավարձի աճի միջին տոկոսը (3.2%):

-«Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 2 296.4 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 2 501.9 մլն դրամ): Ծախսերի նվազումը 205.5 մլն դրամի չափով պայմանավորված է 2016 թվականի փաստացի կատարողականից ելնելով ծախսերի նվազմամբ: Միաժամանակ հաշվարկներում հաշվի է առնվել ՀՀ վիճակագրական կոմիտեի 2017 թվականի հանրապետության միջին ամսական անվանական աշխատավարձի աճի միջին տոկոսը (3.2%):

-«Աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում» միջոցառման գծով նախատեսվում է 76.6 մլն դրամի չափով ծախս (2018 թվականին՝ 81.9 մլն դրամ): Ծախսերի նվազումը կազմում է 5.3 մլն դրամ, որը պայմանավորված է շահառուների թվի նվազմամբ կամ կանխատեսվում է 383 մարդ 2018 թվականի 409 մարդու դիմաց:

Զբաղվածության ծրագիր

-«Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցում և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 34.7 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 67.7 մլն դրամ): Ծախսերի նվազումը կազմում է 33.0 մլն դրամ, որը պայմանավորված է շահառուների թվի նվազմամբ կամ կանխատեսվում է 100 մարդ 2018 թվականի 200 մարդու դիմաց:

-«Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 50.0 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 31.4 մլն դրամ): Ծախսերի աճը կազմում է 18.6 մլն դրամ, որը

պայմանավորված է հաշվարկների հիմքում դրվող աջակցության առավելագույն արժեքով (մեկ միլիոն դրամ)՝ պահպանելով շահառուների թվաքանակը՝ 50:

-«Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում" ծրագրի ուսուցման կազմակերպման և խորհրդատվական ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 10.0 մլն դրամի չափով (պահպանվել է 2018 թվականի համար նախատեսված չափը):

-«Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին մինչև վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 63.9 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 78.1 մլն դրամ): Ծախսերի նվազումը կազմում է 14.2 մլն դրամ, որը պայմանավորված է շահառուների թվի նվազմամբ կամ կանխատեսվում է 700 մարդ 2018 թվականի 856 մարդու դիմաց:

-«Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 19.0 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 27.5 մլն դրամ): Ծախսերի նվազումը 8.4 մլն դրամի չափով պայմանավորված է հաշվարկների հիմքում դրված իրավական կարգերի փոփոխությամբ՝ պահպանելով շահառուների թվաքանակը (22 շահառու):

-«Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 7.0 մլն դրամի չափով (պահպանվել է 2018 թվականի համար նախատեսված չափը):

-«Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 132.9 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 163.6 մլն դրամ): Ծախսերի նվազումը 30.7 մլն դրամի չափով պայմանավորված է որը պայմանավորված է շահառուների թվի նվազմամբ կամ կանխատեսվում է 600 մարդ 2018 թվականի 700 մարդու դիմաց՝ հաշվարկների հիմքում դրված իրավական կարգերի փոփոխության պայմաններում:

-«Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում» միջոցառմամբ նախատեսվում է հատկացնել 242.5 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 230.3 մլն դրամ): Ծախսերի աճը 12.2 մլն դրամի չափով պայմանավորված է շահառուների թվի փոփոխությամբ կամ կանխատեսվում է 1175 մարդ 2018 թվականի 1775 մարդու դիմաց՝ հաշվարկների հիմքում դրվող միանվագ փոխհատուցման առավելագույն արժեքի կիրառմամբ:

-«Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող

անձանց կրթաթոշակի տրամադրում» միջոցառմամբ նախատեսվում է հատկացնել ծախս 57.8 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 70.6 մլն դրամ): Ծախսերի նվազումը կազմում է 12.8 մլն դրամ, որը պայմանավորված է շահառուների թվի նվազմամբ կամ կանխատեսվում է 700 մարդ 2018 թվականի 856 մարդու դիմաց:

-«Աշխատաշուկայում անմրցունակ անձանց գործատուներին այցելության համար դրամական օգնության տրամադրում» միջոցառմամբ նախատեսվում է հատկացնել ծախս 30.1 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 32.7 մլն դրամ): Ծախսերի նվազումը կազմում է 2.6 մլն դրամ, որը պայմանավորված է շահառուների թվի նվազմամբ կամ կանխատեսվում է 1205 մարդ 2018 թվականի 1306 մարդու դիմաց:

-«Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 63.6 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 72.4 մլն դրամ): Ծախսերի նվազումը 8.8 մլն դրամի չափով պայմանավորված է հաշվարկների հիմքում դրված իրավական կարգերի փոփոխությամբ՝ շահառուների թվաքանակի աճի (7 մարդով) պայմաններում 2018 թվաքանակի 100 դիմաց:

-«Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց՝ երեխայի մինչև երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում» միջոցառմամբ նախատեսվում է հատկացնել ծախս 242.0 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 121.0 մլն դրամ): Ծախսերի աճը 121.0 մլն դրամի չափով պայմանավորված է շահառուների թվաքանակի աճով կամ կանխատեսվում է 400 2018 թվաքանակի 200 դիմաց:

-«Հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների մատուցում զբաղվածության աջակցման կենտրոնում» միջոցառմամբ նախատեսվում է հատկացնել 9.8 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2018 թվականի համար նախատեսված չափը):

Բնակարանային ապահովում

-«Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովում» միջոցառմամբ նախատեսվում է 560.0 մլն դրամ, որն ուղղվելու է աղետի գոտու գյուղական բնակավայրերի ծրագրի շահառու ճանաչված 498 ընտանիքներից 25-ի բնակարանային խնդիրների լուծմանը՝ նորակառույց բնակելի տների ձեռք բերմամբ:

-«Զոհված (մահացած) առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովում և բնակարանային պայմանների բարելավում» միջոցառմամբ նախատեսվում է 500.0 մլն դրամ (պահպանվել է 2018 թվականի

մակարդակը), որի շրջանակներում նախատեսվում է լուծել 62 ընտանիքի բնակարանային ապահովման խնդիրը ֆինանսական աջակցության տրամադրմամբ:

Կենսաթոշակային ապահովություն

-«Կենսաթոշակների և այլ դրամական վճարների տրամադրման տեղեկատվական միասնական համակարգերի սպասարկում և շահագործում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 79.4 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 71.0 մլն դրամ): Ծախսերի աճը 8.4 մլն դրամի չափով պայմանավորված է գործատուի մասին տեղեկատվության հաշվառման, աշխատանքային ստաժի հաշվարկման, աշխատանքային գրքույկների լուսապատճենների հաշվառման և պահպանման ենթահամակարգի և ՔԿԱԳ-ի մարմինների հետ ծննդյան ակտերի և ծնողական իրավունքներից զրկելու (վերականգնելու), կենսաթոշակառուի մահվան վերաբերյալ տեղեկատվության առցանց փոխանակման ծրագրային ենթահամակարգի սպասարկման համար ծախսերի նախատեսմամբ:

-«Կենսաթոշակների և այլ դրամական վճարների իրականացման ապահովում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 1546.1 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 1439.1 մլն դրամ): Ծախսերի աճը 107.0 մլն դրամի չափով պայմանավորված է կենսաթոշակներին, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստներին, պարգևավճարներին, պատվովճարներին և այլ ծրագրերին ուղղվող ծախսերի փոփոխությամբ:

-«Կենսաթոշակների ձևաթղթերի տպագրություն» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 0.6 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 1.1 մլն դրամ): Ծախսերի նվազումը 0.5 մլն դրամի չափով պայմանավորված է ձեռքբերվելիք ձևաթղթերի գնի նվազմամբ՝ քանակի փոփոխության պայմաններում կամ կանխատեսվում է ձեռք բերել 55 000 հատ 2018 թվականի 45 000 դիմաց:

-«Կենսաթոշակային համակարգի հանրային իրազեկման աշխատանքներ» միջոցառմամբ նախատեսվում է հատկացնել 9.9 մլն դրամի չափով ծախս (2018 թվականին՝ 44.1 մլն դրամ): Ծախսերի նվազումը 34.9 մլն դրամի չափով պայմանավորված է փաստացի կատարողականից ելնելով ծախսերի վերանայմամբ:

-«Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ» միջոցառմամբ նախատեսվում է 27 510.5 մլն դրամի չափով ծախս (2018 թվականին՝ 24 639.2 մլն դրամ): Ծախսերի աճը 2 871.3 մլն դրամի չափով պայմանավորված է.

ա/ կենսաթոշակառուների թվաքանակի աճով՝ 2340 մարդով կամ 2019 թվականին կանխատեսվում է 32 508 մարդ,

բ/ նվազագույն կենսաթոշակի չափը 25 500 դրամի չափով սահմանմամբ, արդյունքում կենսաթոշակի միջին ամսական չափը կկազմի 70 522.4 դրամ 2018 թվականի հաշվարկային 68 061 դրամի դիմաց:

2019 թվականին նախատեսվում է պահպանել 2018 թվականի համար նախատեսված կենսաթոշակի հիմնական չափը՝ 16.0 հազ. դրամ և զինծառայության ստաժի մեկ տարվա արժեքը՝ 1500 դրամ:

-«Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ» միջոցառմամբ նախատեսվում է 559.1 մլն դրամի չափով ծախս (2018 թվականին՝ 567.1 մլն դրամ): Ծախսերի նվազումը 8.0 մլն դրամի չափով պայմանավորված է.

ա/ կենսաթոշակառուների թվաքանակի նվազմամբ կամ կանխատեսվում է 1750 մարդ 2018 թվականի 1918 մարդու դիմաց,

բ/ նվազագույն կենսաթոշակի չափը 25 500 դրամի չափով սահմանմամբ, արդյունքում կենսաթոշակի միջին ամսական չափը կկազմի 26 623.1 դրամ 2018 թվականի հաշվարկային 24 639.9 դրամի դիմաց:

-«Աշխատանքային կենսաթոշակներ» միջոցառմամբ նախատեսվում է 222 863.9 մլն դրամի չափով ծախս (2018 թվականին՝ 210 470.9 մլն դրամ): Ծախսերի աճը 12 393.0 մլն դրամով պայմանավորված է.

ա/ կենսաթոշակառուների թվաքանակի աճով կամ կանխատեսվում է 461 474 մարդ 2018 թվականի 445 595 մարդու դիմաց,

բ/ նվազագույն կենսաթոշակի չափը 25 500 դրամի չափով սահմանմամբ, արդյունքում կենսաթոշակի միջին ամսական չափը կկազմի 40 244.9 դրամ 2018 թվականի հաշվարկային 39 361 դրամի դիմաց:

2019 թվականին նախատեսվում է պահպանել 2018 թվականի համար նախատեսված կենսաթոշակի հիմնական չափը՝ 16.0 հազ. դրամ և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը՝ մինչև 10 տարվա ստաժ ունեցողների համար՝ 800 դրամ, իսկ 10 տարուց ավելի ստաժ ունեցողների համար՝ 500 դրամ:

-«ՀՀ օրենքներով նշանակված կենսաթոշակներ» միջոցառմամբ նախատեսվում է 2 732.1 մլն դրամի չափով ծախս (2018 թվականին՝ 2 648.6 մլն դրամ): Ծախսերը աճում են 83.4 մլն դրամով, որը պայմանավորված է.

ա/ կենսաթոշակառուների թվաքանակի աճով կամ կանխատեսվում է 656 մարդ 2018 թվականի համար նախատեսված 645 մարդու դիմաց,

բ/ կենսաթոշակի միջին ամսական չափի ճշտմամբ (347 059.9 դրամ) 2018 թվականի հաշվարկային 342 200.9 դրամի դիմաց:

2019 թվականին նախատեսվում է պահպանել 2018 թվականի համար նախատեսված կենսաթոշակի հիմնական չափը՝ 14.0 հազ. դրամ և մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը՝ 5000 դրամ:

-«Կուտակային կենսաթոշակային հատկացումներ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 56 779.6 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 42 633.0 մլն դրամ): Ծախսերը աճում են 14 146.6 մլն դրամով, որը պայմանավորված է.

ա/ 2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ճշտված շահառուների թվաքանակի (288.8 հազ. շահառու) նկատմամբ շուրջ 6.5% աճով կամ 2019 թվականին կանխատեսվող միջին տարեկան թվաքանակը կկազմի 307.6 հազ. շահառու (2018 թվականի 219.8 հազ. շահառուի դիմաց),

բ/ կուտակային համակարգի մասնակիցների միջին աշխատավարձի շուրջ 5% բնականոն աճով:

Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ

-«Հանրային իրազեկման միջոցառումների իրականացում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 21.3 մլն դրամի չափով (պահպանվել է 2018 թվականի մակարդակը):

-«Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման), շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 314.0 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 318.2 մլն դրամ): Ծախսերի նվազումը 4.1 մլն դրամի չափով պայմանավորված է հաշվարկների ճշտմամբ:

Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն

-«Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ» միջոցառմամբ նախատեսվում է 2017.3 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2018 թվականի համար նախատեսված չափը):

2019 թվականին նախատեսվում է խնամք կազմակերպել միջին տարեկան 649 երեխայի համար:

-«Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին դրամական աջակցության տրամադրում» միջոցառմամբ նախատեսվում է 5.8 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2018 թվականի համար նախատեսված չափը): 2019 թվականին նախատեսվում է անձնական մանր ծախսերի համար գումար տրամադրել 195 երեխայի:

-«Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն» միջոցառման

ծախսը կազմում է 1.4 մլն դրամ (2018 թվականին՝ շուրջ 16.0 մլն դրամ): Ծախսերը նվազում են 14.6 մլն դրամով, որը պայմանավորված է փաստացի կատարողականից ելնելով, ծախսերի վերանայմամբ: Միջոցառման շրջանակում նախատեսվում է շահառուների համար վարձակալել 4 բնակարան:

-«Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտներին միանվագ դրամական օգնության տրամադրում» միջոցառման ծախսը կազմում է 0.6 մլն դրամ (պահպանվել է 2018 թվականի համար նախատեսված չափը): Ծրագրի շրջանակում երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտների միանվագ դրամական օգնություն ստացողների թիվը կկազմի 12 շահառու, իսկ միանվագ դրամական օգնության չափը՝ 50.0 հազ. դրամ:

-«ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու ծառայություններ (բեռնաթափում)» միջոցառմամբ նախատեսվում է 23.1 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2018 թվականի համար նախատեսված չափը):

-«Կենսաբանական ընտանիք տեղափոխված երեխաների ընտանիքներին բնաիրային օգնության փաթեթի տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 24.5 մլն դրամի չափով (պահպանվել է 2018 թվականի համար նախատեսված չափը):

-«Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների երեխաներին սոցիալական ծառայությունների տրամադրում» միջոցառմամբ նախատեսվում է շուրջ 238.0 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2018 թվականի համար նախատեսված չափը):

2019 թվականին երեք երեխաների սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների ծառայություններից օգտվողների միջին տարեկան թիվը կկազմի 300 երեխա:

-«Երեխաների գիշերօթիկ խնամքի ծառայություններ» միջոցառմամբ նախատեսվում է 505.1 մլն դրամի չափով ծախս (2018 թվականին՝ 646.1 մլն դրամ): Ծախսերը նվազում են 141.0 մլն դրամով, որը պայմանավորված է.

ՀՀ կառավարության 04.07.2018թ. N 762-Ն որոշման համաձայն՝ «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ը վերակազմակերպվել է «Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի, արդյունքում կանխատեսվող շահառուների թիվը կկազմի 350 շահառու 2018 թվականի 450 դիմաց:

-«Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից կյանքի դժվար իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական հոգածության ծառայություններ» միջոցառման գծով

նախատեսվում է ծախս 74.7 մլն դրամի չափով (պահպանվել է 2018 թվականի համար նախատեսված չափը):

2019 թվականին միջոցառման շրջանակում շահառուների միջին տարեկան թիվը կկազմի 250 մարդ:

-«Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 152.8 մլն դրամի չափով (պահպանվել է 2018 թվականի համար նախատեսված չափը):

2019 թվականին միջոցառման շրջանակում կանխատեսվող խնամատար ընտանիքների թիվը կկազմի 90, խնամատար ընտանիքներ տեղափոխվող երեխաների թիվը՝ 94, իսկ մեկ երեխայի հաշվով տրվող օժանդակության փաթեթի գումարը՝ 718.9 հազ. դրամ:

-«Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 34.6 մլն դրամի չափով (պահպանվել է 2018 թվականի համար նախատեսված չափը):

2019 թվականին միջոցառման շրջանակում շահառուների միջին տարեկան թիվը կկազմի 17:

-«Ներառական մանկապարտեզում հաշմանդամություն ունեցող երեխաների ցերեկային խնամքի ծառայություններ» միջոցառմամբ նախատեսվում է հատկացնել 26.4 մլն դրամի չափով ծախս (2018 թվականին՝ 38.1 մլն դրամ): Ծախսերի նվազումը 11.7 մլն դրամի չափով պայմանավորված է փաստացի կատարողականով:

2019 թվականին միջոցառման շրջանակում շահառուների միջին տարեկան թիվը կկազմի 24 շահառու:

-«Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայություններ» միջոցառմամբ նախատեսվում է 303.6 մլն դրամի չափով ծախս (2018 թվականին՝ 200.0 մլն դրամ): Ծախսերի աճը 103.6 մլն դրամի չափով պայմանավորված է ՀՀ կառավարության 04.07.2018թ. N 762-Ն որոշմամբ, որի համաձայն «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ը վերակազմակերպվել է «Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի:

2019 թվականին միջոցառման շրջանակում շահառուների միջին տարեկան թիվը կկազմի 450 երեխա (2018 թվականի 300 դիմաց):

-«Թրաֆիքինգի և շահագործման, բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 19.1 մլն դրամի չափով (պահպանվել է 2018 թվականի մակարդակը):

2019 թվականին միջոցառման շրջանակում շահառուների միջին տարեկան թիվը կկազմի 8 մարդ:

-«Մարդկանց թրաֆիքինգի (և/կամ) շահագործման զոհերին միանվագ դրամական փոխհատուցման տրամադրում» միջոցառմամբ նախատեսվում է հատկացնել 1.8 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2018 թվականի համար նախատեսված չափը):

2019 թվականին միջոցառման շրջանակում շահառուների թիվը կկազմի 7 մարդ, իսկ միանվագ դրամական փոխհատուցման չափը՝ 250.0 հազ. դրամ:

Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիր

-«Մասնագիտական կողմնորոշման, համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստման ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 24.1 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 22.0 մլն դրամ): Ծախսերի աճը 2.0 մլն դրամի չափով պայմանավորված է միջոցառման գծով ավելացված արժեքի հարկի գծով գումարի նախատեսմամբ:

-«Մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հետազոտությունների անցկացում և սոցիալական պաշտպանության ոլորտի կադրերի վերապատրաստում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 104.3 մլն դրամի չափով (2018 թվականին շուրջ 90.0 մլն դրամ): Ծախսերի աճը 14.3 մլն դրամի չափով պայմանավորված է ծրագրի գծով ավելացված արժեքի հարկի գծով գումարի նախատեսմամբ:

Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն

-«Բժշկասոցիալական վերականգնման ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է 111.5 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2018 թվականի համար նախատեսված չափը): 2019 թվականին անվճար բուժօգնություն ստացողների թիվը կկազմի 500 մարդ:

-«Հոգեկան առողջության վերականգնման ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվում է 70.1 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2018 թվականի համար նախատեսված չափը): 2019 թվականին անվճար բուժօգնություն ստացողների թիվը կկազմի 318 մարդ:

-«Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում» միջոցառման գծով նախատեսվում է 831.2 մլն դրամի չափով ծախս (2018 թվականին՝ շուրջ 833.0 մլն դրամ): Ծախսերի նվազումը կազմում է 1.8 մլն դրամ, որը պայմանավորված է.

պրոթեզաօրթոպեդիկ պարագաների քանակների փոփոխությամբ (պրոթեզաօրթոպեդիկ, վերականգնողական պարագաները տրվում են ՀՀ կառավարության 10.09.2015 թվականի N

1035-Ն որոշմամբ սահմանված ժամկետները լրացած, ինչպես նաև առաջին անգամ դրանց կարիքը ունեցող անձանց):

2019 թվականին նախատեսվում է ձեռքբերել և բաշխել.

ա/ աչքի պրոթեզ 200 հատ՝ 28.0 մլն դրամ (պահպանվել է 2018 թվականի մակարդակը),

բ/ ձայնաստեղծ սարքեր 100 հատ՝ 34.5 մլն դրամ (պահպանվել է 2018 թվականի մակարդակը),

գ/ լսողական սարքերի ներդիրներ 400 հատ՝ 2.0 մլն դրամ (պահպանվել է 2018 թվականի մակարդակը),

դ/ պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներ 9988 հատ՝ 769.8 մլն դրամ (2018 թվականի 9 794 դիմաց):

Այսպիսով, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների ընդհանուր թիվը կանխատեսվում է 10 688 2018 թվականին նախատեսված 10 494 դիմաց:

-«Տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, տետրերի պատրաստման և «խոսող գրքերի» ձայնագրության ծառայություններ» միջոցառման ծախսը կազմում է 9.8 մլն դրամ (պահպանվել է 2018 թվականի համար նախատեսված չափը): 2019 թվականին նախատեսվում է ձեռքբերել Բրայլյան գրքեր 30000 հատ, 74400 թերթ ՀԿՄ օրգան ամենամսյա «Բյուլետեն», Բրայլյան տետր՝ 320 հատ, ձայնագրել 1600 ժամ «Խոսող գիրք»:

-«Մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ դեռահասների և երիտասարդների ցերեկային խնամքի սոցիալ-վերականգնողական ծառայություններ» միջոցառման ծախսը կազ-մում է 28.1 մլն դրամ (2018 թվականին՝ 31.4 մլն դրամ): Ծախսերի նվազումը 3.3 մլն դրամի չափով պայմանավորված է հաշվարկների ճշտմամբ:

2019 թվականին միջոցառման շրջանակում շահառուների միջին տարեկան թիվը կկազմի 50 մարդ:

-«Լսողական սարքեր և հաշմանդամի սայլակներ ձեռքբերելու համար հավաստագրերի տրամադրում» միջոցառման ծախսը կազմում է 90.2 մլն դրամ (2018 թվականին՝ 91.8 մլն դրամ): Ծախսերի նվազումը 1.6 մլն դրամի չափով պայմանավորված է քանակների փոփոխությամբ (տրվում են ՀՀ կառավարության 10.09.2015 թվականի N 1035-Ն որոշմամբ սահմանված ժամկետները լրացած, ինչպես նաև առաջին անգամ դրանց կարիքը ունեցող անձանց):

2019 թվականին նախատեսվում է հաշմանդամի սայլակի և լսողական սարքի ձեռքբերման համար տրամադրել հավաստագրեր. լսողության խնդիրներ ունեցող 12-18 տարեկան երեխաներին և 18-ից մինչև 29 տարեկան հաշմանդամություն ունեցող անձանց

(200 հատ), հաշմանդամություն ունեցող անձանց և տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձանց՝ 1048 հատ՝ 47.4 մլն դրամի չափով, սայլակներ 450 հատ՝ 42.8 մլն դրամի չափով:

-«Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում» միջոցառմամբ նախատեսվում է ծախս 11.6 մլն դրամի չափով (պահպանվել է 2018 թվականի համար նախատեսված չափը):

2019 թվականին միջոցառման շրջանակում շահառուների միջին տարեկան թիվը կկազմի 60 մարդ:

-«Աուտիզմ ունեցող դեռահասներին և երիտասարդներին զբաղվածության և սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրում ցերեկային կենտրոնում» միջոցառմամբ նախատեսվում է ծախս 26.7 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 32.8 մլն դրամ): Ծախսերի նվազումը 6.1 մլն դրամի չափով պայմանավորված է հաշվարկների ճշտմամբ:

2019 թվականին միջոցառման շրջանակում 18 տարին լրացած աուտիզմ ունեցող դեռահասների և երիտասարդների միջին տարեկան թիվը կկազմի 80 մարդ:

-«Հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների ծրագրի իրականացման ապահովում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 3.5 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 4.2 մլն դրամ): Ծախսերի նվազումը 0.7 մլն դրամի չափով պայմանավորված է ձեռքբերվելիք ձևաթղթերի քանակի նվազմամբ 55 808 հատով 2018 թվականի 364 638 հատ ձևաթղթի դիմաց:

Ավանդների փոխհատուցում

-«Մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված ավանդների դիմաց փոխհատուցման միջոցառման իրականացման ապահովում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 12.0 մլն դրամի չափով (պահպանվել է 2018 թվականի մակարդակը):

-«ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում» միջոցառման գծով ծախսը կազմում է 1200.0 մլն դրամ (պահպանվել է 2018 թվականի մակարդակը): 2019 թվականին նախատեսվում է փոխհատուցում տրամադրել «Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի N 8 հավելվածի 4-րդ կետով սահմանված սանդղակին համապատասխան՝ մինչև 1933 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակից կամ մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող՝ Հայաստանի Հանրապետության

սահմանամերձ համայնքներում 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված անձանց, ինչպես նաև կառավարության սահմանած այլ սոցիալական խմբերին՝ կառավարության սահմանած կարգով:

Սոցիալական ապահովություն

-«Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստներ» միջոցառմամբ նախատեսվում է 19 824.9 մլն դրամի չափով ծախս (2018 թվականին՝ 13 508.5 մլն դրամ): Ծախսերը աճում են 6 316.6 մլն դրամով, որը պայմանավորված է.

ա/ նպաստ ստացողների թվաքանակի աճով կամ կանխատեսվում է 64 418 շահառու 2018 թվականի 63 177 մարդու դիմաց,

բ/ նպաստների նվազագույն չափը 25 500 դրամի չափով սահմանմամբ, արդյունքում նպաստի միջին ամսական չափը կկազմի 25 646.2 դրամ 2018 թվականի հաշվարկային 17 818 դրամի դիմաց:

-«Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ» միջոցառմամբ նախատեսվում է 4 897.4 մլն դրամի չափով ծախս (2018 թվականին՝ 4 907.2 մլն դրամ): Ծախսերի նվազումը 9.8 մլն դրամի չափով պայմանավորված է շահառուների թվաքանակի նվազմամբ կամ կանխատեսվում է 24 487 2018 թվականի 24 536 դիմաց՝ պահպանելով հուղարկավորությունը կատարող անձանց տրվող թաղման նպաստի չափը՝ 200.0 հազ. դրամ:

-«Վնասի փոխհատուցում կերակրողը կորցրած անձանց» միջոցառմամբ նախատեսվում է հատկացնել 4.6 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2018 թվականի համար նախատեսված չափը):

-«ԱՊՀ տարածքում Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամների և մասնակիցների օդային տրանսպորտով մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցում» միջոցառմամբ ՀՀ քաղաքացիներ հանդիսացող Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամներին և մասնակիցներին, ինչպես նաև նրանց հավասարեցված անձանց (ծրագրավորված՝ թվով 74 անձիք) ԱՊՀ տարածքում զեղչ սակագնով կամ անվճար ծառայություններ մատուցելու հետևանքով չստացված եկամուտների փոխհատուցման նպատակով «Սիբիր» ավիաընկե-ություն» ԲԲԸ-ին փոխհատուցելու համար նախատեսվում է հատկացնել 22.0 մլն դրամ (պահպանվել է 2018 թվականի մակարդակը):

Միաժամանակ սոցիալական ապահովության ոլորտում նախատեսվում է շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագիրը.

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության

ոլորտի վարչարարության երկրորդ ծրագիր, որի նպատակներն են բարելավել սոցիալական պաշտպանության ծառայությունների տրամադրումը, հզորացնել սոցիալական պաշտպանության նպաստներ վճարող և ծառայություններ տրամադրող մարմինների վերլուծական, մշտադիտարկման և գնահատման գործառույթները:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Համալիր սոցիալական պաշտպանության ծառայությունների տրամադրման ընդլայնում:
- Աջակցություն զբաղվածության նոր ռազմավարության իրականացմանը:
- Կենսաթոշակային համակարգի արդիականացում:
- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վերլուծական կարողությունների և մշտադիտարկման ու գնահատման համակարգերի հզորացում:
- Ծրագրի կառավարում՝ 2019թ. 1,843.3 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,519.8 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 323.5 մլն դրամ:

Նախարարության մասով 2019 թվականի բյուջետային ծախսերի համեմատությունը 2017-2018 թվականների համադրելի ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 14 աղյուսակում, իսկ զբաղվածության կարգավորման 2019 թվականի պետական ծրագիրը, երեխայի իրավունքների պաշտպանության 2019 թվականի տարեկան ծրագիրը, հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2019 թվականի տարեկան ծրագիրը արտացոլված են սույն բացատրագրի համապատասխանաբար NN 6-րդ, 7-րդ և 8-րդ հավելվածներում:

ՀՀ մշակույթի նախարարություն

ՀՀ մշակույթի նախարարության գծով (առանց կառավարման ապարատի) ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 14,888.5 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 12,664.3 մլն դրամի դիմաց: Ծախսերն աճել են 2,224.2 մլն դրամով, կամ 17.6 տոկոսով: Ընթացիկ ծախսերի աճը կազմում է 2.373.8 մլն դրամ, որը հիմնականում պայմանավորված է ԱԱՀ-ի գումարի նախատեսմամբ (2,265.0 մլն դրամ):

Միաժամանակ, մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության ծախսերը նվազել են՝ 149.6 մլն դրամով:

Նախագծով ՀՀ մշակույթի նախարարությանը նախատեսված հատկացումները ուղղվել են 7 ծրագրերի իրականացմանը:

Կինեմատոգրաֆիայի ծրագրով նախատեսված հատկացումները նպատակ ունեն աջակցել կինոարվեստի և կինոարտադրության զարգացմանը, հայկական ավանդույթների շարունակականության ապահովմանը և կինոարվեստի հանրահռչակմանը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են խաղարկային, վավերագրական և մուլտիպլիկացիոն ֆիլմերի արտադրությանը և թվայնացմանը, Հայաստանում միջազգային կինոփառատոների կազմակերպմանը, միջազգային փառատոներին մասնակցությանը:

Կինեմատոգրաֆիայի ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 824.8 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 611.1 մլն դրամի դիմաց:

Ծախսերն աճել են՝ 213.7 մլն դրամով, որը պայմանավորված է.

-ԱԱՀ-ի գումարի նախատեսմամբ՝ 137.4 մլն դրամ,

-«Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառումից «Աջակցություն կինոարվեստին« միջոցառումը Կինեմատոգրաֆիայի ծրագիր տեղափոխմամբ՝ 76.3 մլն դրամի չափով:

Մշակութային ժառանգության ծրագրով նախատեսված հատկացումները նպատակ ունեն ապահովել մշակութային ժառանգության պահպանումը, օգտագործումը, համալրումը և հանրահռչակումը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական աշխատանքների, մշակութային արժեքների փորձաքննության, թանգարանային ծառայությունների իրականացմանը, ՀՀ տարածքում և օտարերկրյա պետություններում գտնվող հայ ճարտարապետության, մշակույթին և պատմությանն առնչվող հուշարձանների ուսումնասիրմանը և պահպանմանը, հուշարձանների ամրակայմանը, նորոգմանը, վերականգնմանը, թանգարանների և պատկեասրահների հիմնանորոգմանը:

Մշակութային ժառանգության ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 3,087.7 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 2,608.8 մլն դրամի դիմաց:

Ծախսերն աճել են՝ 478.9 մլն դրամով, որը պայմանավորված է.

-ԱԱՀ-ի գումարի նախատեսմամբ՝ 462.8 մլն դրամ,

- «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ում «Հայ-իտալական մշակութային ժառանգության կենտրոն» մասնաճյուղի ստեղծմամբ՝ 9.2 մլն դրամ (ՀՀ կառավարության 04.07.2018թ. N 798-Ն որոշմամբ նշված նպատակով ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին հատկացվել է 7.8 մլն դրամ),

-«Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառումից «Աջակցություն ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանմանը» միջոցառումը Մշակութային ժառանգության ծրագրի տեղափոխմամբ՝ 40.0 մլն դրամի չափով:

Միաժամանակ, «Ներդրումներ թանգարանների և պատկերասրահների հիմնանորոգման համար» միջոցառման ծախսերը նվազել են՝ 33.1 մլն դրամով:

Գրքի և գրչության ծրագրով նախատեսված հատկացումները նպատակ ունեն նպաստել գրականության հրատարակմանը, տարածմանը և հանրահռչակմանը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են գրականության և ոչ պետական մամուլի հրատարակմանը, գրադարանային ծառայությունների իրականացմանը, գրականության հանրահռչակմանը, գրական ծրագրերին և գրքերի միջազգային ցուցահանդեսներին մասնակցությանը:

Գրքի և գրչության ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,748.6 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 1,376.8 մլն դրամի դիմաց:

Ծախսերն աճել են՝ 371.8 մլն դրամով, որը պայմանավորված է.

-ԱԱՀ-ի գումարի նախատեսմամբ՝ 282.2 մլն դրամ,

-«Գրադարանային ծառայություններ» միջոցառման ծախսերի աճով՝ 12.7 մլն դրամով, կապված «Գիրք» ՊՈԱԿ-ի լուծարման հետ և վերջինիս գործառույթները «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ին վերապահմամբ (ՀՀ կառավարության 05.04.2018թ. N 389-Ն որոշում),

-«Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառումից «Աջակցություն գրականության հանրահռչակմանը, գրական ծրագրերին և գրքերի միջազգային ցուցահանդեսներին մասնակցությանը» միջոցառումը Գրքի և գրչության ծրագրի տեղափոխմամբ՝ 76.9 մլն դրամի չափով:

Ազգային արխիվի ծրագրի համար նախատեսված հատկացումները նպատակ ունեն ապահովել ՀՀ ազգային արխիվային հավաքածուի պահպանությունը, համալրումը, հաշվառումը և օգտագործումը:

Ազգային արխիվի ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 591.6 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 493.0 մլն դրամի դիմաց:

Ծախսերն աճել են՝ 98.6 մլն դրամով, որը պայմանավորված է ԱԱՀ-ի գումարի նախատեսմամբ:

Արվեստների ծրագրով նախատեսված հատկացումները նպատակ ունեն նպաստել ազգային հենքի վրա ժամանակակից թատերարվեստի, երաժշտարվեստի, կերպարվեստի և պարարվեստի զարգացմանը և հանրահռչակմաը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են օպերային և բալետային արվեստի, թատերական ներկայացումների, երաժշտարվեստի և պարարվեստի համերգների, մշակութային միջոցառումների իրականացմանը, «Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց պատվովճարի հատկացմանը, թատրոնների շենքերի կապիտալ վերանորոգմանը:

Արվեստների ծրագրի ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 7,698.6 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 6,502.2 մլն դրամի դիմաց:

Ծախսերն աճել են՝ 1,196.4 մլն դրամով, որը պայմանավորված է.

- ԱԱՀ-ի գումարի նախատեսմամբ՝ 1,268.4 մլն դրամ,
- «Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ» ծրագրի ծախսերի աճով՝ 2.0 մլն դրամով, (համաձայն ՀՀ կառավարության 05.04.2018թ. N389-Ն որոշման «Գրքի և հրատարակչական գործի կենտրոն» ՊՈԱԿ-ի տարածքը հատկացվել է «Հայ հոգևոր երաժշտության կենտրոն և «Կոմիտասի անվան ազգային քառյակ» ՊՈԱԿ-ներին),
- «Ներդրումներ թատրոնների շենքերի կապիտալ վերանորոգման համար» ծրագրի ծախսերի աճով՝ 34.2 մլն դրամով,
- «Ազգային ակադեմիական խմբերգային համերգներ» ծրագրի ծախսերի աճով՝ 165.5 մլն դրամով:

Միաժամանակ, «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրի ծախսերը նվազել են՝ 273.7 մլն դրամով, որը պայմանավորված է.

- «Աջակցություն կինոարվեստին», «Աջակցություն ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանմանը» և «Աջակցություն գրականության հանրահռչակմանը, գրական ծրագրերին և գրքերի միջազգային ցուցահանդեսներին մասնակցությանը» միջոցառումներն այլ ծրագրեր տեղափոխմամբ՝ 193.2 մլն դրամ և «Ազգային ակադեմիական խմբերգային համերգներ» ծրագիր ծախսերի վերաբաշխմամբ՝ 80.5 մլն դրամ:

Մարզային մշակութային զարգացման ծրագրի համար նախատեսված հատկացումները նպատակ ունեն նպաստել մարզերում մշակութային կյանքի ակտիվացմանը, համայնքային մշակութային հաստատությունների շենքային պայմանների բարելավմանը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են մարզերում մշակութային միջոցառումների իրականացմանը, համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպմանը:

Մարզային մշակութային զարգացման ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 270.8 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 406.0 մլն դրամի դիմաց:

Ծախսերը նվազել են՝ 135.2 մլն դրամով, որը պայմանավորված է.

-«Աջակցություն համայնքներին մշակութային հաստատությունների շենքային պայմանների բարելավման համար» միջոցառման ծախսերի նվազմամբ՝ 150.8 մլն դրամով:

Միաժամանակ, ծախսերն աճել են 15.6 մլն դրամով, որը պայմանավորված է ԱԱՀ-ի գումարի նախատեսմամբ:

Մշակութային և գեղագիտական դաստիարակություն ծրագրով նախատեսված հատկացումները նպատակ ունեն նպաստել երեխաների հոգևոր և գեղագիտական ընդունակությունների բացահայտմանը և զարգացմանը:

Նախագծով նախատեսվում է հատկացնել 666.4 մլն դրամ, որը համապատասխանում է ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված ծախսերի մակարդակին:

Այս ոլորտում 2019 թվականի բյուջետային ծախսերի համեմատությունը 2017-2018 թվականների համադրելի ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 11 աղյուսակում:

ՀՀ սփյուռքի նախարարություն

ՀՀ սփյուռքի նախարարության գծով (առանց կառավարման ապարատի) ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 705.5 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 699.7 մլն դրամի դիմաց: Ծախսերն աճել են 5.8 մլն դրամով, կամ 0.8 տոկոսով:

Նախագծով ՀՀ սփյուռքի նախարարությանը նախատեսված հատկացումներն ուղղվելու են 3 ծրագրերի իրականացմանը:

Սփյուռքի հայապահպանության ծրագրով նախատեսված հատկացումները նպատակ ունեն նպաստել օտար երկրում բնակվող հայերի ազգային ինքնության պահպանմանը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են ուսումնական և հանրամատչելի գրականության մշակմանը և սփյուռքի համայնքներին առաքմանը, կրթամշակութային միջոցառումների, «Քայլ դեպի տուն» ծրագրի իրականացմանը, Վրաստանում հրատարակվող լրատվամիջոցներին, Թբիլիսիում գտնվող հայ գրողների պանթեոնի պահպանմանը և Պ. Ադամյանի թատրոնի գործունեությանն աջակցմանը, Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և օժանդակ նյութերի տրամադրմանը:

Սփյուռքի հայապահպանության ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 371.5 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 545.7 մլն դրամի դիմաց:

Ծախսերը նվազել են 174.2 մլն դրամով, որը պայմանավորված է.

-«Կրթամշակութային միջոցառումների իրականացում» (2018 թվականին անվանումը՝ Մշակութային միջոցառումների անցկացում) միջոցառման ծախսերի վերաբաշխմամբ այլ ծրագրեր և միջոցառումներ՝ 267.8 մլն դրամ,

-«Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և օճանդակ նյութերի տրամադրում» միջոցառման ծախսերի նվազմամբ՝ 1.0 մլն դրամով:

Միաժամանակ, ծախսերն աճել են՝ 94.6 մլն դրամով, որը պայմանավորված է՝

- ԱԱՀ-ի գումարի նախատեսմամբ՝ 39.3 մլն դրամ,

- «Ուսումնական և հանրամատչելի գրականության մշակման աջակցություն և առաքում սփյուռքի համայնքներին» միջոցառման ծախսերի աճով՝ 7.0 մլն դրամով,

- «Քայլ դեպի տուն» ծրագրի ծախսերի աճով՝ 48.0 մլն դրամով, պայմանավորված «Սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն» և «Սփյուռք» ամառային դպրոցի կազմակերպում» միջոցառումների միավորմամբ,

- Թբիլիսիում գտնվող հայ գրողների պանթեոնի պահպանմանն աջակցման ծախսերի աճով՝ 0.3 մլն դրամով:

Հայաստան-Սփյուռք գործակցության ծրագրով նախատեսված հատկացումները նպատակ ունեն նպաստել Հայաստանի և հայկական սփյուռքի միջև կապերի ամրապնդմանը և զարգացմանը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են Հայաստան-Սփյուռք գործակցության թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստմանը և հեռարձակմանը, հայրենադարձության քարոզչային միջոցառումների, Հայկական սփյուռքի գիտական, կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման մեխանիզմների ու տվյալների միասնական համակարգի ստեղծմանը, ՀՀ-ում համահայկական խորհրդաժողովների անցկացմանը, սփյուռքի համայնքներում աշխատանքների իրականացմանը, ուսումնական և հանրամատչելի գրականության մշակմանը և սփյուռքի համայնքներին առաքմանը, կրթամշակութային միջոցառումների, «Քայլ դեպի տուն» ծրագրի իրականացմանը, Վրաստանում հրատարակվող լրատվամիջոցներին, Թբիլիսիում գտնվող հայ գրողների պանթեոնի պահպանմանը և Պ. Ադամյանի թատրոնի գործունեությանը աջակցմանը, Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին

ուսումնական գրականության և օժանդակ նյութերի տրամադրմանը, Սփյուռքի և համահայկական հիմնախնդիրների թեմատիկ հետազոտությունների իրականացմանը:

Հայաստան-Սփյուռք գործակցության ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 191.5 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 95.2 մլն դրամի դիմաց:

Ծախսերն աճել են 96.3 մլն դրամով, որը պայմանավորված է.

- ԱԱՀ-ի գումարի նախատեսմամբ՝ 27.7 մլն դրամ,

-«Հայաստան-Սփյուռք գործակցության թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստում և հեռարձակում, հայրենադարձության քարոզչային միջոցառումների իրականացում» միջոցառման ծախսերի աճով՝ 10.0 մլն դրամով:

- «Սփյուռքի և համահայկական հիմնախնդիրների թեմատիկ հետազոտություններ» միջոցառման ծախսերի աճով՝ 11.6 մլն դրամով,

- «Հայկական սփյուռքի գիտական, կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման մեխանիզմների ու տվյալների միասնական համակարգի ստեղծում», «ՀՀ-ում համահայկական խորհրդաժողովների անցկացում», «Սփյուռքի համայնքներում աշխատանքների իրականացում» առանձին միջոցառումների նախատեսմամբ 47.0 մլն դրամ՝ ի հաշիվ «Կրթամշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման ծախսերի:

Հայրենադարձության ծրագրով նախատեսված հատկացումները նպատակ ունեն խրախուսել հայրենադարձությունը և վերաբնակեցված հայրենակիցների համախմբման ու ինտեգրման միջոցով հայության զգալի մասի ներուժի կենտրոնացում Հայաստանի Հանրապետությունում:

Հայրենադարձության ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 142.5 մլն դրամ, որից 23.8 մլն դրամը ԱԱՀ-ի գումարն է:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են Հայաստանի Հանրապետությունում սիրիահայերի և իրաքահայերի ինտեգրման գործընթացի արագացմանը և նոր նախաձեռնությանը՝ «Ներուժ» սփյուռքահայ երիտասարդների սթարթափ ծրագրի իրականացմանը, որի շրջանակներում նախատեսվում է 200-ից ավելի սփյուռքահայ գործարարների ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում ներդրումային միջավայրը, սթարթափ հիմնելու հնարավորությունները:

Ծրագրի շրջանակներում ձեռներեցների հետ բիզնես մենթորների և մարզիչների կողմից անցկացվելու են բազմաֆորմատ դասընթացներ, սեմինարներ և պրեզենտացիաներ: Լավագույն մինչև 10 բիզնես ծրագրերը կֆինանսավորվեն մինչև 15.0 մլն դրամով և

Հայաստանում մի անգամից կսկսեն իրենց գործունեությունը: Նախնական մասնակիցների շրջանակը ընտրվել է ստարտափ մակարդակը, քանի որ այդ մակարդակում շատ ավելի հեշտ է բիզնեսների ռելոկացիան (տեղափոխումը): Հետագա տարիներին անցկացվելիք «Ներուժ» ծրագրում չի բացառվում նաև ներգրավել գործող և ավելի կայացած մակարդակում գտնվող բիզնեսները:

Միաժամանակ, Նախագծով նախատեսված ծախսերը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված ծախսերի նկատմամբ նվազել են՝ 58.8 մլն դրամով, որը պայմանավորված է «Հայրենիք-սփյուռք գործակցության ծրագրերի իրականացում», «Տարածքային համագործակցության և համահայկական մշակութային ծրագրերի իրականացում» և «Հայկական սփյուռք» տարեգրքի հրատարակում» միջոցառումների ավարտմամբ:

Այս ոլորտում 2019 թվականի բյուջետային ծախսերի համեմատությունը 2017-2018 թվականների համադրելի ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 11.3 աղյուսակում:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության գծով (առանց կառավարման ապարատի) ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 3,682.6 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 3,483.9 մլն դրամի դիմաց: Ծախսերն աճել են 198.8 մլն դրամով, կամ 5.7 տոկոսով:

Նախագծով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հատկացումներն ուղղվելու են 3 ծրագրերի իրականացմանը:

«Մեծ նվաճումների սպորտ» ծրագրով նախատեսված հատկացումները նպատակ ունեն նպաստել Հայաստանում մեծ սպորտի զարգացմանը և միջազգային հարթակներում ՀՀ դիրքի բարելավմանը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են օլիմպիական խաղերին, միջազգային տարբեր մակարդակի միջոցառումներին, ուսումնամարզական հավաքներին, հանրապետական առաջնություններին Հայաստանի հավաքական թիմերի մասնակցության ապահովմանը, Աշխարհի, Եվրոպայի առաջնություններում հաղթողների և մրցանակակիրների պարգևատրման ծախսերի իրականացմանը, հավաքական թիմերի ավագ մարզիչների վարձատրությանը և աշխարհի չեմպիոններին թոշակի հատկացմանը, շախմատիստների պատրաստմանը, հաշմանդամային և նավամոդելային սպորտին աջակցմանը, սպորտային

բժշկության և հակադոպինգային հսկողության և շախմատի մրցույթների պատրաստման ծառայությունների իրականացմանը:

«Մեծ նվաճումների սպորտ» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,996.3 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 1,723.0 մլն դրամի դիմաց:

Ծախսերն աճել են 273.3 մլն դրամով, որը պայմանավորված է.

- ԱԱՀ-ի գումարի նախատեսմամբ՝ 24.2 մլն դրամ,

-«Միջազգային մարզական միջոցառումների հաղթողներին և մրցանակակիրներին դրամական մրցանակների հանձնում» միջոցառման ծախսերի աճով՝ 145.0 մլն դրամով,

- սպորտային միջոցառումների անցկացման ժամանակացույցով պայմանավորված ծախսերի աճով՝ 104.1 մլն դրամով:

Երիտասարդության ծրագրով նախատեսված հատկացումները նպատակ ունեն նպաստել սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքին երիտասարդների լիարժեք ներգրավմանը և նրանց ստեղծագործական ներուժի ամբողջական դրսևորմանը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների, երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումների իրականացմանը, երիտասարդ ընտանիքներին աջակցմանը:

Երիտասարդության ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 982.9 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 929.7 մլն դրամի դիմաց:

Ծախսերն աճել են 53.2 մլն դրամով, որը պայմանավորված է ԱԱՀ-ի գումարի նախատեսմամբ:

«Մասսայական սպորտ» ծրագրով նախատեսված հատկացումները նպատակ ունեն ապահովել բնակչության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորումը, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացումը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են մասսայական սպորտի 9 միջոցառումների իրականացմանը, համայնքների մարզական հաստատությունների շենքային պայմանների բարելավմանը և մարզական օբյեկտների շինարարության իրականացմանը:

«Մասսայական սպորտ» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 703.5 մլն դրամ, որը համապատասխանում է ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված ծախսերի մակարդակին:

Միաժամանակ, Նախագծով նախատեսված ծախսերը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված ծախսերի նկատմամբ նվազել են 127.7 մլն դրամով որը պայմանավորված է սպորտային միջոցառումների անցկացման ժամանակացույցով :

Այս ոլորտում 2019 թվականի բյուջետային ծախսերի համեմատությունը 2017-2018 թվականների համադրելի ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 11.2 աղյուսակում, իսկ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման 2019 թվականի տարեկան ծրագիրը, արտացոլված է սույն բացատրագրի N 5-րդ հավելվածում:

ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն

Նախագծով նախատեսվում է հատկացնել (առանց կառավարման ապարատի պահպանման ծախսերի) 16,631.9 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 18,082.1 մլն դրամի դիմաց: ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ ծախսերի նվազեցումը կազմում է 1,450.2 մլն դրամ կամ 8.0 տոկոս: Ծախսերի նվազեցումը հիմնականում պայմանավորված է անտառների կառավարման բնագավառում վարվող պետական քաղաքականության վերանայմամբ, մասնավորապես՝ անտառների կառավարման գործառույթը 2019թ. ՀՀ բնապահպանության նախարարությանը փոխանցմամբ (2,078.2 մլն դրամ), ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտում պետական աջակցության (այդ թվում սուբսիդավորման) միջոցառումների ավելացմամբ: Հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

1. «Գյուղատնտեսության խթանման ծրագիր» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 6,104.8 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1.1 «Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 2,030.9 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Միջոցառումն ուղղված է գյուղական համայնքներում գյուղատնտեսության համար առաջնահերթ համարվող ոլորտներում զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացմանը:

1.2 «Փոքր գյուղացիական տնտեսություններին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 582.4 մլն դրամ: Միջոցառումը 2018 թվականի համեմատ հանդիսանում է նոր նախաձեռնություն:

Միջոցառման նպատակը փոքր գյուղացիական տնտեսություններին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման միջոցով՝ վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացումն ու արդյունքում փոքր տնտեսավարողների շրջանառու միջոցների համալրման համար հնարավորությունների ընդլայնումն է:

1.3 «Գյուղատնտեսությամբ զբաղվողներին ուղղակի աջակցության տրամադրում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,992.6 մլն դրամ: Միջոցառումը 2018 թվականի համեմատ հանդիսանում է նոր նախաձեռնություն:

Միջոցառման նպատակն է հանրապետությունում հողերը նպատակային ու արդյունավետ օգտագործումն ապահովելու, ցանքատարածություններն ընդլայնելու և օգտագործելու համար՝ վարի, նախացանքային աշխատանքների ու ցանքի համար գյուղատնտեսությամբ զբաղվող հողօգտագործողներին աջակցության տրամադրում՝ 1 հա-ի հաշվով 60.0 հազ.դրամի չափով:

1.4 «Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 998.9 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Միջոցառման նպատակը գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության ոլորտում զբաղված իրավաբանական անձանց պտուղբանջարեղենի և խաղողի մթերումների նպատակով տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության բարձրացումն է, որի արդյունքում կապահովվի գյուղատնտեսական մթերքների գնման դիմաց գյուղացիական տնտեսություններին կատարվող վճարումների ժամանակին կատարումը, կբարձրանա գյուղատնտեսական մթերքների վերամշակումից ստացվող արտադրանքի մրցունակության մակարդակը, կավելանան գյուղատնտեսական մթերքների վերամշակումից ստացվող արտադրանքի արտադրության ու արտահանման ծավալները, կաճի հանրապետության մշակող արդյունաբերության արտադրանքի արտադրության ծավալում ագրովերամշակման արտադրության արտադրանքի մասնաբաժինը:

1.5 «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցություն» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 500.0 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 885.0 մլն դրամի դիմաց:

Միջոցառման հիմնական նպատակը ապահովագրական համակարգի աստիճանական ներդրման նախադրյալների ստեղծումը և ապահովագրական համակարգի ներդրման հիմնական մոտեցումների հստակեցումն է: Միջոցառումը նախատեսվում է իրականացնել

պետական աջակցությամբ, որի շրջանակներում մասնակի կսուբսիդավորվի փորձնական ծրագրին մասնակից տնտեսավարողների ապահովագրավճարը և կցուցաբերվի կազմակերպական աջակցություն:

2. «Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 513.2 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

2.1 «Բույսերի պաշտպանության միջոցառումներ» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 41.0 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատ-ված 84.7 մլն դրամի դիմաց կամ 43.7 մլն դրամով պակաս, որը պայմանավորված է անտառների կառավարման բնագավառում վարվող պետական քաղաքականության վերանայման առումով, մասնավորապես՝ գումարը նվազեցվել է 2018թ. միջոցառման շրջանակներում անտառի վնասատուների դեմ պայքարի բաղադրիչի գծով նախատեսված գումարի չափով (43.7 մլն դրամ), որը տեղափոխվել է ՀՀ բնապահպանության նախարարություն, քանի որ անտառների կառավարման գործառույթը փոխանցվել է ՀՀ բնապահպանության նախարարությանը:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել հանրապետությունում առավել զանգվածային տարածված և վտանգավոր օրգանիզմների դեմ բույսերի պաշտպանության միջոցառումներ, այդ թվում պայքար մկնանման կրծողների և մորեխների դեմ:

2.2 «Սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման միջոցառումներ» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 47.1 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Միջոցառման իրականացումը հնարավորություն կտա ստանալ բարձրորակ, հիվանդություններից և վնասատուներից զերծ սերմեր և տնկանյութ: Միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել սելեկցիոն նվաճումների պաշտպանության ապահովում, բույսերի սորտային կազմի ընդլայնում, ցանքատարածությունների ֆիտոսանիտարական վիճակի վատթարացման, հիվանդությունների, մոլախոտերի և վնասատուների զանգվածային բազմացման կանխարգելում:

2.3 «Բուսասանիտարիայի ծառայությունների մատուցում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 112.4 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 58.8 մլն դրամի դիմաց կամ 53.6 մլն դրամով ավել, որը պայմանավորված է սույն միջոցառման և «Անասնաբուժական միջոցառումների

կազմակերպում» միջոցառման միջև միջոցների վերաբաշխմամբ, ինչպես նաև միջոցառման շրջանակներում հետազոտվող տարածքի 63,350.0 հեկտարով ավելացմամբ:

Միջոցառման նպատակն է դաշտային հետազոտությունների միջոցով հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում բույսերի վնասակար օրգանիզմների հայտնաբերումը:

2.4 «Բուսասանիտարական համակարգի բարելավում և մասնագիտական գիտելիքների բարձրացմանն աջակցություն» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 4.3 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել կարանտին վնասակար օրգանիզմների հայտնաբերման և դրանց դեմ պայքարի միջոցառումների իրականացման մեթոդական ուղեցույցների մշակում և տպագրում, ինչպես նաև բուսասանիտարիայի տեսուչների համար վերապատրաստման դասընթացների կազմակերպում:

2.5 «Գյուղատնտեսական մշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննության միջոցառումներ» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 27.8 հազ. դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 27.2 մլն դրամի դիմաց կամ 0.6 մլն դրամով ավել, որը պայմանավորված է սույն միջոցառման և «Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումներ» միջոցառման միջև միջոցների վերաբաշխմամբ:

Միջոցառմամբ նախատեսվում է բույսերի կարանտինի, առավել վտանգավոր վնասակար օրգանիզմների և թաքնված վարակի հայտնաբերմանն ուղղված, գյուղատնտեսական մշակաբույսերի, բույսերի պաշտպանության միջոցների ազդող նյութի որոշման նպատակով լաբորատոր փորձաքննությունների իրականացում:

2.6 «Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումներ» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 79.4 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Միջոցառման իրականացումն ուղղված է հողերի բերրիության պահպանման և բարձրացման ընդհանուր նպատակի կատարմանը՝ պարարտանյութերի խնայողաբար, արդյունավետ և էկոլոգիապես անվտանգ օգտագործման միջոցով:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել գյուղատնտեսական նշանակության հողատարածությունների ագրոքիմիական դաշտային հետազոտություններ, հողանմուշների լաբորատոր փորձաքննություններ, համայնքներում ագրոքիմիական քարտեզների և

մշակաբույսերի պարարտացման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրերի կազմման աշխատանքներ:

2.7 «Հայաստանի Հանրապետությունում խաղողի ֆիլոքսերադիմացկուն տնկանյութի արտադրության և նոր այգիների հիմնման ծրագիր» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 6.2 մլն դրամ: Միջոցառումը 2018 թվականի համեմատ հանդիսանում է նոր նախաձեռնություն:

Միջոցառման նպատակն է ֆիլոքսերայի հետագա տարածման ու զարգացման դեպքում պայմաններ ստեղծել խաղողագործությունը ֆիլոքսերադիմացկուն պատվաստակալների վրա պատվաստված տնկանյութով կազմակերպելու համար:

Միջոցառմամբ նախատեսվում է խաղողի տեղական սորտերի պատվաստված կոլեկցիոն այգու հիմնում և խնամք, ֆիլոքսերադիմացկուն պատվաստակալների մայրուտի խնամք:

2.8 «Հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային մշակաբույսերի սերմնաբուծության զարգացմանն աջակցություն» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 195.0 մլն դրամ: Միջոցառումը 2018 թվականի համեմատ հանդիսանում է նոր նախաձեռնություն:

Միջոցառման նպատակը հանրապետության տարածքում աշնանացան ցորենի, գարնանացան գարու, ոլոռի, ոսպի, սիսեռի, առվույտի և կորնգանի սերմնաբուծության ու սերմարտադրության զարգացումն է, որի արդյունքում կավելանան հանրապետության տարածքում արտադրվող բարձր վերարտադրության հացահատիկային, հատիկընդեղեն և կերային մշակաբույսերի սերմնանյութի արտադրական ծավալները, կբարձրանա տեղական սերմնանյութով ինքնաբավության մակարդակը:

3. «Անասնաբուժական ծառայություններ» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,714.5 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

3.1 «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,377.1 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 1,348.0 մլն դրամի դիմաց կամ 29.1 մլն դրամով ավել, որը պայմանավորված է վարակիչ հիվանդությունների թվաքանակի և պայմանական գլխի հաշվով պատվաստման արժեքի ավելացմամբ:

Միջոցառումն ուղղված է անասնահամաճարակային կայուն իրավիճակ ստեղծելու և պահ-պանելու նպատակով կենդանիների վարակիչ հիվանդությունների, այդ թվում կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների (դաբաղ, սիբիրախտ, նոդուլյար մաշկաբորբ, խոզերի ժանտախտ, բրադզոտ, պաստերելյոզ, բրուցելյոզ, տուբերկուլյոզ, լեյկոզ,

խշխշան պալար (էմկար), թռչունների կեղծ ժանտախտ և մեղուների վարրոատոզ) կանխարգելմանն ու վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման համար կենսապատրաստուկների ձեռքբերմանը և անասնաբուժական մասնագետների վարձատրությանը:

3.2 «Անասնաբուժական միջոցառումների կազմակերպում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 68.6 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 93.9 մլն դրամի դիմաց կամ 25.3 մլն դրամով պակաս, որը պայմանավորված է սույն միջոցառման և «Բուսասանիտարիայի ծառայությունների մատուցում» միջոցառման միջև միջոցների վերաբաշխմամբ:

Միջոցառմամբ նախատեսվում է գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումների իրականացում, անասնաբուժական միջոցառումների հաշվետվությունների ընդունում, ամփոփում, պատվաստանյութերի բաշխում մարզերին, ախտահանության աշխատանքների կազմակերպում:

3.3 «Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումներ» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 259.6 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 245.1 մլն դրամի դիմաց կամ 14.5 մլն դրամով ավել, որը պայմանավորված է իրականացվող լաբորատոր փորձաքննությունների քանակի ավելացմամբ:

Միջոցառման նպատակն է կենդանիների վարակիչ հիվանդությունների համաճարակային վիճակի բարելավումը, մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդություններից բնակչության պահպանումը: Միջոցառման շրջանակներում նախատեսվում է գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների և վարակամերժության աստիճանի որոշմանն ուղղված լաբորատոր փորձաքննությունների իրականացում, կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննությունների իրականացում:

3.4 «Դաբաղ հիվանդության շճահետազոտություն» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 9.2 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատ-ված գումարի չափով:

Միջոցառման նպատակն է Հայաստանի Հանրապետությունում խոշոր և մանր եղջերավոր կենդանիների դաբաղ հիվանդության շճահետազոտության պլանի իրականացումը՝ գնահատելու դաբաղ հիվանդության շրջանառության մակարդակը տարբեր ռիսկային

գոտիներում (ինչպես բարձր ռիսկային գոտիներում, այնպես էլ երկրի մնացած տարածքներում):

4. «Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 2,307.0 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

4.1 «Գյուղական խորհրդատվական ծառայություններ» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 432.4 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 410.5 մլն դրամի դիմաց կամ 21.9 մլն դրամով ավել, որը պայմանավորված է ԱԱՀ-ի գծով լրացուցիչ ծախսերի նախատեսմամբ:

Միջոցառման իրականացումը կնպաստի գյուղատնտեսության ոլորտում կայուն խորհրդատվական համակարգի ձևավորմանը, գյուղմթերքների արտադրության ծավալների և որակի, գյուղատնտեսական արտադրանքի իրացվելիության մակարդակի բարձրացմանը և ֆերմերների եկամուտների ավելացմանը:

4.2 «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացմանը» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 300.0 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի հիմնական նպատակներն են գինեգործական արտադրանքի որակի բարելավումը, հայկական գինու ճանաչելիության բարձրացումն ինչպես արտերկրում այնպես էլ երկրի ներսում, վաճառքի ծավալների ընդլայնումը ներքին շուկայում, արտահանման ծավալների ավելացումը:

4.3 «Անասնաբուծության զարգացում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 170.0 մլն դրամ: Միջոցառումը 2018 թվականի համեմատ հանդիսանում է նոր նախաձեռնություն:

Միջոցառման նպատակը հանրապետություն խոշոր եղջերավոր տոհմային կենդանիներ (երինջներ) ներկրումն ու մասնակի սուբսիդավորման միջոցով գյուղացիական տնտեսություններին տրամադրումն է:

4.4 «Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու և հատապտղատու այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 250.0 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 398.9 մլն դրամի դիմաց կամ 148.9 մլն դրամով պակաս՝ հաշվի առնելով 2018 թվականի ընթացքում

ծրագրից օգտված շահառուների փաստացի, ինչպես նաև շահառուների կողմից ծրագրից հետագայում օգտվելու կանխատեսվող քանակները:

Միջոցառման նպատակը մատչելի նպատակային վարկերի տրամադրման միջոցով ինտենսիվ պտղատու և հատապտղատու այգետնկումների խթանմամբ հանրապետությունում պտղաբուծության զարգացումն է, պտղի և հատապտղի արտադրության ծավալների ավելացումը, ներմուծման փոխարինումը և արտահանման ծավալների ավելացումը:

4.5 «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիր» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 192.5 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 270.0 մլն դրամի դիմաց կամ 77.5 մլն դրամով պակաս՝ հաշվի առնելով 2018 թվականի ընթացքում ծրագրից օգտված շահառուների փաստացի, ինչպես նաև շահառուների կողմից ծրագրից հետագայում օգտվելու կանխատեսվող քանակները:

Միջոցառման նպատակը գյուղատնտեսությունում տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես լիզինգային մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարումն է:

4.6 «Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիր» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 450.4 մլն դրամ: Միջոցառումը 2018 թվականի համեմատ հանդիսանում է նոր նախաձեռնություն:

Միջոցառման հիմնական նպատակն ագրոպարենային ոլորտի տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ ֆինանսական վարձակալության մեխանիզմների կիրառմամբ անասնաբուծության, բուսաբուծության, ջերմոցային, սառնարանային տնտեսություններում (այդ թվում՝ կաթի մթերման կայաններ, սպանդանոցային տնտեսություններ և այլն) օգտագործվող սարքավորումների մատակարարումն է:

4.7 «Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 312.1 մլն դրամ: Միջոցառումը նախատեսված է 2018թ. Պետական բյուջով հաստատված «Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» միջոցառման փոխարեն՝ հաշվի առնելով նաև անձրևացման համակարգերի ներդրման և դրանց նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման անհրաժեշտությունը:

Միջոցառման նպատակը ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների

սուբսիդավորումն է՝ արդյունքում բարձրարժեք մշակաբույսերով զբաղեցված հողատարածքներում ոռոգման արդյունավետ եղանակների ներդրման խթանումը, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և հողօգտագործողների եկամուտների աճի ապահովումը:

4.8 «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 199.6 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 700.6 մլն դրամի դիմաց կամ 501.0 մլն դրամով պակաս՝ հաշվի առնելով 2018 թվականի ընթացքում ծրագրից օգտված շահառուների փաստացի, ինչպես նաև շահառուների կողմից ծրագրից հետագայում օգտվելու կանխատեսվող քանակները:

Միջոցառման նպատակը մատչելի պայմաններով, մասնավորապես՝ նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսությունում տնտեսավարողների կողմից կարկտապաշտպան ցանցերի ներդրմանը նպաստելն է:

5. «Սննդամթերքի լաբորատոր փորձաքննություններ» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 171.8 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

5.1 «Սննդամթերքի լաբորատոր փորձաքննություններ» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 10.0 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատ-ված գումարի չափով:

Միջոցառմամբ նախատեսվում է սննդամթերքի անվտանգության և որակի ապահովման բնագավառներում միջազգային չափորոշիչների պահանջներին համապատասխան ունենալ հնարավորություն իրականացնելու լաբորատոր փորձաքննություններ, բնակչությանն անասնաբուժասանիտարական, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգերով և նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված պահանջների տեսակետից անվտանգ ու բարձորակ սննդամթերքով և հումքով ապահովում, սննդի շղթայի փուլերում վտանգավոր սննդամթերքի հայտնաբերում, դրա հետագա իրացման կանխում և սահմանված կարգով օգտահանում կամ ոչնչացում:

5.2 «Բուսական ծագման մթերքներում պեստիցիդների, նիտրատների, ծանր մետաղների և գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների մնացորդների մոնիթորինգ» միջոցառման

համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 45.8 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Միջոցառման նպատակն է մոնիթորինգի ենթարկել Հայաստանի Հանրապետությունում արտադրվող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն ներմուծվող բուսական ծագման մթերքում պեստիցիդների, նիտրատների և ծանր մետաղների մնացորդային քանակները՝ հավաստելու, որ ինչպես ներմուծված, այնպես էլ տեղական արտադրության բուսական ծագում ունեցող սննդամթերքը չի պարունակում պեստիցիդների, նիտրատների, ծանր մետաղների մնացորդային քանակներ և գենետիկորեն ձևափոխված օրգանիզմներ կամ վերջիններիս պարունակությունը չի գերազանցում ՀՀ օրենդրությամբ սահմանված մնացորդային քանակները:

5.3 «Կենդանական ծագման մթերքում մնացորդային նյութերի հսկողության մոնիթորինգ» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 116.0 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Միջոցառման նպատակն է մնացորդային նյութերի հսկողության իրականացում ձկան, մեղրի, կաթի և խոշոր եղջերավոր կենդանիների, խոզի, թռչնի մսի մեջ, որը կբացահայտի և կհավաստի, որ նշված կենդանական ծագում ունեցող մթերքները պարունակում են կամ չեն պարունակում արգելված նյութեր կամ հայտնաբերված նյութերի պարունակությունը չի գերազանցում ՀՀ օրենդրությամբ սահմանված առավելագույն թույլատրելի մնացորդային քանակների սահմանաչափերը:

Միաժամանակ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. **Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր**, որի նպատակն է աջակցել անասնապահական ուղղվածություն ունեցող համայնքներին արոտօգտագործման/անասնապահական առավել մրցունակ և կայուն համակարգերի ստեղծման հարցում՝ 2019թ.-ին նախատեսվում է 1,847.2 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,723.7 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 123.5 մլն դրամ:

2. **Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագիր,** որի նպատակն է նվազեցնել գյուղական աղքատությունը Հայաստանում, ինչպես նաև ստեղծել ավելի բարեկարգ սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքներ: Մասնավորապես.

ա/ Գյուղական ֆինանսավորման աջակցություն (իրականացվում է ԳՖԿ-ի և ՀԳՏՏՋՀ-ի միջոցով)

բ/ գյուղական ենթակառուցվածքների վերականգնում, մասնավորապես ոռոգման և բազմանպատակ կենցաղային ջրամատակարարման համակարգեր,

գ/ Ֆերմերների իրազեկության բարձրացում և աջակցություն,

դ/ Ծրագրի կառավարում՝ 2019թ.-ին նախատեսվում է 172.9 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 144.1 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 28.8 մլն դրամ:

Ծրագրի շրջանակներում նախատեսված են նաև վարկավորմանն ուղղվող միջոցներ՝ 1,200.6 մլն դրամ:

3. **ՕՊԵԿ զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագիր,** որի նպատակն է նվազեցնել գյուղական աղքատությունը Հայաստանում, ինչպես նաև ստեղծել ավելի բարեկարգ սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքներ: Մասնավորապես.

ա/ Գյուղական ֆինանսավորման աջակցություն (իրականացվում է ԳՖԿ-ի և ՀԳՏՏՋՀ-ի միջոցով)

բ/ Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում, մասնավորապես ոռոգման և բազմանպատակ կենցաղային ջրամատակարարման համակարգեր,

գ/ Ֆերմերների իրազեկության բարձրացում և աջակցություն,

դ/ Ծրագրի կառավարում՝ 2019թ.-ին նախատեսվում է 657.9 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 456.2 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 201.7 մլն դրամ:

4. **Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» դրամաշնորհային ծրագիր**, որը փոխկապակցված է համանուն վարկային ծրագրի հետ, իրականացվում է վարկային ծրագրի ժամկետներում՝ նույն ուղղվածությամբ՝ 2019թ.-ին նախատեսվում է 187.3 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 144.01 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 43.2 մլն դրամ:

5. Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում» դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է մեծացնել Վայոց ձորի, Արարատի և Սյունիքի մարզերի ագրոէկոլոգիական առումով առավել ռիսկային տարածքների բնակիչների ընդհանուր կարողությունները՝ նշված մարզերում համայնքային դեգրադացված հողերի վերականգնման միջոցով՝ 2019թ.-ին նախատեսվում է 912.4 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 816.4 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 96.05 մլն դրամ:

6. Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Գյուղատնտեսության ոլորտում քաղաքականության մոնիտորինգի և գնահատման կարողությունների զարգացման» դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է ամրապնդել մոնիթորինգի և գնահատման կարողությունները՝ գյուղատնտեսական քաղաքականության փաստահավաք վերլուծություն իրականացնելու և մշակելու հնարավորություն տալու համար՝ 2019թ.-ին նախատեսվում է 732.1 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 599.0 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 133.1 մլն դրամ:

7. **ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագիր**, որի նպատակն է գյուղական աղքատության կրճատումը՝ գյուղատնտեսական ոլորտի կայուն տնտեսական աճի միջոցով, գյուղատնտեսության ոլորտի արդյունավետության մեծացումը՝ ոռոգման համակարգերի ընդգրկումն ընդլայնելու և որակի բարելավման, համակարգը կառավարող մարմինների հզորացման և ֆերմերների արտադրանքի եկամտաբերությունն ավելացնելու հնարավորություններ ստեղծելու միջոցով՝ 2019թ նախատեսվում է 110.2 մլն դրամ դրամաշնորհային միջոցներ:

Այս ոլորտում Նախագծով նախատեսված ծախսերի համեմատությունը ՀՀ 2017 թվականի բյուջետային տարվա փաստացի, ինչպես նաև ՀՀ 2018 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 4 աղյուսակում:

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն

Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության (այդ թվում՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտե) գծով 2019 թվականի Նախագծով (առանց կառավարման ապարատի պահպանման ծախսերի) նախատեսվում է հատկացնել 107,232.5 մլն դրամ՝ 2018 թվականի հաստատված պետական բյուջեի 121,762.1 մլն դրամի դիմաց: Ծախսերի պակասեցումը ՀՀ 2018 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 14,529.6 մլն դրամ կամ 11.9 տոկոս: Հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

1. «Ռադիոակտիվ թափոնների կառավարում» ծրագրով նախատեսվել է_«Ռադիոակտիվ թափոնների վնասազերծման ծառայություններ» միջոցառումը, որի համար Նախագծով

նախատեսվում է հատկացնել 34.9 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափին համապատասխան:

Ծրագրի նպատակն է միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ ռադիոակտիվ թափոնների կենտրոնացված փոխադրման, ուսումնասիրման, պահպանման, վնասազերծման և թաղման ապահովումը՝ մարդկանց և շրջակա միջավայրի իոնացնող ճառագայթման վնասակար ազդեցությունից պաշտպանելու համար:

2. «Ընդերքի ուսումնասիրության, օգտագործման, պահպանման ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվել է «Ընդերքի մասին տեղեկատվություն տրամադրման ծառայություններ» միջոցառումը, որի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 16.9 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափին համապատասխան:

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքում ընդերքի վերաբերյալ երկրաբանական տեղեկությունների ընդունումը և պահպանումը, հանքավայրերի ու օգտակար հանածոների երևակումների պետական կադաստրի վարումը, երկրաբանական տեղեկության միասնական համակարգի ստեղծումը, վարումը, տնօրինումը, տրամադրումը, միասնական կոորդինատային համակարգով տրամադրված ընդերքի տեղամասերի ծայրակետային կոորդինատների համադրումը ֆոնդային նյութերի հետ, ընդերքօգտագործման ֆոնդի ստեղծումը և վարումը:

Միաժամանակ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության գծով նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիր, որի շրջանակներում վերակառուցվում է շուրջ 50 կմ երկարությամբ «Լալվար» և «Նոյեմբերյան» 110 կՎ օդային գծերը, որի արդյունքում կբարձրանա էլեկտրահաղորդման գծի թողունակությունը, ինչպես նաև էներգահամակարգի աշխատանքի հուսալիությունը՝ 2019թ-ին նախատեսվում է 1,664.0 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,340.7 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 323.3 մլն դրամ:

2. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագիր, որի շրջանակներում վերակառուցվում են «Հաղթանակ» 220 կՎ, «Չարենցավան-3» և «Վանաձոր-1» 110 կՎ ենթակայանները, ինչպես նաև նախատեսվում է ծրագրի շրջանակներում տնտեսված

միջոցների հաշվին վերակառուցել 40 և ավելի տարիներ շահագործման մեջ գտնվող 220/110/10 կՎ «Զովունի» ենթակայանը, որի իրականացման արդյունքում կբարձրանա ենթակայանների, ինչպես նաև էներգահամակարգի անվտանգությունը և աշխատանքի հուսալիությունը՝ 2019թ-ին նախատեսվում է 3,942.2 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,661.5 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 280.7 մլն դրամ:

3. ՌԴ աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման ծրագիր

Հայկական ատոմային էլեկտրակայանի (ՀԱԷԿ) գործող էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետը՝ համաձայն ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից տրամադրված շահագործման լիցենզիան ավարտվում է 2016թ.:

ՀԱԷԿ-ի անվտանգ շահագործումն ապահովելու և լրացուցիչ ժամկետում շահագործման լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է իրականացնել ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման ծրագրում նշված աշխատանքները՝ ամբողջ ծավալով և համապատասխան ժամկետներում:

ՀԱԷԿ-ի շահագործման նախագծային ժամկետի երկարացման լիցենզիա ստանալու համար աշխատանքների իրականացման հետաձգումը, շահագործման ժամկետի ավարտին կբերի ՀԱԷԿ-ի պարտադրված կանգառի և այդ ժամանակահատվածում ՀՀ-ում կառաջանա էլեկտրական էներգիայի արտադրության պակասորդ՝ 2019թ-ին նախատեսվում է 54,291.8 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 51,020.7 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 3,271.1 մլն դրամ:

4. Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՀԲ) աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգետիկական ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր, որի նպատակն է աջակցել Հայաստանում էլեկտրաէներգիայի մատակարարման համարժեքության և հուսալիության պահպանման ջանքերին՝ էլեկտրաէներգիա արտադրող/բաշխող ընկերությունների (Երևանի ՋԷԿ, ՀԱԷԿ ՓԲԸ) ֆինանսական վիճակը բարելավելու միջոցով: Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը կնպաստի էներգետիկայի ոլորտի ընկերությունների ֆինանսական վիճակի բարելավմանը՝ 2019թ-ին նախատեսվում է 390.6 մլն դրամ վարկային միջոցներ:

5. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման շրջանակներում 220 կՎ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցման ծրագիր որի շրաջանակներում վերակառուցվում են 220 կՎ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանները: Ենթակայանների արդիականացումն ու վերակառուցումը կնպաստի էներգետիկ անվտանգության և սպառողների

էլեկտրամատակարարման հուսալիության բարձրացմանը, էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացմանը՝ 2019թ-ին նախատեսվում է 2,071.9 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,798.1 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 273.8 մլն դրամ:

6. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման շրջանակներում կարգավորման կառավարման ավտոմատացված համակարգի (SCADA) ընդլայնման ծրագիր, որի շրջանակներում նախատեսվում է արդիականացնել SCADA համակարգը, զգալիորեն ավելացնել համակարգից օգտվողների քանակը, ստեղծել հարևան երկրների տվյալների միջսերվերային փոխանակման հնարավորություն, ինչպես նաև նախատեսվում է կառուցել էլեկտրաէներգետիկ համակարգի պահուստային կառավարման կենտրոն, որը կապահովի առաջնային կարգավարական կենտրոնի բնական աղետների, պատերազմական իրավիճակների կամ տեխնիկական պատճառներով խափանվելու դեպքում էլեկտրաէներգետիկական համակարգի վերահսկողությունն ու շարունակական կառավարումը՝ 2019թ-ին նախատեսվում է 4,035.1 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,479.9 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 555.1 մլն դրամ:

7. Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման շրջանակներում Երևանի ՋԷԿ-ի ենթակայանի վերակառուցման ծրագիր, որի շրջանակներում վերակառուցվում է Երևանի ՋԷԿ-ի ենթակայանը, որը կկրճատի 220/110/35 կՎ ենթակայանի սարքավորումների խափանումների հաճախականությունը, ինչպես նաև վերականգնման արդյունքում կբարձրանա ենթակայանի, ինչպես նաև էներգահամակարգի անվտանգությունը և աշխատանքի հուսալիությունը՝ 2019թ-ին նախատեսվում է 1,038.5 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 830.8 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 207.7 մլն դրամ:

8. Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման շրջանակներում «Աշնակ» ենթակայանի վերակառուցման և էլեկտրաէներգետիկական համակարգի կառավարման բարելավման ծրագիր, որի շրջանակներում վերակառուցվում է «Աշնակ» 220 կՎ ենթակայանը, ինչպես նաև նախատեսվում է տնտեսված միջոցների հաշվին վերակառուցել 220/110/6 կՎ «Արարատ-2» ենթակայանը, որոնց իրականացման արդյունքում կբարձրանա ենթակայանների, ինչպես նաև էներգահամակարգի անվտանգությունը և աշխատանքի հուսալիությունը՝ 2019թ-ին նախատեսվում է 2,064.5 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,682.9 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 381.6 մլն դրամ:

9. ՌԴ աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի N2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման դրամաշնորհային ծրագիր, որն ուղղված է համանուն վարկային ծրագրի գծով իրականացվող աշխատանքների պայմանագրային կանխավճարների ֆինանսավորմանը՝ 2019թ-ին նախատեսվում է 5,757.9 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 5,280.1 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 477.7 մլն դրամ:

10. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երկրաջերմային հետախուզական հորատման դրամաշնորհային ծրագիր, որի միջոցները կուղղվեն Քարքար տեղամասում, հետախուզական հորատման միջոցով՝ էլեկտրաէներգիայի արտադրության համար բավարար ռեսուրսի առկայության որակի հաստատումը և երկրաջերմային էլեկտրակայանի կառուցման գործում մասնավոր հատվածի ներգրավումը՝ 2019թ-ին նախատեսվում է 70.6 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 56.5 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 14.1 մլն դրամ:

11. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Դրամաշնորհ արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի նախապատրաստման համար» դրամաշնորհային ծրագիր, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել արևային էներգիայի ռեսուրսի գնահատում, արևային ՖՎ պանելների, արևային էներգիայի ռեսուրսի գնահատման սարքավորումների գնում և թեստավորում: Ծրագրի նպատակն է օժանդակել Հայաստանի Հանրապետությանը՝ արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի նախատեսվող ծրագրի կիրառումը՝ 2019թ-ին նախատեսվում է 13.0 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 10.4 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 2.6 մլն դրամ:

12. ՄԱԶԾ-ին «Ժամկետանց պեստիցիդների պաշարների ոչնչացում և կայուն օրգանական աղտոտիչներով (ԿՕԱ) աղտոտված տարածքների աղտազերծում՝ քիմիկատների անվտանգ կառավարման միջոցառումների շրջանակներում» ՄԱԶԾ-ԳԷՀ լայնածավալ ծրագրի համաֆինանսավորման նպատակով եկամուտների լրացուցիչ հավաքագրման դեպքում կտրամադրվի շուրջ 1,5 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտե.

Ջրային տնտեսության ոլորտի համար Նախագծով նախատեսվում է (առանց կառավարման ապարատի պահպանման ծախսերի) հատկացնել 31,840.2 մլն դրամ՝ 2018 թվականի հաստատված պետական բյուջեի 35,365.3 մլն դրամի դիմաց: Ծախսերի պակասեցումը ՀՀ 2018 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ

կազմում է 3,525.1 մլն դրամ կամ 9.9 տոկոս: Հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

1. «Ոռոգման համակարգի առողջացում» ծրագրի համար Նախագծով նախատեսվել է հատկացնել 8,529.7 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1.1 «Ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպություններին ֆինանսական աջակցության տրամադրում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,077.9 մլն դրամ՝ պահպանելով ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված չափաքանակը:

Միջոցառմամբ նախատեսվում է ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպության ընթացիկ ֆինանսական ճեղքվածքի ծածկման նպատակով պետական աջակցության տրամադրում՝ վերջիններիս համար հաստատված սակագնի և նվազագույն շահավետ գնի տարբերության չափով:

Գումարի հաշվարկման համար հիմք են հանդիսացել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2007թ. սահմանված ոռոգման ջրի սակագների հաշվարկները և 2010թ. վերանայված տարբերակները:

1.2 «Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 3,636.7 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 4,661.8 մլն դրամի դիմաց կամ 1,025.1 մլն դրամով պակաս, որի համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 25.08.2016թ. N33-18 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Ոռոգման ոլորտի ֆինանսական կայունության բարելավման ռազմավարությանը և միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ռազմավարությունը:

1.3 «Ջրատեխնիկական կառույցների ուսումնասիրություններ» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 16.0 մլն դրամ՝ պահպանելով ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված չափաքանակը:

Միջոցառմամբ հատկացվող գումարը նախատեսվում է ուղղել ՀՀ ջրային օրենսգրքի 86-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 08.05.03թ. «Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության հսկողության և զննման կարգը հաստատելու մասին» N 686 որոշման համաձայն՝ ՀՏԿ-ների զննման, ջրային համակարգերի անվտանգության ապահովման, արդյունավետ օգտագործման և պահպանության ծրագրերի ուսումնասիրության, ինչպես նաև տվյալ ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ մասնագիտական եզրակացություններ տալու նպատակով, որպես մշտապես գործող մարմին ստեղծված հանձնաժողովի գործունեության ապահովման ծախսերի ֆինանսավորմանը:

1.4 «Աջակցություն ոռոգման համակարգի առողջացման ծրագրին» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 3,799.0 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 750.0 մլն դրամի դիմաց կամ 3,049.0 մլն դրամով ավել: Ավելացումը պայմանավորված է ոռոգման համակարգի առողջացմանն (այդ թվում կրեդիտորական պարտքերի մարմանն) ուղղված միջոցառումների իրականացմամբ:

2. «Կոլեկտորադրենաժային ծառայություններ» ծրագրի համար Նախագծով նախատեսվել է հատկացնել 336.5 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումը.

2.1 «Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքներ» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 336.5 մլն դրամ՝ պահպանելով ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված չափաքանակը:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է մաքրել և վերանորոգել 180.0 կմ երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանց:

3. «Որոտան-Արփա-Սևան թունելի ջրային համակարգի կառավարում» ծրագրի համար Նախագծով նախատեսվել է հատկացնել 205.8 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

3.1 «Արփա-Սևան թունելի հավատարմագրային կառավարման ծառայություններ» միջոցառմամբ նախատեսվում է «Որոտան-Արփա-Սևան» ջրային համակարգի պահպանման ու շահագործման նպատակով հավատարմագրային կառավարման պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցում՝ ապահովելով համակարգի անվտանգ, անխափան շահագործումն և պահպանումը, ինչը թույլ է տալիս առավելագույն քանակի ջուր տեղափոխել Սևանա լիճ:

2004 թվականի օգոստոսի 17-ին կնքված ՈԾՁԲ-04/36 պայմանագրի համաձայն (որով նախատեսվել է «Որոտան-Արփա-Սևան» հիդրոհանգույցի ջրային համակարգը հանձնել հավա-տարմագրային կառավարման) Նախագծով նախատեսվում է Արփա-Սևան թունելի պահպանման և շահագործման նպատակով հավատարմագրային կառավարչի պահպանման ծախսերի համար հատկացնել 205.8 մլն դրամ՝ պահպանելով ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված չափաքանակը:

4. «Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում» ծրագրի համար Նախագծով նախատեսվել է հատկացնել 1,289.8 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

4.1 «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների սուբսիդավորում»

միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,289.8 մլն դրամ՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 22.11.2017թ. N499-Ն որոշմամբ հաստատված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագներից 11.414 դրամ/մ3 չափով սուբսիդավորման նպատակով:

Միջոցառման նպատակն է մեղմել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների սպառողների մոտ լրացուցիչ բեռի առաջացումը:

«Արփա-Սևան ջրային համակարգի տեխնիկական վիճակի բարելավում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել Արփա-Սևան թունելի առանձին վթարային հատվածների վերականգնման ավարտական աշխատանքներ: Աշխատանքների ընդհանուր պայմանագրային արժեքը կազմում է 5,076.0 մլն դրամ, որից 2017 թվականին փաստացի ֆինանսավորվել է 1,689.5 մլն դրամ, իսկ 2018 թվականի համար նախատեսված է 1,600.0 մլն դրամ: Պայմանագրային արժեքի 1,786.5 մլն դրամի մնացորդը նախատեսվում է հատկացնել 2019 թվականին՝ աշխատանքների ավարտման նպատակով:

«Ոռոգման համակարգերի հիմնանորոգում» միջոցառման համար ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 539.536 մլն դրամ, որի շրջանակերում նախատեսվում է ոռոգման ոլորտի կազմակերպությունների (ջրօգտագործողների ընկերություններ, ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպություն) կողմից շահագործվող ջրային համակարգերում իրականացնել կապիտալ նորոգման աշխատանքներ:

Միաժամանակ ջրային տնտեսության ոլորտում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացման ծրագիր, որի նպատակն է ոռոգման նոր համակարգերի կառուցումը՝ նվազեցնելով ոռոգման կախվածությունը հոսանքատար մեխանիկական ոռոգումից, դարձնելով այն տնտեսապես շահավետ և կայուն: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝

ա/ Ոռոգման համակարգի բարելավում, այդ թվում՝ մեխանիկական ոռոգման փոխարինում ինքնահոսով, մեխանիկական ոռոգման ջուր տեղափոխող հեռացնող և այլ ջրանցքների վիճակի բարելավում: Կֆինանսավորի ոռոգման համակարգերի կառուցումը Մեղրի, Գեղարդալիճ, Բաղրամյան-Նորակերտ և Քաղցրաշեն համակարգերում:

բ/ Կառավարման տեղեկատվություն, այդ թվում՝ տեխնիկական հետազոտություններ, կարգավարական հսկողության և տվյալների ձեռքբերման (SCADA) համակարգի տեղադրում:

Մայր ջրանցքների և մի քանի այլ ջրընդունիչ կետերի 71 դիտակետում կտեղադրվի ջրաչափման և ջրի հոսքի կառավարման սարքի ժամանակակից մոդել:

գ/ Ծրագրի կառավարում և ՋՕԸ-ների աջակցման թիմ, այդ թվում՝ նախնական նախագծային փաստաթղթերի պատրաստումը, շինարարական աշխատանքների համակարգումն ու մոնիտորինգը, մրցութային փաստաթղթերի պատրաստումը և գնումային գործընթացի կառավարումը, ծրագրի գործողությունների մոնիտորինգը և ծրագրի իրականացման ընթացքի մասին հաշվետվությունների պատրաստումը, ՋՕԸ-ների ամրապնդմանն ուղղված գործողությունների իրականացումը՝ 2019թ.-ին նախատեսվում է 468.8 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 332.2 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 136.7 մլն դրամ:

2. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի. ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագիր, որի նպատակն է Շիրակի մարզում՝ Ախուրյան գետի վրա, գյուղատնտեսական նպատակներով արդյունավետ ոռոգման համակարգի ստեղծում, որը կհանդիսանա գետի ամբողջ ավազանի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման մաս:

Ծրագրով նախատեսվում է ավարտին հասցնել կիսակառույց պատվարը, օժանդակ կառույցները և վերականգնել թունելները, ինչը կապահովի ստորին բրիեֆում տարածաշրջանների անվտանգությունը՝ 2019թ.-ին նախատեսվում է 2,417.7 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,193.1 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 224.6 մլն դրամ:

3. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի երկրորդ փուլ, որի նպատակն է ապահովել Ախուրյանի գետի երկայնքով ջրի պաշարների կայուն օգտագործումը, բարձրացնել գյուղատնտեսական արտադրողականությունը, նվազեցնել թիրախային խմբի խոցելիությունը կլիմայի փոփոխության ազդեցության, շրջակա միջավայրի էկոհամակարգերի և կենսաբազմազանության պահպանման, Կապս ջրամբարի շրջակա միջավայրի բնակչության անվտանգության ռիսկը՝ 2019թ.-ին նախատեսվում է 354.6 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 295.5 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 59.1 մլն դրամ:

4. Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վերդու ջրամբարի կառուցման ծրագիր, որի նպատակն է Վեդու ջրամբարի և ինքնահոս ոռոգման համակարգի կառուցումը, ինչը կբարձրացնի ջրապահովման մակարդակը և կնպաստի գյուղատնտեսության զարգացմանը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել պատվարը, օժանդակ կառուցվածքները, փոխադրող համակարգը՝ գետից մինչև ջրամբար և հեռացնող խողովակաշարը (ինքնահոս): Վեդու ջրամբարի կառուցումը

կբարձրացնի Վեդի և Արարատ ՋՕԸ-ների շուրջ 3200 հա հողատարածքների ջրապահովման մակարդակը՝ 2019թ.-ին նախատեսվում է 2,961.6 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,605.4 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 1,356.2 մլն դրամ:

5. Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագիր, որի նպատակն է բարելավել և արդիականացնել Հայաստանի ոռոգման համակարգերը՝ կրճատելով շահագործման և պահպանման ծախսերը, ոռոգման համակարգերում կրճատել բարձր ջրակորուստները, նվազեցնել էլեկտրաէներգիայի ծախսումները կամ բարձրացնել էներգածախսատար համակարգերի արդյունավետությունը, վերանախագծել ներտնտեսային ցանցերը՝ գոյություն ունեցող հողօգտագործման մեթոդներին համապատասխան: Զարգացման նպատակի իրականացմանը ենթադրվում է հասնել հետևյալ միջոցառումների միջոցով.

ա) մեխանիկական ոռոգման փոխարինում ինքնահոս համակարգերով,

բ) որոշ մայր և երկրորդ կարգի ջրանցքների վերականգնում,

գ) ՋՕԸ-ների ներտնտեսային ոռոգման ցանցերի արդիականացում,

դ) ՋՕԸ-ների կառավարչական ներուժի ամրապնդում և Ծրագրի կառավարում, շինարարական փաթեթների նախապատրաստում, խորհրդատվական ծառայություններ և այլն՝ 2019թ.-ին նախատեսվում է 1,629.2 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,205.3 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 423.9 մլն դրամ:

6. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր, որի նպատակն է աջակցել Երևան քաղաքի ջրամատակարարման բարելավմանը՝ ջրամատակարարման ցանցի վերակառուցման, ջրահեռացման համակարգերի բարելավման միջոցով և համարվում է նախորդ ծրագրի մասնաբաժին ԵՆԲ-ի աջակցությամբ՝ 2019թ. նախատեսված է 2,913.7 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,020.4 մլն դրամ, համաֆինանսավորում՝ 893.2 մլն դրամ:

7. Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է աջակցել Երևան քաղաքի ջրամատակարարման բարելավմանը և համարվում է նախորդող վարկային ծրագրերի դրամաշնորհային մասնաբաժին՝ 2019թ. նախատեսված է 2,590,1 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,933,1 մլն դրամ, համաֆինանսավորում՝ 657,0 մլն դրամ:

8. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականցվող Երևանի ջրամատակարարման բարելավման դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է Երևան քաղաքի ջրամատակարարման համակարգի բարելավումը, հոսակորուստների

կրճատումը, ինչպես նաև ծառայության մակարդակի բարձրացումը՝ 2019թ. նախատեսված է 18,8 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 10,3 մլն դրամ, համաֆինանսավորում՝ 8,6 մլն դրամ:

9. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Շիրակի (Գյումրու) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագիր՝ երկրորդ փուլ, որը ՀՀ կառավարության 23.02.2017թ. № 191-Ա որոշման համաձայն փոխանցվել է «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ին և հանդիսանում է Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրի շարունակությունը: Ծրագրի շրջանակներում մասնավորապես նախատեսվում է օրվա կարգավորիչ ջրամբարների վերակառուցման աշխատանքների իրականացում Գյումրի քաղաքում՝ 2019թ. նախատեսված է 214,8 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 164,8 մլն դրամ, համաֆինանսավորում՝ 50,0 մլն դրամ:

10. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Լոռու (Վանաձորի) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագիր՝ երկրորդ փուլ, որը ՀՀ կառավարության 23.02.2017թ. № 191-Ա որոշման համաձայն փոխանցվել է «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ին և հանդիսանում է Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրի շարունակությունը: Ծրագրի շրջանակներում մասնավորապես նախատեսվում է օրվա կարգավորիչ ջրամբարների վերակառուցման աշխատանքների իրականացում Վանաձոր քաղաքում՝ 2019թ. նախատեսված է 104,5 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 84,5 մլն դրամ, համաֆինանսավորում՝ 20,0 մլն դրամ:

11. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլ,

12. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլ, որոնց նպատակն է 6 քաղաքների և 37 գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հատվածների հրատապ վերականգնման աշխատանքների, բաշխիչ ցանցերի վերականգնման, Գյումրի քաղաքի առավել ռիսկային կետերի (Աթոյան, Շիրակացի, Ղուկասյան փողոցների) կոյուղու համակարգի վերականգման, Վանաձոր, Արմավիր քաղաքների ջրամատակարարման համակարգի նորացման, ինչպես նաև թվով 3 ջրամբարների կառուցման աշխատանքների որոշ մասի իրականացումը (ԵՆԲ վարկի հետ համատեղ ֆինանսավորում):

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2019թ. նախատեսված է 1,400.0 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 900.0 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 500.0 մլն դրամ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2019թ. նախատեսված է 1,400.0 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 900.0 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 500.0 մլն դրամ:

13. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի և Եվրոպական միության Հարևանության ներդրումային գործիքի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման դրամաշնորհային ծրագրի երրորդ փուլ, որի նպատակն է ջրամատակարար ընկերությունների կողմից դուրս մնացած 560 գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնումը, կեղտաջրերի մաքրման կայանի կառուցումը, կոյուղու, պոմպակայանի, կոլեկտորի, կոյուղու ցանցի վերականգնումը, ինչը թույլ կտա Արմավիր, Մեծամոր քաղաքների ու Նորապատ համայնքի կեղտաջրերի մաքրման աշխատանքներ իրականացնել: Աշխատանքներ կիրականացվեն նաև Արմավիր քաղաքի ջրամատակարարման բաշխիչ ցանցի առավել վթարային ճանաչված հատվածների վերականգնման համար՝ 2019թ. նախատեսված է 2,186,1 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,821.7 մլն դրամ, համաֆինանսավորում՝ 364.3 մլն դրամ:

14. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքային ենթակառուցվածքների երկրորդ ծրագրի երրորդ փուլի դրամաշնորհային ծրագրի ուղեկցող միջոցառում

Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի զարգացման վարկերի բանկի միջև 19.12.2014թ. ստորագրված «Ուղեկցող միջոցառումներ Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II-Փուլ 3» 1.0 մլն եվրո (BMZ-ID 2014 701 94) լրացուցիչ ֆինանսական համաձայնագրի հիման վրա ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի և «GFA խորհրդատվական խումբ GmbH, «Ամերիա» ՓԲԸ և «ՋԻՆՋ» ՍՊԸ» կոնսորցիում ընկերության միջև ստորագրման փուլում գտնվող «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II-Փուլ 3 (BMZ-NO. 2014 701 94) ուղեկցող միջոցառումների խորհրդատվական ծառայություններ գույքի կառավարում» խորհրդատվական պայմանագրի շրջանակներում անհրաժեշտ վճարումների ժամանակին

ապահովում և ծառայության մատուցման անխափան իրականացում՝ 2019թ. նախատեսված է 492,1 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 410,1 մլն դրամ, համաֆինանսավորում՝ 81,9 մլն դրամ:

Այս ոլորտում Նախագծով նախատեսված ծախսերի համեմատությունը ՀՀ 2017 թվականի բյուջետային տարվա փաստացի, ինչպես նաև ՀՀ 2018 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 6 աղյուսակում:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն.

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության գծով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով (առանց կառավարման ապարատի պահպանման ծախսերի) նախատեսվում է 96,082.6 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն համայնքներին պետական բյուջեից անհատույց և անվերադարձ հատկացումներ կարող են նախատեսվել ֆինանսական համահարթեցման և այլ դոտացիաների, սուբվենցիաների և պետական բյուջեի եկամուտներից մասհանումների տեսքով:

Ֆինանսական համահարթեցման և այլ դոտացիաներ.

2019 թվականին համայնքներին տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով առաջարկվում է ուղղել.

- ֆինանսական համահարթեցման դոտացիաների տրամադրմանը,
- այլ դոտացիաների տրամադրմանը:

1. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը սահմանում է (համանման սահմանմամբ դրույթ բերված է նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունում), որ պետական բյուջեից համայնքներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տվյալ տարում տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 93-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) սահմանվում է ոչ պակաս, քան տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում ՀՀ համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի չորս տոկոսը: 2019 թվականի համար նախորդող երկրորդ բյուջետային տարին՝ 2017 թվականի բյուջետային տարին է,

հետևաբար ըստ վերոհիշյալ օրենքների վերը նշված պահանջի՝ 2019 թվականին համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 93-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) չպետք է պակաս լինի ՀՀ 2017 թվականի համախմբված բյուջեի փաստացի եկամուտների ընդհանուր գումարի՝ 1,276.8 մլրդ դրամի 4%-ը կազմող 51,071.4 մլն դրամից:

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրել ընդհանուր գումարով 51,071.4 մլն դրամի դոտացիաներ: ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների բաշխումն ըստ առանձին համայնքների իրականացվել է «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան:

Դոտացիաները բաղկացած են երկու մասից՝ «Ա» և «Բ»: Այդ մասերից յուրաքանչյուրը հաշվարկվում է ըստ առանձին համայնքների:

- «Ա» մասով յուրաքանչյուր համայնքին դոտացիաները հատկացվում են տվյալ համայնքին 2016 թվականին տրամադրված դոտացիաների փաստացի գումարի չափով,
- «Բ» մասով դոտացիաները հաշվարկվում են ըստ համայնքների բյուջետային ապահովվածության գործակցի: Մասնավորապես,

2019 թվականի յուրաքանչյուր համայնքի դոտացիաների հաշվարկի համար, որպես բազային անփոփոխելի գումար համարվել է ՀՀ 2016թ. պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրամադրված ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարը և 2019 թվականի ֆինանսական համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարի (51,071.4 մլն դրամ) ու 2016 թվականին հատկացված դոտացիայի ընդհանուր գումարի (47,127.5 մլն դրամ) տարբերության չափով հավելաճի գումարը (3,943.9 մլն.դրամ):

Ընդ որում, 2019 թվականի համար հավելաճի մասով դոտացիաների հաշվարկը իրականացվել է «Բ» մասով:

Հարկ է նշել, որ համաձայն «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի 2019 թվականի ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառված 2017 թվականի գույքահարկի և հողի հարկի գծով բոլոր ելակետային տվյալները տրամադրվել են համայնքների ղեկավարների կողմից:

Ինչ վերաբերում է հաշվարկներում կիրառված մյուս ցուցանիշներին՝

- համայնքի բնակչության թվաքանակը՝ տվյալ համայնքի տարածքում հաշվառված բնակչության թիվը,
- պետական տուրքերի հաշվարկային գումարը,
- համայնքի կենտրոնի հեռավորությունը մարզկենտրոնից, նախկին շրջկենտրոնից և մայրաքաղաքից,
- համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից,
- համայնքի 0-16 տարեկան և կենսաթոշակային տարիքի բնակչության թիվը հաշվառված բնակչության թվի մեջ,
- համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի թիվը,

ապա վերջիններս տրամադրվել են համապատասխան պետական լիազոր մարմինների կողմից:

2. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 93-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն ՀՀ օրենքներով համայնքների եկամուտների նվազեցման հետևանքով համայնքների բյուջեներում առաջացող եկամուտների կորուստների գումարները ենթակա են փոխհատուցման պետության կողմից: Այդ կապակցությամբ, «Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան կիրառելով տեղական ինքնակառավարման մարմիններից (իրենց իրավասության շրջանակներում) ստացված տեղեկատվությունը, կատարվել են համայնքների 2017 թվականի բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման ենթակա գումարների հաշվարկներ: Արդյունքում, համայնքների 2017 թվականի բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման ենթակա ընդհանուր գումարը կազմել է շուրջ 77.9 մլն.դրամ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն բնակավայրի համապատասխան ցուցանիշները հայտնի պատճառներով չեն կարող կիրառվել ֆինանսական համահարթեցման դոտացիաների բաշխման հաշվարկներում, նշված բնակավայրի վարչական ղեկավարի և աշխատակազմի 2019 թվականի պահպանման ծախսերի գծով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծում ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանին առանձին տողով նախատեսվել են 4.9 մլն դրամի չափով հատկացումներ:

Սուբվենցիաներ.

- ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է շուրջ 9.0 մլրդ դրամ ընդհանուր գումարով սուբվենցիաների հատկացում Երևանի քաղաքային համայնքի ծրագրերի իրականացմանը աջակցելու համար:

«Քաղաքային զարգացում» ծրագիր.

Նշված ծրագրի համար ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 25,490.6 մլն դրամ, որն ուղղվելու է հետևյալ միջոցառումների իրականացմանը.

- «Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացում» միջոցառմամբ մետրոպոլիտենով ուղևորափոխադրումների սպասարկման որակի բարելավման և երթևեկության անվտանգության ապահովման նպատակով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 2.742.7 մլն դրամ, որից.

ա/ 1,933.3 մլն դրամը՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող ուղևորափոխադրման ծառայությունների սուբսիդավորման համար՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված ցուցանիշին համապատասխան:

բ/ 809.4 մլն դրամը՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Եվրոպական ներդրումային բանկի նկատմամբ ունեցած վարկային պարտավորությունների գծով տոկոսների և մայր գումարի մարման համար, որը ՀՀ 2018թ. պետական բյուջեի նկատմամբ ավել է 72.5 մլն դրամով՝ պայմանավորված վարկային միջոցների մայր գումարի մարումների և փոխարժեքի փոփոխությունների հետ:

«Վերգետնյա էլեկտրոտրանսպորտով ուղևորափոխադրումների ծառայությունների մատուցում» միջոցառմամբ վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների սպասարկման որակի բարելավման և երթևեկության անվտանգության ապահովման նպատակով ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 602.2 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված ցուցանիշին համապատասխան, որը կուղղվի «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի կողմից ուղևորափոխադրման ծառայությունների մատուցման արդյունքում կրած վնասի փոխհատուցմանը:

Միջոցառման նպատակն է աջակցել Երևանի քաղաքապետարանին՝ վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայությունների սուբսիդավորման նպատակով:

«Պետական աջակցություն Երևան քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման և ճաքալցման աշխատանքների իրականացման համար» և «Պետական աջակցություն Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների

իրականացման համար» միջոցառումների գծով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է համապատասխանաբար 3,284.0 մլն դրամ և 2,272.0 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարների չափով:

Նշված միջոցառումների նպատակն է աջակցել Երևանի քաղաքապետարանին՝ Երևան քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման և արտաքին լուսավորության ցանցի շահագործման ու պահպանման աշխատանքների իրականացման նպատակով:

«Տարածքային զարգացում» ծրագիր.

«Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 928.9 մլն դրամ՝ պահպանելով ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված չափաքանակը:

Ծրագրի նախատեսմամբ և իրականացմամբ ապահովվում է «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրարկումը, որով նախատեսվում է փոխհատուցել (ամբողջությամբ կամ մասնակի) ՀՀ կառավարության 18.12.2014թ. N1444-Ն որոշմամբ նախատեսված բնական գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման ջրի, սահմանամերձ համայնքների վարչական տարածքում գտնվող մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքների համար վճարման ենթակա հողի հարկի և այդ հողերի վրա ունեցած անշարժ գույքի գույքահարկի գծով ծախսերը:

«Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարման և դրամական փոխհատուցման տրամադրում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ՀՀ-ում այլընտրանքային աշխատանքային ծառայության անցած ՀՀ քաղաքացիներին «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված դրամական բավարարում և փոխհատուցում: Նշված միջոցառման գծով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 33.1 մլն դրամ, որը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նկատմամբ նվազել է 8.7 մլն դրամով:

Փախստականներին մատուցվող ծառայություններ և օժանդակություն

-«Ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների կենցաղային խնդիրների լուծման միջոցառումների իրականացում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 37.2 մլն դրամի չափով (2017 թվականին՝ 31.2 մլն դրամ): Ծախսերի աճը 6.0 մլն դրամի չափով պայմանավորված է ծրագրի գծով ավելացված արժեքի հարկի գծով գումարի նախատեսմամբ՝ շահառուների թվաքանակի նվազման պահմաններում (կանխատեսվում է 719 շահառու 2018 թվականի 725 դիմաց):

-«Ապաստան հայցողների կեցության խնդիրների լուծման միջոցառումների իրականացում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 28.1 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 24.4 մլն դրամ): Ծախսերի աճը 3.6 մլն դրամի չափով պայմանավորված է ծրագրի գծով ավելացված արժեքի հարկի գծով գումարի նախատեսմամբ՝ առանձին տնտեսագիտական դասակարգման հոդվածների գծով ծախսերի փոփոխության պայմաններում:

-«Ժամանակավոր տեղավորման կենտրոնում չտեղավորված ապաստան հայցողներին դրամական օգնության տրամադրում» միջոցառման գծով նախատեսվում է ծախս 1.3 մլն դրամի չափով (2018 թվականին՝ 4.0 մլն դրամ): Ծախսերի նվազումը 2.7 մլն դրամի չափով պայմանավորված է շահառուների թվաքանակի փոփոխությամբ: 2019 թվականին նախատեսվում է դրամական օգնություն տրամադրել 27 շահառուի:

-«Ապաստանի ընթացակարգում թարգմանչական ծառայությունների ձեռք բերում» միջոցառմամբ նախատեսվում է հատկացնել 2.1 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2018 թվականի համար նախատեսված չափը):

-«ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց համար քաղաքացիական կողմնորոշման դասընթացների կազմակերպում» միջոցառմամբ նախատեսվում է հատկացնել 2.3 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2018 թվականի համար նախատեսված չափը):

-«ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց վարձակալությամբ բնակարանների ձեռքբերման ծախսերի փոխհատուցում» միջոցառմամբ նախատեսվում է հատկացնել 13.5 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2018 թվականի համար նախատեսված չափը):

Միաժամանակ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության գծով նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն), որի նպատակն է վերականգնել և բարելավել Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքները, որի շրջանակներում նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

ա) ուղևորների սպասարկման որակի բարելավում,

բ) մետրոպոլիտենի գծերի, կայարանների, շենքերի, կառույցների, էլեկտրամատակարարման և կապի համակարգերի, շարժակազմերի և տեխնոլոգիական սարքավորումների անխափան շահագործման հուսալիության բարձրացում,

գ) մետրոպոլիտենի օբյեկտներում սանիտարատեխնիկական վիճակի և աղտոտումից շրջակա միջավայրի պահպանության ապահովում,

դ) էլեկտրամատակարարման հուսալիության բարձրացում, թունելային ջրատարի և շարժասանդուղքների վերանորոգում՝ 2019թ.-ին նախատեսվում է 364.4 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 280.6 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 83.7 մլն դրամ:

2. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն), որի նպատակն է վերականգնել և բարելավել Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքները, որի շրջանակներում նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

ա) ուղևորների սպասարկման որակի բարելավում,

բ) մետրոպոլիտենի գծերի, կայարանների, շենքերի, կառույցների, էլեկտրամատակարարման և կապի համակարգերի, շարժակազմերի և տեխնոլոգիական սարքավորումների անխափան շահագործման հուսալիության բարձրացում,

գ) մետրոպոլիտենի օբյեկտներում սանիտարատեխնիկական վիճակի և աղտոտումից շրջակա միջավայրի պահպանության ապահովում,

դ) էլեկտրամատակարարման հուսալիության բարձրացում, թունելային ջրատարի և շարժասանդուղքների վերանորոգում՝ 2019թ.-ին նախատեսվում է 995,3 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 772,8 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 222,5 մլն դրամ:

3. Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ դրամաշնորհային ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն), որի նպատակն է վերականգնել և բարելավել Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքները՝ 2019թ. նախատեսվում է 1,080.6 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 900.2 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 180.4 մլն. դրամ:

4. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն), որի նպատակն է բարելավել Երևանի քաղաքային տրանսպորտի ենթակառուցվածքը և ծառայությունները:

Նշված վարկային ծրագրի շրջանակներում կատարված տնտեսումների հաշվին նախատեսվում են կառուցել երկու տրանսպորտային հանգույց՝ Արշակունյաց-Գարեգին Նժդեհ և Արշակունյաց-Բագրատունյաց խաչմերուկներում: Նշված վայրերում Արշակունյաց պողոտայի ուղղությամբ նախատեսվում է կառուցել էստակադաներ՝ 2019թ.-ին նախատեսվում է 1,876.7 մլն

դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,282.9 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 593.8 մլն դրամ:

5. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող Քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն), որի նպատակն է բարելավել քաղաքային ենթակառուցվածքները, այդ թվում՝ Արգավանդ - Շիրակ, Դավիթաշեն - Աշտարակ ճանապարհահատվածը՝ 2019թ.-ին նախատեսվում է 6,550.9 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 4,549.7 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 2,001.2 մլն դրամ:

6. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագիր, որի նպատակն է Գյումրի քաղաքում հիմնական ճանապարհների վերակառուցում և հանրային լուսավորության արդիականացում, այդ թվում՝ ասֆալտի և մայթերի նորոգում, ջրահեռացման համակարգերի վերականգնում, Գյումրու քաղաքապետարանի համար ավտոկայանատեղիների վերաբերյալ ռազմավարության մշակում՝ 2019թ.-ին նախատեսվում է 1,230.0 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 991.7 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 238.3 մլն դրամ:

7. «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհներ» տեխնիկական համագործակցության դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է աջակցել «Գյումրու քաղաքային ճանապարհներ» վարկային ծրագրի իրականացման թիմին աշխատանքների համար մրցութային փաստաթղթերի պատրաստման, պայմանագրերի շնորհման համար՝ 2019թ.-ին նախատեսվում է 358.9 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 299.1 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 59.8 մլն դրամ:

8. «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհներ» դրամաշնորհային ծրագիր (Տրանշ Ա), որի նպատակն է աջակցել «Գյումրու քաղաքային ճանապարհներ» վարկային ծրագրի իրականացման շրջանակներում հանրային լուսավորության արդիականացմանը, Գյումրու քաղաքապետարանի համար ավտոկայանատեղիների վերաբերյալ ռազմավարության մշակմանը՝ 2019թ.-ին նախատեսվում է 1,840.8 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,534.0 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 306.8 մլն դրամ:

9. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն), որի նպատակն է Երևանում

ստեղծել հուսալի լուսավորության ցանց (մոտ 28 փողոցներում), ապահովել էլեկտրաէներգիայի էական խնայողություն, ներդնել արտաքին լուսավորության ցանցի հեռակառավարման համակարգ, փոխել վթարված հենասյուները, փոխարինել առկա լուսատուները LED լուսատուներով՝ 2019թ.-ին նախատեսվում է 516,2 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 350.2 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 166.0 մլն դրամ:

10. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» դրամաշնորհային ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն), որի նպատակն է Երևանում ստեղծել հուսալի լուսավորության ցանց (մոտ 28 փողոցներում), ապահովել էլեկտրաէներգիայի էական խնայողություն, ներդնել արտաքին լուսավորության ցանցի հեռակառավարման համակարգ, փոխել վթարված հենասյուները, փոխարինել առկա լուսատուները LED լուսատուներով՝ 2019թ.՝ 60.3 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 17.9 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 42. մլն դրամ:

11. E5P աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» դրամաշնորհային ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն), որի նպատակն է Երևանում ստեղծել հուսալի լուսավորության ցանց (մոտ 28 փողոցներում), ապահովել էլեկտրաէներգիայի էական խնայողություն, ներդնել արտաքին լուսավորության ցանցի հեռակառավարման համակարգ, փոխել վթարված հենասյուները, փոխարինել առկա լուսատուները LED լուսատուներով՝ 2019թ.՝ 83.9 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 69.9 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 14.0 մլն դրամ:

12. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագիր, որի նպատակն է աջակցել Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի բարելավմանը, նոր աղբավայրի կառուցմանը, մասնագիտացված սարքավորումների ձեռք բերմանը, ինչպես նաև լրացուցիչ բնապահպանական և սոցիալական հետազոտությունների կատարմանը՝ 2019թ-ին նախատեսվում է 321.3 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 259.4 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 61.9 մլն դրամ:

13. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն), որի նպատակն է աջակցել Երևանի տարածքում նոր աղբավայրի կառուցմանը, մասնագիտակցված տրանսպորտային

միջոցների և սարքավորումների գնման գործընթացին՝ 2019թ-ին նախատեսվում է 848.1 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 680.0 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 168.1 մլն դրամ:

14. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի կոշտ թափոնների ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն), որի նպատակն է բարելավել Երևան քաղաքում և շրջակա շրջաններում կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգը, նոր սանիտարական աղբավայրի և օժանդակ ենթակառուցվածքի կառուցմանը, աջակցել Նուբարաշենի գործող աղբավայրի փակմանը և վերականգնմանը, ինչպես նաև լրացուցիչ մասնագիտացված սարքավորումների ձեռք բերմանը՝ 2019թ-ին նախատեսվում է 455.4 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 329.8 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 125.6 մլն դրամ:

15. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Կոտայքի և Գեղարքունիքի մարզերիի կոշտ թափոնների կառավարման դրամաշնորհային ծրագիր, որի հիմնական նպատակն է վերամշակել Կոտայքի մարզի կոշտ կենցաղայաին թափոնները: Դրամաշնորհային ծրագիրն ուղղված է հիմնական վարկային ծրագրի աջակցմանը՝ 2019թ-ին նախատեսվում է 1,910.5 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,750.4 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 160.0 մլն դրամ:

16. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման խորհրդատվության համար դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է խորհրդատվություն տրամադրել Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների հիմնական վարկային ծրագրի իրականացմանը՝ 2019թ-ին նախատեսվում է 206.0 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 171.7 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 34.3 մլն դրամ:

17. Եվրոպական միության հարևանության ներդրումային գործիքի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» դրամաշնորհային ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն), որի նպատակն է բարելավել Երևանում կոշտ թափոնների կառավարման համակարգը, այդ թվում՝ նոր աղբավայրի կառուցում, շահագործում և վերամշակման ծավալների ավելացմանը նպաստող համակարգերի ներդրում՝ 2019թ-ին նախատեսվում է 1,072.7 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 893.9 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 178.8 մլն դրամ:

18. Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» դրամաշնորհային ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության

կողմից պատվիրակված լիազորություն), որի նպատակն է բարելավել Երևանում կոշտ թափոնների կառավարման համակարգը, այդ թվում՝ նոր աղբավայրի կառուցում, շահագործում և վերամշակման ծավալների ավելացմանը նպաստող համակարգերի ներդրում՝ 2019թ-ին նախատեսվում է 268.2 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 223.5 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 44.7 մլն դրամ:

19. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» դրամաշնորհային ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն), որի նպատակն է Նոր աղբավայրի նախագծում, կառուցում, մասնագիտացված տրանսպորտային միջոցների և սարքավորումների ձեռքբերում՝ 2019թ-ին նախատեսվում է 268.2 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 223.5 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 44.7 մլն դրամ:

20. Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող Հայաստանի տարածքային զարգացման դրամաշնորհային ծրագիր, որն ուղղված է ՀՀ մարզերի և համայնքների տարածքային և տեղական ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը, աջակցության և զարգացման մոդելների մշակմանը և կառավարման արդյունավետության բարձրացմանը՝ 2019թ. 4,726.3 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 4,177.5 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 548.8 մլն դրամ:

21. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագիր, որի նպատակներն են դպրոցների շենքերի սեյսմակայունության բարձրացումը, սեյսմիկ աղետների պատրաստվածության և արձագանքման կարողությունների հզորացումը, սեյսմիկ ռիսկերի կառավարման և նվազեցման օժանդակող քաղաքականությունների և համակարգերի բարելավումը և սեյսմիկ անվտանգության ներդրումային ծրագրի գործադիր և իրականացնող մարմինների կարողությունների զարգացումը՝ 2019թ. նախատեսվում է 9,533.8 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 7,916.1 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում 1,617.7 մլն մլն դրամ:

Այս ոլորտում ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի համեմատությունը ՀՀ 2017 թվականի բյուջետային տարվա փաստացի, ինչպես նաև ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտա-ցոլված է սույն բացատրագրի N 13 աղյուսակում:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության գծով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով (առանց կառավարման ապարատի

պահպանման ծախսերի) նախատեսվում է 43,505.3 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանում» ծրագիր.

Նշված ծրագրի համար ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 296.6 մլն դրամ, որն ուղղվելու է հետևյալ միջոցառումների իրականացմանը.

- «Աջակցություն Հայաստանի ՏՏ ոլորտի մրցունակության բարձրացմանը» միջոցառմամբ ՏՏ ոլորտի գերակայությունների և ոլորտի զարգացման պետական աջակցության ծրագրային նպատակների իրականացման, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014թ. ընդունված «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության կողմից 2008թ. հավանության արժանացած «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգի» դրույթների իրականացման համար ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 98.7 մլն դրամ՝ ՀՀ 2018թ. պետական բյուջեով հաստատված ցուցանիշին համապատասխան:

Միջոցառման նպատակն է նպաստել տեղեկատվական և գիտելիքահեն առաջադեմ հասարակության ստեղծմանը:

- «Աջակցություն տեխնոլոգիական կենտրոնների գործունեությանը» միջոցառմամբ ժամանակակից գիտելիքահեն և ինովացիոն ենթակառուցվածքներով հագեցած տեխնոլոգիական կենտրոնների արդյունավետ գործունեության ապահովման համար 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 149.6 մլն դրամ՝ ՀՀ 2018թ. պետական բյուջեով հաստատված ցուցանիշին համապատասխան:

Միջոցառման նպատակն է ապահովել տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտների հետագա զարգացումը, ինովացիոն ենթակառուցվածքի ստեղծման և զարգացման միջոցով:

- «2019թ. Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովի կազմակերպում» միջոցառմամբ 2019 թվականի համաժողովի կազմակերպման երաշխիքային կանխավճարը վճարելու համար 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 48.3 մլն դրամ՝ ՀՀ 2018թ. պետական բյուջեով հաստատված 95.1 մլն դրամի դիմաց, որի տարբերությունը պայմանավորված է 2019 թվականին վճարվելիք երաշխիքային կանխավճարի չափով:

Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովը ՏՏ ոլորտի միջազգային խոշոր միջոցառում է, որն իր շուրջն է համախմբում ՏՏ ոլորտի տարբեր երկրների բարձրաստիճան պաշտոնյաներին, վերազգային կազմակերպությունների, համալսարանների

և գիտահետազոտական կենտրոնների ղեկավարներին, հասարակական կառույցների ներկայացուցիչներին:

Միջոցառման շրջանակում կիրականացվի 2019թ. Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովի կազմակերպումը Հայաստանում:

«Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագիր.

Նշված ծրագրի համար ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 20.4777.8 մլն դրամ, որն ուղղվելու է հետևյալ միջոցառումների իրականացմանը.

«Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների բարելավման և անվտանգ երթևեկության ծառայություններ».

- Միջոցառման համար ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 9,882.9 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 8,698.0 մլն դրամի դիմաց, կամ ավել 1,184.9 մլն դրամով՝ պայմանավորված Ասիական զարգացման բանկի կողմից իրականացվող «Ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագիր – փուլ 2»-ի նախապայմանների համար գումարների ավելացմամբ, ինչպես նաև Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի վարկային համաձայնագրով ստանձնած պարտավորություններով (սկսած 2014թ.-ից և յուրաքանչյուր ֆիսկալ տարվա համար հանրապետական և միջպետական ճանապարհների շահագործման/պահպանման տարեկան բյուջեն ավելացվում է առնվազն 5%-ով):

Նշված միջոցառմամբ նախատեսվում է իրականացնել 2950 կմ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ամառային պահպանման և 3477.6 կմ ձմեռային պահպանման, ինչպես նաև երեք թունելների և հինգ կամուրջների պահպանման ու շահագործման աշխատանքներ:

Միջոցառման նպատակն է ապահովել անվտանգ և անխափան երթևեկության համար ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների և դրանց վրա գտնվող արհեստական կառույցների պահպանվածությունը:

- «Մարզային նշանակության ավտոճանապարհների բարելավման և անվտանգ երթևեկության ծառայություններ».

Միջոցառման համար ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 1,330.0 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 1,163.8 մլն դրամի դիմաց, կամ ավել 166.2 մլն դրամով՝ պայմանավորված Ասիական զարգացման բանկի կողմից իրականացվող «Ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագիր – փուլ 2»-ի նախապայմանների համար գումարների ավելացմամբ, ինչպես նաև Համաշխարհային բանկի կողմից իրականացվող Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման

վարկային ծրագրով ստանձնած պարտավորություններով (Փոխառուն պետք է մինչև Ծրագրի ավարտն ապահովի, որ Ծրագրի շրջանակում կենսական նշանակության ճանապարհային ցանցի հիմնանորոգված ճանապարհային հատվածների պահպանության համար հատկացվեն բավարար բյուջետային միջոցներ):

Միջոցառմամբ նախատեսվում է իրականացնել 1235.9 կմ մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ նորոգման և 2309.0 կմ ձմեռային պահպանման աշխատանքներ:

Նշված միջոցառման նպատակն է ապահովել անվտանգ և անխափան երթևեկության համար ՀՀ ընդհանուր օգտագործման մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանվածությունը:

- «Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆի) համակարգի կարգավորում».

Նշված միջոցառման նպատակն է Հայաստանի Հանրապետությունում տախոնետ համակարգի անընդհատ և անխափան աշխատանքի ապահովումը: Համակարգի առկայության պահանջը բխում է «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» Եվրոպական համաձայնագրից, որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 2006 թվականից: Հսկիչ սարքերը (թվային տախոգրաֆները) կիրառվում են միջպետական բեռնափոխադրումներ իրականացնող բեռնատար տրանսպորտային միջոցների վրա՝ տրանսպորտային միջոցի արագությունը, անցած ճանապարհը և վարորդի վարելու և հանգստի ռեժիմները արձանագրելու համար:

Միջոցառմամբ տախոնետ համակարգի պահպանման (սպասարկման) համար ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 16.8 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 15.5 մլն դրամի դիմաց, կամ ավել 1.3 մլն դրամով՝ որն արդյունք է փոխարժեքի տարբերության:

- «Ավտոմոբիլային ճանապարհների ցանցի հսկողություն, ուսումնասիրություններ և փորձաքննություններ» միջոցառման գծով «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» պետական ոչ առևտրային կազմակերպության ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 218.1 մլն դրամ՝ ՀՀ 2018թ. պետական բյուջեով հաստատված ցուցանիշին համապատասխան:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ՀՀ ավտոմոբիլային ճանապարհային ցանցի զարգացման ու դրա նպատակային օգտագործման, պահպանման և հեռանկարային զարգացման ծրագրերի գծով ավտոմոբիլային ճանապարհների ու դրանց

ինժեներական կառույցների վիճակի պարբերական ուսումնասիրության, նախագծային փաստաթղթերի իրականացված փորձաքննության, միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ու դրանց ինժեներական կառույցների պահպանման և շահագործման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացման, ՀՀ պետական նշանակության ավտոճանապարհների ցանցի անձնագրավորման, ավտոմոբիլային ճանապարհների առանձին հատվածների ծածկի վիճակի տեխնիկական տվյալների հավաքագրման աշխատանքներ:

- «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» և «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» միջոցառումներով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 9,000.0 մլն դրամ, որը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 6,420.0 մլն դրամը գերազանցում է 2,580.0 մլն դրամով կամ 40.2 %-ով:

«Հեռահաղորդակցության ապահովում» ծրագիր.

Նշված ծրագրի համար ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 411.4 մլն դրամ, որն ուղղվելու է հետևյալ միջոցառումների իրականացմանը.

- «Հեռահաղորդակցության և կապի կանոնակարգում» միջոցառման շրջանակներում «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 290.3 մլն դրամ՝ ՀՀ 2018թ. պետական բյուջեով հաստատված ցուցանիշին համապատասխան:

Միջոցառման նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետությունում հեռահաղորդակցության և կապի ծառայությունների որակի կանոնակարգումն ու բարելավումը, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության հաճախականությունների բաշխումների աղյուսակի կազմումը, ռադիոեթերի մոնիթորինգի և ազդանշանների տեխնիկական պարամետրերի չափումների անցկացումը, ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախության սարքավորումների տեղորոշումը:

- «Թվային հեռուստահեռարձակման ապահովման ծառայություններ» միջոցառմամբ ՀՀ-ում թվային հեռուստահեռարձակման ապահովման շրջանակներում հանրապետական սփռման մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալման նպատակով 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 121.1 մլն դրամ՝ ՀՀ 2018թ. պետական բյուջեով հաստատված 99.2 մլն դրամի դիմաց, որի տարբերությունը պայմանավորված է ԱԱՀ-ի գծով ծախսի ավելացմամբ:

Միջոցառումը նախատեսվում է արբանյակային ցանցը օպտիկա-մանրաթելային համակարգին անհասանելի, հիմնականում սահմանամերձ բնակավայրերում տեղադրվող

հաղորդակներին հանրապետական սփռման մուլտիպլեքսի ազդանշանը հասցնելու համար: Այն ծառայելու է նաև որպես պահուստ՝ օպտիկա-մանրաթելային համակարգի հնարավոր խանգարումների դեպքում:

«Երկաթուղային ցանցի զարգացում» ծրագիր.

Նշված ծրագրով նախատեսված «Ուղևորափոխադրումներից ստացված վնասի դիմաց «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին սուբսիդիայի տրամադրում» միջոցառմամբ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 352.0 մլն դրամ՝ Կոնցեսիոների կողմից 2019 թվականին վճարվելիք կանխատեսվող կոնցենսիոն վճարի չափով:

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով սուբսիդավորման գումարը նախատեսվել էր 308.4 մլն դրամ (2017 թվականի համաձայնեցված ծավալներով և ուղղություններով ուղևորափոխադրումներից առաջացած տարեկան վնասի 30%-ը փոխհատուցելու համար), մինչդեռ փաստացի վնասը կազմել է 945.7 մլն դրամ, սակայն հաշվի առնելով, որ Կոնցեսիոն պայմանագրի համաձայն տարեկան սուբսիդիայի գումարը չի կարող գերազանցել կամ հավասար լինել տվյալ տարվա կոնցեսիոն տարեկան վճարի գումարի չափից՝ 2018թ. պետական բյուջեից փոխհատուցման գումարը կկազմի 346.9 մլն դրամ:

Միջոցառման նպատակն է ՀՀ կառավարության 07.02.2008թ. N 83-Ա որոշմամբ հաստատված Կոնցեսիոն պայմանագրի համաձայն սուբսիդավորել համաձայնեցված ծավալներով և ուղղություններով ուղևորափոխադրումներից «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի նախորդ տարվա արդյունքներով առաջացած տարեկան վնասը (2019թ.-ի համար՝ 30%):

Միաժամանակ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարաության գծով նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն» անցման կետի կամրջի վերակառուցման ծրագիր, որի նպատակն է Բագրատաշենի սահմանային հսկողության անցակետի տարածքում նոր կամրջի կառուցումը, որը կնպաստի միջազգային ստանդարտներին համապատասխան Հայաստանի և Վրաստանի միջև գտնվող տվյալ անցակետով իրականացվող ծառայությունների որակի բարձրացմանը՝ 2019թ.-ին նախատեսվում է 1,306.9 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,046.9 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 260.0 մլն դրամ:

2. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագիր, որի նպատակն է բարելավել գյուղական համայնքների շուկաների և ծառայությունների հասանելիությունը, ինչպես նաև ամրապնդել

կենսական նշանակության ճանապարհային ցանցը կառավարելու կարողությունները՝ 2019թ.՝ 1,75 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,4 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 0.35 մլն դրամ:

3. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման լրացուցիչ ծրագիր, որի նպատակն է հիմնանորոգել շուրջ 155 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածներ: 2019թ.-ին նախատեսվում է իրականացնել 72.4 կմ երկարությամբ ճանապարահահատվածների վերականգնման աշխատանքներ՝ 2019թ.-ին նախատեսվում է 5,004.9 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 4,114.8 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 890.1 մլն դրամ:

4. **Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագիր**, որի նպատակն է՝ հիմնանորոգել և վերակառուցել Հայաստանի Հանրապետության կենտրոնը Վրաստանի Հանրապետության հետ կապող՝ Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման 92 կմ ընդհանուր երկարությամբ միջպետական ճանապարհը: (կմ 38+450 – կմ 90+191 հատվածը)՝ 2019թ.-ին նախատեսվում է 3,961.0 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,047.2 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 913.8 մլն դրամ:

5. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագիր, որի նպատակն է՝ հիմնանորոգել և վերակառուցել Հայաստանի Հանրապետության կենտրոնը Վրաստանի Հանրապետության հետ կապող՝ Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման 92 կմ ընդհանուր երկարությամբ միջպետական ճանապարհը: (կմ 0+000 – կմ 38+450 հատվածը)՝ 2019թ.-ին նախատեսվում է 1,004.4 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 837.0 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 167.4 մլն դրամ:

6. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր (Տրանշ 2), որի նպատակն է Աշտարակ-Թալին 41.9 կմ հատվածի վերակառուցումը և ներկայումս երկշարք ճանապարհի լայնացումը մինչև քառաշարք ճանապարհի, ինչպես նաև իրականացվելու են ներդրումային ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող հետագա ծրագրերի մանրամասն նախագծերի ուսումնասիրություններ, շինարարության վերահսկողություն, գնումների և կարողությունների հզորացման աշխատանքներ՝ 2019թ.-ին նախատեսվում է 2,564.1 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,866.4 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 697.6 մլն դրամ:

7. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր (Տրանշ 3), որի նպատակն է

Թալին-Գյումրի 27,5 կմ հատվածի վերակառուցումը՝ 2019թ.-ին նախատեսվում է 1,738.2 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,240.1 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 498.0 մլն դրամ:

8. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր (Տրանշ 3), որի նպատակն է Թալին-Լանջիկ 18,7 կմ հատվածի վերակառուցումը՝ 2019թ.-ին նախատեսվում է 2,706.6 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,901.5 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 805.1 մլն դրամ:

9. Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի ծրագիր, որի նպատակն է ուսումնասիրել և վերակառուցել Քաջարան-Ագարակ ճանապարհահատվածը՝ 2019թ.-ին նախատեսվում է 444.4 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 323.5 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 120.8 մլն դրամ:

10. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման դրամաշնորհային ծրագիր (Տրանշ 3), որը փոխկապակցված է համանուն վարկային ծրագրի հետ, իրականացվում է վարկային ծրագրի ժամկետներում նույն ուղղվածությամբ՝ 2019թ.-ին նախատեսվում է 3,265.2 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 2,362.6 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 902.5 մլն դրամ:

Այս ոլորտում ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի համեմատությունը ՀՀ 2017 թվականի բյուջետային տարվա փաստացի, ինչպես նաև ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 7 աղյուսակում, իսկ ճանապարհային ոլորտի կատարողական հիմնական ցուցանիշները՝ N 7ա աղյուսակում:

ՀՀ Բնապահպանության նախարարություն

Նախագծով նախատեսվում է (առանց կառավարման ապարատի պահպանման ծախսերի) հատկացնել 5,233.8 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 3,429.3 մլն դրամի դիմաց: Ծախսերի ավելացումը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 1,804.5 մլն դրամ՝ կամ 52.6 տոկոս: Ծախսերի ավելացումը հիմնականում պայմանավորված է անտառների կառավարման բնագավառում վարվող պետական քաղաքականության վերանայմամբ, մասնավորապես՝

անտառների կառավարման գործառույթը 2019թ. ՀՀ բնապահպանության նախարարությանը փոխանցմամբ:

Բնապահպանության ոլորտին հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

1. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ» ծրագիր

Ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 272.2 մլն դրամ, որի շրջանակներում իրականացվում են հետևյալ միջոցառումները՝

1.1. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննություն» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 45.25 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի չափաքանակին համապատասխան:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության աշխատանքների իրականացում:

1.2. «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության ծառայություններ» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 226.9 մլն դրամ՝ ՀՀ 2018թ. պետական բյուջեի չափաքանակին համապատասխան:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է՝

1.2.1. Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության բարձր մակարդակի ապահովմանը նպաստելը՝ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) նկատմամբ դիտարկումների իրականացման, վիճակի գնահատման վերաբերյալ բավարար տվյալների ստեղծման, դրանց գրանցման, վերլուծման, տրամադրման ու պահման միջոցով.

1.2.2. Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վիճակի մասին տեղեկատվությունը բնապահպանական միասնական տեղեկատվական շտեմարանում ներբեռնումն ու շտեմարանի վարումը.

1.2.3. Թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի ու թափոնների դասակարգչի կազմման համար ուսումնասիրության իրականացումը, ինչպես նաև թափոնների օգտագործման ու վնասազերծման սակավաթափոն և անթափոն տեխնոլոգիաների մասին տվյալների հավաքումն ու վերլուծումը.

1.2.4. Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների առանձին բաղադրիչների մասին տվյալների հավաքագրման ու վերլուծության հիման վրա համապատասխան համակարգչային շտեմարանների (բազա) ստեղծումը և վարումը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական մարմիններին, հասարակական

կազմակերպություններին ու հասարակությանն այդ շտեմարաններում պարունակվող տեղեկությունների տրամադրումը և ստացումը:

2. «Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարում և պահպանություն» ծրագիր

Ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 2,702.3 մլն դրամ, որի շրջանակներում իրականացվում են հետևյալ միջոցառումները՝

2.1 Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KFW) կողմից տրամադրվող «Կովկասի պահպանվող տարածքների աջակցության ծրագիր-Հայաստան (Էկոտարածաշրջանային ծրագիր-Հայաստան, 3-րդ փուլ)» դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է բնական պաշարների և պահպանվող տարածքների կառավարումը, հարակից գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումը, Հարավային Կովկասում կենսաբազմազանության պահպանումը: Ծրագրի իրականացումը կնպաստի Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում կենսոլորտային տարածքի ստեղծմանը՝ 2019թ. նախատեսվում է 1,712.5 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,452.6 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 259.9 մլն դրամ:

2.2 «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 117.06 մլն դրամ՝ ՀՀ 2018թ. պետական բյուջեի չափաքանակին համապատասխան:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մաքրել Սևանա լճի շրջակայքի 66.8 հա ջրածածկ անտառտնկարկներ:

2.3 «Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման ծառայություններ» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 7.6 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի չափաքանակին համապատասխան:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Սևանա լճի ջրահավաք ավազանի կենդանական ռեսուրսների (ձկան և խեցգետնի) պաշարների հաշվառման աշխատանքներ, այդ թվում ներկա վիճակի, տարածական տեղաբաշխման, կենսաբանական և էկոլոգիական հատկանիշների բացահայտում:

2.4 Բնության հատուկ պահպանվող տարածքների գործունեության ապահովմանն ուղղված միջոցառումների համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 858.1 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի չափաքանակին համապատասխան:

Վերոգրյալ հատկացումների շրջանակներում «Սևան», «Դիլիջան», «Արևիկ» և «Արփի լիճ» ազգային պարկերում, «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետական արգելոցներում, «Սոսու պուրակ», «Զանգեզուր» և «Զիկատար» արգելավայրերում, ինչպես նաև «Արգելոցապարկային

համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներում կատարվելու են բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման դիտանցի ապահովումը, ինչպես նաև տնկարկների պահպանության և պաշտպանության իրականացումը:

2.5 «Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի հայաստանյան մասնաճյուղի գրասենյակի պահպանման» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 7.0 մլն դրամ՝ ՀՀ 2018թ. պետական բյուջեի չափաքանակին համապատասխան:

Ծրագրի համար իրավական հիմք է ծառայում ՀՀ Նախագահի 2009 թվականի մայիսի 6-ի ՆԿ-68-Ա կարգադրությամբ հաստատված Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թվականների միջոցառումների ցանկը (7.Ա.7. միջոցառում):

3. «Անտառների կառավարում» ծրագիր

Ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,996.2 մլն դրամ, որի շրջանակներում իրականացվում են հետևյալ միջոցառումները՝

3.1 «Անտառպահպանական ծառայություններ» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,126.7 մլն դրամ:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի իրավասության ներքո գտնվող անտառային 342,400.0 հա տարածքների պահպանում:

3.2 «Անտառային պետական մոնիտորինգի իրականացում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 53.3 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագիրն ուղղված է ապօրինի հատումների ու բնափայտի տեղափոխման, իրացման, անտառածածկ տարածքների և բնափայտի պաշարների, անտառների և անտառային հողերի քանակական ու որակական փոփոխությունների, անտառային հրդեհների, հիվանդություններ և վնասատուների տարածվածության և այլ բացասական գործողությունների կանխարգելման աշխատանքներին:

3.3 «Անտառների կադաստրի վարում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 15.0 մլն դրամ:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է անտառների հաշվառման և անտառային պետական կադաստրի վարում 342,400.0 հա տարածքում:

3.4 «Անտառների վնասակար օրգանիզմների դեմ պայքար» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 43.7 մլն դրամ:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերի անտառածածկ տարածքներում վնասատուների և հիվանդությունների դեմ պայքար շուրջ 5400 հա տարածքում:

3.5 «Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ» միջոցառման գծով նախատեսվում է 425.8 մլն դրամ՝ 150 հա վրա անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների իրականացման համար:

3.6 «Անտառկառավարման պլանների կազմում» միջոցառման գծով նախատեսվում է 113.7 մլն դրամ՝ 31577 հա տարածքի համար 2 անտառկառավարման պլանների կազմման աշխատանքներ:

4. «Բնապահպանական նմուշների պահպանություն և ցուցադրություն» ծրագիր

Ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 350.7 մլն դրամ, որի շրջանակներում իրականացվում են հետևյալ միջոցառումները՝

4.1 «Բնագիտական նմուշների պահպանություն և ցուցադրություն» միջոցառման գծով Նախագծով նախատեսվում է հատկացնել 48.3 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 40.3 մլն դրամ գումարի դիմաց, որը պայմանավորված է ԱԱՀ-ի նախատեսմամբ:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է «Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ-ի իրավասության ներքո գտնվող Հայաստանին բնորոշ բնության օբյեկտների նմուշների պահպանում, ֆոնդերի թարմացում, նմուշների ցուցահանդեսների կազմակերպում:

4.2 «Կենդանաբանական այգու ցուցադրություններ» միջոցառման գծով Նախագծով նախատեսվում է հատկացնել 302.4 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 252.0 մլն դրամ գումարի դիմաց, որը պայմանավորված է ԱԱՀ-ի նախատեսմամբ:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է աջակցություն Երեանի քաղաքային համայնքին մշակութային ժամանցի միջոցառումների իրականացման նպատակով, որը իրականացվում է «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի միջոցով:

Այս ոլորտում Նախագծով նախատեսվող բյուջետային ծախսերի համեմատությունը ՀՀ 2017 թվականի բյուջետային տարվա փաստացի և ՀՀ 2018 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 8 աղյուսակում:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն

Նախարարության (այդ թվում՝ Զբոսաշրջության կոմիտե և Պետական գույքի կառավարման կոմիտե) համար Նախագծով (առանց կառավարման ապարատի պահպանման ծախսերի) նախատեսվում է հատկացնել 8,372.5 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 4,822.5 մլն դրամ գումարի դիմաց: Տարբերությունը, որը կազմում է 3,550.0 մլն դրամ, հիմնականում պայմանավորված է վարկային ծրագրերով: Հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

1. «Տնտեսական զարգացման և ներդրումների ոլորտում պետական քաղաքակա-նության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է **«Տնտեսական հետազոտություններ և վերլուծություններ»** միջոցառումը, որի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 27.4 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի նպատակն է նախանշել ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքակա-նության շրջանակի ձևավորման գործընթացի համար անհրաժեշտ Հայաստանի Հանրապե-տության տնտեսական զարգացման ընթացիկ և հեռանկարային միտումների, ճյուղային համամասնությունների ու կառուցվածքային տեղաշարժերի բացահայտման, տնտեսական զարգացման ցուցանիշների կարճաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումների իրականացման աշխատանքների հիմնական ուղղությունները:

2. «Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է.

2.1 «Ստանդարտների մշակման ծառայություններ» միջոցառումը, որի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 14.1 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

ա) «Ազգային ստանդարտների մշակում»,

բ) «Միջազգային, եվրոպական և միջպետական ստանդարտացման կազմակերպությունների հետ համագործակցության և աշխատանքների կազմակերպում»,

գ) «Ստանդարտացման ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքների կազմակերպում»:

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության ինտեգրումը ստանդարտացման բնագավառի միջազգային և եվրոպական համակարգերին, որը կնպաստի սպառողների շահերի պաշտպանությանը անվտանգ ապրանքների ձեռքբերման հարցերում, հայրենական

արտադրողների կողմից մրցունակ ապրանքների արտադրմանը և ծառայությունների մատուցմանը:

2.2 «Պետական աջակցություն ՀՀ հավատարմագրման համակարգին» միջոցառումը, որի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 16.7 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 13.9 մլն դրամի դիմաց, կամ 2.8 մլն դրամով ավել, որը պայմանավորված է ավելացված արժեքի հարկի նախատեսմամբ:

Ծրագրի նպատակը միջազգային և եվրոպական հավատարմագրման համակարգերին ինտեգրումն է, այդ թվում հավատարմագրման ազգային մարմնի կայացումը և հավատարմագրման արդյունքների փոխճանաչման բազմակողմանի համաձայնագրերում հավատարմագրման մարմնի մասնակցությունը, ինչը կվերացնի առևտրային խոչընդոտները, կապահովի ապրանքների ազատ տեղաշարժը, կբացառի նույն ապրանքի կրկնակի փորձարկման և կրկնակի սերտիֆիկացման անհրաժեշտությունը և դրանով կնպաստի տնտեսության զարգացմանը:

3. «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը» ծրագրի շրջանակներում նախատեսվում է **«ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում»** միջոցառումը, որի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 183.1 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 152.6 մլն դրամի դիմաց, կամ 30.5 մլն դրամով ավել, որը պայմանավորված է ավելացված արժեքի հարկի նախատեսմամբ:

Ծրագրի նպատակն է ՓՄՁ սուբյեկտներին տեխնիկական, ֆինանսական և ներդրումային աջակցության ցուցաբերումը:

4. «Ներդրումների և արտահանման խթանման ծրագրի» շրջանակներում նախատեսվում է **«ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումները»**, որի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1072.1 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված 528.0 մլն դրամի դիմաց: Տարբերությունը պայմանավորված է վերջինիս և «Պետական աջակցություն «Հայաստանի զարգացման հիմնադրամի կանոնադրական խնդիրների իրականացմանը» միջոցառման (544.1 մլն դրամ) միավորմամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում են իրականացնել հետևյալ ենթամիջոցառումները.

ա) «Գործարար համաժողովներին (ֆորումների), ինչպես նաև այլ համանման միջոցառումներին մասնակցություն և (կամ) կազմակերպում»,

բ) «Մշակող արդյունաբերության ոլորտների ընկերություններին օժանդակության ցուցաբերում՝ ֆինանսական գործիքների կիրառմամբ»,

գ) «Հայկական ապրանքների՝ նպատակային շուկաներում առաջմղում, հայկական ապրանքների ներկայացում, շուկայական տեղեկատվության ապահովում»,

դ) «Ուսումնական դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում»:

Ծրագրի հիմնական նպատակն է ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ սահմանված երկարաժամկետ հեռանկարում նպաստել վերամշակող արդյունաբերության ճյուղերի և համալիրների զարգացմանը, արտահանման զարգացման ներուժ ունեցող ոլորտների հավասարակշռված և փուլային միջոցառումների իրականացմանը:

Միաժամանակ նախատեսվում է իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագիրը.

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր, որի նպատակն է հզորացնել արտահանման խթանման, ներդրումների ներգրավման և ձեռնակություններին տրամադրվող որակի կառավարման ծառայությունների կարողությունները:

Ծրագիրը կազմված է 4 բաղադրիչից՝

ա) երկրում առևտրի խթանման և որակի համակարգի արդյունավետության բարելավում,

բ) ներդրումների և արտահանման խթանում,

գ) որակի ազգային ենթակառուցվածքի արդիականացում,

դ) ծրագրի կառավարում և մոնիթորինգի ու գնահատում՝ 2019թ. 4,389.2 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,720.1 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 669.1 մլն դրամ:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի համար Նախագծով (առանց կառավարման ապարատի պահպանման ծախսերի) նախատեսվում է հատկացնել 2,078.1 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 1983.5 մլն դրամ գումարի դիմաց: Տարբերությունը կազմում է 95.6 մլն դրամ: Նախատեսված միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

1. «Զբոսաշրջության զարգացման ծրագրի» ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել **«Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը»** միջոցառումը, որի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 286.4 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված 200.0 մլն դրամի դիմաց: Տարբերությունը պայմանավորված է վերջինիս և «Պետական աջակցություն Հայաստանի զբոսաշրջության զարգացման

հիմնադրամի կանոնադրական խնդիրների իրականացմանը» միջոցառման (72.0 մլն դրամ) միավորմամբ, ինչպես նաև ավելացված արժեքի հարկի նախատեսմամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել զբոսաշրջային ոլորտի հետևյալ ենթամիջոցառումները.

ա) Ակտիվ և թիրախային մարքեթինգային և խթանման միջոցառումների իրականացում,

բ) Հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում, փաթեթավորում և խթանում,

գ) Ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացում,

դ) Միջազգային համագործակցություն՝ իրավապայմանագրային պարտավորությունների իրականմացում, միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների կողմից կազմակերխվող միջոցառումներին մասնակցություն:

Միաժամանակ նախատեսվում է իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագիրը.

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր, որի նպատակներն են՝

1. Նպաստել ընտրված մարզերի տեղական տնտեսություններում զբոսաշրջության աճին, որը տեղի կունենա ենթակառուցվածքներում ներդրումներ, քաղաքային վերածնունդ, մշակութային ժառանգության վերականգնում, հմտությունների զարգացում, տուրիստական պրոդուկտների զարգացում, զանազանում և մասնավոր հատվածի ներդրումների խթանում ապահովող համալիր մոտեցման իրականացման միջոցով:

2. Օգնել ստեղծել և հիմնել զբոսաշրջային շրջաններ, որոնք կմիացնեն ընտրված մարզերի բազմաթիվ վայրեր:

Միասին այս գործողությունները կօգնեն ավելի մեծ թվով այցելուներ գրավել դեպի մարզեր և մեծացնել իրենց ծախսերն, իսկ դա իր հերթին կխթանի աշխատատեղերի ստեղծումը և տեղական տնտեսական աճը՝ 2019թ. 1,791.7 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,254.4 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 537.3 մլն դրամ:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի համար Նախագծով (առանց կառավարման ապարատի պահպանման ծախսերի) նախատեսվում է հատկացնել 359.0 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 403.0 մլն դրամի դիմաց: Ծախսերի նվազեցումը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 44.0 մլն դրամ:

«Պետական գույքի կառավարում» ծրագրի շրջանակներում նախատեսվում են իրականացնել հետևյալ միջոցառումները.

1.1 «Աճուրդների կազմակերպման և անցկացման ծառայություններ» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 30.8 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Միջոցառման նպատակն է պետական կառավարչական հիմնարկներին ամրացված պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող և դրանց ամրագրված գույքի օտարման գործընթացի կազմակերպումը:

1.2 «Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների, գնահատման և սպասարկման աշխատանքների իրականացման ծառայություններ» միջոցառման համար Նախագծով նախատեսվել է հատկացնել 301.1 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Միջոցառման նպատակն է ապահովել պետական սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման, ուսումնասիրման տեխզննման միջոցով, գնահատման, հաշվառման, գրանցամատյանի վարման աջակցող աշխատանքների, ինչպես նաև կառավարական N 2 (հասցե՝ ք.Երևան, Վ.Սարգսյան 3 և Վ.Սարգսյան 3/8) և կառավարական N 3 շենքերի սպասարկման ծառայությունների իրականացումը:

1.3 «Էլեկտրոնային աճուրդների կազմակերպման ծրագրի սպասարկում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 8.5 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 29.1 մլն դրամի դիմաց կամ 20.6 մլն դրամով պակաս, որը պայմանավորված է 2019թ. ընթացքում միայն էլեկտրոնային աճուրդի համակարգի պահպանման ծախսերի նախատեսմամբ:

Միջոցառման իրականացման նպատակն է էլեկտրոնային եղանակով օտարվող պետական գույքի վաճառքի և կազմակերպվող աճուրդների արդյունավետության բարձրացումը, գույքն աճուրդով իրացնելու հրապարակայնությունը և թափանցիկությունը:

1.4 «Պետական գույքի հաշվառման նոր ավտոմատացված ու ամբողջական համակարգի սպասարկում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 3.6 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 27.1 մլն դրամի դիմաց կամ 23.5 մլն դրամով պակաս, որը պայմանավորված է 2019թ. ընթացքում միայն էլեկտրոնային համակարգի պահպանման ծախսերի նախատեսմամբ:

Ծրագրի իրականացման նպատակն է պետական գույքի բազմաբնույթ բնութագրիչներ պարունակող հաշվառման նոր համակարգի ստեղծումը, դրանում պարունակվող տեղեկատվության տարաբնույթ վերլուծություններ կատարելու հնարավորությամբ, ինչը կնպաստի պետական գույքի շրջանառության թափանցիկությանը, արդյունավետ կառավարմանը

1.5 «Կառավարական N 2 շենքում տեղակայված սարքերի և սարքավորումների հետերաշխիքային սպասարկում» միջոցառման համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 15.0 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Միջոցառման իրականացման նպատակն է ապահովել կառավարական N 2 շենքի թվով տաս վերելակների, օդորակման և օդափոխության համակարգերի, հաստիքային և վթարային էլեկտրասնուցման համակարգերի, ներքին ու արտաքին լուսավորության համակարգերի, ջրամատակարարման ու կոյուղու համակարգի, հակահրդեհային անվտանգության ու ծխահեռացման համակարգի, անվտանգության և տեսահսկման համակարգի, հեռախոսային կապի և ինտերնետի ներքին ցանցերի, հետերաշխիքային սպասարկումը:

Այս ոլորտում Նախագծով նախատեսված ծախսերի համեմատությունը ՀՀ 2017 թվականի բյուջետային տարվա փաստացի, ինչպես նաև ՀՀ 2018 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 3 աղյուսակում:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության գծով 2019 թվականի Նախագծով (առանց կառավարման ապարատի պահպանման ծախսերի) նախատեսվում է հատկացնել 10,017.5 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 9,711.3 մլն դրամի դիմաց:

Հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

«Հիդրոօդերևութաբանության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է «Հիդրոօդերևութաբանության ծառայություններ» միջոցառումը, որի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,284.8 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 1070.7 մլն դրամի դիմաց, կամ 214.1 մլն դրամով ավել, որը պայմանավորված է ավելացված արժեքի հարկի նախատեսմամբ:

Ծրագրի նպատակն է հանրապետության տարածքում պետական նշանակության հիդրոօդերևութաբանական աշխատանքների կատարում՝ մթնոլորտի և ջրոլորտի ուսումնասիրությունների ձևով, հանրապետության տարածքում հիդրոօդերևութաբանական երևույթների, ջրային օբյեկտների հիդրոլոգիական բնութագրերի ուսումնասիրության, ֆոնային ռադիոակտիվության վերաբերյալ դիտարկումների կատարման, այդ ոլորտների վերաբերյալ փաստացի և սպասվող փոփոխությունների, ինչպես նաև դրանց հնարավոր հետևանքների

մասին անհրաժեշտ տեղեկատվության ապահովումը և մթնոլորտային երևույթների կառավարումը ու ռադիոլոկացիոն կայանների դիտարկումների իրականացումը:

«Տեխնիկական անվտանգության կանոնակարգում» ծրագրով նախատեսվում է «Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ» միջոցառումը, որի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 46.3 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 38.6 մլն դրամի դիմաց, կամ 9.7 մլն դրամով ավել, որը պայմանավորված է ավելացված արժեքի հարկի նախատեսմամբ:

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքում տեխնածին վթարների կանխարգելումը, դրանց հետևանքների վերացումը, նման վթարների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցումը, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանությունը:

«Սեյսմիկ պաշտպանության» ծրագրով նախատեսվում է «Սեյսմիկ պաշտպանության ոլորտում ծառայությունների տրամադրում» միջոցառումը, որի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 880.7 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 733.9 մլն դրամի դիմաց, կամ 146.8 մլն դրամով ավել, որը պայմանավորված է ավելացված արժեքի հարկի նախատեսմամբ:

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատում, սեյսմիկ ռիսկի նվազեցում:

«Փրկարար ծառայություններ» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել հրդեհաշիջման, հակահրդեհային քարոզչության, բնական և տեխնածին աղետների ժամանակ բնակչության և կառույցների պաշտպանություն: Նշված միջոցառման գծով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 8,950.7 մլն դրամ, որը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է 1,520.5 մլն դրամով՝ պայմանավորված 30% պարգևատրման ֆոնդի նախատեսմամբ:

«Փրկարար ծառայողներին և փրկարար շներին դեղորայքով ապահովում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել փրկարար ծառայողների համար անհրաժեշտ առաջին օգնության դեղորայք և վիրակապական նյութեր, ինչպես նաև փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի կինոլոգիական խմբին հատուկ որոնողափրկարարական և սակրավորական աշխատանքների իրականացման համար նախատեսված 8 փրկարարական շների պատվաստանյութեր: Նշված միջոցառման գծով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 0.9 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

«Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության աշխատակիցներին բուժօգնության ծառայությունների տրամադրում» միջոցառման գծով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 18.7 մլն դրամ, ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

«Պետական աջակցություն Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնին» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ՀՀ, ՌԴ և երրորդ երկրների տարածքում արտակարգ իրավիճակների կանխարգելման աշխատանքների մասնակցություն և արտակարգ իրավիճակներից տուժած բնակչությանը մարդասիրական օգնության ցուցաբերում: Նշված միջոցառման գծով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 7.7 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով: Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի պահպանման ծախսերի նախատեսման համար հիմք է հանդիսացել ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև կնքված միջպետական համաձայնագիրը, համաձայն որի, պահպանման ծախսերը պետք է իրականացվի 2 կողմերի պետական բյուջեների միջոցների հաշվին:

«Պետական ռեզերվների գործակալության համակարգի հիմնարկների պահպանում» և «Նյութական ռեսուրսների ՀՀ պետական պահուստի ձևավորում և պահպանում» միջոցառումների շրջանակներում նախատեսվում է իրականացնել ՀՀ պետական ռեզերվների գործակալության համակարգի հիմնարկների պահպանում և պետական պահուստի կուտակում, ամբարում և թարմացում: Նշված միջոցառումների գծով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 309.2 մլն դրամ, որը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է 51.5 մլն դրամի չափով՝ պայմանավորված ավելացված արժեքի հարկի նախատեսմամբ:

Այս ոլորտում Նախագծով նախատեսված ծախսերի համեմատությունը ՀՀ 2017 թվականի բյուջետային տարվա փաստացի, ինչպես նաև ՀՀ 2018 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 3 Ա աղյուսակում:

ՀՀ արդարադատության նախարարություն

«Քրեակատարողական ծառայություններ» միջոցառման շրջանակներում նախատեսվում է դատապարտյալների վերահսկողության, կալանավայրերում կացության ապահովման, սոցիալ-հոգեբանական վերականգնման, ուսուցման աշխատանքների, մշակութային և մարզական միջոցառումների իրականացում: Նշված միջոցառումների գծով ՀՀ 2019 թվականի պետական

բյուջեի նախագծով նախատեսվել է 9,528.0 մլն դրամ, որը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է 1,373.4 մլն դրամով՝ պայմանավորված 30% պարգևատրման ֆոնդի նախատեսմամբ:

«Դեղորայքի ապահովում կալանավայրերում պահվող ազատազրկվածներին» միջոցառման շրջանակներում նախատեսվում է կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռքբերում կալանավայրերում պահվող ազատազրկվածների համար: Նշված միջոցառման գծով նախատեսվել է 150.0 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

«Հրատարակչական տեղեկատվական և տպագրական ծառայություններ» և «Թարգմանչական ծառայություններ» միջոցառումների համար ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել են համապատասխանաբար՝ 405.6 և 260.9 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 342.8 և 217.4 մլն դրամի դիմաց:

Ծախսերի աճը, համապատասխանաբար՝ 62.8 և 43.5 մլն դրամով պայմանավորված է ԱԱՀ-ի նախատեսմամբ:

ՀՀ պաշտպանության նախարարություն

«Ռազմական կարիքների բավարարում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարության գործունեության ապահովում: ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նշված միջոցառման համար նախտեսվել է 256,428.1 մլն դրամ, որի աճը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նկատմամբ կազմում է 30,798.0 մլն դրամ:

«ՀՀ օդանավակայաններում ՌԴ զորամիավորումների օդանավերի սպասարկման ծառայություններ» միջոցառման շրջանակներում ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև կնքված համաձայնագրերի համաձայն Հայաստանի Հանրապետությունում տեղակայված ՌԴ զորամիավորումների հասցեով ռազմական փոխադրումներ իրականացնող օդանավերի սպասարկումներն իրականացնող և ծառայությունները մատուցող կազմակերպություններին փոխհատուցելու նպատակով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 100.0 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

«Ռազմական նշանակության համակարգերի պահպանում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ՀՀ տարածքում տեղակայված հակաօդային ռազմական նշանակության համակարգերի պահպանում: ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նշված միջոցառման համար նախտեսվել է 1,122.9 մլն դրամ, որը ՀՀ 2018

թվականի պետական բյուջեի նկատմամբ նվազել է 847.6 մլն դրամով: Նվազեցումները հիմնականում պայմանավորված են պայմանագրային պարտավորությունների և տարադրամի կուրսի փոփոխությամբ:

«Հումանիտար ականազերծման և փորձագիտական ծառայությունների կազմակերպում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է ՀՀ տարածքում իրականացնել հակաականային գործողությունների ենթակա տարածքի հետազննում, քարտեզագրում, նախատեսվող ծավալի աշխատանքների հստակեցում և իրականացվող միջոցառումների պլանավորում: Վերը նշված միջոցառման գծով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 340.7 մլն դրամ, որի աճը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նկատմամբ կազմում է 107.6 մլն դրամ, ինչը պայմանավորված է վտանգավոր և կասկածելի ականապատված տարածքներների ավելացմամբ (25.0 հազար ք/մ):

«Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման շրջանակներում Հայաստանի Հանրապետության պաշտպանության համակարգի զինծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քաղաքացիական բուժկազմակերպություններ բուժման ուղեգրելու նպատակով (նեղ մասնագիտական ուղղվածություն ունեցող, ինչպես նաև թանկարժեք տեխնոլոգիաներով բուժվող հիվանդությունների դեպքում) նախատեսվել է 100.0 մլն դրամ, որը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է 84.1 մլն դրամով: Աճը պայմանավորված է՝ 300 զինհաշմանդամների վերականգնողական բուժօգնության արդյունավետ կազմակերպմամբ:

«Հիգիենիկ և համաճարագային փորձագիտական ծառայությունների տրամադրում» միջոցառման գծով նախատեսվել է 32.3 մլն դրամ՝ որը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նկատմամբ նվազել է 13.2 մլն դրամով: Միջոցառման շրջանակում նախատեսվում է զորամասերի, բուժկետերի և հոսպիտալների վարակազերծման նպատակով ձեռք բերել վարակազերծման միջոցներ:

«Հոսպիտալների և բուժկետերի բժշկական սարքավորումների պահպանման ծառայություններ» միջոցառման գծով նախատեսվել է 40.0 մլն դրամ, որը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է 2.6 մլն դրամով, պայմանավորված սպասարկման ենթակա սարքավորումների քանակների ավելացմամբ:

«Դեղորայքի տրամադրում զորամասային և հոսպիտալային օղակներում բուժօգնություն ստացողներին» միջոցառման գծով նախատեսվել է 1,474.2 մլն դրամ, որը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է 98.7 մլն դրամով, պայմանավորված ախտահանիչների և հիվանդների բուժման արդյունավետության բարձրացման նպատակով մի շարք

առանձնահատուկ դեղամիջոցների նախատեսմամբ:

«Հոսպիտալների և բուժկետերի բժշկական սարքավորումներով համալրում» միջոցառման գծով նախատեսվել է 159.2 մլն դրամ, որը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է 147.6 մլն դրամով՝ պայմանավորված նոր բժշկական սարքավորումների ձեռքբերմամբ:

«Պաշտպանության բնագավառում գիտական և գիտատեխնիկական նպատակային հետազոտություններ» ծրագրի նպատակն է պաշտպանության համակարգի ապահովման համար գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացումը, որի գծով նախատեսվել է 2,433.5 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով, իսկ «Ռազմական ուսուցում և վերապատրաստում» ծրագրի գծով՝ շուրջ 1,203.0 մլն դրամ, որը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է 69.5 մլն դրամով:

Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական արտահանման երկրորդ վարկի հաշվին ռուսական արտադրության ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումների ֆինանսավորման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՀՀ պաշտպանության նախարարությանը ապահովել անհրաժեշտ ինժեներական և ավտոմոբիլային տեխնիկայով: Նշված միջոցառման գծով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 42,836.5 մլն դրամ վարկային միջոցներ:

Միաժամանակ, 2019 թվականի պետական բյուջեում ներառվել է նաև ՀՀ պաշտպանության նախարարության արտաբյուջետային միջոցների ծախսերի նախահաշվով՝ «Աջակցություն ՀՀ ՊՆ կողմից իրականացվող ծրագրերին» ծրագրի գծով 1,700.0 մլն դրամ հատկացումները:

ՀՀ Ոստիկանություն

«Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման, հանցագործությունների և այլ իրավախախտումների նախականխման, կանխման, խափանման, հայտնաբերման և բացահայտման ծառայություններ: Վերը նշված միջոցառման իրականացման նպատակով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 23,478.9 մլն դրամ, որը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նկատմամբ նվազել է 165.4 մլն դրամով:

«Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 29-ի N 1008 որոշման N 1 հավելվածով հաստատված պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների պահպանությունը և անվտանգության ապահովումը: Նշված միջոցառման իրականացման նպատակով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 3,870.5 մլն դրամ, որը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է 514.0 մլն դրամով՝ պայմանավորված 30% պարգևատրման ֆոնդի նախատեսմամբ:

«Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ՀՀ քաղաքացիների անձնագրերի ձևակերպում, ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու, դադարեցնելու, փախստականի կարգավիճակ ստացած, ՀՀ-ում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրացիներին մուտքի վիզաներ, կացության կարգավիճակներ տալու մասին գործերի վարումը: Նշված միջոցառման իրականացման նպատակով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 1,625.8 մլն դրամ, որը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նկատմամբ նվազել է 644.8 մլն դրամով (նվազեցումներ՝ 778.2 մլն դրամը պայմանավորված է անձնագրերի բլանկների ձեռքբերման ծախսերը «Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում» միջոցառում տեղափոխելու հանգամանքով, իսկ ավելացումները 133.4 մլն դրամը՝ 30% պարգևատրման ֆոնդի նախատեսմամբ):

«Առողջապահական ծառայությունների տրամադրում» միջոցառման շրջանակներում իրականացվում է ոստիկանության բժշկական ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող անձանց ամբուլատոր-պոլիկլինիկական և հոսպիտալային բուժապահովում, հակահամաճարակային միջոցառումների ծրագրավորում և իրականացում, բժշկական փորձաքննություն և ծառայողական պիտանելիության մասին որոշում: Նշված միջոցառման իրականացման նպատակով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 784.2 մլն դրամ, որը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նկատմամբ նվազել է 116.4 մլն դրամով (նվազեցումներ՝ 189.2 մլն դրամ, իսկ ավելացումները 72.8 մլն դրամ, որը պայմանավորված է 30% պարգևատրման ֆոնդի նախատեսմամբ):

«Դեղորայքի տրամադրում ոստիկանության բժշկական վարչության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված

ֆիզիկական անձանց» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել դեղորայքի տրամադրում ոստիկանության բժշկական վարչության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող ամբուլատոր-պոլիկլինիկական և հոսպիտալային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց: Նշված միջոցառման իրականացման նպատակով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 68.9 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ճանապարհային երթևեկության կարգավորում, անվտանգության ապահովում, ճանապարհապարեկային ծառայության իրականացում, ճանապարհատրանսպորտային պատահարների և տվյալ բնագավառում վարչական իրավախախտումների պետական հաշվառում, վարորդական վկայականների տրամադրում: Նշված միջոցառման իրականացման նպատակով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 3,427.5 մլն դրամ, որը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է 167.1 մլն դրամով՝ պայմանավորված 30% պարգևատրման ֆոնդի նախատեսմամբ:

«Տրանսպորտային միջոցների պետական հաշվառում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել տրանսպորտային միջոցների պետհամարանիշների ձեռքբերում և տրամադրում: Նշված միջոցառման իրականացման նպատակով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 236.2 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

«Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ոստիկանության մարմինների աշխատանքների պլանավորում, համակարգում, ծրագրային միջոցառումների մշակում և իրականացում, միջգերատեսչական և միջազգային համագործակցության ապահովում, համընդհանուր և ոլորտային աշխատանքների իրականացում, մոնիտորինգ և հսկողություն: Նշված միջոցառման իրականացման նպատակով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 10,534.5 մլն դրամ, որը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է 3,931.8 մլն դրամով: Ծախսերի ավելացումը պայմանավորված է.

1. 3,410.3 մլն դրամ՝ վերը նշված միջոցառումների իրականացման համար նախորդ

տարում նախատեսված մի շարք ծառայությունների (էլեկտրաէներգիա, գազ, ջուր և այլն) ձեռքբերումները կենտրոնացված կարգով իրականացնելու հանգամանքով,

2. 521.5 մլն դրամ՝ 30% պարգևատրման ֆոնդի նախատեսմամբ:

Միաժամանակ, ՀՀ 2019 թվականի պետական բյուջեում ներառվել է նաև ՀՀ ոստիկանության արտաբյուջետային միջոցների հաշիվներ ունեցող ստորաբաժանումների ծախսերի նախահաշիվները, որը կազմում է շուրջ 16,297.2 մլն դրամ, այդ թվում.

- «Աջակցություն ՀՀ ոստիկանության կողմից պետական պահպանության ծառայությունների մատուցմանը» ծրագրի գծով 7,069.8 մլն դրամ,
- «Աջակցություն ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանը» ծրագրի գծով 8,617.4 մլն դրամ,
- «Աջակցություն ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից ծառայությունների մատուցմանը» ծրագրի գծով 600.0 մլն դրամ,
- «Աջակցություն ՀՀ ոստիկանության բժշկական վարչության կողմից ծառայությունների մատուցմանը» ծրագրի գծով 10.0 մլն դրամ:

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն

«Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ՀՀ անվտանգությանը սպառնացող վտանգի մասին տեղեկատվության ստացում, վերլուծում, վտանգի կանխատեսում, վտանգի կանխման և չեզոքացման վերաբերյալ առաջարկությունների մշակում: Վերը նշված միջոցառման գծով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է հատկացնել 22,272.9 մլն դրամ, որը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է 2,207.5 մլն դրամով՝ պայմանավորված 30% պարգևատրման ֆոնդի նախատեսմամբ:

«ՀՀ տարածքում երկաթուղով իրականացվող միջպետական ռազմական փոխադրումների, երկաթուղային կայարաններում կատարվող սպասարկման ծառայություններ» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև կնքված համաձայնագրերի համաձայն ՀՀ-ում տեղակայված ՌԴ զորամիավորումների հասցեով ՀՀ տարածքում երկաթուղով իրականացվող միջպետական ռազմական փոխադրումներ: Վերը նշված միջոցառման գծով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կողմից մատուցված ծառայությունների փոխհատուցման նպատակով հատկացնել 14.0 մլն

դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

«Ազգային անվտանգության համակարգի շենքային ապահովվածության բարելավում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ազգային անվտանգության համակարգի ստորաբաժանումների վարչական շենքերի կառուցում, կապիտալ վերանորոգում, շինարարական և կապիտալ նորոգման օբյեկտների նախագծահետազոտական փաստաթղթերի պատրաստում: ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով վերը նշված միջոցառման համար նախատեսվել է 208.4 մլն դրամ, որը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նկատմամբ նվազել է 57.7 մլն դրամով: Նվազեցումը պայմանավորված է ՀՀ ազգային անվտանգության ծառայության «Դեբեդավան» սահմանային ուղեկալի շինարարական աշխատանքների ավարտմամբ:

«Ազգային անվտանգության համակարգի տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ազգային անվտանգության համակարգի, ստորաբաժանումների համար անհրաժեշտ վարչական սարքավորումների ձեռք-բերում: Վերը նշված միջոցառման գծով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 91.6 մլն դրամ, որը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նկատմամբ նվազել է 57.7 մլն դրամով:

«Ազգային անվտանգության համակարգի կողմից ծառայությունների մատուցման ապահովման համար ոչ նյութական հիմնական միջոցների ձեռքբերում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ազգային անվտանգության կարիքների համար անհրաժեշտ հակավիրուսային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերում: Վերը նշված միջոցառման գծով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 7.5 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

«Ազգային անվտանգության համակարգի ստորաբաժանման համար դեղորայքի ձեռքբերում» միջոցառման գծով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 26.8 մլն դրամ, որ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է 3.2 մլն դրամով, պայմանավորված ձեռքբերվող դեղերի և դեղագործական ապրանքների քանակի ավելացմամբ:

«Պետական պահպանության ծառայություններ» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել բարձրաստիճան պաշտոնատար անձանց և Հայաստանի Հանրապետությունում գտնվող բարձրաստիճան հյուրերի անվտանգության ապահովում: Վերը նշված միջոցառման գծով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 3,049.5 մլն դրամ, որը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է 283.7 մլն դրամով: Ծախսերի ավելացումը պայմանավորված է.

1. 99.6 մլն դրամ՝ պետական պահպանության ծառայություն իրականցնող մարմնի ծառայության առանձնահատկություններով,

2. 184.2 մլն դրամ՝ 30% պարգևատրման ֆոնդի նախատեսմամբ:

«Դեղորայքի տրամադրում պետական պահպանության ծառայությանը» միջոցառման շրջանակում նախատեսվում են կենտրոնացված կարգով պետական պահպանության ծառայության կարիների համար անհրաժեշտ դեղորայքի ձեռքբերում, որի գծով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 1.1 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

«Պաշտպանության բնագավառի այլ ծախսեր» միջոցառման շրջանակներում իրականացվում է Հայաստանի Հանրապետության սահմանային անվտանգության ապահովում: Նշված միջոցառման գծով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 7,045.5 մլն դրամ, որը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է 271.0 մլն դրամով (ծախսերի ավելացումը պայմանավորված է գնաճի տատանումներով):

ՀՀ վարչապետի աշխատակազմ

ՀՀ վարչապետի աշխատակազմի գծով 2019 թվականի Նախագծով նախատեսվում է հատկացնել 19,387.6 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 21,529.7 մլն դրամի դիմաց:

Հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

1. «ՀՀ Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է.

1.1 «Աջակցություն ՀՀ կառավարության աշխատակազմի ներքո գործող Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության քարտուղարությանը» միջոցառումը, որի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 23.6 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի իրականացման նպատակն է Հայաստանի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը լիարժեք անդամակցելու հանձնառության ապահովումը, ազգային քաղաքականության ապահովման և անդամակցության վճարների իրականացման միջոցով:

1.2 «Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածությանը ՀՀ անդամակցության շրջանակում միասնական տեղեկատավական տարածության և ինտեգրացված տեղեկատվական համակարգերի ստեղծում և պահպանում» միջոցառումը, որի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 92.1 մլն դրամ, ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 94.4 մլն դրամի դիմաց:

ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 20-ի N 217-Ա որոշման համաձայն «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն ճանաչվել է որպես Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակում ստեղծված՝ էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փաստաթղթավորման ընդհանուր ենթակառուցվածքի (ինտեգրացիոն շլյուզ)՝ ՀՀ պետական բաղադրիչի օպերատոր: Իսկ ինտեգրացիոն շլուզի սարքավորման սպասարկումն ու գործունեությունն ապահովելու համար գործող լիցենզիաների բաժանորդագրության ժամկետների լրանալու պատճառով անհրաժեշտ են նոր սարքավորումներ և ծրագրային ապահովման լիցենզիաներ:

2. «Տեսչական վերահսկողության ծրագրի» շրջանակներում նախատեսվում է.

2.1 «Արտադրանքի և որակի վերահսկողության ծառայություններ» միջոցառումը, որի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 15.0 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. Փորձանմուշների ձեռքբերման ծախսեր,
2. Փորձանմուշների փորձարկման ծախսեր,
3. Շարժական լաբորատորիայի համար անհրաժեշտ ծախսեր:

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում ապրանք արտադրողների և ծառայություն մատուցողների կողմից սպառողներին իրացվող արտադրանքի նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը՝ ստանդարտացման և չափագիտական նորմերի ապահովման միջոցով:

3.«Մարդասիրական բեռներ փոխադրող օտարերկրյա օդանավերի աերոնավիգացիոն սպասարկման, թռիչք-վայրէջքի, օդանավերի կանգառի և վերգետնյա սպասարկումների ու մատուցված ծառայությունների փոխհատուցում» շրջանակներում նախատեսվում է.

ԱՄՆ-ի միացյալ հայկական հիմնադրամի միջոցով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հասցեով առաքվող՝ մարդասիրական օգնության բեռներ տեղափոխող և «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության ու Գերմանիայի «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպության կողմից համատեղ իրականացվող բարեգործական ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ չվերթների աերոնավիգացիոն վերգետնյա սպասարկումների ու մատուցված ծառայությունների փոխհատուցման նպատակով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 10.0 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

«Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին» և «Հանրային իրազեկում» ծրագրերի համար ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել են համապատասխանաբար՝ 310.4 և 1,088.3 մլն դրամ՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված համապատասխանաբար՝ 310.4 և 906.9 մլն դրամի դիմաց :

Ծախսերի աճը՝ 181.4 մլն դրամով պայմանավորված է ԱԱՀ-ի նախատեսմամբ:

Միաժամանակ ՀՀ վարչապետի աշխատակազմում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագիր, որի նպատակն է բարելավել հանրային հատվածի ֆինանսական հաշվետվությունների որակը և հանրության հասանելիությունը ընդլայնված էլեկտրոնային պետական ծառայություններին:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

ա) Պետական ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգեր,

բ) Էլեկտրոնային կառավարման լուծումներ բարելավված ծառայությունների մատուցման համար,

գ) Կարողությունների զարգացում և զարգացման փոքր ինտերվենցիաներ,

դ) Ծրագրի կառավարում՝ 2019թ.-ին նախատեսվում է 2,556,1 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,043,0 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 513,1 մլն դրամ:

2. ՀՀ ֆինանսների նախարարության և ՌԴ ֆինանսների նախարարության միջև՝ Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանն անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագիր, որը փոխկապակցված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների հետ: Մասնավորապես, ծրագրի միջոցները նախատեսվում է ուղղել ֆինանսական կառավարման միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի ստեղծման ծախսերի ֆինանսավորմանը՝ 2019թ.-ին նախատեսվում է 1,618,3 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,248,6 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 369,7 մլն դրամ:

3. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Տարածքային զարգացման հիմնադրամի ծրագիր, որի Ծրագրի նպատակներն են՝

1. Նպաստել տարածքներում բնակչության նյութական ու ոչ նյութական բարեկեցության աճին՝ սոցիալական ու տնտեսական ենթակառուցվածքների ու հանրային ծառայությունների որակի ու հասանելիության բարձրացման միջոցով,

2. Օժանդակել տարածքների ինստիտուցիոնալ և ֆինանսական կարողությունների հզորացմանը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել մոտ 120 համայնքային մակարդակի ենթածրագիր՝ սոցիալական ենթակառուցվածքների վերականգնման և նոր օբյեկտների կառուցման ոլորտում: Ինչպես և ՀՍՆՀ նախորդ ծրագրերում, նախատեսվում է համայնքային կենտրոններին, դպրոցներին և մանկապարտեզներին գույքի տրամադրում՝ 2019թ.-ին նախատեսվում է 3,144,0 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,123,3 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 1,020,7 մլն դրամ:

4. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է զարգացնել Հայաստանի հարավային համայնքապետարանների կարողությունները՝ վերջիններիս բնակիչներին կայուն ենթակառուցվածքի ապահովման և ծառայությունների մատուցման ուղղությամբ: Այն նպատակաուղղված է լրացնել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջոցով իրականացվող հիմնական ծրագիրը՝ 2019թ. նախատեսվում է 8,8 մլն. դրամ դրամաշնորհային միջոցներ:

5. ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող Տեղական ինքնակառավարման բարեփոխումների դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է Հայաստանի Հանրապետությանն օժանդակել հասնելու ավելի մասնակցային, արդյունավետ և հաշվետվողական կառավարման՝ Հայաստանում վարչատարածքային բարեփոխման միջոցով: Ծրագրի շրջանակներում ԱՄՆ ՄԶԳ-ն ներդրումային միջոցներ կտրամադրի ՀՀ կառավարության կողմից իրականացվող վարչատարածքային բարեփոխումների պիլոտային փուլում 14 խոշորացվող փնջերում զարգացման ծրագրերի ֆինանսավորման համար՝ 2019թ.-ին նախատեսվում է 617,9 մլն դրամաշնորհային միջոցներ:

6. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության ծրագիր» դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է աջակցել հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության մշակմանը, որի թիրախում Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտի միջոցով կայուն տնտեսական աճի ապահովումն է՝ 2019թ.-ին նախատեսվում է 138,0 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 110,4 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 27,6 մլն դրամ:

7. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն» դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է աջակցել Ստացողին հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման հարցում՝ իրականացնելով Արտահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) Ստանդարտը՝ 2019թ.-ին նախատեսվում է 99,7 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 79,9 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 19,8 մլն դրամ:

Այս ոլորտում Նախագծով նախատեսված ծախսերի համեմատությունը ՀՀ 2017 թվականի բյուջետային տարվա փաստացի, ինչպես նաև ՀՀ 2018 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 5 աղյուսակում:

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում ծրագրի համար ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված հատկացումները նպատակ ունեն ապահովել տեղեկատվական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտական, հայոց լեզվի և պատմության, մարզական, ժամանցային և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվական բնույթի հաղորդումների բազմազանությունը:

Նախագծով նախատեսվում է հատկացնել 7,276.6 մլն դրամ (առանց կառավարման ապարատի)՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 6,244.5 մլն դրամի դիմաց: Ծախսերն աճել են 1,032.1 մլն դրամով, կամ 16.5 տոկոս, որը պայմանավորված է.

- ԱԱՀ-ի գումարի նախատեսմամբ՝ 1,206.7 մլն դրամ,

- «Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ» միջոցառման ծախսերի աճով՝ 44.4 մլն դրամով, կապված հեռարձակման սակագների աճով:

Միաժամանակ, ծախսերը նվազել են 219.0 մլն դրամով, որը պայմանավորված է.

- «Ռադիոհեռուստատեսային ծառայություններ» և «Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ» միջոցառումների և «Ներդրումներ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք շինությունների հիմնանորոգման նպատակով» միջոցառումների ավարտմամբ:

Այս ոլորտում 2019 թվականի բյուջետային ծախսերի համեմատությունը՝ 2017 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2018 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 11.1 աղյու-

սակում:

ՀՀ քաղաքաշինության կոմիտե

«Քաղաքաշինության և ճարտարապետության բնագավառում պետական քաղաքականության իրականացում և կանոնակարգում» ծրագրի գծով նախատեսվել է 354.0 մլն դրամ (առանց կառավարման ապարատի գծով ծախսերի), որը ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված համադրելի ցուցանիշից՝ 363.0 մլն դրամից պակաս է 2.5%-ով: Ծրագրի գծով 2019 թվականի ծախսերը նախատեսվել են հետևյալ ուղղություններով.

- «Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում և տեղայնացում» միջոցառման գծով՝ 20.0 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել միջազգայնորեն ընդունված սկզբունքներին համահունչ թվով 4 քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման և տեղայնացման աշխատանքներ:

- «Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակում» միջոցառման գծով՝ 334.0 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է ՀՀ Արմավիրի և Վայոց ձորի մարզերի համայնքների, ինչպես նաև Դիլիջանի խոշորացված համայնքի մասնակցությամբ մշակել տվյալ համայնքների միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերը:

Այս ոլորտում 2019 թվականի բյուջետային ծախսերի համեմատությունը՝ 2017 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2018 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 9 աղյուսակում:

ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե

Անշարժ գույքի պետական ռեգիստրի համակարգի տարեկան ծախսերը, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջների համաձայն, պլանավորվում ու իրականացվում են սպասվելիք տարեկան եկամուտների չափով: Այս ոլորտի գծով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 3,991.2 մլն դրամի ծախսեր՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված 3,705.7 մլն դրամի դիմաց կամ 7.7 %-ով ավել: Հատկացվող միջոցներից համակարգի պահպանման ծախսերը կկազմեն 3,616.2 մլն դրամ՝ 2018 թվականի համար հաստատված 3,232.4 մլն դրամի դիմաց, իսկ համակարգի կարողությունների զարգացմանն ուղղվող ծախսերը կկազմեն 374.9 մլն դրամ՝ 2018 թվականի համար հաստատված 473.3 մլն դրամի դիմաց: Համակարգի կարողությունների զարգացման 2019

թվականի ծախսերից 309.9 մլն դրամը կուղղվի գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքներին՝ հետևյալ ուղղություններով.

1. *<u>ՀՀ թվային տեղագրական քարտեզների՝ երկրատեղեկատվական համակարգի միջավայրում ստեղծման աշխատանքների</u>* գծով նախատեսվել է 263.7 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել օդալուսանկարների հիման վրա 3415.8 հա կառուցապատ տարածքների 1:2000 մ-բի հատակագծերի վերծանման և ստեղծման, 100 օբյեկտի գծով մասշտաբային քարտեզների թարմացման, 200 թերթ 1:10000 և 1:25000 մասշտաբային տեղագրական քարտեզների ԵՏՀ միջավայր տեղափոխման աշխատանքներ:

2. *<u>Թեմատիկ քարտեզագրության</u>* գծով նախատեսվել է 32.2 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Հայաստանի Ազգային ատլասի ռուսերեն լեզվով տարբերակի 163 էջի նախապատրաստման (նյութերի թարմացում, թարգմանություն, խմբագրում, քարտեզների ձևավորում և սրբագրում) և 1000 էջի հրապարակում:

3. *<u>Աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի թարմացման աշխատանքների</u>* գծով նախատեսվել է 13.98 մլն դրամ, որի շրջանակներում, բացի քարտադարանի վարման և թարմացման աշխատանքներից, նախատեսվում է իրականացնել նաև Հս. Ամերիկայի և Հրվ. Ամերիկայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների 300-ական տեղեկատուների նախապատրաստում և հրատարակում, ինչպես նաև Ասիայի և Աֆրիկայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների 300-ական տեղեկատուների հրատարակում:

Գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված ծախսերի համեմատությունը՝ 2017 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2018 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված են սույն բացատրագրի № 19 աղյուսակում:

Պետական բյուջեի նախագծի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով դեֆիցիտի գումարը ծրագրավորվում է 151.6 մլրդ դրամի չափով: Դեֆիցիտի ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել ներքին և արտաքին աղբյուրների զուտ մուտքերի (զուտ մուտքերը՝ դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներգրավվող միջոցների մուտքերի ընդհանուր գումարի և փոխառու միջոցների տրամադրման կամ մարման ընդհանուր գումարի տարբերությունն է) հաշվին, համապատասխանաբար՝ 54.2 մլրդ դրամի և 97.4 մլրդ դրամի չափով:

Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները դասակարգվում են ներքին և արտաքին աղբյուրներից փոխառու միջոցների և ֆինանսական ակտիվների տեսքով ներգրավվող միջոցների:

Փոխառու միջոցների ներգրավումը իրականացվում է պետական արժեթղթերի թողարկման և վարկերի ու փոխատվությունների ստացման եղանակով (որոնք հետևապես հետագայում ենթակա են մարման): Ֆինանսական ակտիվներից միջոցների ներգրավումը իրականացվում է արդեն ձեռք բերված՝ սեփականության իրավունքով պետությանը պատկանող բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության, ինչպես նաև տնտեսվարող և այլ սուբյեկտներին պետական բյուջեից տրամադրված վարկերի և փոխատվությունների դիմաց այդ սուբյեկտներից ձեռք բերված պարտավորությունների իրացման եղանակով:

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներքին աղբյուրներից ներգրավվող փոխառու զուտ միջոցների ընդհանուր գումարը ծրագրավորվում է շուրջ 69.1 մլրդ դրամի չափով, ընդ որում, փոխառու միջոցների մուտքերի ներգրավումը ամբողջությամբ նախատեսվում է ապահովել պետական արժեթղթերի թողարկումից: Ֆինանսական ակտիվներից 2019 թվականի զուտ մուտքերը ծրագրավորվում են շուրջ (15.0) մլրդ դրամ, ընդ որում, տարեսկզբի ազատ մնացորդի միջոցների հաշվին՝ 9.5 մլրդ դրամ և տնտեսվարող և այլ սուբյեկտներին տրամադրված բյուջետային վարկերի և փոխատվությունների գծով զուտ մուտքերին՝ (24.5) մլրդ դրամ (տեղեկատվությունը ներկայացված է սույն բացատրագրի «Բյուջետային վարկեր» բաժնում):

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով արտաքին աղբյուրներից ներգրավվող փոխառու զուտ միջոցների ծրագրված ընդհանուր գումարը (շուրջ 155.1 մլրդ դրամ) հաշվարկվել է որպես միջազգային կազմակերպություններից և օտարերկրյա պետություններից Հայաստանի Հանրապետությանը 2019 թվականին տրամադրվելիք արտոնյալ վարկերի (որոնց մասն ունի հստակ ծրագրային ուղղվածություն) և մինչ այդ արդեն ստացված վարկերի, ըստ վարկային պայմանագրերով նախատեսված ժամկետների, մարման գումարների տարբերություն (նշված զուտ մուտքերի վերաբերյալ մանրամասն համապատասխան տեղեկատվությունը բերված է սույն բացատրագրի N 1 հավելվածում, NN 15-18 աղյուսակներում և «ՀՀ պետական պարտքը» բաժնում): Դրա հետ մեկտեղ նախագծով նախատեսվել է շուրջ 0.8 մլրդ դրամ՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կապիտալում մասնակցության գծով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների կատարման համար:

Բյուջետային վարկեր

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով զուտ վարկավորման ընդհանուր ծավալը ծրագրավորված է շուրջ 81.4 մլրդ դրամի չափով: Նշված գումարն իրենից ներկայացնում է ՀՀ պետական բյուջեից տրամադրվելիք բյուջետային վարկերի ընդհանուր գումարի և նախ-

կինում տրամադրված բյուջետային վարկերի մարումներից ստացվելիք մուտքերի ընդհանուր գումարի տարբերությունը:

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեից տրամադրվելիք վարկերի ընդհանուր գումարը նախագծով նախատեսվում է սահմանել 118.0 մլրդ դրամի չափով: Մասնավորապես.

ա) Հայաստանի Հանրապետության կողմից ցուցաբերվող արտաքին տնտեսական աջակցության շրջանակներում բյուջետային վարկեր տրամադրելու համար առանձնացվել են 56.5 մլրդ դրամի չափով հատկացումներ՝ դրանք ամբողջությամբ Արցախի Հանրապետությանը բյուջետային վարկի տրամադրմանն ուղղելու նպատակով,

բ) Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն», Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրամատակարարման հուսալիության, ՌԴ աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի շրջանակներում ենթավարկի տրամադրում «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում ենթավարկի տրամադրում «Երևան ՋԷԿ» և «Հայկական ԱԷԿ» ՓԲԸ-ներին, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում ենթավարկի տրամադրում «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին նախատեսվում է տրամադրել շուրջ 61.5 մլրդ դրամի բյուջետային վարկեր:

Դրա հետ մեկտեղ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են մուտքեր Վրաստանից, ինչպես նաև մի շարք տնտեսվարող սուբյեկտներից՝ պետության կողմից նախորդ տարիներին իրենց տրամադրված բյուջետային վարկերի մարումների գծով պետական բյուջե կատարվելիք վճարումներից՝ շուրջ 37.7 մլրդ դրամի չափով:

Պետական պարտքը

ՀՀ 2019թ. պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումների համաձայն՝ 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կկազմի 3,409 մլրդ դրամ (7,053 մլն ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 55.0%-ը, իսկ 2019 թվականի տարեվերջին այն կկազմի 3,610 մլրդ դրամ (7,468 մլն ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 53.4%-ը:

	Առ 31.12.2017թ.	Առ 31.12.2018թ.	Առ 31.12.2019թ.
մլրդ դրամ			
ՀՀ պետական պարտք	**3,280**	**3,409**	**3,610**
այդ թվում՝			
արտաքին պետական պարտք	**2,660**	**2,749**	**2,880**
որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտք	***291***	**274**	**249**
ներքին պետական պարտք	**620**	**661**	**730**
մլն ԱՄՆ դոլար			
ՀՀ պետական պարտք	**6,775**	**7,053**	**7,468**
այդ թվում՝			
արտաքին պետական պարտք	**5,495**	**5,686**	**5,959**
որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտք	**602**	**566**	**515**
ներքին պետական պարտք	**1,280**	**1,367**	**1,509**
տոկոսներով ՀՆԱ-ի նկատմամբ			
ՀՀ պետական պարտք	**58.9**	**55.0**	**53.4**
այդ թվում՝			
արտաքին պետական պարտք	**47.8**	**44.4**	**42.6**
որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտք	***5.2***	**4.4**	**3.7**
ներքին պետական պարտք	**11.1**	**10.7**	**10.8**

2018 և 2019 թվականների համար փոխարկումները կատարվել են 1 ԱՄՆ դոլար = 483.38 դրամ փոխարժեքով (03.09.2018թ. դրությամբ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեք (աղբյուր՝ ՀՀ կենտրոնական բանկ)):

ՀՀ արտաքին պետական պարտքի գծով 2018 և 2019 թվականների ընթացքում ակնկալվում է.

	2018թ. (մլն ԱՄՆ դոլար)	2019թ. (մլն ԱՄՆ դոլար)
ՀՀ արտաքին պետական պարտքի գծով վարկերի ստացում	**446**	**512**
որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտքի գծով	***31***	***21***
ՀՀ արտաքին պետական պարտքի գծով մայր գումարի մարում	**199**	**248**
որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտքի գծով	***57***	***71***
ՀՀ արտաքին պետական պարտքի գծով տոկոսավճար	**167**	**196**
որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտքի գծով	***12***	***12***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԸ

ՀՀ կառավարության պարտքի 2018 և 2019 թվականների կանխատեսումները կատարվել են հիմք ընդունելով հետևյալը.

- ՀՀ 2018թ. պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը պարտքային գործիքների հաշվին կիրականացվի ամբողջ ծավալով՝ համաձայն 2018թ. փոխառությունների տարեկան ծրագրի,
- ՀՀ 2019թ. պետական բյուջեի նախագծի հիմքում դրված պակասուրդի ֆինանսավորման սցենարը,
- 2018 և 2019 թվականների պարտքի մնացորդի փոխարկումները կատարվել են 03.09.2018թ. դրությամբ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքների (աղբյուր՝ ՀՀ կենտրոնական բանկ) հիման վրա: Մասնավորապես, 1 ԱՄՆ դոլար = 483.38 դրամ,
- ՀՀ 2019թ. պետական բյուջեի նախագծի հիմքում դրված 2018թ. և 2019թ. ՀՆԱ-ների կանխատեսումային ցուցանիշները:

Ըստ կանխատեսումների՝ 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը կկազմի 3,361 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 49.7 տոկոսը և 2018 թվականի տարեվերջի համեմատությամբ ՀՆԱ-ի նկատմամբ կնվազի 0.9 տոկոսային կետով: Նշենք, որ կառավարության պարտք / ՀՆԱ ցուցանիշի նշված կանխատեսումները տարբերվում

են Հայաստանի Հանրապետության 2019-2021 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում ներառված ՀՀ կառավարոիթյան պարտքի նվազեցման 2019-2023թթ. ծրագրով սահմանված ցուցանիշներից՝ պայմանավորված հիմնականում կանխատեսումներում կիրառված մակրոտնտեսական շրջանակի և փոխարժեքների տարբերություններով:

	Առ 31.12.2017թ.	**Առ 31.12.2018թ.**	**Առ 31.12.2019թ.**
ՀՀ կառավարության պարտք, մլրդ դրամ	**2,988**	**3,136**	**3,361**
ՀՀ կառավարության պարտք, մլն ԱՄՆ դոլար	**6,173**	**6,487**	**6,953**
ՀՀ կառավարության պարտք, % ՀՆԱ-ի մեջ	**53.7**	**50.6**	**49.7**

Նախատեսվում է 2018-2019 թվականներին ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ավելացնել ՀՀ դրամով տեղաբաշխված պետական գանձապետական պարտատոմսերի կշիռը, որն ըստ կանխատեսումների կկազմի համապատասխանաբար 18.8% և 19.6%: Կառավարության պարտքը կունենա հետևյալ կառուցվածքը.

	Առ 31.12.2017թ.	Առ 31.12.2018թ.	Առ 31.12.2019թ.
Կառուցվածքն ըստ ռեզիդենտության, մլրդ դրամ*			
ներքին պարտք	**620**	**661**	**730**
արտաքին պարտք	**2,369**	**2,475**	**2,631**
Կառուցվածքն ըստ գործիքակազմի, մլրդ դրամ			
արտաքին վարկեր և փոխառություններ	**1,947**	**2,056**	**2,211**
պետական գանձապետական պարտատոմսեր	**550**	**588**	**658**
արտարժութային պետական պարտատոմսեր	**484**	**483**	**483**
արտաքին երաշխիքներ	**4**	**4**	**4**
ներքին երաշխիքներ	**4**	**4**	**4**
Արժութային կառուցվածքը, մլրդ դրամ			
ՀՀ դրամով ներգրավված պարտք	**550**	**588**	**658**
արտարժույթով ներգրավված պարտք	**2,439**	**2,548**	**2,702**

	Առ 31.12.2017թ.	Առ 31.12.2018թ.	Առ 31.12.2019թ.
Կառուցվածքն ըստ տոկոսադրույքի տեսակի, մլրդ դրամ			
լողացող տոկոսադրույքով	**403**	**484**	**535**
ֆիքսված տոկոսադրույքով	**2,585**	**2,652**	**2,826**

** 2018 և 2019 թվականների համար պետական գանձապետական և արտարժութային պարտատոմսերի գծով պարտքի մնացորդը բաշխվել է ըստ ռեզիդենտության հիմք ընդունելով 2018թ. օգոստոսի 31-ի դրությամբ փաստացի ձևավորված տեսակարար կշիռները:*









Հաշվի առնելով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումները և պարտքի գծով ծրագրավորված գործառնությունները, ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2019-2021 թվականների ռազմավարական ծրագրով ամրագրված ուղենշային ցուցանիշները 2019թ. տարեվերջի դրությամբ կկազմեն.

	Ուղենիշ	2019թ. (կանխ.)
Վերաֆինանսավորման ռիսկ		
Մինչև մարում միջին ժամկետը	8 – 11 տարի	8.3 տարի
Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) կշիռը ՊԳՊ-ների ծավալի մեջ (տարեվերջին)	առավելագույնը 20%	13.7%
Տոկոսադրույքի ռիսկ		
Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 80%	84.1%
Փոխարժեքի ռիսկ		
Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 20%	21.7%
ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 20%	19.6%

2019 թվականի տարեվերջի դրությամբ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի 38.8%-ը բաժին կընկնի Համաշխարհային Բանկին (Զարգացման Միջազգային Ընկերակցություն ու Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ)։ Կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքն ըստ վարկատուների կլինի հետևյալը.



2019 թվականի տարեվերջի դրությամբ ձևավորվող կառավարության պարտքի մարման ժամանակացույցը սփռված կլինի մինչև 2054 թվականը և կունենա հետևյալ տեսքը.



2019 թվականին կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույքը կկազմի 5.2%: Կառավարության պարտքի սպասարկման ծախսերը (տոկոսավճարներ) կկազմեն ՀՆԱ-ի 2.3%-ը և պետական բյուջեի ընդամենը ծախսերի 9.8%-ը:

	2017թ.	*2018թ.*	*2019թ.*
Կառավարության պարտքի սպասարկում (տոկոսավճար)			
մլրդ դրամ	**122.1**	**141.2**	**157.6**
%-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	**2.2**	**2.3**	**2.3**

%-ներով պետական բյուջեի ծախսերի նկատմամբ	**8.1**	**9.6**	**9.8**
Կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույք, %	**4.9**	**4.9**	**5.2**

Պակասուրդի ֆինանսավորման պարտքային գործիքակազմը

2019 թվականին պետական բյուջեի պակասուրդի զուտ ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին կկազմի 225.1 մլրդ դրամ, ինչը կիրականացվի պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին՝ 70.0 մլրդ դրամ, և արտաքին վարկերի հաշվին՝ 155.1 մլրդ դրամ:

Պակասուրդի ֆինանսավորումը պետական գանձապետական պարտատոմսերով

Պետական գանձապետական պարտատոմսերով բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումն իրականացվելու է կարճաժամկետ (3, 6, 9 և 12 ամիս), միջնաժամկետ (3 և 5 տարի), երկարաժամկետ (10 և 30 տարի) և խնայողական պարտատոմսերի հաշվին:

Յուրաքանչյուր երկու ամիսն առնվազն մեկ անգամ կկազմակերպվի 52, 39, 26 և 13 շաբաթ մարման ժամկետ ունեցող պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդներ: Կարող են իրականացվել նաև պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի լրացուցիչ թողարկումներ, ընդ որում մինչև 3 շաբաթ մարման ժամկետայնությամբ թողարկումներ կարող են իրականացվել կանխիկ հոսքերի կառավարման նպատակով, իսկ 3-12 շաբաթ մարման ժամկետայնությամբ թողարկումներ՝ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման շրջանակներում:

2019 թվականի ապրիլի 29-ին կթողարկվեն 3 և 5 տարի մարման ժամկետայնությամբ նոր միջնաժամկետ պետական գանձապետական պարտատոմսեր, իսկ հոկտեմբերի 29-ին կթողարկվի 10 տարի մարման ժամկետայնությամբ նոր երկարաժամկետ պետական գանձապետական պարտատոմս:

Աճուրդների կողմնորոշիչ ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի եռամսյակային կտրվածքով:

Յուրաքանչյուր աճուրդին տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալների (միջակայքի) և ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի աճուրդից առաջ՝ գործակալների հետ խորհրդակցելուց հետո:

2019 թվականի ընթացքում կիրականացվեն նաև պետական գանձապետական պարտատոմսերի հետգնումներ: 2019 թվականի ընթացքում պարտատոմսերի հետգնումների

70-80% կիրականացվեն մարման գրաֆիկի հարթեցման, իսկ 20-30%՝ պարտատոմսերի իրացվելիությունը խթանելու նպատակով: ՀՀ ֆինանսների նախարարությունը յուրաքանչյուր թողարկման պարտատոմսերի տեղաբաշխման ժամանակահատվածում այդ պարտատոմսերի հետգնում չի իրականացնի:

ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայք էջում եռամսյակային կտրվածքով, յուրաքանչյուր եռամսյակից 10 օր առաջ, կիրապարակի ուղենշային համարվող պարտատոմսերի ցանկը:

2019 թվականին կներդրվի պետական գանձապետական պարտատոմսերի փոխանակման աճուրդային համակարգը:

Պակասուրդի ֆինանսավորումն արտաքին վարկերով

ՀՀ 2019 թվականին պետական բյուջեի պակասուրդը ֆինանսավորելու համար նախատեսվում է արտաքին վարկերի գծով կատարել 237.3 մլրդ դրամի (491.0 մլն ԱՄՆ դոլար) մասհանումներ[41]: Ընդ որում բյուջետային աջակցության վարկերի գծով մասհանումները կկազմեն 74.0 մլրդ դրամ (153.1 մլն ԱՄՆ դոլար) և 163.3 մլրդ դրամ (337.9 մլն ԱՄՆ դոլար)՝ նպատակային վարկային ծրագրերի գծով:

2019 թվականին մասհանումների 39.1%-ը կատարվելու է ռուսական վարկերի գծով: Մասհանումների 30.8%-ը կազմում են սպասվելիք բյուջետային աջակցության վարկերը, որոնք դեռևս ենթակա են բանակցման: Հաջորդ խոշոր մասնաբաժինը (12.3%) բաժին է ընկնում Համաշխարհային Բանկին (ՎԶՄԲ և ԶՄԸ): Ասիական Զարգացման Բանկի տեսակարար կշիռը կկազմի 10.7%: Ըստ վարկատուների մասհանումների կառուցվածքը հետևյալն է.

[41] Արտաքին վարկերի գծով պակասուրդի ֆինանսավորման և արտաքին վարկերից մասհանումների տարբերությունը պայմանավորված է համապատասխան վարկային ծրագրերի շրջանակներում բացված հատուկ հաշիվներում առկա դրամական միջոցների մնացորդներով:



2019 թվականին նպատակային վարկային ծրագրերի գծով մասհանումների կառուցվածքում խոշորագույնը Հայկական ատոմակայանի վերականգնման ծրագիրն է՝ 103.1 մլն ԱՄՆ դոլար: Ընդհանուր առմամբ, ըստ ոլորտների մասհանումների կառուցվածքը կլինի հետևյալը.



2019 թվականին մասհանումների գերակշիռ մասը (54.1%) կկատարվի ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի գծով:





Կառավարության պարտքի մարումը և սպասարկումը

2019 թվականին կառավարության պարտքի մարման և սպասարկման համար կպահանջվի 356.8 մլրդ դրամ, որից 199.2 մլրդ դրամը կկազմեն պարտքի գծով մարումները, իսկ 157.6 մլրդ դրամը՝ տոկոսավճարները:

մլրդ դրամ	*Մարում*	*Սպասարկում*	*Ընդամենը*
Պետական գանձապետական պարտատոմսեր	**113.7**[42]	**68.8**	**182.5**
Արտարժութային պետական պարտատոմսեր	-	**31.8**	**31.8**
Արտաքին վարկեր	**85.5**	**57.0**	**142.5**
Ընդամենը	**199.2**	**157.6**	**356.8**



ՀՀ կառավարության արտարժութային պարտքի սպասարկման և մարման համար նախատեսված միջոցները փոխարկվել են ՀՀ դրամի հիմք ընդունելով 2018թ. սեպտեմբերի 3-ի դրությամբ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքները և այն ենթադրությամբ, որ ԱՄՆ դոլարի 6-ամսյա LIBOR-ի դրույքաչափը 2019 թվականին միջին հաշվով կկազմի 3.1%, իսկ 6-ամսյա EURIBOR-ը՝ չի գերազանցի զրոյական մակարդակը:

Պետական գանձապետական պարտատոմսերի մարման համար նախատեսված 113.7 մլրդ դրամի մեջ 24 մլրդ դրամը կազմում է պարտատոմսերի հետգնումների համար ծրագրավորված գումարը:

[42] Ցուցանիշը ներառում է պետական գանձապետական պարտատոմսերի հետգնման համար նախատեսված 24 մլրդ դրամը:

Արտաքին վարկերի մարման և սպասարկման գծով նախատեսվում է վճարել 142.5 մլրդ դրամ (294.6 մլն ԱՄՆ դոլար): Նախատեսվող վճարումների կառուցվածքն ըստ վարկատուների հետևյալն է.

մլն ԱՄՆ դոլար	տոկոսավճար	մարում	ընդամենը
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ	**30.2**	**2.7**	**32.9**
Զարգացման Միջազգային Ընկերակցություն	**24.6**	**61.8**	**86.4**
Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ	**0.8**	**4.2**	**5.0**
Եվրոպական Ներդրումային Բանկ	**2.3**	**1.6**	**3.9**
Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամ	**0.6**	**2.7**	**3.3**
ՕՊԵԿ-ի Միջազգային Զարգացման Հիմնադրամ	**2.3**	**3.4**	**5.7**
Ասիական Զարգացման Բանկ	**24.4**	**23.9**	**48.3**
Եվրամիություն	**2.6**	**-**	**2.6**
Արժույթի Միջազգային Հիմնադրամ	**-**	**29.7**	**29.7**
Եվրասիական Զարգացման Բանկ	**6.8**	**-**	**6.8**
Գերմանիա (ՎՎԲ)	**4.6**	**11.0**	**15.7**
Ռուսաստանի Դաշնություն	**13.1**	**20.8**	**33.9**
Ֆրանսիա	**1.8**	**0.2**	**2.1**
ԱՄՆ	**0.3**	**1.8**	**2.1**
Ճապոնիա	**2.0**	**10.5**	**12.5**
Աբու-Դաբիի Զարգացման Հիմնադրամ	**0.2**	**0.7**	**0.9**
Չինաստանի Արտահանման-Ներմուծման Բանկ	**0.5**	**-**	**0.5**
ԿԲՍ Բանկ (Բելգիա)	**0.0**	**0.6**	**0.6**
Ռայֆայզն Բանկ (Ավստրիա)	**0.1**	**1.0**	**1.1**
Էռստե Բանկ (Ավստրիա)	**0.1**	**0.2**	**0.4**
Ենթակա են բանակցման	**0.5**	**-**	**0.5**
Ընդամենը	**117.8**	**176.8**	**294.6**

Արտարժութային պետական պարտատոմսերի սպասարկման ծախսերը 2019 թվականին կկազմեն 65.8 մլն ԱՄՆ դոլար և ներառում են շրջանառության մեջ գտնվող 2020 ու 2025 թվականներին մարման ենթակա պարտատոմսերի գծով արժեկտրոնային վճարումները:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ (ԷՆԵՐԳԵՏԻԿԱ, ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ) ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

1. Ներածություն

Ենթակառուցվածքային ոլորտներում, մասնավորապես, էներգետիկայի, տրանսպորտի և ջրային տնտեսության ոլորտների թվով քսան կազմակերպությունների (Ընկերություններ) գործունեությանն առնչվող հարկաբյուջետային ռիսկերի գնահատականը:

2. Հարկաբյուջետային ռիսկերի գնահատման նպատակը

Հարկաբյուջետային ռիսկերի այս գնահատման նպատակն է ֆինանսական վիճակի վերլուծության միջոցով գնահատել Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման հավանականությունը, որը կարող է հանգեցնել պետական բյուջեից Ընկերություններին չնախատեսված փոխառությունների, սուբսիդիաների տրամադրման, սեփական կապիտալի համալրման կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտության, Ընկերությունների կողմից պետական բյուջե կանխատեսված շահութաբաժինների, ստացված վարկային միջոցների օգտագործման դիմաց հաշվարկված տոկոսների չվճարման և մայր գումարների չմարման:

2.1 Հարկաբյուջետային ռիսկերի գնահատման մեթոդաբանություն

Ընկերությունների կողմից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառվել է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից հրապարակված՝ «Կորպորատիվ հատվածից առաջացող ֆիսկալ ռիսկերի կառավարման ուղեցույց»-ում (այսուհետ՝ ԱՄՀ ուղեցույց) ներկայացված մեթոդաբանությունը, որի համաձայն Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակը կանխատեսելու համար հաշվարկվել է սնանկացման կանխատեսման Է. Ալթմանի «Z-միավոր» կոչվող հսկիչ ցուցանիշը[43], որը միջազգայնորեն կիրառվում է Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականության կանխատեսման նպատակով:

---

[43] **Է. Ալթմանի «Z-միավոր» կոչվող ցուցանիշը միջազգայնորեն կիրառվում է կազմակերպությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը կանխատեսելու նպատակով: Այն իրենից ներկայացնում է գործակիցներով կշռված՝ գործունեության հինգ կամ չորս ընդհանուր հարաբերակցությունների գծային**

Զուգահեռաբար Ընկերությունների ֆինանսական հուսալիության մասին լրացուցիչ տեղեկատվության ստացման, ինչպես նաև «Z-միավոր»-ի ստուգաճշտման համար կիրառվել են լրացուցիչ ֆինանսական գործակիցներ (շահութաբերության, իրացվելիության, վճարունակության հաշվարկման համար), որոնք արտացոլում են կապը Ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների տարբեր հոդվածների միջև:

3. Էներգետիկայի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերություններ

Էներգետիկայի ոլորտի դիտանցման ենթարկված պետական մասնակցությամբ ընկերությունների (Ընկերություններ) գործունեության արդյունքում հարկաբյուջետային ռիսկերն են.

1. Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում որպես ժամանակավոր օգնություն չնախատեսված բյուջետային վարկերի տրամադրման կամ սեփական կապիտալի համալրման համար բյուջետային հատկացումների անհրաժեշտության առաջացում,

2. Ընկերություններին սուբսիդիաների չնախատեսված գումարների տրամադրում կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտություն,

3. Ընկերություններից պետական բյուջեի մուտքերի կազմում նախատեսված շահութաբաժինների չստացում,

4. ՀՀ պետական բյուջեից Ընկերություններին տրամադրված վարկային միջոցների օգտագործման դիմաց հաշվարկված տոկոսների չվճարում և մայր գումարների չմարում:

2017թ. ընթացքում (այսուհետ՝ հաշվետու ժամանակաշրջան) էներգետիկայի ոլորտի (այսուհետ՝ Ոլորտ) թվով ութ Ընկերությունների հիմնական գործունեությունից ստացված հանրագումարային եկամուտները կազմել են 113.3 մլրդ դրամ՝ 2016թ. (այսուհետ՝ նախորդ ժամանակաշրջան) 107.2 մլրդ դրամի դիմաց կամ 6.1 մլրդ դրամով ավել (5.7%), իսկ 2018թ. 1-ին կիսամյակում՝ (այսուհետ՝ միջանկյալ ժամանակաշրջան) 61.0 մլրդ դրամ՝ 2017թ. 1-ին կիսամյակի (այսուհետ՝ նախորդ միջանկյալ ժամանակաշրջան) 53.0 մլրդ դրամի դիմաց կամ ավել 8.0 մլրդ դրամով (15%-ով):

Հաշվետու ժամանակաշրջանում այդ Ընկերությունների հանրագումարային ծախսերը կազմել են 100.4 մլրդ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի 107.0 մլրդ դրամի դիմաց՝ կամ պակաս 6.6 մլրդ դրամով (6.2%), իսկ միջանկյալ ժամանակաշրջանում 55.0 մլրդ դրամ՝

զուգակցում: Գործակիցները հաշվարկվել են ֆինանսական ծանր վիճակում գտնվող ընկերությունների միջազգայնորեն որոշված ընտրանքի հիման վրա):

նախորդ միջանկյալ ժամանակաշրջանի 49.0 մլրդ դրամի դիմաց կամ ավել 6 մլրդ դրամով (12.2%):

Ընկերությունների հանրագումարային 113.3 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 100.4 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում Հաշվետու ժամանակաշրջանում շահույթը կազմել է 13.0 մլրդ դրամ, կուտակված զուտ շահույթը նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 12.6 մլրդ դրամով: Իսկ միջանկյալ ժամանակաշրջանում Ընկերությունների հանրագումարային 61.0 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 55.5 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում շահույթը կազմել է 5.5 մլրդ դրամ՝ նախորդ միջանկյալ ժամանակաշրջանի նկատմամբ ավելանալով 1.5 մլրդ դրամով (37.5 %-ով), իսկ զուտ շահույթը 7.2 մլրդ դրամ (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 22.Էներգետիկայի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային զուտ շահույթը (վնասը) ըստ տարիների. հազ.դրամ

Էներգետիկայի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային շահույթը հարկումից հետո		2016թ.	2017թ.	2018 թ. 1-ին կիս.
		Փաստ.	Փաստ.	Փաստ.
ԸՆԴԱՄԵՆԸ		(2,676,365.7)	(4,407,988.0)	7,732,071.0
1	«Հայկական ատոմակայան» ՓԲԸ	(3,467,510.0)	5,621,887.0	81,200.0
2	«Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	676,661.0	(7,123,321.0)	2,648,438.0
3	«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն (ՋԷԿ)» ՓԲԸ	125,197.3	1,242.0	4,827,975.0
4	«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ	1,180.0	2,848.0	122,813.0
5	«Էներգակարգաբերում» ՓԲԸ	4,796.0	25,315.0	209.0
6	«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ	4,769.0	(48,096.0)	36,452.0
7	«Հայատոմ» ՓԲԸ	(28,140.0)	9,353.0	8,877.0
8	«Անալիտիկ» ՓԲԸ	6,681.0	9,353.0	6,107.0

Հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ Ընկերությունների հանրագումարային սեփական կապիտալի դիրքը Ընկերություններից մի քանիսի շարունակական կուտակային վնասների մեղմման արդյունքում նվազել է 3.1 մլրդ դրամով, (3.6%-ով): Ընդ որում Ընկերությունների հանրագումարային պարտավորությունները 3/1 հարաբերակցությամբ գերազանցում են սեփական կապիտալի հանրագումրային մեծությանը: Միջանկյալ ժամանակաշրջանում նախորդ միջանկյալ ժամանակաշրջանի

նկատմամբ Ընկերությունների հանրագումարային սեփական կապիտալն ավելացել է 962.0 մլն դրամով և կազմել 91.1 մլրդ դրամ (տես աղյուսակ 2):

Աղյուսակ 23. Էներգետիկայի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային հաշվապահական հաշվեկշիռը 2016թ., 2017թ. դեկտեմբերի 31-ի և 2018թ. հուլիսի 1-ի դրությամբ. հազ. դրամ

Հաշվեկշռային հոդվածներ	Էներգետիկայի ոլորտի պետական մասնակցությամբ 8 ընկերություններ		
	2016թ.	2017թ.	2018թ. 1-ին կիսամյակ
1. Ընդամենը ակտիվներ	351,416,729.2	375,325,986.0	407,222,915.0
- Ընթացիկ ակտիվներ	70,518,744.3	81,466,158.0	97,482,269.0
- Ոչ ընթացիկ ակտիվներ	280,897,984.9	293,859,828.0	309,740,646.0
2. Ընդամենը պարտավորություններ	265,885,178.2	292,879,291.0	316,024,406.0
- Ընթացիկ պարտավորություններ	56,696,779.5	74,545,622.0	80,939,494.0
- Ոչ ընթացիկ պարտավորություններ	209,188,398.7	218,333,669.0	235,084,912.0
3. Սեփական կապիտալ (զուտ ակտիվներ)	85,531,551.0	82,446,695.0	91,198,509.0

Վարկային պարտավորությունների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ Ընկերություն-ները չունեն ժամկետանց վարկային պարտավորություններ, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից բյուջետային երաշխիքներ չեն ստացել: Ընդ որում «Երևանի ՋԷԿ», «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» և «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ները հանդիսանում են միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների աջակցությամբ իրականացվող նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ենթավարկային պայմանագրերով ոլորտին տրամադրված վարկային միջոցների խոշորագույն ստացողներից:

Ընկերությունները ներգրավված չեն այնպիսի տեղական կամ միջազգային դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ այդ Ընկերությունների ֆինանսական վիճակի վրա:

Ընկերությունների հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառված ֆինան-սական գործակիցների ամփոփ արդյունքները և պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաները ներկայացված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 24. Էներգետիկայի ոլորտի պետական ընկերությունների հանրագումարային ֆինանսական ցուցանիշները.

Ցուցանիշ	2016թ.	2017թ.	2018թ. 1-ին կիս.	Թույլատրելի սահմանային նորմա
Ծախսերի վերականգնման գործակից	1.0	1.1	1.1	Առնվազն 1
Զուտ շահույթի մարժա (%)	(2.6)	3.9	12.7	8%
Արագ իրացվելիության գործակից	0.6	0.6	0.5	Առնվազն 1
Դեբիտորական պարտքերի շրջանառություն (օր)	73.6	66.8	70.2	Առնվազն 60 օր/(30 օր)
Պարտքի սպասարկման գործակից	0.3	0.1	0.1	Առավելագույնը 0.5
Վերաֆինանսավորման գործակից	7.4	3.3	8.4	Առավելագույնը 1
Z- միավոր	1.1	0.7	1.0	Ապահով գոտի՝ Z>2.6, Գորշ գոտի՝ 1.1< Z<2.6, Ծանր գոտի՝ Z<1.1

Ինչպես երևում է աղյուսակ 3-ից հաշվետու ժամանակաշրջանում սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի բարձր հավանականության մասին (գործակիցը՝ Z=0.7, գտնվում է սահմանված ծանր գոտում՝ Z<1.1), իսկ միջանկյալ ժամանակաշրջանում սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի բարձր հավանականության մասին (գործակիցը՝ Z=1.0, գտնվում է սահմանված ծանր (բարձր) գոտում՝ Z<1.1):

Հաշվետու ժամանակաշրջանում ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցներից չորսը, իսկ միջանկյալ ժամանակաշրջանում երեքը չեն համապատասխանում միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմային և վկայում են ֆինանսական ծանր վիճակի բարձր հավանականության մասին:

Զուտ շահույթի մարժան բնութագրում է բիզնեսի գործառնական արդյունավետությունը: Հաշվետու և միջանկյալ ժամանակաշրջաններում նախորդ և միջանկյալ ժամանակաշրջանների նկատմամբ այս ցուցանիշը ցուցաբերել է դրական դինամիկա, այնուամենայնիվ այն նախորդ ժամանակաշրջանում բացասական մեծություն էր, որը ոլորտի որոշ Ընկերությունների վնասով աշխատելու արդյունք էր, իսկ միջանկյալ ժամանակաշրջանում նկատվում է կտրուկ աճ (գործակիցը կազմել է 12.7):

Արագ իրացվելիության գործակիցը հաշվետու և միջանկյալ ժամանակաշրջաններում նախորդ ժամանակաշրջանների նկատմամբ դեռևս ցածր է մնաում միջազգային

պրակտիկայում կիրառվող շեմային մակարդակից, որը փաստում է, որ որոշ Ընկերություններ կարող են արագ իրացվելի ընթացիկ ակտիվների հաշվին մարել ընթացիկ պարտավորությունների ընդամենը 40-50 տոկոսը:

Դեբիտորական պարտքերի վերադարձելիության միջին ժամակաշրջանի ցուցանիշը հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակաշրջանի ցուցանիշի նկատմամբ նվազել է 7 օրով, (հաշվետու տարում նախորդ տարվա նկատմամբ առևտրային և այլ դեբիտորական պարտքերը նվազել են 356.4 մլն դրամով և կազմել 20.7 մլրդ դրամ): Այսինքն ոլորտի որոշ Ընկերությունների դեբիտորական պարտքերի կուտակումը չնայած ունի նվազման դինամիկա, այնուամենայնիվ այն դեռևս բարելավման կարիք ունի, իսկ միջանկյալ ժամանակաշրջանում նախորդ միջանկյալ ժամանակաշրջանի նկատմամբ նույնպես նվազել են 13.7 մլրդ դրամով և կազմել 23.5 մլրդ դրամ:

Վերաֆինանսավորման գործակիցը հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 4.1-ով և կազմել 3.3, իսկ միջանկյալ ժամանակաշրջանում նկատվում է կտրուկ աճ (գործակիցը կազմել է 8.4), բավականին բարձր մնալով միջազգային պրակտիկայում կիրառվող շեմային մակարդակից, որը փաստում է, որ որոշ Ընկերություններ ի վիճակի չեն գործառնություններից ստացվող իրենց դրամական հոսքերի հաշվին կատարել իրենց ընթացիկ պարտավորությունները:

Հաշվի առնելով, որ հաշվետու և միջանկյալ ժամանակաշրջաններում Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը գնահատող Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականության մասին, իսկ ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցներից հաշվետու ժամանակաշրջանում չորսը, իսկ միջանկյալ ժամանակաշրջանում երեքը չեն համապատասխանում միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաներին և վկայում են ֆինանսական ծանր վիճակի բարձր հավանականության մասին, հետևաբար այս երկու նախնական գնահատումների զուգակցման արդյունքում ոլորտի որոշ Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը գնահատվում է բարձր:

Ինչ վերաբերում է Ընկերությունների ֆիսկալ ռիսկերի նյութականացման ազդեցության քանակական գնահատմանը, ապա այն նույնպես բարձր է համարվում[44]:

---

[44] Հաշվի առնելով, որ Ընկերությունների ընդհանուր պարտավորությունների տեսակարար կշիռը հաշվետու և միջանկյալ ժամանակաշրջաններում ՀՆԱ-ի մեջ կազմում է համապատասխանաբար 5.5 և 5.9 տոկոս՝ ԱՄՀ-ի կողմից կիրառվող մոտեցման համաձայն, եթե Ընկերության ընդհանուր պարտավորությունների մեծությունը ՀՆԱ-ի 0.5 տոկոսից փոքր է, ապա ֆիսկալ ռիսկի նյութականացման ազդեցությունը համարվում է ցածր, եթե ընդհանուր պարտավորությունների մեծությունը գտնվում է ՀՆԱ-ի 0.5 տոկոսից մինչև 1 տոկոսի միջակայքում, ապա ֆիսկալ ռիսկի նյութականացման ազդեցությունը համարվում է միջին և, եթե ընդհանուր պարտավորությունների մեծությունը ՀՆԱ-ի 1 տոկոսից մեծ է, ապա ֆիսկալ ռիսկերի նյութականացման ազդեցությունը

3.1 Մասնավոր ընկերություններ

Էներգետիկայի ոլորտի դիտանցման ենթարկվող մասնավոր ընկերությունների գործունեության արդյունքում հարկաբյուջետային ռիսկերն են.

Մասնավոր ընկերությունների հարկաբյուջետային ռիսկերը բնութագրվում են հետևյալ ուղղություններով.

1. ՀՀ պետական բյուջեից մասնավոր Ընկերություններին չնախատեսված փոխառություն-ների տրամադրում կամ սեփական կապիտալի համալրում,

2. Մասնավոր Ընկերություններին սուբսիդիաների տրամադրում կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտություն,

3. ՀՀ պետական բյուջեից մասնավոր Ընկերություններին տրամադրված վարկերի դիմաց տոկոսների չվճարում և մայր գումարների չմարում:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում էներգետիկայի ոլորտի դիտանցման ենթարկվող մասնավոր ընկերությունների (թվով հինգ) հիմնական գործունեությունից ստացված հանրագումարային եկամուտները նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ նվազել են 16.1 մլրդ դրամով և կազմել շուրջ 429.8 մլրդ դրամ, իսկ միջանկյալ ժամանակաշրջանում նախորդ միջանկյալ ժամանակաշրջանի նկատմամբ նույնպես նվազել են 23.3 մլրդ դրամով և կազմել 209.7 մլրդ դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունների հանրագումարային ծախսերը կազմել են 403.1 մլրդ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի 395.9 մլրդ դրամի դիմաց՝ավելանալով 7.3 մլրդ դրամով (1.8%-ով), իսկ միջանկյալ ժամանակաշրջանում նախորդ միջանկյալ ժամանակաշրջանի նկատմամբ նվազել են 23.3 մլրդ դրամով և կազմել 191.6 մլրդ դրամ:

Ընկերությունների 429.8 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 403.1 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում Հաշվետու ժամանակաշրջանում շահույթը կազմել է 26.7 մլրդ դրամ, իսկ միջանկյալ ժամանակաշրջանում Ընկերությունների հանրագումարային 209.7 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 191.6 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում շահույթը կազմել է 18.1 մլրդ դրամ, որից զուտ շահույթը 9.5 մլրդ դրամ (տես աղյուսակ 4):

Հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ Ընկերու-թյունների հանրագումարային սեփական կապիտալի դիրքը դինամիկ կերպով բարելավվել է, արդյունքում ավելանալով 13.5 մլրդ դրամով (4.4%):

համարվում է բարձր (մասնավոր Ընկերությունների դեպքում ընդհանուր պարտավորությունների փոխարեն կիրառվում են պետության կողմից տրամադրված կամ երաշխավորված պարտավորությունները):

Միջանկյալ ժամանակաշրջանում Ընկերությունների հանրագումարային սեփական կապիտալը կազմել է 332.0 մլրդ դրամ:

Աղյուսակ 25. Էներգետիկայի ոլորտի մասնավոր ընկերությունների հանրագումարային զուտ շահույթն ըստ տարիների. հազ. դրամ

Մասնավոր ընկերություններ	2016թ.	2017թ.	2018թ. 1-ին կիս.
	Փաստ.	Փաստ.	Փաստ.
ԸՆԴԱՄԵՆԸ	27,896,985.0	(1,362,930.0)	9,523,420.0
1. «Հրազդան ՋԷԿ» ԲԲԸ	2,619,185.0	1,248,326.0	522,331.0
2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ	1,666,000.0	(9,364,000.0)	448,000.0
2.1 «Տրանսգազ» ՍՊԸ	(15,506.0)	64,049.0	18,389.0
3. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ	327,282.0	98,744.0	544,523.0
4. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	23,284,518.0	6,654,000.0	8,008,566.0

Վարկային պարտավորությունների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ Ընկերություն-ները չունեն ժամկետանց վարկային պարտավորություններ, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից բյուջետային երաշխիքներ չեն ստացել: Ընդ որում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ները հանդիսանում են միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների աջակցությամբ իրականացվող նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ենթավարկային պայմանագրերով ոլորտին տրամադրված վարկային միջոցների խոշորագույն ստացողներից:

Ընկերությունները ներգրավված չեն այնպիսի տեղական կամ միջազգային դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ այդ Ընկերությունների ֆինանսական վիճակի վրա:

Ընկերությունների հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառված ֆինան-սական գործակիցների ամփոփ արդյունքները և պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաները ներկայացված են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 26. <u>Էներգետիկայի ոլորտի մասնավոր ընկերությունների հանրագումարային ֆինանսական ցուցանիշները.</u>

Ցուցանիշ	2016թ.	2017թ.	2018թ. 1-ին կիս.	Թույլատրելի սահմանային նորմա
Ծախսերի վերականգնման գործակից	1.1	1.1	1.1	Առնվազն 1
Զուտ շահույթի մարժա *(%)*	6.3	0.3	4.8	8%
Արագ իրացվելիության գործակից	0.4	0.4	0.3	Առնվազն 1
Դեբիտորական պարտքերի շրջանառություն *(օր)*	75.2	58.3	62.6	60 օր/30 օր
Պարտքի սպասարկման գործակից	0.1	0.2	0.2	Առավելագույնը 0.5
Վերաֆինանսավորման գործակից	1.4	1.3	5.3	Առավելագույնը 1
Z միավոր	0.03	(0.1)	(0.1)	Ապահով գոտի՝ Z>2.6, Գորշ գոտի՝ 1.1< Z<2.6, Ծանր գոտի՝ Z<1.1

Ինչպես երևում է աղյուսակ 5-ից հաշվետու և միջանկյալ ժամանակաշրջաններում սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի բարձր հավանականության մասին (գործակիցները՝ Z=0.03, Z=(0.01) գտնվում են սահմանված ծանր գոտում Z<1.1):

Հաշվետու ժամանակաշրջանում ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցներից երեքը, իսկ միջանկյալ ժամանակաշրջանում չորսը չեն համապատասխանում միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմային և վկայում են ֆինանսական ծանր վիճակի բարձր հավանականության մասին:

Զուտ շահույթի մարժան բնութագրում է բիզնեսի գործառնական արդյունավետությունը: Չնայած միջանկյալ ժամանակաշրջանում նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ այս ցուցանիշը ցուցաբերել է դրական դինամիկա, բայց դեռևս 3.2 տոկոսային կետով պակաս է պրակտիկայում կիրառվող նվազագույն նորմայից:

Արագ իրացվելիության գործակիցը հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ մնացել է անփոփոխ և կազմել 0.4, իսկ միջանկյալ ժամանակաշրջանում նվազել է 0.1-ով և կազմել 0.3, ցածր մնալով միջազգային պրակտիկայում կիրառվող շեմային մակարդակից, որը փաստում է, որ որոշ Ընկերություններ արագ իրացվելի ընթացիկ ակտիվների հաշվին կարող են մարել ընթացիկ պարտավորությունների ընդամենը 30-40 տոկոսը:

Դեբիտորական պարտքերի վերադարձելիության միջին ժամանակաշրջանի ցուցանիշը հաշվետու ժամանակաշրջաններում ցուցաբերել է նվազման դինամիկա, սակայն միջանկյալ ժամանակաշրջանում նկատվում է աճ:

Վերաֆինանսավորման գործակիցը հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 0.1 կետով և կազմել 1.3, իսկ միջանկյալ ժամանակաշրջանում կազմել է 5.3, դեռևս բարձր մնալով միջազգային պրակտիկայում կիրառվող շեմային մակարդակից, որը փաստում է, որ որոշ Ընկերություններ ի վիճակի չեն գործառնություններից ստացվող իրենց դրամական հոսքերի հաշվին կատարել իրենց ընթացիկ պարտավորությունները:

Հաշվի առնելով, որ հաշվետու և միջանկյալ ժամանակաշրջաններում Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը գնահատող Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի բարձր հավանականության մասին, իսկ ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցներից Հաշվետու ժամանակաշրջանում երեքը, իսկ միջանկյալ ժամանակաշրջանում չորսը չեն համապատասխանում միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաներին և վկայում են ֆինանսական ծանր վիճակի բարձր հավանականության մասին, հետևաբար այս երկու նախնական գնահատումների զուգակցման արդյունքում Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը գնահատվում է բարձր:

Միաժամանակ բյուջետային վարկավորման արդյունքում Ընկերությունների կողմից պետությանը վճարման ենթակա ընդհանուր գումարի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ կազմում է 0.3 տոկոս, կարելի է եզրակացնել, որ ֆիսկալ ռիսկերի նյութականացման ազդեցությունը քանակական գնահատման տեսանկյունից ցածր է (տես տողատակի 2-րդ ծանոթագրությունը):

4. *Տրանսպորտի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերություններ*

Տրանսպորտի ոլորտի դիտանցման ենթարկվող պետական մասնակցությամբ ընկերությունների գործունեության արդյունքում հարկաբյուջետային ռիսկերն են.

1. Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում որպես ժամանակավոր օգնություն չնախատեսված բյուջետային վարկերի տրամադրման կամ սեփական կապիտալի համալրման համար բյուջետային հատկացումների անհրաժեշտության առաջացում,

2. Ընկերություններին սուբսիդիաների չնախատեսված գումարների տրամադրում կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտություն,

3. Ընկերություններից պետական բյուջեի մուտքերի կազմում նախատեսված շահութաբաժինների չստացում,

4. ՀՀ պետական բյուջեից Ընկերություններին տրամադրված վարկային միջոցների օգտագործման դիմաց հաշվարկված տոկոսների չվճարում և մայր գումարների չմարում:

Հաշվետու ժամանակաշրջանում տրանսպորտի ոլորտի երեք պետական մասնակցությամբ ընկերությունների (այսուհետ՝ Ընկերություններ) հիմնական գործունեությունից ստացված հանրագումարային եկամուտները կազմել են 10.4 մլրդ դրամ՝ 2016թ. 7.8 մլրդ դրամի դիմաց կամ ավել 2.6 մլրդ դրամով ավել (33.3%), միաժամանակ միջանկյալ ժամանակաշրջանում Ընկերությունների հիմնական գործունեությունից ստացված հանրագումարային եկամուտները կազմել են 4.92 մլրդ դրամ, նախորդ միջանկյալ ժամանակաշրջանի 4.99 մլրդ դրամի դիմաց կամ 0.07 մլրդ դրամով պակաս (1.4%): Հաշվետու ժամանակաշրջանում այդ Ընկերությունների հանրագումարային ծախսերը կազմել են 8.0 մլրդ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի 7.6 մլրդ դրամի դիմաց՝ կամ ավել 0.4 մլրդ դրամով (5.3%), միաժամանակ միջանկյալ ժամանակաշրջանում հանրագումարային ծախսերը կազմել են 4.1 մլրդ դրամ նախորդ նույն ժամանակաշրջանի 3.8 մլրդ դրամի դիմաց կամ ավել 0.3 մլրդ դրամով (7.9%):

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունների 10.4. մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 8.0. մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում շահույթը կազմել է 2.4 մլրդ դրամ, նախորդ միջանկյալ ժամանակաշրջանում զուտ շահույթը կլազմել է 0.9 մլրդ դրամ, իսկ միջակյալ ժամանակաշրջանում այն կազմել է 1.6 մլրդ դրամ (տես աղյուսակ 6):

Աղյուսակ 27. <u>Տրանսպորտի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային շահույթը (վնասը) ըստ տարիների.</u>

հազ.դրամ

Տրանսպորտի ոլորտի պետական մասնակցությամբ ներությունների հանրագումարային շահույթը հարկումից հետո		**2016թ.**	**2017թ.**	**2018թ. 1-ին կիս.**
		Փաստ.	**Փաստ.**	**Փաստ.**
ԸՆԴԱՄԵՆԸ		1,458,739.0	2,461,067.0	1,599,173.3
1.	«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ	839,269.0	2,486,394.0	1,031,821.0
2.	«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ	622,110.0	(27,650.0)	561,397.3
3.	«Հայավտոկայարան» ՓԲԸ	(2,640.0)	2,323.0	5,955.0

Աղյուսակ 28. Տրանսպորտի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային հաշվապահական հաշվեկշիռը. հազ. դրամ

Հաշվեկշռային հոդվածներ	Տրանսպորտի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերություններ		
	2016թ.	2017թ.	2018թ.1-ին կիս.
1.Ընդամենը ակտիվներ	25,060,333	28,147,379	28,107,137
-Ընթացիկ ակտիվներ	4,295,004	7,595,950	7,844,698
- Ոչ ընթացիկ ակտիվներ	20,765,329	20,551,429	20,262,439
2.Ընդամենը պարտավորություններ	15,023,710	16,145,792	14,485,873
-Ընթացիկ պարտավորություններ	1,046,648	1,809,989	844,928
-Ոչ ընթացիկ պարտավորություններ	13,977,062	14,335,803	13,640,945
3.Սեփական կապիտալ (զուտ ակտիվներ)	10,036,623	12,001,587	13,621,264

Հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ Ընկերությունների հանրագումարային սեփական կապիտալն ավելացել է 1.96 մլրդ դրամով (19.6%), իսկ միջանկյալ ժամանակաշրջանում նախորդ նույն ժամանակաշրջանի համեմատ Ընկերությունների հանրագումարային սեփական կապիտալը ավելացել է 3.14 մլրդ դրամով (29.9%):

«Հայավտոկայարան» ՓԲԸ շարունակական կուտակային վնասների արդյունքում Ընկերությունների հանրագումարային պարտավորությունները մոտ 1.1 անգամ գերազանցում են սեփական կապիտալի հանրագումարային մեծությանը:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 25.05.2017թ. N575-Ա որոշմամբ հավանության է արժանացել «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի մասնավորեցման ցանկում ընդգրկված է նաև «Հայավտոկայարան» ՓԲԸ:

Վարկային պարտավորությունների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ Ընկերություն-ները չունեն ժամկետանց վարկային պարտավորություններ, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից բյուջետային երաշխիքներ չեն ստացել:

Հարկ է նաև նշել, որ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ին ՀՀ պետական բյուջեից տրամադրվող սուբսիդիայի հաշվարկներում ներառված են նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող վարկային

ծրագրերի շրջանակներում այս ընկերությանը ենթավարկային պայմանագրերով տրամադրված վարկերի մայր գումարների և տոկոսների մարումները:

Ընկերությունները ներգրավված չեն այնպիսի տեղական կամ միջազգային դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ իրենց ֆինանսական վիճակի վրա:

Ընկերությունների հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառված ֆինանսական գործակիցների ամփոփ արդյունքները և պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաները ներկայացված են աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 29. Տրանսպորտի ոլորտի պետական ընկերությունների հանրագումարային ֆինանսական ցուցանիշները.

Ցուցանիշ	2016թ.	2017թ.	2018թ. 1-ին կիս.	Թույլատրելի սահմանային նորմա
Ծախսերի վերականգնման գործակից	1.0	1.3	1.2	Առնվազն 1
Զուտ շահույթի մարժա (%)	19.4	25.8	33.8	Առնվազն 8%
Արագ իրացվելիության գործակից	3.4	3.8	8.4	Առնվազն 1
Դեբիտորական պարտքերի շրջանառություն (օր)	41.3	65.1	69.2	60 օր/30 օր
Պարտքի սպասարկման գործակից	0.03	0.02	0.01	Առավելագույնը 0.5
Վերաֆինանսավորման գործակից	0.37	0.44	0.5	Առավելագույնը 1
Z միավոր	1.3	3.6	3.7	Ապահով գոտի՝ Z>2.6, Գորշ գոտի՝ 1.1< Z<2.6, Ծանր գոտի՝ Z<1.1

Ինչպես երևում է աղյուսակից սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականության բացառման մասին (գործակիցը՝ Z=3.7, գտնվում է սահմանված ապահով գոտում՝ Z>2.6):

Հաշվետու և միջանկյալ ժամանակաշրջաններում ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցներից մեկը չի համապատասխանում միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաները և վկայում են ֆինանսական ծանր վիճակի ցածր հավանականության մասին:

Հաշվի առնելով, որ Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը գնահատող Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի ցածր հավանականության մասին, իսկ ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական հինգ գործակիցները ապահովել են միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաները և վկայում են ֆինանսական ծանր վիճակի ցածր հավանականության մասին, հետևաբար այս

երկու նախնական գնահատումների զուգակցման արդյունքում Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը գնահատվում է ցածր: Ինչ վերաբերում է Ընկերությունների ֆիսկալ ռիսկերի նյութականացման ազդեցության քանակական գնահատմանը, ապա այն համարվում է ցածր[45]:

5. Ոռոգման ոլորտ.

Ոռոգման ոլորտի (ոլորտ) դիտանցման ենթարկված պետական մասնակցությամբ երկու ընկերությունների գործունեության արդյունքում հարկաբյուջետային ռիսկերն են.

1. Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում որպես ժամանակավոր օգնություն չնախատեսված բյուջետային վարկերի տրամադրման կամ սեփական կապիտալի համալրման համար բյուջետային հատկացումների անհրաժեշտության առաջացում,

2. Ընկերություններին սուբսիդիաների չնախատեսված գումարների տրամադրում կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտություն,

3. Ընկերություններից պետական բյուջեի մուտքերի կազմում նախատեսված շահութաբաժինների չստացում,

4. ՀՀ պետական բյուջեից Ընկերություններին տրամադրված վարկային միջոցների օգտագործման դիմաց հաշվարկված տոկոսների չվճարում և մայր գումարների չմարում:

Հաշվետու ժամանակաշրջանում երկու պետական մասնակցությամբ ընկերությունների (Ընկերություններ) հիմնական գործունեությունից ստացված հանրագումարային եկամուտները կազմել են 3.1 մլրդ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի 2.6 մլրդ դրամի դիմաց կամ 0.5 մլրդ դրամով ավել (19.2%), միաժամանակ միջանկյալ ժամանակաշրջանում Ընկերությունների հիմնական գործունեությունից ստացված հանրագումարային եկամուտները կազմել են 2.1 մլրդ դրամ նախորդ նույն ժամանակաշրջանի 1,4 մլրդ դրամի դիմաց կամ 0.7 մլրդ դրամով ավել (50.0%): Հաշվետու ժամանակաշրջանում այդ Ընկերությունների հանրագումարային ծախսերը կազմել են 5.6 մլրդ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի 4.7 մլրդ դրամի դիմաց՝ կամ ավել 0.9 մլրդ դրամով (19.1%), միաժամանակ միջանկյալ ժամանակաշրջանում հանրագումարային ծախսերը կազմել են 1.1 մլրդ դրամ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 0.8 մլրդ դրամի դիմաց կամ 0.4 մլրդ դրամով ավել (37.5.%):

---

45 Դիտարկել 2-րդ ծանոթագրությունը հաշվի առնելով, որ Ընկերությունների ընդհանուր պարտավորությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ կազմում է 0.3 տոկոս:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունների հանրագումարային 3.1 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 5.6. մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում վնասը կազմել է 2.5 մլրդ դրամ, միաժամանակ միջանկյալ ժամանակաշրջանում Ընկերությունների հանրագումարային 2.1. մլրդ ընդհանուր եկամուտների և 1.1 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում շահույթը կազմել է 1.0 մլրդ դրամ:

Աղյուսակ 30. Ոռոգման ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային զուտ շահույթը (վնասը) ըստ տարիներ.

հազ. դրամ

Ոռոգման ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային շահույթը հարկումից հետո		2016թ.	2017թ.	2018թ. 1-ին կիս.
		Փաստ.	Փաստ.	
ԸՆԴԱՄԵՆԸ		(2,136,445)	(2,563,748)	1,014,927
1.	«Ջրառ» ՓԲԸ	(2,125,020)	(2,519,003)	1,003,277
2.	«Մելիորացիա» ՓԲԸ	(11,425)	(44,745)	11,650

Վարկային պարտավորությունների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ Ընկերություն-ները չունեն ժամկետանց վարկային պարտավորություններ, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից բյուջետային երաշխիքներ չեն ստացել:

Ընկերությունները ներգրավված չեն այնպիսի տեղական կամ միջազգային դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ընկերության ֆինանսական վիճակի վրա:

Ընկերությունների հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառված ֆինան-սական գործակիցների ամփոփ արդյունքները և պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաները ներկայացված են աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 31. Ոռոգման ոլորտի պետական ընկերությունների հանրագումարային ֆինանսական ցուցանիշները.

Ցուցանիշ	2016թ.	2017թ.	2018թ 1-ին կիս.	Թույլատրելի սահմանային նորմա
Ծախսերի վերականգնման գործակից	0.5	0.5	1.9	Առնվազն 1
Զուտ շահույթի մարժա *(%)*	(144.5)	(151.1)	138.1	8%
Արագ իրացվելիության գործակից	0.1	1.0	2.2	Առնվազն 1
Դեբիտորական պարտքերի շրջանառություն *(օր)*	16.8	292.3	469.1	60 օր/30 օր
Պարտքի սպասարկման գործակից	0.0	0.0	0.0	Առավելագույնը 0.5

Վերաֆինանսավորման գործակից	1.5	0.5	(0.5)	Առավելագույնը 1
Z միավոր	48.1	48.4	66.2	Ապահով գոտի՝ Z>2.6, Գորշ գոտի՝ 1.1< Z<2.6, Ծանր գոտի՝ Z<1.1

Ինչպես երևում է աղյուսակ 10-ից սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի բավականին ցածր հավանականության մասին (գործակիցը՝ Z=66.2, գտնվում է սահմանված ապահով գոտում՝ Z>2.6):

Ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցներից մեկը չի համապատասխանում միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմային և այն վկայում է ֆինանսական ոչ ծանր վիճակի հավանականության մասին:

Հաշվի առնելով, որ Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը գնահատող Z-միավորը վկայում է Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի ցածր հավանականության մասին, իսկ ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցները ևս վկայում են ֆինանսական ծանր վիճակի ցածր հավանականության մասին, հետևաբար այս երկու նախնական գնահատումների զուգակցման արդյունքում Ընկերությունների ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը գնահատվում է ցածր:

Ինչ վերաբերում է Ընկերությունների ֆիսկալ ռիսկերի նյութականացման ազդեցության քանակական գնահատմանը, ապա այն համարվում է ցածր[46]:

6. Պետական-մասնավոր գործընկերություն (ՊՄԳ)

Տրանսպորտի և ջրային տնտեսության ոլորտներում ՊՄԳ սխեմայի ներքո գործում են «Հարավկովկասյան երկաթուղի» և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ները:

6.1 «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ

ՀՀ կառավարության 07.02.2008թ. N83-Ա որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի և «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի միջև 13.02.2008թ. կնքվել է «Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ փոխանցելու մասին» կոնցեսիոն պայմանագիրը:

46 Դիտարկել 2-րդ ծանոթագրությունը հաշվի առնելով, որ Ընկերությունների ընդհանուր պարտավորությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ կազմում է 0.1 տոկոս:

Հաշվետու ժամանակաշրջանում «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդամենը եկամուտները կազմել են 20.4 մլրդ դրամ նախորդ ժամանակաշրջանի 19.1 մլրդ դրամի դիմաց կամ ավել 6.8%-ով (1.3 մլրդ դրամով), միաժամանակ միջանկյալ ժամանակաշրջանում ընդամենը եկամուտները կազմել են 10.6 մլրդ դրամ նախորդ նույն ժամանակաշրջանի 5.6 մլրդ դրամի դիմաց կամ ավել 5.0 մլրդ դրամով (89.3%)

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության ծախսերը կազմել են 20.1 մլրդ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի 19.0 մլրդ դրամի դիմաց՝ կամ ավել 1.1 մլրդ դրամով (5.8%), միաժամանակ միջանկյալ ժամանակաշրջանում ծախսերը կազմել են 10.4 մլրդ դրամ նախորդ ժամանակաշրջանի 5.3 մլրդ դրամի դիմաց կամ ավել 5.1 մլրդ դրամով (96.2%):

Ընկերության 20.4 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 20.1 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում 2017թ. ժամանակաշրջանում շահույթը կազմել է 0.3 մլրդ դրամ, իսկ զուտ շահույթը՝ 0.2 մլրդ դրամ, միաժամանակ միջանկյալ ժամանակաշրջանում 10.6 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 10.4 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում շահույթը կազմել է 0.2 մլրդ դրամ, իսկ զուտ շահույթը 0.3 մլրդ դրամ:

Ընկերության հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառված ֆինանսական գործակիցների ամփոփ արդյունքները և պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաները ներկայացված են աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 32. «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ֆինանսական ցուցանիշները

Ցուցանիշ	2016թ.	2017թ.	2018թ. 1-ին կիս.	Թույլատրելի սահմանային նորմա
Ծախսերի վերականգնման գործակից	1.0	1.0	1.0	Առնվազն 1
Զուտ շահույթի մարժա (%)	0.3	0.9	3.4	8%
Արագ իրացվելիության գործակից	0.8	1.3	2.2	Առնվազն 1
Դեբիտորական պարտքերի շրջանառություն (օր)	21.3	23.8	11.2	60 օր/30 օր
Պարտքի սպասարկման գործակից	0	0	0.1	Առավելագույնը 0.5
Վերաֆինանսավորման գործակից	1.0	1.1	2.2	Առավելագույնը 1
Z միավոր	23.8	19.8	18.9	Ապահով գոտի՝ Z>2.6, Գորշ գոտի՝ 1.1< Z<2.6, Ծանր գոտի Z<1.1

Ինչպես երևում է աղյուսակ 11-ից սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է Ընկերության ֆինանսական ծանր վիճակի շատ ցածր հավանականության մասին

(գործակիցը՝ համապատասխանաբար Z=18.9, գտնվում է սահմանված ապահով գոտում՝ Z>2.6):

Հաշվետու և միջանկյալ ժամանակաշրջաններում ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցներից երկուսը չեն համապատասխանում միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմային և վկայում են ֆինանսական ծանր վիճակի միջին հավանականության մասին:

Զուտ շահույթի մարժան 4.6 տոկոսային կետով պակաս է պրակտիկայում կիրառվող նվազագույն նորմայից, արագ իրացվելիության գործակիցը միջանկյալ ժամանակշրջանում նախորդ ժամանակշրջանի նկատմամբ նվազել է 0.1-ով և կազմել 2.2, այսինքն Ընկերությունը կարող է առանց պաշարների մեծության, արագ իրացվելի ընթացիկ ակտիվների հաշվին մարել ընթացիկ պարտավորությունները:

Հաշվի առնելով, որ սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է Ընկերության ֆինանսական ծանր վիճակի ցածր հավանականության մասին, իսկ ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցներից երկուսը չեն համապատասխանում միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմային և վկայում են ֆինանսական ծանր վիճակի միջին հավանականության մասին, հետևաբար այս երկու նախնական գնահատումների զուգակցման արդյունքում Ընկերության ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը գնահատվում է միջին:

Վարկային պարտավորությունների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ Ընկերությունը չունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ենթավարկային պայմանգրերով նախատեսված վարկային պարտավորություններ:

Ընկերությունը ներգրավված չի այնպիսի տեղական կամ միջազգային դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ընկերության ֆինանսական վիճակի վրա:

Հարկ է նաև նշել, որ կոնցեսիոն պայմանագրով նախատեսված է, որ կոնցեդենտը սուբսիդավորում է (մասնակի փոխհատուցում է) համաձայնեցված ծավալներով և ուղղություններով ուղևորափոխադրումների կոնցեսիոների (Ընկերության) տարեկան վնասը կոնցեսիոների կողմից անկախ աուդիտորի կողմից այդ վնասների հաստատված հաշվարկների ներկայացման պարագայում:

Սուբսիդիայի համաձայնեցված չափը կազմում է 2016թ. մինչև 2038թ. 30 տոկոս (2016թ. 312.8 մլն դրամ, 2017թ.՝ 324.0 մլն դրամ, 2018թ.՝ 308.4 մլն դրամ, իսկ 2019թ.՝ 352.0 մլն դրամ:

Միաժամանակ կոնցեսիոն պայմանագրով նախատեսված է նաև, որ կոնցեսիոները կոնցեդենտին պետք է վճարի տարեկան կոնցեսիոն վճար՝ համախառն հասույթի 2%-ի չափով

(2016թ. 312.8 մլն դրամ, 2017թ 301.7 մլն դրամ, 2018թ. 347.0 մլն դրամ, իսկ 2019թ.՝ 352.0 մլն դրամ): Հետևաբար հաշվի առնելով, որ ՀՀ պետական բյուջեից տրամադրվող սուբսիդիայի և Ընկերության կողմից վճարվող կոնցեսիոն վճարի չափերը գրեթե համեմատելի են, ուստի Ընկերության կողմից ՀՀ պետական բյուջեի վճարվող կոնցեսիոն վճարի չվճարման ռիսկը գնահատվում է բավականին ցածր:

6.2 «Վեոլիա Ջուր» ՓԲԸ

21.11.2016թ. ՀՀ կառավարության և «Վեոլիա Օ Կոմպանի Ժեներալ Դեզ Օ» կոմանդիտային բաժնետիրական ընկերության և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքվել է «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագիր՝ 15 տարի ժամկետով (Վարձակալական պայմանգիր):

Վարձակալական պայմանգրի 9-րդ հոդվածի համաձայն Ընկերության կողմից մատուցվող ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման ծառայությունների սակագները կարգավորվում և հաստավում են Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից:

Միաժամանակ Վարձակալության պայմանագրի 8-րդ հոդվածի համաձայն Ընկերությունը պարտավոր է յուրաքանչյուր կիսամյակ վճարել վարձակալության վճար՝ համաձայն նախատեսված վարձակալության վճարի վճարման ժամանակացույցի: Վարձակալության վճարի ամբողջական գումարը կազմում է 89.7 մլրդ ՀՀ դրամ, որից 2017թ. 1.7 մլրդ դրամ (յուրաքանչյուր կիսամյակում 856.5 մլն դրամ):

Հարկ է նաև նշել, որ Ընկերությունն ապահովել է Վարձակալական պայմանագրով սահմանված վարձակալական վճարի կիսամյակային առաջին վճարումը:

2017թ-ի ընթացքում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդամենը եկամուտները կազմել են 17.7 մլրդ դրամ, իսկ միջանկյալ ժամանակաշրջանում ընդամենը եկամուտները կազմել են 8.1 մլրդ դրամ նախորդ համապատասխան ժամանակաշրջանի 8.5 մլրդ դրամի դիմաց, այն պակասել է 0.4 մլրդ դրամով կամ 4.7%-ով:

2017 թ-ի ընթացքում Ընկերության ծախսերը կազմել են 18.1 մլրդ դրամ, իսկ միջանկյալ ժամանակաշրջանում այն կազմել է 7.2 մլրդ դրամ նախորդ նույն ժամանակաշրջանի 6.7 մլրդ դրամի փոխարեն, որը ավել է նախորդ ժամանակաշրջանից 0.5 մլրդ դրամով կամ 7.5%-ով:

2017թ-ին Ընկերության 17.7 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 18.1 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում հաշվետու ժամանակաշրջանում վնասը կազմել է 0.4 մլրդ

դրամ, իսկ միջանկյալ ժամանակաշրջանում 8.1 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 7.2 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի պայմաններում շահույթը կազմել է 0.9 մլրդ դրամ նախորդ համապատասխան ժամանակաշրջանի 1.8 մլրդ դրամի համեմատ:

Ընկերության հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառված ֆինանսական գործակիցների ամփոփ արդյունքները և պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմաները ներկայացված են Աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 33. «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ֆինանսական ցուցանիշները

Ցուցանիշ	2016թ.	2017թ.	2018թ. 1-ին կիս	Թույլատրելի սահմանային նորմա
Ծախսերի վերականգնման գործակից	0.9	1.0	1.1	Առնվազն 1
Զուտ շահույթի մարժա (%)	(17.8)	2.2	(10.0)	8%
Արագ իրացվելիության գործակից	141.9	3.7	4.2	Առնվազն 1
Դեբիտորական պարտքերի շրջանառություն (օր)	0.4	79.3	139.6	60 օր/30 օր
Պարտքի սպասարկման գործակից	0.0	0.0	0.0	Առավելագույնը 0.5
Վերաֆինանսավորման գործակից	0.0	1.2	1.0	Առավելագույնը 1
Z միավոր	0.3	1.1	0.9	Ապահով գոտի՝ Z>2.6, Գորշ գոտի՝ 1.1< Z<2.6, Ծանր գոտի Z<1.1

Ինչպես երևում է Աղյուսակ 7-ից միջանկյալ ժամանակաշրջաններում սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է Ընկերության ֆինանսական ծանր վիճակի բարձր հավանականության մասին (գործակիցը՝ Z=0.9 գտնվում է սահմանված ծանր գոտում՝ Z<1.1):

Միաժամանակ ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցներից երկուսը չեն համապատասխանում միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմային և վկայում են ֆինանսական ծանր վիճակի բարձր հավանականության մասին:

Միջանկյալ ժամանակաշրջանում զուտ շահույթի մարժան 18.0 տոկոսային կետով պակաս է պրակտիկայում կիրառվող նվազագույն նորմայից:

Վարկային պարտավորությունների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ Ընկերությունը չունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ենթավարկային պայմանգրերով նախատեսված վարկային պարտավորություններ:

Ընկերությունը ներգրավված չի այնպիսի տեղական կամ միջազգային դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ընկերության ֆինանսական վիճակի վրա:

Հաշվի առնելով, որ միջանկյալ ժամանակաշրջանում սնանկացման կանխատեսման Ալթմանի Z-միավորը վկայում է Ընկերության ֆինանսական ծանր վիճակի բարձր

հավանականության մասին, իսկ ստուգաճշտող լրացուցիչ ֆինանսական վեց գործակիցներից երկուսը չեն համապատասխանում միջազգային պրակտիկայում ընդունված թույլատրելի սահմանային նորմային և վկայում են ֆինանսական ծանր վիճակի միջին հավանականության մասին, հետևաբար այս երկու նախնական գնահատումների զուգակցման արդյունքում Ընկերության ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը գնահատվում է միջին:

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Աղյուսակ 1. ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի հիմքում դրված հիմնական տնտեսական չափորոշիչներ 68
Աղյուսակ 2. Տնտեսության ճյուղերի իրական աճերը (ավելացված արժեքով) 71
Աղյուսակ 3. ՀՆԱ-ի ծախսային բաղադրիչների իրական աճերը, տոկոս 80
Աղյուսակ 4. Ծախսային բաղադրիչների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի կազմում 80
Աղյուսակ 5. Իրական ՀՆԱ-ի աճի կանխատեսումների հավանականությունների բաշխումը 105
Աղյուսակ 6. Հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական կանխատեսումների և ենթադրությունների ռիսկերի ազդեցություն 108
Աղյուսակ 7. Հարկային եկամուտների զգայունությունը հիմնական տնտեսական գործոնների նկատմամբ, % 109
Աղյուսակ 8. Հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխումը ... 110
Աղյուսակ 9. Հարկային եկամուտների և պետական բյուջեի այլ հոսքերի գծով ռիսկերի ընդհանուր ազդեցության գնահատականը 112
Աղյուսակ 10. 2017-2019թթ պետական բյուջեի ամփոփ ցուցանիշները 113
Աղյուսակ 11. ՀՀ պետական պարտքը 2017-2019 թթ (մլն ԱՄՆ դոլար, տարեվերջի դրությամբ) 117
Աղյուսակ 12. 2019թ ակնկալվող արտաքին օժանդակությունն ըստ բնույթի 117
Աղյուսակ 13. ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծի հաշվարկներում կիրառված տարադրամների փոխարժեքները ՀՀ դրամով 118
Աղյուսակ 14. ՀՀ 2017-2019թթ պետական բյուջեների եկամուտների կառուցվածքը 120
Աղյուսակ 15. ՀՀ 2017-2019թթ պետական բյուջեների եկամուտների համեմատականը 120
Աղյուսակ 16. Առանձին մակրոտնտեսական ցուցանիշների 2017-2019թթ փաստացի/կանխատեսումային մեծությունները 121
Աղյուսակ 17. ՀՀ 2019 թվականի հարկային եկամուտների և պետական տուրքերի կանխատեսումն ըստ առանձին գործոնների 122
Աղյուսակ 18. Սպառումից գանձվող ԱԱՀ-ի 2017-2019թթ փաստացի բազայի գնահատումը. նվազեցման ենթակա գումարներ ըստ ՀՆԱ-ի ճյուղերի 124
Աղյուսակ 19. Սպառումից գանձվող ԱԱՀ-ի 2017-2019թթ. բազայի գնահատումը 126
Աղյուսակ 20. Ակցիզային հարկի 2017թ. փաստացի և 2018-2019թթ կանխատեսվող ցուցանիշները 126
Աղյուսակ 21. 2019 թվականի հարկային ծախսերի մեծության ամփոփ գնահատական 130
Աղյուսակ 22. Էներգետիկայի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային զուտ շահույթը (վնասը) ըստ տարիների. հազ.դրամ 289
Աղյուսակ 23. Էներգետիկայի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային հաշվապահական հաշվեկշիռը 2016թ., 2017թ. դեկտեմբերի 31-ի և 2018թ. հուլիսի 1-ի դրությամբ. հազ. դրամ 290
Աղյուսակ 24. Էներգետիկայի ոլորտի պետական ընկերությունների հանրագումարային ֆինանսական ցուցանիշները 291
Աղյուսակ 25. Էներգետիկայի ոլորտի մասնավոր ընկերությունների հանրագումարային զուտ շահույթն ըստ տարիների. հազ. դրամ 294
Աղյուսակ 26. Էներգետիկայի ոլորտի մասնավոր ընկերությունների հանրագումարային ֆինանսական ցուցանիշները 295
Աղյուսակ 27. Տրանսպորտի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային շահույթը (վնասը) ըստ տարիների 297

Աղյուսակ 28. Տրանսպորտի ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային հաշվապահական հաշվեկշիռը. հազ. դրամ 298
Աղյուսակ 29. Տրանսպորտի ոլորտի պետական ընկերությունների հանրագումարային ֆինանսական ցուցանիշները..... 299
Աղյուսակ 30. Ոռոգման ոլորտի պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային զուտ շահույթը (վնասը) ըստ տարիներ. 301
Աղյուսակ 31. Ոռոգման ոլորտի պետական ընկերությունների հանրագումարային ֆինանսական ցուցանիշները.....301
Աղյուսակ 32. «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ֆինանսական ցուցանիշները..... 303
Աղյուսակ 33. «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ֆինանսական ցուցանիշները..... 306

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ

Գծապատկեր 1. ՀՆԱ-ի իրական աճին տնտեսության առանձին ճյուղերի նպաստումները* 72
Գծապատկեր 2. Տնտեսության ճյուղերի տեսակարար կշիռները ՀՆԱ-ում 77
Գծապատկեր 3. 2017-2018 թվականներին 12-ամսյա գնաճի նպաստումները խոշոր ապրանքախմբերով, տոկոսային կետ 82
Գծապատկեր 4. 2017 թվականին փողի բազայի և փողի զանգվածի աճին նպաստումները, տոկոսային կետ 84
Գծապատկեր 5. Վարկերի և ավանդների ծավալների աճը (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, %) և տոկոսադրույքները 86
Գծապատկեր 6. Ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ 88
Գծապատկեր 7. Հարկաբյուջետային ազդակը 2014-2019 թվականներին 98
Գծապատկեր 8. Կապիտալ ծախսերի և պակասուրդի կշիռը ՀՆԱ-ում, % 99
Գծապատկեր 9. Ընթացիկ ծախսերի և հարկեր, տուրքերի կշիռը ՀՆԱ-ում,% 99
Գծապատկեր 10. Իրական ՀՆԱ–ի աճի տեմպերի կանխատեսումների հավանականային բաշխումը 2019 թվականին, ըստ եռամսյակների (կուտակային) 104
Գծապատկեր 11. Հարկային եկամուտների տարեկան աճի տեմպերի կանխատեսումների հավանականային բաշխումը, % 110
Գծապատկեր 12. ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված բյուջետային եկամուտների կառուցվածքը (%-ով ընդհանուրի նկատմամբ) 114
Գծապատկեր 13. ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մուտքերի ընդհանուր գումարում ներքին և արտաքին աղբյուրներից ստացվելիք մուտքերի տեսակարար կշիռները (%) ընդամենը մուտքերի մեջ 116